

«ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# ՄԵՐԱԿԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ  
ՄԵՎՈՒՅԹ

ՀՈԴՎԱՆԴԵՐԻ ԺՈՂՈՎԱՆՈՒ



ԿՐԿՆՈՐՈՈԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ  
ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

## ՄԵՐՂԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ

V

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ  
ՄԸԱԿՈՒՅԹ



Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի  
գիտական խորհրդի որոշմամբ

**Տպագրվում է պետական հովանավորությամբ**

## Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Խ Ո Ր Հ Ո Ւ Ր Դ

Գևորգյան Գ. (նախագահ), Խանգառյան Մ.,  
Ղազարյան Ռ., Չաքարյան Ա., Ստեփանյան Լ.,  
Փաշյան Ա. (պատասխանատու քարտուղար)

Համակարգչային ճևավորումը՝ Ն. Կարախանյանի

Ժողովածում ընդգրկում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում  
կազմակերպված Երիտասարդ արևելագիտների միջազգային XXIX  
գիտաժողովը՝ նյութերը (Երևան, 2008թ. հունիսի 11-13):

Գրում զետեղված հոդվածները նվիրված են Մերձավոր և Հեռավոր  
Արևելի, ինչպես նաև Կովկասի երկրների ու ժողովուրդների պատմության,  
քաղաքականության, միջազգային հարաբերությունների և մշակույթի մի շարք  
հիմնահարցերին:

Նախատեսված է արևելագիտների, հայագիտների, բուհերի ուսանողների  
և ընթերցող լայն շրջանակների համար:

---

Ստորագրված է տպագրությամբ 01.10.2008թ.:

Չափսը՝ 60x84 1/2: Թուղթը օֆսեթ №1:

Տպատեսակը՝ «Times Armenian»:

Տպագրությունը՝ օֆսեթ: 14.25 տպ. մամուլ:

Տպաքանակը՝ 170 օրինակ:

Տպագրվել է «Գևորգ - Յրայր» ՍՊԸ



Իրատարակչությունում

Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:

Հեռ.՝ 52-79-74, 52-79-47:

E-mail: lusakn@rambler.ru

NATIONAL ACADEMY OF SCIENCES  
REPUBLIC OF ARMENIA  
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

# NEAR EAST

V

*HISTORY  
POLITICS  
CULTURE*

YEREVAN – 2008

The book is recommended for publication by the Scientific Council of  
the Institute of Oriental Studies, National Academy of Sciences,  
Republic of Armenia

## EDITORIAL BOARD

G. Gevorgyan (Chairman), M. Khanzadyan, R. Ghazaryan  
A. Shakaryan, L. Stepanyan, A. Pashayan  
(Responsible Secretary)

Computer Design: N. Karakhanyan

The book includes articles presented at the 29<sup>th</sup> International  
Conference of Young Orientalists (Yerevan, 11-13 June, 2008)

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՀ ԳԱԱ - Հայաստանի Հանրապետության Գիտությունների  
Ազգային Ակադեմիա

ՄԻ - ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ

ՀՅԹԻ - ՀՀ ԳԱԱ Հայոց գեղասպանության քանգարան-  
ինստիտուտ

ՀԱԻ - ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ  
ԵՊՀ - Երևանի պետական համալսարան

ՈՀՀ(Ս)Հ - Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարան

ՀՀՀ - Հայաստանի Հանրային Հեռուստատեսություն

ՔՀԻ - Քաղաքական հետազոտությունների ինստիտուտ

ԳՊՀ - Գորիսի պետական համալսարան

ԵՀԱՀ - Երևանի Հրաշյա Աճառյան Համալսարան

## ABBREVIATIONS

**NAS RA** – National Academy of Sciences, Republic of Armenia

**IOS** – Institute of Oriental Studies, NAS RA

**AGMI** – Armenian Genocide Museum-Institute, NAS RA

**IAE** - Institute of Archeology and Etnography, NAS RA

**YSU** – Yerevan State University

**RA(S)U** – Russian-Armenian (Slavonic) University

**PTCA** - Public Television Company of Armenia

**IPR** – Institute of Political Research

**GSU** - Goris State Universitet

**YHAU** – Yerevan Hrachia Acharyan University

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒԹՅԱ Ը ՈՒՆ

### ՊԱՏՄՈՒԹՅԱ Ը ՈՒՆ

<b>ԱՐՄԱԿԱՆՅԱՄԱՆ ՍԱՐԻԱՄՆԱ (ԵՊՀ)</b>	
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԵՎ ՈՈՒՍԱՍԱՆԻ ԴԱԾՆՈՒԹՅԱՆ ԸԱՀԵՐԸ ԿԱՍՊՅԱՆ ՏԱՐԱԾԱՇԽԱԾԻ ԱՆՎԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ.....	14
<b>ԱԶՐՈՅԱՆ ՈՒՂՅԱՄԱՆ (ԱԻ)</b>	
ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ԻՐԱԾՈՒՄ 1960-70-ԱԿԱՆ թթ.....	20
<b>ԱՌԱՋԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ (ԱԻ)</b>	
ԲԱՀՐԱՄԱՆ-ԱՐՄԵՆԻԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ 1135-1140 թթ.....	26
<b>ԱՎՐԱՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ (ԱԻ)</b>	
1952թ. ՀՈՒԼԻՍՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՆԴՐԱՇԽՁՅ ԵԳԻՊՏՈՍԻ ՂՈՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՏԱՏԵԽԱԿԱՆ ԻՐԱՎԱԲԱԿԻ ՎՐԱ.....	30
<b>ԲԱԲԵԼՈՆՅԱՆ ԱՐՓԻՆԵ (ՀՅԹԻ)</b>	
ԽՄԲԵՐԴԻ ՆԱՀԱՆԳԻՑ ՀԱՅ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՄ ԱՐՏԱԳԱՂԹԻ ՀԱՄԱԿԱՆ ՊԱՏճԱՌՆԵՐԸ (1880-1914թթ.); ԱՐՏԱԳԱՂԹԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ .....	37
<b>ԳԱՍՊԱՐՅԱՆ ՄՐԱՄ (ԱԻ)</b>	
1913 թ. ՆԵԶԴԱԼՈՒ ՕՍՄԱՆՅԱՆ ԻԾԽԱՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՈՒԼԱՑՈՒՄԸ. ՆՈՐԱՀԱՅ ՆՅՈՒԹԵՐ .....	42
<b>ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՆ (ԱԻ)</b>	
ԱԿԱԴԵՄԻԿՈՒ ԳՐ. ՂԱՓԱԼՑՅԱՆ ԵՎ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԸ ՈՒՐԱՐԺԱԿԱՆ ՍԵՊԱԳՐԵՐՈՒՄ.....	47
<b>ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՆ (ԵՊՀ)</b>	
«ԻՍԼԱՄԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ» ՍԱՅԻԴ ԿՈՒՏԲԻ ԱԾԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ.....	52

<b>ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳՈՋ (ՄԻ)</b>	
2008թ. ԱՊՐԻԼԻՆ ԵԳԻՊՏՈՍՈՒԹՄԱՅԿԱՑՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՍԻՆՆԵՐԻ	56
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՈՒՐՉ	
<b>ԶԱՔՄԱՐԵԱՆ ՏԻԳՐԱՆ (ՀՅԹԻ)</b>	
ԱՄԵՐԻԿԱՅԱ ՄԻՍԻՈՆՆԵՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՈՒԹՅՈՒՆՆՈՒՄՆԵՐ ՀԱՅԵՐԸ ՊԱՏԱԿԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ	62
<b>ԹԱՄՄԱԶՅԱՆ ԱՇՈԽ (ՄԻ)</b>	
ՍՈՒՖԻԿԽՈՅԸ՝ ՈՐՊԵՍ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՓՈՐՁԵՄԹԱՑ ԻՆԼԱՄԻ ՀՈԳԵՎՈՐ ՀԱՍՏԿԱՐԳՈՒՄ	69
<b>ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ (ՄԻ)</b>	
ԺԱ ԴՐՈՒՄԾԻՐՎԱՆՑԱՀԵՐԻ ԴԻՆԱՍՏԻԱՅԻ ԻՐԱՍՏԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՐՑԻ ԸՈՒՐՉ	75
<b>ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՂՎԱԿԻ (ՄԻ)</b>	
ՉՃՀ-Ի ՄԵՐՁՎԱՐՄԵՎԵԼՅԱՆ ՔԱՂՋՔՎԱՅՈՒԹՅՈՒՆԸ 1970-ԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐՁԵՐԻՆ	80
<b>ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԵՎԱ (ՄԻ)</b>	
ԹԱՊՈՒՆԻԱՅԻ ՔԱՂՋՔՎԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐՁՎԱՐՄԵՎԵԼՅԱՆ ՈՐՈՇ ԵՐԿՐՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄ 1973թ. ՆԱՎԹԱՅԻՆ ճԳՆԱԺԱՄԻ ԸՆԹԱՑՑՈՒՄ	87
<b>ՀՈՒՅԱԿՅԱՆ ՀԱՍԻԿ (ՄԻ)</b>	
ԱՐԵՎԱՊԱՇՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՆԱ ԼԻԻ ԱՎԱԳԱՆՈՒՄ	93
<b>ՀՈՎԱՆԵՓՅԱՆ ԼԵՎՈՆ (ՔՀԻ)</b>	
ԹՈՒՐՔԻԱՅԻ ՏԻԵԶԵՐՎԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԵՎ ՀԱԿԱՌՈՒԱՅԻՆ ՊԱՀԾՊԱՍՈՒԹՅԱՆ, ՀՐԹԻՌԱՅԻՆ ՀԱՍՏԿԱՐԳԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՐՑԻ ԸՈՒՐՉ	99
<b>ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՀԱՅԿ (ՀՅԹԻ)</b>	
ԱԴԱՄԱՅՈՒՄ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՀՅՈՒՊԱՅՈՍ ՕՅԳԵՆ ԲՅՈՒԳԵՒ ԶԵԿՈՒՑԱԳՐԵՐԸ 20-ՐԴ ԴԱՅԻ ՄԿՋԲԻ ՀԱՅԵՐԻ ԶԱՐԴԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	106
<b>ՄԵԼքոնՅԱՆ ՈՈՒԲԵՆ (ԵՊՀ)</b>	
ՀԱՅ ԵՐԵՎԱՆՆԵՐԻ ԻՆԼԱՄԱՑՄՈՒՄ ՀԱՅՈՑ ԶԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (ԸՆՏ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՄՅՈՒՄՆԵՐԻ)	112

<b>ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՀԱՅԿԱՐԱՄ (ՀՊՀ)</b>	
ԱԴՐԲԵԶԱՆԱԿԱՆ ԼՈԲԲԻՆԳԻ ԱԿՏԻՎԱՑՄԱՆ	
ՍԻՏՈՒՄՆԵՐԸ ..... 117	
<b>ՆԱԿԱՆԱՐԴՅԱՆ ՆԱԶԵԽԻ (ՓԻ)</b>	
ՊՄԲԿԱԿԱՆ ԿՈՉԱԿԱԿԱՆ ԲՐԻԳԱԴԸ ՈՐՊԵՍ ՑԱՐԱԿԱՆ	
ՈՒԽԱՍՏԱՆԻ ԹԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԼՅԱԿ	
ՂԱԶԱՐԱԿԱՆ ԻՐԱԼՈՒՄ ..... 123	
<b>ՉԱՎԻԿՑԱՆ ՊԵՏՐՈՍ (ԵՊՀ)</b>	
ԹՈՒՐՖԻԱՅՈՒՄԿՈՒՄԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՐԳԵԼՄԱՆ	
ՀԱՐՑԻ ԸՈՒՐՉ ..... 130	
<b>ՍՏԵՓԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ (ԳՊՀ)</b>	
ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՄՐԿՈՎԿԱՍՈՒՄ «ԱԴՐԵԶԱՑԻԻ»	
ԵԹԱԱՆՎԱՆ ԳՈՐԾԱԼՄԱՆ ՀԱՐՑԻ ԸՈՒՐՉ ..... 137	
<b>ՍՏԵՓԱՆՅԱՆ ԼՈՒԽԻՆԵ (ՓԻ)</b>	
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԾՈՒՄ	
1920-1940-ԱԿԱՆ ԹԹ ..... 145	
<b>ՎԱՐԴԱՐԵՅԱՆ ԳՈՀՅԱՐ (ԵՀԱՀ)</b>	
ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ ԲԱԲԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ	
ԲԱՀԱՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ ..... 155	
<b>ՎԱՐԴԵՐԵՅԱՆ ՄՐԵՆ (ՓԻ)</b>	
ԻՐԱՀԻ ԻՎԼԱՍԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ	
ԴԻՐԵՐՈՇՈՒՄ ԱԴՐԵԶԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ	
ԹԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՆ ..... 161	
<b>ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ</b>	
<b>ԱԴԱՄՅԱՆ ՍՈՒՍԱՆԻ (ՀԱԻ)</b>	
ՍԵՊԱԳԻՐ ԵՎ ԱՅԼԱԼԵՋՈՒ ԱՐՋԱՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	
ՍԵՍՐՈՊ ՍՄՐԱՏՅԱՆԻ ԱԾԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ..... 169	
<b>ԱՄԱՏՐԵԱՆ ՀԱՍԽԻԿ (ԵՊՀ)</b>	
ՔԵՐԵՇՀԻՐԻ ԲԱՐԲԱՐԻ ՀԱՅՅՈՒՆԱԲԱՆԱԿԱՆ ՈՐՈԾ	
ԱՌԱՋԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ..... 178	
<b>ԽԱՉԱՏՐԵԱՆ ԷՍՄԻ (ՇՀԱՀ)</b>	
ԻՄՐԱԲԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՑՈՒՑԻՉՆԵՐԸ ..... 186	
<b>ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՇՈՒԾԱՆ (ԵՀԱՀ)</b>	
ԱՌԱՋԻՒՄ: ԱՐՄԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊՈԽՁԻԱՅ	

ԱՎԱՍՎԱՐԴԻՒՄ ՊՈԵՏ ԵՎ ՓԻԼԻՍՈՓ	192
ԿՈԲԵԼՅԱՆ ԱՐՄԻՆՆԵ (ԵՊՀ)	
ՀՆԴԿԱՍՏԱԾՈՒՄՊԱՐԱԿԱԼԵԶՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲԱՆՎՈՐՄԱՆ ԸՆԴՀ (ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆՄՐԿ)	199
<b>ՈՍԿԱՆՅԱՆ ԱՆԻ (ՀՅԹԻ)</b>	
ԱՆՇԱՍՆՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱՊԱԾՈՒԹՅՈՒՆ ՕՐՎԱՆ ՓԱՍՈՒԹԻ «ԶՅՈՒ» ՎԵՐՊՈՒՄ	205
<b>ՊԵՏՐՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ (ԵՊՀ)</b>	
«SERVET-Ի FÜNUN» ՀԱՆԴԵՍԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԵՎ ԼԵԶՎԱՌԵԱԿԱՆ ԱՊՄԱՉԱՎԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀ	209
<b>ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՐԹԻ (ԵՊՀ)</b>	
ԱՀՄԱԴ ՇԱՍՈՒԻ ԱՐՁԱԿԸ	215
<b>ՓԱԾԱՅԻՆ ԱՆԻ (ՈՀՍՀ)</b>	
ՉԱՐԵՆՑԸ ԵՎ ԱՐԵՎԵԼՔԸ	222

## C O N T E N T S

### H I S T O R Y

<b>MARIANNA ABRAHAMYAN (YSU)</b>	
THE INTERESTS OF THE USA AND RUSSIAN FEDERATION IN THE CONTEXT OF CASPIAN REGION'S SECURITY .....	17
<b>RUZANNA AZROYAN (IOS)</b>	
EDUCATIONAL REFORMS IN IRAN IN 1960-1970s.....	25
<b>ARSEN ARAKELYAN (IOS)</b>	
BAHRAM AL-ARMANI'S ACTIVITY IN EGYPT (1135-1140).....	30
<b>ARTHUR AVDALYAN (IOS)</b>	
THE IMPACT OF 1952's JULY REVOLUTION ON THE POLITICAL AND ECONOMIC SITUATION OF THE EGYPT COPTIC COMMUNITY .....	36
<b>ARPINE BABLUMYAN (AGMI)</b>	
THE MAIN CAUSES OF IMMIGRATION OF ARMENIANS FROM KHARBERT VILAYET TO THE USA (1880-1914). THE CONSEQUENCES OF IMMIGRATION .....	41
<b>ARAM GASPARYAN (IOS)</b>	
THE WEAKENING OF OTTOMAN AUTHORITIES IN NAJD IN 1913: NEW DOCUMENTS .....	45
<b>SONA GRIGORYAN (IOS)</b>	
ACADEMICIAN GRIGOR KAPANTSYAN AND THE TOPOONYMS OF OLD ARMENIA IN THE URARTIAN CUNEIFORM WRITINGS.....	50
<b>SONA GRIGORYAN (YSU)</b>	
"ISLAMIC SOLUTIONS" IN THE WORKS OF SAYID QUTB ....	55
<b>GOR GEVORGYAN (IOS)</b>	
ON THE MUNICIPAL ELECTIONS IN EGYPT ON APRIL, 2008 .....	59

<b>TIGRAN ZAKARYAN (AGMI)</b>	
THE AMERICAN MISSIONARY ACTIVITY IN THE OTTOMAN EMPIRE AND THE ARMENIANS: THE QUESTIONS OF HISTORIOGRAPHY AND METHODOLOGY .....	67
<b>ANUSH TAMRAZYAN (IOS)</b>	
SUFISM AS PHILOSOPHY AND PRACTICE IN ISLAMIC SPIRITUAL SYSTEM.....	74
<b>ARSEN HAKOBYAN (IOS)</b>	
ON THE ISSUE OF IRANIZATION OF THE SHIRVANSHAH'S DYNASTY IN THE 11 <sup>TH</sup> CENTURY.....	78
<b>AGHAVNI HARUTYUNYAN (IOS)</b>	
PRC'S MIDDLE EASTERN POLICY BY THE LATE 1970's .....	84
<b>YEVA HARUTYUNYAN (IOS)</b>	
THE JAPAN'S POLICY TOWARDS SOME OF THE MIDDLE EASTERN COUNTRIES DURING 1973's OIL CRISES .....	89
<b>HASMIK HMAYAKYAN (IOS)</b>	
THE SUN CULT IN THE BASIN OF THE LAKE VAN .....	97
<b>LEVON HOVSEPYAN (IPR)</b>	
ON THE PROBLEM OF TURKEY'S "SPACE PROJECT" AND MODERNIZATION OF AIR-DEFENCE AND MISSILE SYSTEMS.....	104
<b>HAYK MARTIROSYAN (AGMI)</b>	
REPORTS OF THE GERMAN CONSUL OF ADANA EUGENE BUGE ON THE MASSACRES OF ARMENIANS IN THE BEGINNING OF 20 <sup>TH</sup> CENTURY.....	110
<b>RUBEN MELKONYAN (YSU)</b>	
THE ISLAMIZATION OF ARMENIAN CHILDREN IN THE PERIOD OF THE ARMENIAN GENOCIDE (ACCORDING TO THE TURKISH SOURCES) .....	116
<b>HAYKARAM NAHAPETYAN (PTCA)</b>	
THE TENDENCIES OF THE ACTIVIZATION OF AZERI LOBBY .....	122

NAZELY NAVASARDYAN (IOS) THE COSSACK BRIGADE AS RUSSIAN EMPIRE'S INFLUENCE LEVER IN QAJAR PERSIA .....	128
PETROS CHAVIKYAN (YSU) ON THE ISSUE OF BAN OF THE POLITICAL PARTIES IN TURKEY .....	134
GEVORG STEPANYAN (GSU) THE USAGE OF THE ETHNIC NAME OF "AZERBAJANIAN" IN THE EASTERN TRANSCAUCAZUS ...	143
LUSINE STEPANYAN (IOS) FINANCIAL REFORMS IN IRAN IN 1920-1940's.....	153
GOHAR VARDANYAN (YHAU) THE ARMENIAN AUTHORS ON BABISM AND BAHA'ISM .....	159
AREN VARDERESYAN (IOS) THE ATTITUDE OF ISLAMIC REPUBLIC OF IRAN TOWARDSTHE FOREIGN POLITICAL OREINTATIONS OF AZERBAIJAN .....	167
<b>LINGUISTICS AND LITERARY CRITICISM</b>	
SUSANNA ADAMYAN (JAE) CUNEIFORM AND FOREIGN LANGUAGE INSCRIPTIONS IN THE WORKS OF MESROP SMBATIANTC.....	175
HASMİK ASATRYAN (YSU) SOME PHONETIC SPECIFICATIONS OF THE KIRSHEHIR DIALECT .....	185
EMMA KHACHATRYAN (RA(S)U) THE TYPES AND SIGNS OF IARAB .....	190
SHUSHAN KARAPETYAN (YHAU) ADONIS: THE AVANT-GARDE POET AND PHILOSOPHER OF MODERN ARAB POETRY .....	198
ARMINE KOBELYAN (YSU) ON THE ISSUE OF GENESIS OF THE PERSIAN LITERATURE IN INDIA.....	204

<b>ANI VOSKANYAN (AGMI)</b>	
THE SYMBOLISM OF THE NAMES IN THE ORHAN PAMUK'S NOVEL "SNOW" .....	208
<b>TIGRAN PETROSYAN (YSU)</b>	
THE IDEOLOGICAL AND LINGUO-STYLISTIC PECULIARITIES OF THE JOURNAL SERVET-İ FÜNUN .....	214
<b>MARTA SIMONYAN (YSU)</b>	
THE PROSE OF AHMAD SHAMLOU .....	220
<b>ANI PASHAYAN (RA(S)U)</b>	
CHARENÇ AND THE EAST .....	228

## ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

### ԱԲՐԱՀԱՍՅԱՆ ՄԱՐԻԱՆՆԱ

(ԵՊՀ)

ԱՍԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՅՅԱ ՆԱՀԱՄԵԳՆԵՐԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ  
ԴԱԾՆՈՒԹՅԱՆ ԸԱՀԵՐԸ ԿԱՍՊՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԵՔՍՈՒՄ

ԽՍՀՄ Փլուգումից հետո կասպյան տարածաշրջանը դարձավ քազմավեկտոր հակամարտության դաշտ այն ուժերի միջև, որոնց ցանկանում էին վերահսկել Եվրասիայի՝ ռազմավարական այդ կարևոր տարածաշրջանը։ Տարածաշրջանում գլխավոր դերակատարները ԱՄՆ և Ռուսաստանն են, որոնց ազդեցությունը որոշվում է տնտեսական, քաղաքական, աշխարհագրական, սոցիալական և մշակութային գործոններով։ Նրանց տարածաշրջանային շահերն, ընդհանուր առմամբ, մրցակցային են և հաճախ՝ հակադրվող։

Այսօր ԱՄՆ-ը կասպյան տարածաշրջանում աշխարհաքաղաքական գլխավոր դերակատարներից է։ 2001թ. հունվարին, Դավոսում Համաշխարհային տնտեսական համաժողովի ժամանակ, ԱՄՆ ներկայացուցիչները կրկին հաստատեցին, որ «Կասպից ծովն իրենց կենսական շահերի գոտին է և դիտվում է որպես նավթի աղբյուր՝ այլընտրանք Պարսից ծոցին»<sup>1</sup>։ Ամերիկյան ռազմավարությունը նախատեսում է վերահսկողություն տարածաշրջանի էներգակիրների փոխադրման հիմնական ուղիների նկատմամբ և խողովակաշարերի ու հարակից ենթակառուցվածքների ընդարձակ ցանցի ստեղծում՝ Արևմուտքի էներգաանվտանգությունը ապահովելու նպատակով<sup>2</sup>։

Կասպյան նավթային նախագծերի մշակման աշխարհաքաղաքական պատկերացումները տվյալ փուլում Սայիտակ տան համար ավելին են, քան տնտեսական<sup>3</sup>։ Կասպյան տարածաշրջանում ԱՄՆ ռազմավարության իրականացման

ամենակարևոր միջոցներից մեկը ՈՒՆ և Իրանը շրջանցող նոր խողովակաշարերի կառուցումն է: Վաշինգտոնի կարծիքով, Թուրքիան պետք է դարպաս ծառայի արևմտյան շուկաներ կասպյան նավթի հոսքի համար: 1999թ. նոյեմբերի 18-ին ստամբուլյան գագաթաժողովում Ալյունքանը, Վրաստանը, Թուրքմենստանը և Թուրքիան /ԱՄՆ վարչակազմի աջակցությամբ/ ստորագրեցին Բարու-Թրիխի-Զեյխան (ԲԹԶ) խողովակաշարի կառուցման միջանական համաձայնագիր<sup>4</sup>: Այն գործարկվեց 2005թ. մայիսի 25-ին<sup>5</sup>: ԲԹԶ շահագործումը ԱՄՆ-ին և Արևմտյան Եվրոպային թույլ կտա ընդլայնել կասպյան նավթ ստունալու հնարավորությունը, կրճատել կախվածությունը ուստական նավթամույթից և մերձավորարևելյան տարածաշրջանի նավթից, նվազեցնել ՈՒՀ-ի ազդեցությունը Ալյունքանի, Վրաստանի, Ղազախստանի վրա<sup>6</sup>: ԱՄՆ-ը ճգույն է ԲԹԶ նախագծում ներառել Ղազախստանը<sup>7</sup>, քանի որ միայն Ալյունքանի նավթը նախագծի շահագետության համար բավարար չէ: Նման զարգացումն անխուսափելիորեն ՈՒՀ-ին կստիպի տարածաշրջանում փնտրել ԱՄՆ-ից անկախ դաշնակիցների: Իսկ ընտրությունը սահմանափակ է. դա Իրանն է, որը մեծ կշիռ ունի Կովկասում և Միջին Արևելյանում<sup>8</sup>:

ԲԹԶ-ի անվտանգության ապահովման և դրա հետ կապված ենթակառուցվածքների ստեղծման նպատակով Վաշինգտոնը մտադիր է մեծ ներդրումներ կատարել «Կասպյան պաշտպան» ծրագրի շրջանակում<sup>9</sup>, ինչը նախատեսում է հատուկ նշանակության ուժերի ստեղծում տարածաշրջանում<sup>10</sup>: Դա կասպյան երկրներին թույլ կտա արագ արձագանքել արտակարգ իրավիճակների դեպքում՝ ներառյալ ահարենկիչների հարձակումները նավթային օրյեկտների վրա<sup>11</sup>: Փաստացի «Կասպյան պաշտպանը» ԱՄՆ Եվրոպական հրամանատարության առաջնային կայանն է Շտուտգարտ կենտրոնով, որի պատասխանատվության գրառում է կասպյան տարածաշրջանը<sup>12</sup>: Համաձայն ԱՄՆ-ի (EUCOM) բանակի Եվրոպական հրամանատարության ներկայացուցիչ Սըոք Սվիթսերի հայտարարության՝ ի թիվս կասպյան պաշտպաների պաշտպանության, «Հիմնական գաղափարը տարածաշրջանային կայունության պահպանումն է»<sup>13</sup>: Հետևաբար, «Կասպյան պաշտպան» ծրագիրը, փաստորեն, նախատեսում է ԱՄՆ հովանու ներքո տարածաշրջանում անվտանգության համակարգի ստեղծում, ինչն ուղղված կլինի ԱՄՆ

աշխարհաքաղաքական մրցակիցների՝ Ռուսաստանի և Իրանի դեմ: Ակնհայտ է, որ ԲԹՁ-ն, շնայած լուրջ ծախսերին, արդյունավետ գործիք է հետախորհրդային տարածքում Վաշինգտոնի ռազմաքաղաքական շահերի իրականացման համար:

Ինչ վերաբերում է Ռուսաստանին, ապա նրա գլխավոր նպատակն է կասպյան տարածաշրջանում պահպանել քաղաքական, տնտեսական և ռազմական գերակայությունը, կովկասյան երկրների արտարին քաղաքականությունը ենթարկել Ռուսաստանի շահերին և տարածաշրջանում կանխել երրորդ երկրների ակտիվությունը: Ուստի ՌԴ-ն շահագրգիռ չէ իր ազդեցության ոլորտից դրւու անվտանգության տարածաշրջանային համակարգերի ստեղծմամբ<sup>14</sup>: Սովորաբար մտահոգության գլխավոր պատճառը ԲԹՁ-ի միջոցով ԱՄՆ-ի ռազմաքաղաքական նպատակներն են, որոնք ենթադրում են «Արևելյան Արևմուտք» աշխարհաքաղաքական առանցքի ձևավորում ԱՄՆ-ի, Թուրքիայի, Ալբրեժանի, Վրաստանի և Ղազախստանի մասմակցությամբ<sup>15</sup>:

Կասպիցը ուստական ազդեցության ավանդական գոտին է, և այդտեղ ԱՄՆ ռազմա-քաղաքական ներկայությունը սպառնում է նաև նրա պաշտպանական շահերին, քանի քացվում է ռազմավարական ուղղություն դեպի Ուրալի արդունաբերական շրջան: Զգտելով չեղաքացնել «Կասպյան պաշտպանի» ստեղծման Վաշինգտոնի մտադրությունը՝ ՌԴ-ն Աև ծովում իրագործվող «Քենքսիֆորի» օրինակով 2006թ. տարածաշրջանի պետություններին առաջարկեց այլընտրանքային ծրագիր՝ «Կասֆոր»<sup>16</sup>, արագ արձագանքման համատեղ ուժերի ստեղծմամբ ահարեւկշության, այդ քվում թիուահարեւկշության և նարկոտրաֆիկի դեմ պայքարի համար: Կասպիցում մերձկասպյան պետությունների արագ արձագանքման ուժերի ստեղծման գաղափարը քննարկվեց 2005թ. հուլիսին Աստրախանում՝ կասպյան անվտանգության հարցերով միջազգային խորհրդաժողովի ժամանակ, որտեղ ՌԴ-ն նախագահ Վ. Պուտինը նշեց, որ մերձկասպյան պետությունները միասնարար «կարող են արդյունավետ» լուծել տարածաշրջանի անվտանգության բոլոր հարցերը<sup>17</sup>: Սակայն այս հարցում կասպյան երկրների շահերը տարբեր են: Ղազախստանը, Ալբրեժանը և Թուրքմենստանը շահագրգիռ են սեփական ռազմածովային ուժերի զարգացմամբ, ու, եթե նրանց

շաջակցի ՈՒ-ն, ապա ԱՍԽ-ն արդեն օգնում է: Այդ ուղմականացումն արդեն իրականացվում է ԱՍԽ աջակցությամբ՝ դրանով խսկ սեպ խրելով ՈՒ-ի և նրա մերձկասպայան հարեանների միջև<sup>18</sup>:

Առսկզբան, օգտվելով կասպիցում ուղմական գերակայությունից, ճգոտում է քոյլ չտալ ծովի հատակով խողովակաշարերի անցկացում՝ փորձելով Ասրանայի վզին փաթաթել Ղազախստանի տարածքով անցնող երթուղին<sup>19</sup>: Բայց կասպյան երկրների, առաջին հերթին Աղրբեջանի և Ղազախստանի վրա ՈՒ-ի ճնշման լծակները սահմանափակ են<sup>20</sup>:

ՈՒ-ի վերոհիշյալ նախաձեռնությունը սկզբից եեթ նպատակ ունի քոյլ չտալ կասպիցում երրորդ ուժերի՝ ոչ տարածաշրջանային պետությունների, առաջին հերթին՝ ԱՍԽ-ի հայտնվելը: «Կասֆոր»-ի հարցում Իրանը դաշնակից է<sup>21</sup>: Աշխարհի մեծ տերությունները ճգոտում են նվազեցնել Սոսկվայի և Թեհրանի ազդեցությունը տարածաշրջանում: ՈՒ-ն ու Իրանը չեն կարող չանչանգուտանալ Անդրկովկասի և Կենտրոնական Ասիայի երկրների հետ Վաշինգտոնի գործակցության ընդլայնմամբ, ինչպես նաև դեպի արևելք ՆԱՏՕ-ի առաջխաղացմամբ<sup>22</sup>:

MARIANNA ABRAHAMYAN

(YSU)

## THE INTERESTS OF THE USA AND RUSSIAN FEDERATION IN THE CONTEXT OF CASPIAN REGION'S SECURITY

US and Russia are the key actors in the Caspian region's geopolitical arena. The interaction between US and Russia still constitutes a main international relations issue as the two countries wish to control Eurasia's main strategic region. A number of political and geopolitical factors have caused the United States to consider Russia as a main security concern. The USA is ready to spend not less than \$ 100 million during the coming ten years for the development of the so-called Caspian Guard. Guaranteeing security to the pipeline will be the prime goal of the Caspian Guard. The Caspian Guard will represent a network of special military units in the Caspian region. These troops will be capable of showing efficient reaction to states of emergency, including attacks against oil objects. The pipeline system will enable the transportation of oil from the Caspian Sea via the Caucasus to the Turkish port of Ceyhan and provide energetic security of the West.

All events, which happen in the Caspian region, touch upon Russia's interests directly. So, Moscow proposes to set up a regional security force "Casfor" for the Caspian Sea countries that would be far more ambitious than America's

comparatively modest "Caspian Guard" program. Russia's CasFor proposal is meant in part to thwart Caspian Guard. However, it would be erroneous to regard Moscow's proposal as a reactive move. It is a familiar "zone of peace and security" proposal, designed to create a sub-regional security organization under Russian dominance by excluding the main Western actors.

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Гушер А., Стратегия США в Каспийском регионе// Азия и Африка сегодня, 2003, N 5, с. 16.
2. Эбель Э. Р., Политическое и экономическое значение закавказской нефти// Закавказье сегодня: перспективы региональной интеграции, (отредактированные тексты выступлений), Американский университет Армении, Еր., 1997. - 23-25 июня, с. 90. Sbu' Кириченко В., Не рано вступить в "охрану", [www.zakon.kz-04.12.2004](http://www.zakon.kz-04.12.2004)
3. Տարածաշրջանը գլոբում է Եվրասիայում՝ ԱՄՆ-ի աշխարհաքաղական երեք մրցակիցների՝ Ալիասատանի, Շինաստանի և Իրամի միջև, և դա նկատմամբ վերահսկողությունը ԱՄՆ-ին բույլ կտա համեմ գլոբալ տիրապետության Հնգածովով/ Սև, Միջերկրական, Կասպից ծով, Պարսից ծոց՝ դրան եարող Արարական ծովով/ և ողջ մայրցամարտն՝ խոշնելութերու, որպեսի տարածաշրջանը աճիաքածնային պաշարները լինեն տազմավարական հակասակորումների և մրցակիցների ներառայլության ներքո:
4. Гушер А., Եզլ. աշխ., էջ 18-19:
5. Гурьев А. А., Геополитический ракурс нефтепровода Баку-Тбилиси-Джейхан, [www.iimes.ru](http://www.iimes.ru)
6. США и Россия в гонке за Каспий, SMI. RU, 16.06.1999.
7. Гушер А., Եզլ. աշխ., էջ 21: Sbu' Азербайджанская интрига ("The Washington Times", США), Сюжет: Избранные сочинения Ариэля Коэна, [www.inosmi.ru-25.10.2005](http://www.inosmi.ru-25.10.2005)
8. Крестовый поход за нефтью, [www.aif.ru-16.06.2004](http://www.aif.ru-16.06.2004)
9. Перевод Грошкова И./KM.RU, Дональд Рамсфелд: "США высоко ценят партнерство с Азербайджаном", [www.inosmi.ru-14.04.2005](http://www.inosmi.ru-14.04.2005)
10. Перенос базы из 2К в Мары означает угрозу для Ислама Каримова и Нурсултана Назарбаева, [www.geo.kz-13.09.05](http://www.geo.kz-13.09.05). Sbu' Мухин В., Крах Содружества начинается с распада оборонных структур, [www.ng.ru-26.08.2005](http://www.ng.ru-26.08.2005)
11. Халилов В., Пентагон станет охранять каспийскую нефть? [www.pv.derrick.ru-4-5.05.2005](http://www.pv.derrick.ru-4-5.05.2005). Sbu' Никоноров И., «Страж» качает мускулы, [www.gudok.ru-27.07.2005](http://www.gudok.ru-27.07.2005)
12. Добаев И., Дугин А., Роль и место «цветных революций» в геополитических трансформациях в Каспийско-Черноморском регионе, [www.eurasia.org-05.12.2005](http://www.eurasia.org-05.12.2005)
13. Мартиросян С., Пентагон намерен вложить в создание «Каспийской стражи» (Caspian Guard) \$130 млн., Баку, [www.vlasti.net-23.08.2005](http://www.vlasti.net-23.08.2005)
14. Гончаренко А., Проблемы безопасности в Каспийско-Черноморском регионе и региональные структуры безопасности// Взаимосвязи (Ежеквартальный журнал). - июнь 2004. - Том III, N 2, с. 5.
15. Гурьев А.А., Եզլ. աշխ., էջ 18-19:
16. Плугатарев И., Москва сколачивает военный блок в противовес Вашингтону, [www.ng.ru-25.01.2006](http://www.ng.ru-25.01.2006) Sbu' «Северный сосед» в ответе за Карабах? [www.zerkalo.az-25.01.2006](http://www.zerkalo.az-25.01.2006). Sbu' «Կասփօր» защитит Каспий, [www.strana.ru-24.01.2006](http://www.strana.ru-24.01.2006). Sbu' Плугатарев И.. НВО 27.01.2006, Любимый конек адмирала, Военным блоком – по браконьерам и террористам. Москва инициирует

- создание международного оперативного объединения на Каспии, пытаясь опередить Вашингтон, [www.milrussia.ru-20.02.2006](http://www.milrussia.ru-20.02.2006)
17. By Socor V., Tuesday, October 25, 2005, RUSSIA PRESSING FOR EXCLUSIONARY NAVAL GROUPING IN CASPIAN SEA, Eurasia Daily Monitor, Volume 2, Number 198, [www.jamestown.org](http://www.jamestown.org)
18. Гордиенко А., Мамедов С., Иванов В., Мухин В., НГ: Застолбили Каспий. Под контролем США окажутся Южный Урал и Сибирь, [www.gazetasng.ru-15.04.2005](http://www.gazetasng.ru-15.04.2005)
19. Сокут С., Каспий стоит войны//Еженедельник «Независимое военное обозрение» -07.03.2003
20. Мамедов С., Гордиенко А., У «Каспийского стражи» появился хозяин, Баку-Москва, [www.nvo.ng.ru-27.05.2005](http://www.nvo.ng.ru-27.05.2005)
21. Гончаров П., США в каспийском регионе и позиция России, Обозреватель РИА «Новости», [www.rian.ru-28.04.2005](http://www.rian.ru-28.04.2005)
22. Марков К., Москва между Вашингтоном и Тегераном// Азия и Африка сегодня-2003.- N 5. - с. 26. Сбу' Мухин В., Военные вызовы каспийского региона//Еженедельник «Независимое военное обозрение»-16.01.2004.

ԱԶՐՈՅԱՆ ՌՈՒԶԱՆԵԱ  
(ԱԿ)  
ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐՆ ԻՐԱՆՈՒՄ  
1960-70-ԱԿԱՆ ԹԹ.

20-րդ դարի 50-ական թթ. Իրանը շարունակում էր մնալ տնտեսապես քոյլ զարգացած մի երկիր: 1960-1961թթ. երկրում հասունանում էր տնտեսական ճգնաժամ, աճում էին գներն ու աղբատությունը, որը և հանգեցնում էր ժողովրդական դժգոհությունների: Կառավարությունները փոխվում էին մեկը մյուսի հետևից, սակայն իրավիճակը երկրում մնում էր անփոփոխ<sup>1</sup>:

Այդ ամենը դրդեց Իրանի ղեկավար շրջաններին երկրում իրականացնել բարեփոխումների մի շարք ծրագրեր, որոնց մեջ կարևորագույնը ազգարային հարաբերություններին վերաբերող մասն էր: 20-րդ դարի 60-70-ականները Իրանի ժողովրդի պատմության մեջ մտան որպես «Սպիտակ հեղափոխության» կամ ինչպես նաև կոչում էին «Չահի և ժողովրդի հեղափոխության» ժամանակաշրջան<sup>2</sup>: Գյուղատնտեսական բարեփոխումների հետ մեկտեղ երկրում իրականացվում էին նաև կարևոր փոփոխություններ մշակութային և հասարակական կյանքի այնպիսի բնագավառներում, ինչպիսին էին օրինակ՝ կրթությանը, առողջապահությունը, կանանց իրավական կարգավիճակը, ընտրական համակարգը և այլն<sup>3</sup>:

Այդ բարեփոխումների շարքում կարևոր տեղ էր գրադարձնում պայքարը անզրագիտության դեմ: Պետք է նկատել, որ նման միջոցառումները իրականացվել են դեռևս 1920-ականներից սկսած՝ Ռեզա շահ Փահլավիի օրոք, երբ ինմը դրվեց աշխարհիկ կրթական համակարգին<sup>4</sup>: Սակայն նշված բարեփոխումներն այդ շրջանում իրականացվեցին իդմնականում մայրաքաղաքում և խաչոր քաղաքներում. այժմ ժամանակի պահանջն էր դրանք տարածել նաև գյուղական համայնքներում, քանզի Իրանի բնակչության 90% շարունակում էր մնալ անզրագետ<sup>5</sup>:

Երկրի տնտեսական հետամնացության հաղթահարման խնդիրը մեծապես կապված էր զանգվածային անզրագիտության վերացման

անհրաժեշտության և բնակչության մշակութային մակարդակի բարձրացման հետ: Քանի որ առկա կրթական համակարգը ի վիճակի չէր ապահովել արմատական փոփոխություններ Իրանի բնակչության գործազրության մակարդակի բարձրացման համար, կառավարությունը ծնոնամուխ եղավ այսպես կոչված «Լուսավորության կորպուսների» ստեղծմանը: Վերջիններիս ստեղծումը հետապնդում էր 2 նպատակ. լուծել անգրագիտության հարցը գյուղերում և միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտներին ապահովել աշխատանքով<sup>6</sup>:

Այդ առջիվ կառավարությունը 1962թ. հոկտեմբերին ընդունեց օրենք, որը բարեփոխման մյուս 5 օրենքների հետ 1963թ. հունվարի 26-ին դրվեց հանրաքվեի<sup>7</sup>: Օրենքը նախատեսում էր, որ միջնակարգ դպրոցների և միջին մասնագիտական հաստատությունների արական սեռի շրջանավարտները զինակոչվելուց հետո պետք է անդամակցեին Կորպուսներ, որտեղ պարտավոր էին անցնել զինվորական ծառայություն: Առաջին չորս ամիսների ընթացքում զինակոչվածները պետք է անցնեին նախնական զինվորական պատրաստվածություն, ինչպես նաև կարծ դասընթացներ, որից հետո նրանք հնարավորություն կատարային դասավանդել տարրական դպրոցներում: Համապատասխան քննություններ հանձնելուց հետո, Կորպուսի անդամներին տրվում էր սերժանտի կոչում, և նրանք հանձնվում էին Լուսավորության նախարարության տրամադրությանը, որը և նրանց ուղարկում էր գյուղական համայնքներ՝ դասավանդելու: Զինվորական ծառայության մնացած մասը՝ այսինքն 14 ամիսը, երիտասարդները պետք է որպես ուսուցիչներ աշխատեին գյուղերում և ստանային սերժանտին համապատասխան աշխատավարձ: Զինծառայությունն ավարտելուց հետո ցանկացողները կարող էին մնալ և շարունակել դասավանդել: Սա շատ լավ հնարավորություն էր անապահով ընտանիքների երեխաների համար ստանալու ուսուցչի մասնագիտություն:

Կորպուսների առաջին ճևավորումը տեղի ունեցավ 1963թ. հունվարին, երբ, իրանական պաշտոնական տվյալների համաձայն, զինակոչվել էր 2.400 մարդ: Նույն թվականի ապրիլին՝ չորսամսյա դասընթացի ավարտից հետո, նրանք գործուղվեցին գյուղեր, որտեղ իրենց ուժերով ստեղծեցին 2.346 տեղանաս՝ երեխաների և մեծահասակների շրջանում անգրագիտության վերացման համար:

1963թ. ապրիլից մինչ 1964թ. այնտեղ սովորում էին մինչև 15 տարեկան 88.700 երեխաներ և 127.400 մեծահասակներ: 1963թ. տեղի ունեցավ եկրորդ հավաքը՝ 566 մարդ<sup>8</sup>, իսկ 1964թ. հունվարին՝ երրորդը՝ 3.400 մարդ: 1967թ. մարտին արդեն տեղի ունեցավ տասներորդ հավաքը: Ընդհանուր առմամբ զինակոչվել էր 34.500 երիտասարդ: 1968թ. «Լուսավորության կորպուսներ» սկսեցին հավաքագրել նաև աղջկների: 1968-1974թթ. ընթացքում հավաքագրվել էր ավելի քան 13.000 աղջկի<sup>9</sup>:

Արդեն առաջին 5 տարիների ընթացքում զինակոչվածներից 8000-ը զինծառայության ավարտից հետո մնացին Լուսավորության նախարարության համակարգում և շարունակեցին դասավանդել<sup>10</sup>: Նույն ժամանակահատվածում «Լուսավորության կորպուսների» անդամների ջանքերով գրագետ դարձան ավելի քան 450 հազ. տղաներ, 120 հազ. աղջկներ, 240 հազ. տղամարդիկ, 11 հազ. կանայք: Նման քաղաքականությունը հետապնդում էր մի շարք նպատակներ, որոնք փոխահավետ էին. նախև և առաջ լուծվում էր անգրագիտության հարցը: Ուսում ստացած երիտասարդները հնարավորություն էին ծեռք բերում ավարտելուց անմիջապես հետո անցնել աշխատանքի. դրանով իսկ լուծվում էր գործազրկության հարցը: Նախկինի համեմատ ստեղծվում էին զինծառայության ավելի բարենպաստ պայմաններ. այժմ նրանց համար ծառայությունը փոխարինվում էր մասնագիտություն ծեռք բերելու հնարավորությամբ: Պետությունն իր հերթին ունենում էր որակյալ նոր կազմեր:

Անգրագիտության վերացման հետ մեկտեղ, «Լուսավորության կորպուսների» անդամները նաև իրականացնում էին նոր դպրոցների կառուցման և էին դպրոցների վերանորոգման աշխատանքներ: Եղեկով պաշտոնական տվյալներից՝ 1967թ. դրությամբ Կորպուսների անդամները տեղացի բնակիչների օգնությամբ կառուցել և վերանորոգել են ավելի քան 18.000 դպրոց: Միևնույն ժամանակ գյուղացիների օգնությամբ նրանք կառուցել են տեղական ճանապարհներ, կամուրջներ, մզկիթներ, հասարակական բաղնիքներ, տնկեցին ծառեր և այլն<sup>11</sup>:

«Լուսավորության կորպուսների» աշխատանքի շնորհիվ վերջին տարիներին մեծացավ Լուսավորության նախարարության դպրոցական ցանցը: Լուսավորության նախարարության տվյալներով՝ 1960/1961 ուսումնական տարում երկրում հաշվվում էր 9.900 տարրական դպրոց, որտեղ առկրում էր 1431,6 հազ. աշակերտ: 1967թ. դեկտեմբերի 27-ի

դրությամբ տարրական դպրոցների թիվը ավելացավ՝ հասնելով 14.740, իսկ սովորողների թիվը՝ 2378 հազ.-ի<sup>12</sup>: Նոյն ժամանակամիջոցում միջնակարգ դպրոցների թիվը 1189-ից հասավ 1682, իսկ սովորողների թիվը կրկնապատկվեց: Երկրում ընդհանուր սովորողների թիվը (ներառյալ նախակրթական, տարրական, միջնակարգ և միջին մասնագիտական դպրոցները) 1960-1967թթ. ընթացքում 2.1 մլն.-ից հասավ 3.5 մլն.-ի (բաշխության 13.5 %): 1966թ. աճեցացված բնակչության երկրորդ մարդահամարը ցույց տվեց, որ վերջին 10 տարիների ընթացքում՝ 1956-1966թթ., երկրում գրագետների թիվը երեք անգամ ավելացել էր: 1966թ. քաղաքային բնակչության շրջանում 7 տարեկանից բարձր մարդկանց 50%-ն արդեն գրագիտ էր, ընդ որում՝ 38.4%-ը կանայց էր<sup>13</sup>:

Արյունաբերության զարգացման և գյուղատնտեսության վերակառուցման արյունքում աճեց միջին մասնագիտական կադրերի պահանջարկը: Այդ բացը լրացնելու համար 1967թ. ստեղծվեց կրթական նոր համակարգ: Տարրական դպրոցների առողմատյունը դարձավ 5 տարի՝ նախկին 6 տարիների փոխարեն: Տարրական դպրոցների ծրագրերի մեջ մտցվեցին որոշակի փոփոխություններ. մաքնմարդիկայի ծրագրի մեջ մտցվեցին հանրահաշվի և երկրաշափության տարրական դասընթացներ: Նախատեսվում էր նաև երեխաներին ծանոթացնել քիմիայի և ֆիզիկայի հիմունքներին: Մեծ ուշադրություն էր դարձվելու նաև պարսից լեզվի, Իրանի պատմության և գրականության, ինչպես նաև կրոնի ուսուցմանը: Հիմնական առարկա էր դատմում՝ Դուրանի և իշլամի դպտյանների ուսումնասիրումը: Կառավարության նախաձեռնությամբ իրականացվող կրոնական գաղափարախոսության ուժնացման նպատակն էր «ավելացնել երիտասարդության բարոյականությունը»<sup>14</sup>:

Միջնակարգ դպրոցներում ուսումը բաժանվեց 2 փուլ՝ յուրաքանչյուրը երեքական տարի տևադրությամբ: Առաջին երեք տարիների ընթացքում լավ ունակություններ ցուցաբերած ուսանողները հնարավորություն էին ստանում շարունակել ուսումը, որի հաջորդ 3 տարիների ընթացքում պետք է նախապատրաստվեին բարձրագույն դպրոց ընդունվելու համար: Իսկ առաջին երեք տարիների ընթացքում իրենց չարդարացրած աշակերտները 3 տարին ավարտելուց հետո ուսումը շարունակելու էին մասնագիտական դպրոցներում, որոնք իրենց հերթին լինելու էին երկու տեսակի՝ 2 տարով, որտեղ պատրաստվելու էին որակափորում ունեցող աշխատողներ, և 4 տարի ժամկետով՝ միջին

մասնագիտական կրթություն ստանալու համար<sup>15</sup>: Այջնակարգ դպրոցներում նույնպես մեծ ուշադրություն սկսեցին դարձնել ֆիզիկայի, քիմիայի, մաթեմատիկայի և այլ բնատեխնիկական առարկաների դասավանդմանը:

Ուսումը միջնակարգ դպրոցներում վճարովի էր: 1972թ. հունիսին Լուսավորության նախարարությունը հրատարակեց հրահանգ, որի համաձայն ամսական 5 հազ. ռուալից պակաս աշխատավարձ ստացող աշխատողների երեխաները պետք է սովորեին անվճար: Սակայն միշտ չէ, որ այս հրահանգը իրականացվում էր:

Որոշակի զարգացում ապրեց նաև բարձրագույն կրթությունը, սակայն Իրանի ԲՈՒՀ-երը նախկինի պես չէին բավարարում երկրի՝ բարձր որակավորում ունեցող մասնագետների պահանջը: Եթե նախկինում մեծ տեղ էր գրավում հումանիտար ուղղությունը, ապա այժմ շեշտադրումը կատարվում էր տնտեսագետների, ճարտարագետների և տնտեսության բարգավաճման համար անհրաժեշտ մյուս մասնագիտությունների վրա: Իրանական ԲՈՒՀ-երի ուսանողների թիվը 1960-1968թթ. ընթացքում 23.800-ից հասակ 38.000-ի:

Ոսումը բարձրագույն ուսումնական հաստատություններում վճարովի էր: 1974թ. ուսման տարեկան վարձը 1972թ. համեմատ բարձրացավ 30-40%-ով: Դա անապահով ընտանիքի երեխաներին գրկում էր կրթությունը շարունակելու հնարավորությունից: Սակայն այդ դժվարությունը հալթրահարելու համար, կարիքավոր ընտանիքների համար կառավարությունը սահմանեց որոշակի արտօնություններ:

1966թ. հունվարին բացվեց Գյուղատնտեսության ինստիտուտը: Ինչպես արդեն նշվել էր, գյուղական ունեցող ԲՈՒՀ-երը չէին բավարարում երկրի համար անհրաժեշտ մասնագետների պահանջարկը: Նոր ինստիտուտի բացումը հնարավորություն կտար ուսանողներին իրենց համար նախընտրելի մասնագիտությունը ձեռք բերել ոչ թե արտասահմանում՝ ծախսելով մեծ գումարներ, այլ հարազատ երկրում:

Չնայած նրան, որ “Սպիտակ հեղափոխության” շրջանում անգրագիտության վերացման համար ձեռնարկված միջոցառումները լիովին չլուծեցին կրթական խնդիրները, սակայն նշանավորեցին դրական տեղաշարժեր բնակչության կրթական, հասարակական և մշակութային կյանքում:

RUZANNA AZROYAN  
(IOS)  
EDUCATIONAL REFORMS IN IRAN IN 1960-1970s

In 1960-1961 the people of Iran raised a huge valve of complaint and protests against the government. The government immediately started realization of reforms. Among them the agrarian reforms and changes in the public and cultural life of Iran had a very special place and meaning. During 1960-1967 positive and qualitative changes were made in the educational system. New school buildings were built and the old ones were reconstructed. By 1967 the number of pre-educational and secondary schools was almost 16422 against the 11089 of the past years; and the number of students increased more than three times.

ԾԱԿՈՎԱԳՈՂԻԱՅԻՆԱՐ

1. Арабаджян З.А., Иран, власть, реформы, революции (XIX-XXвв.), М., 1991, с. 74.
2. Bahramitash R., Revolution, Islamization, and Women's Employment in Iran, 2003, volume IX, Issue 2, <http://www.watsoninstitute.org/biwa/archive/9.2/Iran/Bahramitash>.
3. Rouhollah K. Ramazani, Iran's "White Revolution": A Study in Political Development, *International Journal of Middle East Studies*, Vol. 5, No. 2 (Apr., 1974), p. 124-139, <http://www.jstor.org/pss/162585>,<http://www.sarafrazan.net/thefather%20o%9620white.htm>.
4. Savory M. Roger, Social Development in Iran during the Pahlavi Era, Iran under The Pahlavis, (ed. by George Lenczowski), Stanford, California, 1978, p. 90.
5. Բայրութի Ա. Խոսկի պատմություն, Երևան, 2005 թ., էջ 675, Eilers Wilhelm, Educational and Cultural Development in Iran during the Pahlavi Era, Iran under The Pahlavis, (ed. by George Lenczowski), Stanford, California, 1978, p. 313.
6. Մահմադ առ'ւ Իսմայլօ Դ., Создание и деятельность «Корпуса просвещения» в Иране, Иран (сборник статей), М., 1971, с. 30-50.
7. Иванов М.С., «Иран сегодня», М., 1969, с. 131, [http://www.iranchamber.com/history/white\\_revolution/white\\_revolution.php](http://www.iranchamber.com/history/white_revolution/white_revolution.php).
8. «Промышленный статистический ежегодник за 1962/1963», Тегеран, 1964.
9. Echo Iran. For Your Information, N592, 7.X.1967. The New Educational System, p. 3, Иванов М.С., Иран в 60-70-х годах XX века, М., 1977, с. 109.
10. Мухаммед Реза-шах Пехлеви, Белая революция, Париж, 1960, с. 4.
11. Watson K., The Shah's White Revolution-Education and Reform in Iran, *Comparative Education*, Vol. 12, No. 1 (Mar., 1976), p. 23-36, <http://www.jstor.org/pss/3098430>.
12. Иванов М.С., «Иран сегодня», М., 1969, с. 135.
13. «Кейхан» 1967/1968, Тегеран, 1968.
14. Дорошенко Е.А., Система просвещения в Иране, М., 1959, с. 69.
15. Iraj Bashiri, <http://www.angelfire.com/rmb/bashiri/pahlavireforms/PahlaviReforms.html>.

ԱՌԱՋԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ  
(ԱԻ)  
ԲԱՀՐԱՄԱԼ-ԱՐՄԱՆԻԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ  
ԵԳԻՊՏՈՍՈՒՄ 1135-1140թթ.

8-րդ դարի վերջին Աբբասյան հզոր խալիֆայության թուլացումը հաճգեցրեց նրանում անկախ վարչական միավորների առաջացման: Աշդպիսի միավորներից էր Ֆարիմյան խալիֆայությունը, որն իր կարևորագույն տեղում է գրադենում արարական պատմության մեջ: Ֆարիմյան խալիֆայության (909-1171թթ.)<sup>1</sup> պատմության հետ սերտորեն փոխկապակցված են մի շարք հայորդների անուններ, որոնք տևական ժամանակաշրջան բարձրաստիճան պաշտոններ են գրադեցրել խալիֆայության վարչակարգում:

Ֆարիմյան խալիֆայության հայագիր վագիրներից էին Բայր ալ-Գամալին, Մալիք ալ-Աֆդալը, Վահրամ Պահլավունին և այլք, որոնց անունների հետ են կապված պետականության պահպանման, ներքին հակամարտությունների, ճգնաժամների հաղթահարման և այլ պատմական նշանակալից դրվագներ:

Սույն հոդվածի նպատակն է ներկայացնել Վահրամ Պահլավունու կամ Բահրամ ալ-Արմանիի կյանքը և գործունեությունը:

Ընդհանուր առնամբ արար պատմագրությունը, Ֆարիմյան խալիֆայության վագիր Վահրամ Պահլավունու մասին հաղորդում է հարուստ տեղեկություններ, որոնք սակայն չեն ներառում նրա գործունեության սկզբնական փուլը:

Վահրամ Պահլավունին Գրիգոր Բ. Վկայասեր կաթողիկոսի քեռորդին էր և Ներսես Շնորհալու հորեղբայրը: Նրա ծննդյան տարեթվի մասին հստակ տեղեկություններ հայտնի չեն: Նա ծնվել է Այնքափի մոտակայքում Թլրաշար կամ Թել Բաշիր կոչված քաղաքում և ունեցել է երեք եղբայր՝ Ապհրատ, Վասակ և Գրիգորիս: 1075թ. Գրիգոր Բ. Վկայասեր կաթողիկոսն այցելում է Եգիպտոս և հաջորդ տարի Եգիպտոսի հայ համայնքի արքեպիսկոպոս է ձեռնադրում իր քեռորդի Գրիգորիսին<sup>2</sup>:

Կարողիկոս Գրիգոր Բ. Վկայասերի կարգադրությամբ Վահրամ Պահլավունին իր հետարրյաների հետ Եգիպտոսում է հաստատվում և մտնում է պետական ծառայության ցուցաբերելով մարտական և վարչական նշանակալից կարողություններ: Արդյունքում նա նշանակվում է՝ Ղարքինի (Գուսի)<sup>3</sup> նաևնազապետ<sup>4</sup>:

Վահրամ Պահլավունու՝ Եգիպտոսում հաստատվելու ճշգրիտ թվականը հայտնի չէ, սակայն կարելի է ենթադրել, որ այն թվագրվում է Գրիգորիսի պաշտոնավարության շրջանին, եթե Եգիպտոսի վազիրը Բայր ալ-Գամալին էր<sup>5</sup>:

1135թ. օգտվելով երկրում տիրող խառնաշփորից և խալիֆ Հաֆեզի իշխանության բուլությունից՝ Վահրամ Պահլավունին հայերից բաղկացած գործով պաշարեց Կահիրեն և նշանակվեց վազիր<sup>6</sup>: Խալիֆ Հաֆեզը Վահրամ Պահլավունուն նշանակեց վազիր և վազիրի զգնաւությանը հաջորեց՝ չնայած նրան, որ վերջինս քրիստոնյա էր և մզկիր մտնելու իրավունք չուներ<sup>7</sup>:

Վազիրի պաշտոնում հաստատվելուց հետո՝ Վահրամը բույլություն խնդրեց խալիֆ Հաֆեզից և Եգիպտոս քերեց իր եղայրներին և ազգականներին<sup>8</sup>: Թեև Բաշիրից և Կիլիկյան Հայաստանից Եգիպտոս ներգաղթեց շուրջ 30 հազար հայ<sup>9</sup>:

Հետաքրքրական է, որ Վահրամ Պահլավունին կարող էր ընդունել իսլամ, ինչի արդյունքում նրա հնարավորությունները կարող էին ընդլայնվել. սակայան նա նախանդական մնալ ջերմեռանդ քրիստոնյա<sup>10</sup>: Վահրամ Պահլավունու իշխանության ընթացքում կառուցվում են բազմաթիվ վաճեր և եկեղեցիներ, և Եգիպտոսի բնակչությունը որոշակիորեն երկարացնում են, որ հայերը կարող են սպառնալիք դառնալ իրենց համար<sup>11</sup>:

Ընդհանուր առմանը իշխանության եկած հայազգի վազիրին հաջողվում է ճնշել կենտրոնախույս ուժներին և կարգ ու կանոն հաստատել երկրում<sup>12</sup>:

Խալիֆայությունում հայերի իշխանության ամրապնդումն առաջացրեց տեղաբնիկների դժգոհարյունը, որը և անհետեանը շմնաց. 1137թ. էմիրները դիմեցին Ղարքինի կառավարիչ Ռադուան Ուալախսչին՝ խնդրելով վերջինիս աջակցել իրենց հայազգի վազիրի իշխանությունից ազատվելու գործում<sup>13</sup>:

Ուարուանը 30 հազարանոց բանակով արշավեց Կահիրե՝ նպատակ ունենալով գրավել վազիրի պաշտոնը, սակայն հանդիպեց Վահրամ Պահլավունու գլխավորած բանակին<sup>14</sup>:

ճակատամարտից առաջ Ուարուանի գլխավորած գինվորներն իրենց սրերի վրա Նորանի էջեր են փակցնում, որը և ստիպում է Վահրամի խամադավան գորքին հրաժարվել Նորանի դեմ կովելոց<sup>15</sup>:

Վահրամը մի շարք հավատարիմ համախոների հետ փախուստի է դիմում և ապաստան գտնում Դամասկոսի մոտակայքում, սակայն շատ շուտով, խալիֆից հատուկ թույլտվություն ունենալով, վերադառնում է Եզիզոս և հաստատվում Վերին Եզիզոսի Ասուանի շրջակայքում Խայերին պատկանող Դայր ալ-Արյադ (Սալիտակ Վանք) կոչվող վայրում<sup>16</sup>:

Ուարուան Ուալախին. գրավելով վազիրի պաշտոնը, անմիջապես ձեռնամուխ եղակ Խայերին իշխանությունից գրկելու և ճնշումների քաղաքականությանը, որի հետեւանքով Կահիրեի հյուսիսի հայաքնակ թաղամասի բնակիչները սպանվեցին, Խայերին պատկանող գույքը կողոպտվեց, եկեղեցիները և վանքերն ավերվեցին, սպանվեցին Վահրամ Պահլավունու եղբայր Վասակը և Առաջնորդ Անանիան, ինչպես նաև քանդվեց Գրիգորիս արքայիսկոսի գերեզմանը<sup>17</sup>:

Հաստ Իբն Սույասասարի Գուսի նաևանգում սպանվում է Վահրամի եղբայր Վասակը, որի սպանությունից երկու օր անց Վահրամն իր ընտանիքի և գորքի ուղեկցությամբ Սալիտակ Վանքի ճանապարհին հասնում է Գուս, ավերում է քաղաքը, սպանում քազմարիվ բնակիչների և հետո միայն հաստատվում Դայր ալ-Արյադում:

1137թ. վազիրի պաշտոնում հաստատվելուց անմիջապես հետո Ուարուան Ուալախին իր եղբոր՝ Նասրեդինի գլխավորությամբ գորք ուղարկեց Վահրամի դեմ, սակայն ճակատամարտ տեղի չտնեցավ, համաձայնաթյուն ձեռք բերվեց, որ Վահրամը կմնա Սալիտակ Վանքում և իր գորքին բաց կրողնի, որպեսզի վերջիններս վերադառնան Խայրենիք<sup>18</sup>:

Սակայն շուտով խալիֆ Հաֆեզը, զգալով սաստկացող խժդժորյաններն ու անկարգությունները երկրում, 1138թ. Վահրամին երավիրեց իր պալատ, և վերջինս մնաց այստեղ մինչեւ իր մահը<sup>19</sup>:

Վահրամի պալատում հաստատվելը խարխվեց Ռայուամի հեղինակությունը և նպաստեց վերջինիս փախուստին Կահիրեց:

Ռայուամ Ռուլախչի և Վահրամ Պահլավունու հակամարտությունն ավարտվեց 1140թ. վերջինիս մահով:

Փաստորեն, Վահրամ Պահլավունին, իր կյանքի վերջին տարիներն այրելով պալատում, վարում էր երկրի գործերը, խորհուրդներ էր տալիս խալիֆին, սակայն պաշտոն չէր ստանձնում, ինչն ամենայն հավանականությամբ պայմանավորված էր խալիֆի՝ այլեւս այլակրոն վազիր և դրա հետ կապված խնդիրներ չունենալու ցանկությամբ:

Ըստ Իրն Մույսասարի՝ Վահրամի մահվան կապակցությամբ խալիֆ Հաֆեզը երեք օր սուգ հայտարարեց, կանչեց հայոց պատրիարքին և կազմակերպեց հողարկավորության արարողությունը:

Կեսօրին Վահրամի աճյունը հանվեց պալատից նկարազարդ սավանով պատված դագաղի մեջ՝ շրջապատված քրիստոնյա քահանաներով:

Թափորն ուղեկցում էին հետիւնն շերիֆներ (Մարգարենից սերող ազնվականներ), բարձրաստիճան այրեր:

Հողարկավորությամբ անձամբ մասնակցում էր խալիֆ Հաֆեզը՝ ջորի հեծած, որը, հասնելով գերեզման (Դայր ալ-Խանդակ) նստեց եզրին և սաստիկ հուզվեց<sup>20</sup>:

Այսպիսով, Վահրամ Պահլավունին, ապրելով իր գործունեությունը ծավալելով Եգիպտոսում, Ֆարխմյան խալիֆայության պատմության մեջ իր անջնջելի հետքն է քողել։ Նրան հաջողվեց կարճ ժամանակամիջոցում երկրում կարգ ու կանոն հաստատել, ճնշել դավադիր ուժերին իրապես վայելել խալիֆ Հաֆեզի հարգանքն ու սերը, ինչի մասին միանշանակ խոսում է քաղման արարողության նկարագրությունը Վահրամ Պահլավունու խալիֆի պալատում բնակվելու վիաստը:

ARSEN ARAKELYAN  
(IOS)  
BAHRAM AL-ARMANI'S ACTIVITY IN EGYPT (1135-1140)

In the end of 8-th century Abbasid Caliphate was divided into several independent states and one of them was Fatimid Caliphate. The history of Fatimid Caliphate states, that there were several Armenian Wazirs (head of Government), like Badr al-Gamali, Malik al-Afdal, Vahram Pahlavuni etc.

Vahram Pahlavuni has been one of the key persons in the history of Government of Fatimid Caliphate.

Caliph Hafez had nearly lost his power and he appointed Vahram in the position of Wazir. This appointment was really useful; Vahram centralized and raised Caliphate's power, crushed Caliph's enemies. Vahram brought about 30 thousand Armenians to Egypt. During the two year period of Vahram's service as Wazir many churches and monasteries had been constructed in Egypt.

He lived and died in Caliph's palace.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հովհաննիսյան Ն., Արարական երկրների պատմություն հ., Ի., Եր., 2001, էջ 385:
2. Սլոբձեան Գ., Ազամաւոր հայեր Եգիպտոսի մէջ, Գահիրէ, 1947, էջ 64-65:
3. Թուրշյան Հ., 11-րդ և 12-րդ դարերի Եգիպտահան գաղորի պատմությունից, Արևելագիտության ժողովածու, հ. 2, Եր., 1964, էջ 310:
4. Զեյթեան Ս., Հայութեան մերուումը վաղ միջնադարեան և արդի Եգիպտոսի պատմութեան մեջ, Կվերեկ, Կանաչա, 2004, էջ 39:
5. Մշտիկան Գ., նոյն տեղում, էջ 65:
6. Ալպօյաննան Ար., Արարական Սիասեալ Համբավետութեան Եգիպտոսի նահանգը և հայերը, Գահիրէ, 1960, էջ 28:
7. Թուրշյան Հ., նոյն տեղում, էջ 310:
8. Իրն Սույասասար, տե՛ս Սեմենովա, Լ.Ա. Из фатимидского Египта, М., 1974, с. 181.
9. Իրն Սույասասար, տե՛ս Մշտիկան Գերգ, Ականաւոր Հայեր Եգիպտոսի մէջ, Գահիրէ 1947ր, էջ 69:
10. Սուֆիան Յ., Եգիպտոսի հայ մեմլութերն ու իշխանները ֆարիմեան շրջանին, Գահիրէ 1928թ, էջ 47:
11. Սեմենովա Լ.Ա., Из фатимидского Египта, М., 1974, с. 181.
12. Սուֆիան Յ., նոյն տեղում, էջ 47:
13. Մշտիկան Գ., նոյն տեղում, էջ 70:
14. Ալպօյաննան Ար., նոյն տեղում, էջ 31:
15. Զեյթեան Ս., նոյն տեղում, էջ 41:
16. Մշտիկան Գ., նոյն տեղում, էջ 72:
17. Զեյթեան Ս., նոյն տեղում, էջ 41:
18. Մշտիկան Գ., նոյն տեղում, էջ 72:
19. Զեյթեան Ս., նոյն տեղում, էջ 41:
20. Իրն Սույասասար, տե՛ս Մշտիկան Գ., Ականաւոր Հայեր Եգիպտոսի մէջ, Գահիրէ 1947ր, էջ 74:

## ԱՎԴԱԼՅԱՆ ԱՐԹՈՒՐ

(ՄԻ)

1952թ. ՀՈՒԽԱՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈԹՅԱՆ ԱՆԴԱՌԱՐՁԵ  
ԵԳԻՊՏՈՍԻ ԴՊԻՏԻԱԿԱՆ ՀԱՍՏԵՆՔԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ  
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԱԴԱԿԻ ՎՐԱ

Երկրորդ աշխարհամարտից հետո Եգիպտոսի ներքաղաքական իրավիճակն այնքան էլ հանգիստ ու կայուն չէր՝ պայմանավորված քաղաքական կուսակցությունների միջև հարաճուն հակասություններով, իշխանավորների հանդեպ զանգվածների նկատելիորեն աճող դժգոհությամբ, տնտեսության երկարատև ճգնաժամային իրադրությամբ, ինչպես նաև 1948-1949թ. արար-խրայելական պատերազմում Եգիպտական և ընդհանրապես արարական բանակների կրած պարտությամբ։ Ուստի ընդհատակում գործող «Ազատ սպաներ» կազմակերպության 1952թ. հուլիսի 23-ին իրականացրած հեղափոխությունը որոշակի սպասումներ արքանցը Եգիպտոսի ժողովրդի մեջ։ Այդ օրը՝ առավոտյան ժամը 7-ին Կահիրեի ուղիղուն հիշյալ կազմակերպության անունից հայտարարեց, որ երկրուն հեղափոխություն է տեղի ունեցել<sup>1</sup>։ Եգիպտոսում ամբողջ իշխանությունը կենտրոնացվեց «Ազատ սպաներ» կազմակերպության Գործադիր կոմիտեի ձեռքում, որն այդուհետ կոչվեց Հեղափոխության ղեկավարության խորհուրդ (ՀԱՄ)։ Վերջինիս աշխատանքները, փաստորեն, գլխավորում էր հեղափոխության կազմակերպիչ և գաղափարական ղեկավար Գամալ Աբդ Ալ-Նասերը։ Նա նաև նոր վարչակարգի հիմնական շարժիչ ուժն էր<sup>2</sup>։ Հեղափոխությունից հետո Նասերն աստիճանաբար նիմք դրաց ազգայնացման քաղաքականության՝ միաժամանակ որդեգրելով սոցիալիստական գաղափարախոսության որոշ տարրեր<sup>3</sup>։

Մինչև հեղափոխությունը բնիկ Եգիպտացի, արևելագրիստոնեական միաբնակ եկեղեցիներից մեկի հետևորդները հանդիսացող դպտիները քավականին արատշաճ դերակատարում ունեն Եգիպտոսի հասարակական-քաղաքական կյանքում և որոշակիորեն նարգրաված էին այդ ժամանակաշրջանում գործող քաղաքական

Կուսակցություններում: Նրանք հիմնականում խորհրդարան էին ներքափանցում «Վաֆի» կուսակցության համամասնական ցուցակներով: 1924-1950թթ. ընթացքում տեղի ունեցած տասը խորհրդարանական ընտրություններից վեցի արդյունքում դպտի պատգամավորները կազմել էին խորհրդարանի 7,5-10,2 տոկոսը<sup>4</sup>: Սակայն 1953թ. հունվարի 18-ին ընդունված օրենքով արգելվեցին Եզիստոսի բոլոր քաղաքական կուսակցությունները՝ բացառությամբ «Մուտուման եղայրներ» կազմակերպության<sup>5</sup>: Կուսակցությունների լուծարումից հետո դպտիները հիմնականում դրւու մնացին կառավարման ընտրովի մարմիններից, քանի որ Եզիստոսի գործն ոչ մի ընտրատարածքում նրանք մեծամասնություն չին կազմում, հետևաբար նաև իրական հնարավորություն չունեին իրենց թեկնածուներն ունենալու ներկայացուցական մարմիններում<sup>6</sup>: Քանի որ օրենակիր մարմնում դպտիների ներկայությունը զգալիորն կրծատվել էր, 1964թ. ժամանակավոր սահմանադրության 49-րդ հոդվածով նախատեսվեց խորհրդարանում ճևագործել տասը հագուց քաղկացած Ումայի խորհուրդ, որի կազմավորման իրավունքը վերապահվեց երկրի նախագահին: Նրանում ներգրավված տասն անձինք պատգամավորական տեղեր էին գրադեցնում խորհրդարանում՝ համարվելով օրենակիր մարմնի լիիրավ անդամներ: Խորհրդը նպատակ ուներ երկրի օրենակիր մարմնում ապահովել դպտիների ներկայությունը: Եթե 1964թ. նրանում կար յոթ դպտի, ապա 1970թ. դպտիների թիվն արդեն հասնում էր ինձին<sup>7</sup>: Հակառակ այս քայլերին դպտիները սկսեցին տարակուսներ, որ Նասերի վարչախումբը փորձում էր իրենց դրւու մղել երկրի քաղաքական կյանքից, քանի որ եեղափոխությունից հետո, ի տարրերություն նախահեղափոխական շրջանի, դպտի պատգամավորների թիվը նվազեց՝ կազմելով խորհրդարանի 3 տոկոսը: Դապտիների կասկածներն ու դժգոհությունները մեղմելու նպատակով Նասերի վարչախումբը նրանկատորնեն փորձեց զիջման գնալ և շարունակեց նախկինի նման կառավարությունում մեկ նախարարական արոռ հատկացնել դպտիներին<sup>8</sup>: Բացի պաշտոնական գործառություններից՝ դպտի նախարարն ուսումնասիրում և վերհանում էր դպտիների հիմախնդիրները և դրանք ներկայացնում կառավարությանը: Նշենք, որ 1952-1962թթ., երբ կառավարությունում նախարարների թիվն աստիճանաբար 13-ից հասավ 36-ի, դպտիների համամասնական

ներգրավվածությունը մնաց անփոփոխ<sup>9</sup>: Վերոնշյալ քաղաքականությունը միտված էր նաև ապահովելու երկրի ողջ քրիստոնյա բնակչության աջակցությունն Խորայելի դեմ պայքարում: Ուստի 1964թ. մարտին կազմավորված կառավարությունում դպտիների դիրքերը որոշակիորեն ամրապնդվեցին. նրանք ստացան նաև փոխնախարարի երկու լրացուցիչ պաշտոն և պահպանեցին դրանք մինչև 1967թ. հունիս ամիսը<sup>10</sup>:

1953թ. հունվարի 13-ին կազմավորվեց նոր Սահմանադրության նախագիծը մշակող հանձնաժողով, որի մեջ ընդգրկված էին հասարակության տարրեր շերտերի ներկայացուցիչներ: Իշխանությունը փորձեց նաև այդտեղ ապահովել դպտիների մասնակցությունը. 50 հոգու կազմված հանձնաժողովում 6-ը դպտի էր<sup>11</sup>:

Մինչև հեղափոխությունը պետական կառավարման համակարգի գրեթե բոլոր ոլորտներում դպտիները նշանակալի դեր ու ազդեցություն ունեին: Այդ շրջանում միջին և կրտսեր օրակաների դպտի պաշտոնյաները մեծ թվով էին կազմում նախարարություններում, նրանց վատահվում էին նաև պետական բարձր պաշտոններ<sup>12</sup>: Նախարարություններում նրանք գրանցեցնում էին պաշտոնների մոտավորապես 45 տոկոսը: Այդ փաստը պատճառաբանում էին նրանով, որ նրանք կազմում էին գրագետ եզրակացների 30 տոկոսը, ինչպես նաև վերահսկում էին երկրի տնտեսության 19 տոկոսը<sup>13</sup>: Այրուհանդերձ հեղափոխությունից անմիջապես հետո նոր իշխանությունը զգալիորեն խարիսնց դպտիների դիրքերը պետական կառավարման համակարգում: Բարձր և պատասխանատու պաշտոնները գերազանցապես վատահվում էին մոտսպամաներին, և միայն մի քանի պետական գերատեսչություններում դպտիներին հաջողվեց պահպանել իրենց դիրքերը: Հեղափոխությունից հետո Ֆինանսների նախարարությունում նրանք կազմում էին աշխատակազմի 15,9 տոկոսը, Տարածքային կառավարման նախարարությունում՝ 15,4, Գյուղատնտեսության նախարարությունում՝ 7,7, Կրթության նախարարությունում՝ 6,2<sup>14</sup>: Չնայած Տարածքային կառավարման նախարարությունում դպտիների որոշակի ներգրավվածությանը՝ Եզրակացնությունը՝ 37 քաղաքներից և ոչ մեկում դպտի քաղաքապետ չեր նշանակվում: Ինչ վերաբերում է Կրթության նախարարությանը, ապա պետք է շեշտել հատկապես այն իրադրությունը, որ Եզրակացնությունը 12 համալսարանների, 150 ինստիտուտների և գիտական

հաստատությունների դեկավար պաշտոններում դպտիներ չեն նշանակվում: Ֆակուլտետների դեկանները նույնպես նեծամասամբ մուտքամբներ էին<sup>15</sup>: «Դպտի կադրերի ներգրավվածության առումով պատկերը շոշափելուրեն չէր տարբերվում նաև Արտաքին գործերի նախարարությունում, որտեղ Նասերի Խշխանության տարիներին դպտի դեսպան չէր նշանակվում, և դպտիները կազմում էին ողջ դիվանագիտական անձնակազմի միայն մոտ 2,5 տոկոսը<sup>16</sup>:

Փաստենք նաև որ, 1952թ. հուլիսյան հեղափոխությունից հետո նախազան Նասերի մշակած «արարական սոցիալիզմի» կառուցման նոր քաղաքական գաղափարախտության շրջանակներում դպտիների դերը զգալիորեն նվազեց ոչ միայն Եգիպտոսի քաղաքական, այլև տնտեսական կյանքում: Ազգայնացման քաղաքականության հետևանքով՝ հատկապես հողատիրության չափերի աճնախընթաց կրճատման արյունքում դպտիները հարաբերաբար ավելի տուժեցին, քան մուտքամբները: Փաստորեն Եգիպտոսում դպտիների դիրքերն ել ավելի տկարացան:

1952թ. սեպտեմբերի 9-ի հոդային քարեփոխումների վերաբերյալ օրենքով հողատիրության առավելագույն չափը սահմանվեց 200 ֆերդան<sup>17</sup>, իսկ ավելցուկները բռնազրավում էին և վաճառում սակավահող գյուղացիներին<sup>18</sup>: Արյունքում սեփականազրկվեցին նաև հեղինակավոր դպահ շատ ընտանիքներ, որոնց մեծ մասի կալվածքների չափերը գերազանցում էին 1000 ֆերդանը: Ըստ պաշտոնական տվյալների՝ մինչև հեղափոխությունն այդ ընտանիքները վճարում էին Եգիպտոսի ընդհանուր հողահարկի շուրջ 16 տոկոսը<sup>19</sup>: Իսկ արդեն 1961թ. հուլիսի 25-ին ընդունվեց նոր հոդային օրենք, որով հողատիրության առավելագույն չափարաժինն էլ ավելի կրճատվեց և իջեցվեց մինչև 100 ֆերդանի<sup>20</sup>: Հողատարածքների ազգայնացումը զգալի նյութական վճառ հասցրեց նաև դպտիական եկեղեցուն: Չնայած հոգևորականներն ընդհանրապես խուսափում էին եկեղեցապատկան հողատարածքների վերաբերյալ ճշգրիտ տվյալներ հրապարակել, սակայն որոշ ուսումնասիրողներ նշում են, որ 1927թ. պաշտոնական տվյալներով դպտիական յոթ վանական համայնքների հողատարածքների չափերը գերազանցում էր 9 հազար ֆերդանը<sup>21</sup>: Այս չափարաժնակը մոտ է 1952թ. դպտիական համայնքային խորհրդի կողմից գեներալ Նազիրին տրամադրած տվյալներին, որտեղ

պատրիարքական հողերը հաշվում էին 3,5 հազար, իսկ վանքավատկանները՝ 6 հազար ֆերդաց<sup>22</sup>:

1960-1961թթ. ընթացքում տրամադրութիւն ուղարտի խոշոր դպտի ներդրողները նույնացնելու հրենց պատկանող ընկերությունների ամբողջական ազգայնացման արդյունքում լուրջ կորուստներ ունեցան: Մինչ այդ տրասպորտի բնագավառում՝ հիմնականում Կահիրեի ներքաղաքային և միջքաղաքային ավտորուսային ընկերություններում տիրապետող էր դպտիական կապիտալը, որին պատկանող «Օքորու իշխան», «Ասյութ» և այլ ընկերություններն իրականացնում էին ներքաղաքային և միջքաղաքային փոխադրումների մոտ 75 տոկոսը<sup>23</sup>:

Դպտիների տնտեսական դիրքերի բուլացմանը նպաստեց նաև ողջ քանկային համակարգի ազգայնցումը, քանի որ Եգիպտոսի երեք ամենախոշոր՝ Ազգային, Կահիրեի և «Միսր» բանկերի ներդրումային կապիտալի գգալի մասը պատկանում էր խոշոր դպտի ընտանիքներին<sup>24</sup>:

Ընդհանուր առմամբ, ազգայնացման հետևանքներից էր նաև այն, որ դպտիական համայնքը կորցրեց իր տնտեսական հզորությունը, սակայն շնորհիվ կրթության և մասնագիտական պատրաստվածության քարձր մակարդակի՝ որոշ ոլորտներում այն պահպանեց իր ամուր դիրքերը: Նույնիսկ հեղափոխությունից հետո քժիշկմերի, դեղագործների, առևտրականների, բանկային համակարգի ծառայողների մեծ մասը շարունակում էին մնալ դպտիները: Տարբեր գնահատումներով՝ դեղագործության ասպարեզում դպտի էր մասնագետների 80 տոկոսը, իսկ քժշկության ասպարեզում՝ 30-40 տոկոսը<sup>25</sup>:

Հեղափոխությունից հետո նոր իշխանության վարած քաղաքականությունը հանգեցրեց մեծ թվով եգիպտաբնակ դպտիների, ինչպես նաև այլ քրիստոնյաների արտագաղթիմ: 1960թ. պաշտոնական մարդահամարի տվյալներով դպտիների թիվը Եգիպտոսում կազմում էր ամբողջ բնակչության թվի 7,3 տոկոսը<sup>26</sup>: 1960-ականներից սկսած՝ այդ թիվը սկսեց նվազել: 1966թ. մարդահամարի տվյալներով՝ 1960-1966թթ. Եգիպտոսից արտագաղթել էր 294 հազար մարդ, որից 150 հազարը՝ դպտի<sup>27</sup>:

Այսպիսով, կարելի է փաստել, որ Նասերի վարած քաղաքականությունը, ի թիվս այլ խնդիրների, հանգեցրեց նաև Եգիպտոսի դպտի բնակչության տնտեսական և քաղաքական մեկուսացմանը: Դպտիական համայնքը կորցրեց իր երրեմնի դիրքերը քաղաքական և տնտեսական կյանքում:

**THE IMPACT OF 1952's JULY REVOLUTION ON THE POLITICAL AND ECONOMIC SITUATION OF THE EGYPT COPTIC COMMUNITY**

Before the 1952's July revolution the Coptic Community of Egypt had been enough represented in the Government and the Parliament. After the revolution its ideological leader Gamal Abd Al-Naser centralized the rule and economy of the country. The Coptic Community was isolated both politically and economically because of the revolutionaries' mentioned policy. As a result, the Copts lost their role in the political and economic life of Egypt.

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

- Արգարյան Ե., Քաղաքական և սոցիալ-տնտեսական վերափոխությունները եզրակացնելու մասին փուլում, Սերծավոր և Սիօնին Արևելի Երկրներ և ժողովրդներ, հ. XIV, Եր., 1987, էջ 177:
- Հովհաննիսյան Ն., Ապրական Երկրների պատմություն, հ. III, Եր., 2006, էջ 256:
- Սամիրս Բահր, Ալ-ակրատ ֆի հայր ալ-սիյասիյա ալ-Սիրիյա, Ալ-Կահիրա, 1984, էջ 149, (արաբերեն):
- Շահիկ Սուլեյման, Ալ-ակրատ բայց ալ-հիրման ալ-բանիսի վա ալ-վատանի, Ալ-Կահիրա, 1996, էջ 201, (արաբերեն):
- Արգարյան Ե., Ազգ. աշխ., էջ 199:
- Betts Robert Brenton, Christian in the Arab East: A Political Study, Athens, 1995, p. 61.
- Սամիրս Բահր, Ազգ. աշխ., էջ 168:
- Dekmejian H., Egypt Under Nasir: A Study in Political Dynamics, London, 1971, p.176-177.
- Շահիկ Սուլեյման, Ազգ. աշխ., էջ 205:
- Dekmejian H., Ազգ. աշխ., էջ 176:
- Հովհաննիսյան Ա., Եզիպատոն ազգային և կրոնական փորբամասնությունները (1907-1967 թվականներ), ատենախոսություն՝ պաշտպանված ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինսանուության գիտական խորհրդու, Եր., 2002, էջ 129:
- Kyriakos Mikhail, Copts and Moslems under British Control. A Collection of Facts and a Resume of Authoritative Opinions on the Coptic Question, London, 1911, p. 44.
- Behrens-Abouseif Doris, The Political Situation of the Copts 1789-1923, Christians and Jews in the Ottoman Empire, Vol. 2, New York, 1982, p. 199.
- Սամիրս Բահր, Ազգ. աշխ., էջ 164:
- Նոյն տեղում, էջ 160:
- Karas Shawkey, The Copts Since the Arab Invasion: Strangers in their Own Land, Jersey City, 1985, p. 114.
- Եզիպատոնի 1 թիվամբ հավասար է 0,42հա.:
- Հովհաննիսյան Ն., Ազգ. աշխ., էջ 259:
- Carter Barbara Lynn, The Copts in Egypt Politics, London, 1986, p. 210.
- Հովհաննիսյան Ն., Ազգ. աշխ., էջ 281:
- Carter Barbara Lynn, Ազգ. աշխ., էջ 42:
- Baer Gabriel, A History of Landownership in Modern Egypt 1800-1950, London, 1962, p. 179.
- Սամիրս Բահր, Ազգ. աշխ., էջ 162:
- Նոյն տեղում, էջ 163:
- Chitham E. J., The Coptic Community in Egypt: Spatial and Social Change, Durham, 1986, p. 82.
- Karas Shawkey, The Copts Since the Arab Invasion: Strangers in their Own Land, Jersey City, 1985, p. 24.
- Նոյն տեղում, էջ 30:

## ԲԱԲԼՈՒՆՅԱՆ ԱՐՓԻՆԵ

(ՀՅԹԻ)

ԽԱՐՔԵՐԴԻ ՆԱՀԱՄՎԳԻՑ ՀԱՅ ԲՆԱԿՇՈՒԹՅԱՆ ԱՄՆ  
ԱՐՏԱԳԱՎԹԻ ՀԻՄԱԿԱՄՆ ՊԱՏճԱՌՆԵՐԸ (1880-1914թթ.).  
ԱՐՏԱԳԱՎԹԻ ՀԵՏԵՎԱՄՆԵՐԸ

XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին Օսմանյան կայսրությունում հայ բնակչության ժողովրդագրական փոփոխությունների միտումներից էր արտագաղթը՝ հիմնականում Ամերիկայի Միացյալ Նահանգներ: Հայերը Թուրքիայից ԱՄՆ սկսեցին գաղթել դեռ 1830-ականներից, Ասիական Թուրքիայից՝ միայն 1869թ.<sup>1</sup>: 1880-ականներից ԱՄՆ արտագաղթողների թիվը սկսեց աճել: Նրանց մեջ մեծ թիվ էին կազմում Խարբերդի նահանգից գաղթած հայերը: Ամերիկան հյուպատոսների գնահատմամբ Օսմանյան կայսրությունից Ամերիկա արտագաղթած հայերի 4/5-ը Խարբերդի նահանգից էին<sup>2</sup>: Այս մասին են վկայում նաև Թուրքիայից ԱՄՆ արտագաղթած հայերի՝ դեռևս XIX դարի վերջերին հիմնած միտքյունների անվանումները, որոնց գերակշյուն մասը կրում էր Խարբերդի նահանգի տարբեր բնակչավայրերի անվանումները, ինչպես օրինակ՝ Քեսիրիկ, Հուսենիկ, Թլկատին, Բազմաշեն, Դատեմ, Մալաթիա, Զմշկածագ, Հաղթուկ և ուրիշներ:

Փոքը նոր արձանագրել արևմտահայության և հատկապես խարբերդահայերի՝ ԱՄՆ արտագաղթի հիմնական պատճառները: Նախ նշենք, որ հայ բնակչության տեղաշարժները այս տարածաշրջանի համար նոր երևույթ չեն: Տարիներ շարունակ Խարբերդից բազմաթիվ հայեր հարկադրված բռնում էին ծննդավայրը և տեղափոխվում այլ բնակչավայրեր, ինչպես, օրինակ՝ Ջմյունիա, Կ.Պոլիս, Ադանա, հետագայում նաև՝ Բաքու, Թիֆլիս, որտեղ նրանք աշխատում էին որպես ծառայողներ, բեռնակիրներ, բանվորներ, ջրկիրներ<sup>3</sup>: 1880-ականներից Խարբերդի նահանգի հայերի արտագաղթի հիմնական ուղղությունը դարձավ ԱՄՆ-ը: Եթե սկզբնական շրջանում ԱՄՆ եկած հայերը հիմնականում կրթված, առաջադիմ մարդկի էին, որ գալիս էին ուսումը շարունակելու կամ արհեստների, առևտուի մեջ

հմտանալու համար, ոմանք՝ քաղաքական ապաստան ստանալու<sup>4</sup>, ապա հետագայում նրանց մի ստվար մասն արդեն ԱՄՆ էր զախս՝ աշխատանք գտնելու և ապահովելու հայրենիքում բռղած ընտանիքներին: Արտագաղթի հիմնական պատճառներից մեկը, թերևս, տնտեսվարելու սահմանափակ պայմաններն էին, ծանր հարկերն ու հողագրկությունը, ինչն առավել բարդացնում էր այն բնակավայրերի հայության վիճակը, որտեղ նրանց հիմնական գրադարձը երկրագրծությունն էր: Ավելին, ակնհայտ էր հողաբաժանման անարդարացի քաղաքականությունը, ինչը բերել էր նրան, որ Մնզրենի հարթավայրում հողագուրկ էր քրիստոնյա բնակչության 81.6%-ը, մինչդեռ մահմեղական բնակչության՝ 23.7%-ը<sup>5</sup>, այն դեպքում, երբ նույն հարթավայրի բնակավայրերում հայերը մեծամասնություն էին կազմում: Ողջ Խորքերդի գավառակում հողագուրկ էր գյուղական բնակչության քրիստոնյաների՝ 74.1%-ը, մահմեղականների՝ 23.2%-ը<sup>6</sup>: Հարկ է նշել, որ Խորքերդի նահանգի որոշ տարածքներ՝ հատկապես Խորքերդի գավառակը, առանձնանում էին նաև բնակչության աննախադեպ խոռոչամբ: Արտագաղթողների մեծ մասը հենց այս շրջանի բնակավայրերից էին:

**XIX** դարի վերջերին հայերի նկատմամբ իրականացվող հալածանքների քաղաքականությունը էլ ավելի սրվեց. տների խուզարկությունները, այս կամ այն պատճառով իրականացվող ծերքակալությունները դարձան այն ազդակը, որը ստիպեց արդեն հարյուրափոր, հազարափոր հայերի արտագաղթելու իրենց հայրենիքից: Խնչպես գրում է Կոլյուրակինը. «Հայերը ներկայումս անհրաժեշտ օգնություն չեն ստանում արդինիստրացիայի ներկայացուցիչների ու դատարանի կողմից, քանի որ քրիստոնյաների նկատմամբ կիրառվող կողմնակալ վերաբերմունքը ավելի ու ավելի է մտնում հենց կառավարության գործողությունների սխտեմ և հաճախ ու նաև առավել ջանահրաբր կիրառվում նահանգային իշխանությունների կողմից: Խորքերդում այդ քաղաքականությունը առավել տեսանելի է, քան Հայաստանի ու Քրդստանի քաղմաքիվ այլ մասերում, օրինակ, Երզրումի և Վանի սանծակներում»<sup>7</sup>: Խորքերդը այն նահանգներից էր, որտեղ 1894-1896թթ. կոտորածներն ու բռնի մահմեղականացումը առավել լայն ծավալներ ունեցան, ընդ որում հետագա տարիներին ևս մահմեղականացման վտանգը չվերացավ: Ուստի, երբ 1894-1896թթ.

ջարդերի տարիներին և դրանից հետո շեշտակլորեն աճեց ԱՄՆ մեկնողների քանակը, նրանց մեջ ևս մեծ թիվ էին կազմում խարբերդցիները: Եղած տեղեկությունների համաձայն՝ 1910թ. ԱՄՆ-ում ապրում էր արդեն 26498 հայ<sup>8</sup>, որոնց մեջ գգալի թիվ էին կազմում Խարբերդի նահանգից գաղթած հայերը:

ԱՄՆ հայերի արտագաղթի պատճառների մասին խոսելիս նշենք ևս մեկը: Նախ, արծանագրենք, որ դեպի ԱՄՆ հայերի հոսքը սկսեց Օտարերկրյա առաքելությունների լիազորների ամերիկյան խորհրդի՝ Օսմանյան կայսրության ողջ տարածքում ծավալած գործունեությանը զուգահեռ: Այս առաքելության հիմնական և ամենամեծ կայսերական մեկը եկմնվեց հենց Խարբերդում: Միսիոներների կատարած աշխատանքը դրական արծագանքներ գտավ բնակչության շրջանում. սա նաև նշանակում էր վստահություն, համակրանք այն երկրի նկատմամբ, որը ներկայացնում էին նրանք: XIX դարի կեսերից ամերիկացի միսիոներները մի քանի տասնյակ երկսուն դպրոցներ բացեցին Խարբերդում, Մալաթիայում, Ակմում, Արարկիրում, բազմաթիվ գյուղերում: 1878թ. Խարբերդում ամերիկյան քոլեջների ծրագրերով հիմնվեց Արմենիա քոլեջը, որը 1888թ. վերանվանվեց Եփրատ քոլեջ: Այս կրթարանը դարձավ ժամանակի լավագույն կրթօջախներից մեկը, որտեղ կրթություն էին ստանում Արմ. Հայաստանի տարրեր բնակավայրերից այսուղև եկած երիտասարդներ: Կրթական, մշակութային զարգություն, որ նկատվեց Խարբերդի նահանգում ևս նապատեց արտագաղթին: Արտագաղթողների մեծ մասը հենց քոլեջների, դպրոցների շրջանավարտներ էին, որոնք ԱՄՆ-ում էին փնտրում ազատության, իրավահավասարության, պաշտպանվածության այն մքնարարք, ինչի մասին լսել էին իրենց ուսուցիչներից, ամերիկացի միսիոներներից և ինչը չկար հայրենիքում:

Արտագաղթի մյուս հզոր ազդակը դա արդեն ԱՄՆ-ում հաստափած հայերի նամակներն էին, որտեղ նրանք խոսում էին Նոր Աշխարհի իրաշալիքների ու ամերիկացի ժողովրդի մեծահոգության մասին:

Արտագաղթի մասին խոսելիս պատկերն ամբողջական չի ստացվի, եթե չանցյալառնանք արտագաղթի հետևանքներին: Բազմաթիվ խարբերդցիներ ԱՄՆ-ում աշխատող հարազատների ուղարկած գումարներով արդեն XX դարի սկզբներին կարողացան մեծ քանակությամբ հողեր գնել ու դառնալ խոշոր հողատերեր: Եթե «XIX

դարի վերջին քառորդում նահանգի հողերի 3/4-ը պատկանում էր բուրք աղանձներին, ապա մինչև 1908թ. ավելի ու ավելի շատ հայեր դարձան ունենոր սեփականատերեր»<sup>9</sup>: Օրինակ, Չարսանճագի Հոշե գյուղից Զուրմանջան եղայրմերը 1890-1912թթ. աշխատելով ԱՄՆ-ում, կարողացան գումար հավաքել և Բերրիի Հյուսնի բեկից գնել Հոշեի բոլոր բարերեր հողերը, այն դեպքում, եթե տարիներ շարունակ գյուղի բոլոր հողերը պատկանում էին Բերրիի բուրք աղանձներին<sup>10</sup>: Առավել մեծ փոփոխություններ գրանցվեցին Խարբերդի դաշտի գյուղերում, որովհետև այս բնակավայրերից էր նկատվել հայերի առավել մեծ հոսքն ԱՄՆ: Ավելին, որոշ հայեր, որ մինչ այդ աշխատել էին ԱՄՆ-ում, տիրապետել նորանոր արհեստների, վերադառնալով հայրենիք, իրենց ծննդավայրերում հիմնեցին սեփական արհեստանոցներ ու գործարաններ: Նաև, Խարբերդի նահանգից հեռացած ու ԱՄՆ-ում հաստատված հայերի օժանդակությամբ հայրենիքում վերանորոգվեցին քաղմարիկ նկելեցիներ ու դպրոցներ, կառուցվեցին նորերը:

Սյուս կարևոր հետևանքը, դա հեռացողների քանակի ազդեցությունն էր հայ բնակչության քվարանակի վրա: Հայաշատ քաղաքների, գյուղերի համար մի քանի հարյուր մարդու արտագաղթը, քվում է, հական ազդեցություն չվետը է ունենար: Սյուս կողմից, եթե արձանագրում ենք, որ արտագաղթը այս նահանգից կրում էր մասսայական բնույթ, ավելին, հեռանում էին նաև մի քանի տասնյակ տուն հայ բնակիչ ունեցող գյուղերից, ընդ որում՝ իմբնականում երիտասարդներ, պարզ է, որ սա չէր կարող չազդել նահանգի հայ բնակչության ժողովրդագրության վրա: Օրինակ, 1895թ. Թէկատին գյուղի ԱՄՆ-ում էին 300 երիտասարդներ<sup>11</sup>: Խարբերդի դաշտի Քեռքե գյուղից մինչև 1915թ. ԱՄՆ էին գաղթել շուրջ 100 անձինք, ինչը կազմում էր գյուղի հայ բնակչության շուրջ 15%-ը<sup>12</sup>: Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի 1913թ. տվյալների համաձայն Խարբերդի նահանգից արտագաղթել էին 29410 հայ<sup>13</sup>, ինչը կազմում էր նահանգի հայ բնակչության շուրջ 15%-ը:

Անփոփելով, նշենք, որ Խարբերդցիների արտագաղթը ԱՄՆ ուներ ոչ միայն տնտեսական, սոցիալական, քաղաքական պատճառներ, այլ նաև կապված էր ամերիկյան միսիոներական կազմակերպության ծավալած գործունեության ու նաև նահանգի կորական կյանքի աշխատացման հետ: Ինչ վերաբերում էր արտագաղթի հետևանքներին,

ապա դրանք հակասական էին. մի կողմից չվետը է թերազմահատել արտագաղթողների նախատը Խարբերդի նահանգի հայ բնակչության տնտեսական, մշակութային վերելքում, մյուս կողմից, ակնհայտ էր, որ արտագաղթով հայերի բանակը չէր կարող իր բացասական ազդեցությունը շունենալ նահանգի հայ բնակչության թվաքանակի վրա:

ARPINE BABLUMYAN  
(AGMI)

THE MAIN CAUSES OF IMMIGRATION OF ARMENIANS FROM  
KHARBERT VILLAYET  
TO THE USA (1880-1914). THE CONSEQUENCES OF IMMIGRATION

The immigration of Armenians from the Ottoman Empire to the USA began in 1880s. Among the immigrants many Armenians were from Kharbert vilayet. The Armenians immigrated to USA because of the unsafe conditions and general poverty in their native land. It must be mentioned, that the flow of Armenians to the USA began alongside with the actions of American Board of Commissioners for Foreign Missions.

Many Armenians in Kharbert already at the end of 19<sup>th</sup> century with the help of their relatives working in the USA could buy large amount of land territories and became landowners. This had its positive influence on the economic development of the province. But the immigration had also negative effect to the number of Armenians in Kharbert vilayet.

ԾԱՌԱՅՎԳՐՈՒԹՅՈՒՆԵՐ

1. Ավագյան Ք., Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ զաղութի պատմություն, Եր., 2000, էջ 43:
2. Barbara Merguerian, The View From the United States Consulate, Armenian Tsopk/Kharpert, edited by R. Hovannisian, Costa Mesa, California, 2002, p. 281.
3. Robert Mirak, Torn Between Two Lands: Armenians in America, 1890 to World War I, Cambridge, 1983, p. 40.
4. Malcom Vartan, The Armenians in America, The Pilgrim Press, Boston, Chicago, 1919, pp. 60-61.
5. Колюбакинъ А.М., Материалы для Военно-Статистического Обозрения Азиатской Турции, томъ III, часть I, отдель 2-й, Тифлисъ, 1891, с. 366.
6. Նոյն տեղում, էջ 376:
7. Նոյն տեղում, էջ 336:
8. Malcom Vartan. The Armenians in America, p. 65.
9. Krikorian Mesrob, Armenians in the Service of the Ottoman Empire 1860-1908, p. 72.
10. Երևանի Գ.Ս. Պատմութիւն Զարսանճագի հայոց, տպ. Կ.Տօնիկեան, Պեյզոր, 1956, էջ 243:
11. Տիգմէնեան Սանուկ Գ. Խարբերդ և իր զաւակները, Ֆրեզնյ, 1955, էջ 198:
12. Չապուհեան Յարմրին Խ. Պատմութիւն Ջավիդ կամ Շեռքը զիսիին, 1917յուին 10, Ամերիկա, Լովէ, ծնուադր հուշաբույժում, ՀՅԹԻ, բաժին 8, բաժ.39, էջ 83, 145-189:
13. Kevorkian Raymond H., Paboudjian Paul B. Les Armeniens dans l'empire Ottoman. A la veille du Génocide, Les éditions d'Art et d'Histoire Arhis, Paris, 1992, p. 59.

## ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՐԱՄ

(ԱՌ)

1913թ. ՆԵԶԴՈՒՄ ՕՍՍԱՆՅԱՆ ԻԾԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԹՈՒԱՅՈՒՄ. ՆՈՐԱՀԱՅՑ ՆՅՈՒԹԵՐ

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին Արարական քերակղզում տեղի ունեցող գործընթացները, կարևոր նշանակություն ունեցան այդ տարածաշրջանում անկախ պետությունների վերջնական ձևավորման վրա:

Մույն հաղորդման առարկան հանդիսանում է ակադեմիկոս Մ. Ներսիսյանի արկիվում տեղ գտած Ֆարական Ռուսաստանի դիվանագիտական նամակագրության լույսի ներքո Բասրայի հայտնի խոշոր ֆեռագի, 1908թ. և 1912թ. Օսմանյան խորհրդարանի պատգամավոր՝ Սայիդ Թալիր ալ-Նաքիրի, 1913թ. աշնանը Նեջդ կատարած այցի և էմիր Աբդ ալ-Ազիզ իրն Սաուդի հետ հանդիպման մանրամասներին անդրադարձը<sup>1</sup>:

Չնայած այն հանգամանքին, որ իրն Սաուդի հաջողվեց կարճ ժամանակաշրջանում հաստատել իր իշխանությունը Նեջդում և նոյնիսկ լուրջ հաջողությունների հասնել 1902-1906թթ. իր հիմնական քշնամի Շամմարի իշխաններ՝ Ռաշիդների (թուրքական իշխանությունների հիմնական դաշնակիցներ) հետ կոլիկների ընթացքում, այսուամենայնիվ, կոլիկն հզորացող Սաուդական իշխանությունը շարունակում էր գտնվել ներքին և արտաքին ոչ քարենայաստ իրավիճակում<sup>2</sup>:

Օսմանյան կառավության և Նեջդի հարաբերությունները գնալով ավելի էին լարգում, առաջինը շարունակելով Աբրուլ Համիդի քաղաքականությունն ամեն կերպ ջանում էր թուլացնել և ոչնչացնել վահիարիների իշխանությունը Նեջդում: Չնայած նրան որ վտանգը իրն Ռաշիդների կողմից գնալով թուլանում էր, սակայն ավելի ակտիվանում էր Մեքքայի շերիֆ Հուսեյնի գործողություններն ուղղված Նեջդի դեմ, որոնք հաճախակի ուղեկցվում էին ուազմական ընդհարումներով, վերածելով Հիջազը Սաուդական իշխանության հիմնական քշնամու:

Գտնվելով ռազմա-քաղաքական և տնտեսական շրջափակման մեջ վահիհարական իշխանության միակ «օպաշնակիցը» մնում էր Քուվեյրը: Սակայն սաուդա-քուվեյրական հարաբերություններում ևս առկա էին քազմաքիվ տարածայնություններ: Անհամաձայնություններն առաջանում էին իրանականում տեղային նշանակության խնդիրների շուրջ: Քուվեյրի շեյխ Մութարաքը ամեն կերպ ցանկանաւմ էր, ուժեղացնել իր ազդեցությունը Սաուդական իշխանությունում և պարտադրել Արդ ալ-Ազիզին իր կամքը: Իրն Սաուդը ստիպված հանդուրժում էր Մութարաքի այս դիրքորոշումը ցանկանալով պահպանել «քարենկամական» հարաբերերությունները վերջինիս հետ, քանի որ Քուվեյրը և նրա նավահանգիստը Սաուդական իշխանության համար մնում էր իրմանական պատուհանը դեպի արտաքին աշխարհ<sup>3</sup>:

Ստեղծված իրադրության պայմաններում, փորձելով ելք գտնել քաղաքական և տնտեսական շրջափակումից, իրն Սաուդը դիմեց վճռական քայլերի: 1913թ. ապրիլի 18-ին Արդ ալ-ազիզ իրն Սաուդը պաշարեց և մեկ օր անց տեղի բռնակչության օգնությամբ ապրիլի 19-ին գրավեց ալ-Հուֆուֆը: Ապրիլի 20-ին սաուդական զորքերը առանց որևէ դիմադրության նվաճեցին նաև ալ-Ջաբրիֆը և ի վերջո ողջ ալ-Հասայի սանջակը անցավ վահարական իշխանությանը<sup>4</sup>:

Թուրքական իշխանությունները ալ-Հասան կորցնելուց հետո ոչ մի լուրջ քայլ չենոնարկեցին այն վերադարձնելու ուղղությամբ: Իշխանական շրջաններում քննարկվում էր ալ-Հասան ուղարկել 13-րդ քամակային կորպուսը, որի թվաքանակը հասնում էր 8-9 հազարի, սակայն, ինչպես նշում է ուստի դիվանագետը Մ. Պապովը, նման քայլը կնաշանակեր գրեթե լիովին դատարկել Բաղրամի և Բասրայի վիլայեթները, ինչը շատ վտանգավոր կարող էր լինել ստեղծված իրադրության պայմաններում: Բացի այդ իրն Սաուդը, որն արդեն մի քանի ամիս է ինչ գրավել է ալ-Հասան կարողացել է հիմնովին ամրապնդել և հավաքագրել քավական մեծ քանակությամբ զորք<sup>5</sup>: Ինչ վերաբերում է ծովային արշավանքին, ապա Անգլիան, որը մեծ ուշադրությամբ հետևում էր Կենտրոնական Արարիայի իրադրություններին, և չցանկանալով թույլ տալ թուրքական կայազօրի վերահաստատումը ալ-Հասայում, տարրեր խոշնորուներ էր ստեղծում, իրադրությունների նման ընթացքը կանխելու համար:

Երիտրուքները հասկանալով, որ ստեղծված իրավիճակում հնարավոր չէ ուզմական ճանապարհով հարցին լուծում տալ, վերջնականապես հրաժարվեցին այդ մտքից և սկսեցին փորձեր կատարել բանակցությունների միջոցով համաձայնության գալ իր Սառուի հետ, առաջարկելով սանչակի ներքին գործերում լիակատար անկախություն և մուրասարիֆի պաշտոնը, միայն թե նա ճանաչի Թուրքիայի գերիշխանությունը ու համաձայնվի սառույական խոշոր քաղաքներում քուրքական կայազորների տեղակայմանը<sup>6</sup>:

Բանակցությունների անցկացման համար Օսմանյան կառավարությունը Նեղո ուղարկեց Թալիր Նարիրին<sup>7</sup>: Թալիր փաշայի հետ մեկնեցին ալ-Հասայի նահանգապետ Մեմի թեյը, որը արդեն մեկ տարի է գտնվում էր Բասրայում, Բաղդադի ուզմական շրջանի շտարի պետ Քեհանդին թեյը ինչպես նաև մի քանի սպաներ ու պաշտոնյաներ<sup>8</sup>:

Հանդիպումը տեղի ունեցավ Թուվեյթից հարավ գտնվող Սուրենիյա շրջանում: Հետաքրքրական է, որ, ինչպես հայտնում են ուստական դիվանագիտական առյուղները Սայիդ Թալիրի առաջելությունը, և նրա ու Արդ ալ-Ազիզի հանդիպումը պահվում էին խիստ գաղտնի, նույնիսկ Բասրայի անգլիայի հյուպատոսը, որը գտնվում էր Սայիդ Թալիրի հետ բարեկամական հարաբերություններում, տեղեկացված չեր այդ հանդիպման և նրա ընթացքի մասին<sup>9</sup>:

Ինչպես հայտնում է Բասրայի ուստական հյուպատոս՝ Գոլիմիշե-Կուտուզովը, Սայիդ Թալիրի երկշարարյա առաջելությունն ավարտվեց անհաջողությունունքությամբ: Իբն Սաուդը իրաժարվել էր քուրքական մութասարիֆի պաշտոնից հայտարարելով, որ ինքը Նեղոյի քագաժառանգն է և չի կարող լինել քուրքական կառավարիչ: Արդ ալ-Ազիզը բացառել էր նաև քուրքական կայազորների տեղակայման հնարավորությունը, միակ գիշմանը, որին նա պատրաստ էր գնալ, դա համաձայնվել օսմանյան կառավարության կողմից նշանակված կադիի ներկայությանը ալ-Հասայում և ամենամյա սուուրքերի վճարմանը:

Թալիր փաշան Բասրա վերադառնալուց անմիջապես հետո հանդիպեց Բասրայի նահանգապետի հետ, որին ներկայացրեց ալ-Հասայում գործերի ընթացքի մասին: Նրա կարծիքով Օսմանյան կառավարությունը պետք է իրաժարվի ալ-Հասան ուզմական ուժով վերադարձնելու մտքից և Ստամբուլի համար լավագույն ելքը կլինի հաշտվել սանչակի կորստի փաստի հետ և Արդ ալ-Ազիզին առաջարկել

Նեղյի և ալ-Հասայի գեներալ-նահանգապետի պաշտոնը լիակատար իմրենավարության պայմանով:

Սկզբնական շրջանում իր Սաուդը, որը չէր ցանկանում ոչ մի տեսակի հարաբերություններ ունենալ թուրքերի հետ, այժմ զնաց որոշ զիջումների: 1914թ. մայիսի 29-ին երկու կողմերը եկան համաձայնության<sup>10</sup>: Իր Սաուդը ընդունեց գեներալ-նահանգապետի պաշտոնը, դրանով իսկ ճանաչելով Թուրքիայի գերիշխանությունը, սակայն Նեղյի Օսմանյան կայսրության կազմում մնալով կրում էր միայն և միայն ծևական բնույթ<sup>11</sup>:

Այսպիսով, առաջին աշխարհամարտի նախօրեին Օսմանյան կայսրության դիրքերը այնքան էին թուլացել Կենտրոնական Արարիայում, որ տեղի առանձին էմիրները նույնիսկ գտնվելով Թուրքիայից կախվածության մեջ ընդհանրապես հաշվի չին նատում կենտրոնական իշխանությունների հետ, ուազմական գործողություններ են ծավալում, դաշինքներ և համաձայնագրեր են կնքում, ինչպես իրար, այնպես էլ օտար երկրների հետ, չնայած այն փաստին, որ նրանք մտնում են կայսրության կազմի մեջ:

ARAM GASPARYAN  
(IOS)

THE WEAKENING OF OTTOMAN AUTHORITIES  
IN NAJD IN 1913: NEW DOCUMENTS

After consolidating his domain Abdul Aziz ibn Abdul Rahman Al-Saud captured the Hasa sanjak in 1913. Al-Saud's success greatly depended on weakening of Ottoman government. That is why the Turkish authorities preferred to negotiate. In autumn 1913 the negotiations with Al-Saud began Said Talib Al-Nakib. As a result ibn Saud accepted the post of general-governor of Najd and Hasa.

Although Al-Saud recognized the domination of Ottoman authority, the dependence on Istanbul was too formal. Ibn Saud was sovereign Emir that had full independence in internal and foreign affairs.

ԾԱՏՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Philby J. B., Arabia, London, 1930, p. 231.
2. МИД Императорское Российское консульство в Бассоре 8-го июня 1913г., Ақаңбұйлын У. Ներսիսյանի հավաքած արխիվային նյութեր, հատոր V, համար 420, (ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի արխիվ): Վասիլьев А.М., История Саудовской Аравии, с. 231-245, М., 1982.

3. Ժամանակ առ ժամանակ Մուրարարը արգելում էր նաև բռվեյրի առևտրականներին և սպողաֆնիքին իր Սաուդին տրամադրել վարկեր: Կոլոս Լ., Հանուլում ազգային օսմանյան առաջնորդության արքայի պատճենը Ասուն 1908-1914 թվականները, Երևան, 1986, էջ 96.
4. Ալ-Հումուֆը գրավելոց հետո բորբական զորքերը զինարարվեցին և մուրասանիի ու այլ բուրք պաշտոնյաների հետ միասին վուարվեցին բատարից: Պատստապարվելով Ալ-Հասայի գլխավոր նախահանգստում, որտեղ էին նաև ալ-Բարիչի կայազորը վերջիններս փորձեցին կենարոնացնել իրենց ուժերը և հակահարված տակ Իրն Սաուդին, սակայն դա նրաց շխաջողվեց: Ալ-Հումուֆը զնուվող բորբականականները մոտավորապես 700 հոգի Իրն Սաուդի միջնորդությամբ և ներափոխվեցին Բահրեյն, այնուհետև Բասրա: ՄԻԴ Ռուսական կայսրության առաջնորդության կողմանից առաջնորդության մեջ մասնակի հակարած արխիվային նյութերը, համար 421, (ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի արխիվ):
5. ՄԻԴ Ռուսական կայսրության գեներալու կոնսուլտուում Մեսոպոտամիա, Բագդադ 8-րդ հունիս 1913 թվականի հավաքած արխիվային նյութերը, համար 421, նշվ. արխիվ:
6. ՄԻԴ կայսրության գեներալու կոնսուլտուում Բասրա 8-րդ մայ 1914 թվականի հավաքած արխիվային նյութերը, համար 450, (ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի արխիվ):
7. Թե ինչով էր պայմանավորված Սայիդ Թալիրի ընտրությունը նման պատասխանատու առարկության համար, դժվար է բացատրել, իիմբեր չկան ենթադրել որ Կառավարությունը հավատում էր Թալիրի լոյալությանը, հնարավոր է, որ երիտրությունը փորձում էի օգտագործել Սայիդ Թալիրի և իր Սաուդի բարերացիական հարաբերությունները, մյուս կողմից իշխանությունները փորձում էին նման բայրով ցույց տալ Սայիդ Թալիրին, որ նրանք ներում են վերջինիս նախկին մեռերը և համագործակցության առաջարկ են անում:
8. ՄԻԴ կայսրության գեներալու կոնսուլտուում Բասրա 8-րդ մայ 1914 թվականի հավաքած արխիվային նյութերը, համար 450, նշվ. արխիվ:
9. Նոյն տեղում:
10. Կոլոս Լ., նշվ.աշխ. էջ 106:
11. ՄԻԴ կայսրության գեներալու կոնսուլտուում Բասրա 16 մայ 1914 թվականի հավաքած արխիվային նյութերը, համար 454, (ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի արխիվ):

## ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒԱ

(Մ)

### ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԳՐ. ՂԱՓԱՇՅԱՆԸ ԵՎ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՂԱՆՈՒՆԵՐԸ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՍԵՊԱԳՐԵՐՈՒՄ

Հայկական լեռնաշխարհին վերաբերող ուրարտական սեպագիր տեղանունների հիմնահարցը քննարկելիս, ի տարբերություն նախկին թյուր կարծիքի, պետք է նկատի ունենալ, որ գիտությունը գործ ունի ոչ թե ուրարտական, այլ հիմնականում Հին Հայաստանի տեղանունների հետ, որոնք տեղ են գտել ուրարտական սեպագրերում հինարևելյան այդ պետության նվաճողական արշավանքների ժամանակ:

Հարկ է նշել, որ գիտության մեջ տեղ գտած նախկին պատկերացումները, թե հայ-ուրարտական *Sawjr-Diauhi*, *Sniarwadawatayhi-Tuarašinie* իսկ, *Ծոփք-Տսրան*, *Արեղեանք-Abiliani*, *Ծղուկ-Տսլսզու*, *Հավնունիք-Անու* և այլ նույնական տեղանունների մեջ առաջնությունը պատկանում է ոչ թե սեպագիր անվանումներին, այլ հին հայկականին: Դրանք, ըստ Երիյան, հին Հայաստանի աշխարհագրական միավորներն են, որոնց հինարևելյան զավթիչները տեսակ են դարձել տեղաբնիկներից և, դրանք հարմարեցնելով վանկագիր սեպագրի կանոններին, մատուցել արձանագրություններում: Ինչ վերաբերում է ուրարտական տեղանուններին, ապա փաստական նյութը վկայում է, որ դրանք քանակական սահմանափակ են և քացառապես կազմված են ուրարտական դիցանուններից և արքաների անուններից:

Հայ-ուրարտական տեղանունների համադրություններին, նրանց գրադարանը տարածքների տեղորոշման իր աշխատություններում անդրադարձել է նաև Գր. Ղափանցյանը: Նրանցից մի քանիսին, որոնք համարվել են մասնագիտական գրականության նորովի նյութերով, ներկայացնում ենք ստորև:

**Արեղեանք - <sup>ա/ԿՈՒՐ</sup> Abiliani**

Այս երկիրը ուրարտական սեպագիր աղբյուրներում հիշատակվում է Արգիշտի I-ի (մ.թ.ա 786-764թ.թ.) Խորխորյան տարեգրության մեջ<sup>1</sup>: Արեղեանք-Abiliani-ի տեղորոշման մասին մանրամասն տվյալներ է հաղորդում նրա հաջորդ՝ Սարդուրի II-ի (մ.թ.ա 764-735) տարեգրությունը, որի համաձայն ուրարտական արքան *Eriashî* երկրից վերադառնալու ճանապարհին մուտք է գործել *Abiliani* երկիր<sup>2</sup>: Էրիախի երկրի նվաճման

մասին է հարդրում Արգիշտի Ի-ի Գյումրի քաղաքից ոչ հեռու ընկած Մարմաշեն գյուղի արձանագրությունը՝ Ախուրյան գետի ձախ ափին<sup>3</sup>: Այս փաստերը վկայում են, որ Էրիախոի երկիրը գտնվել է Գյումրիի շրջանում և դա պատմական Ծիրակ աշխարհն է: Այս պարագայում Արիլիանին գտնվել է նրանից հարավ-արևմուտք, քանի որ ուրարտացիները այնտեղ են հայտնվել հայրենիք վերադարձալու ճանապարհին:

Այս երկրի (ցեղի) տեղորոշման համար նաև արժեքավոր են Սարդուրյան տարեգրության տվյալները, որի համաձայն Արիլիանին հիշատակվում է Հաւնուիր-Abuni-iց ոչ հեռու՝ Արաքսի աջափնյա հատվածում, Արենեանք-Abiliani-iց հարավ-արևմուտք<sup>4</sup>:

Ելեներվ այդ ամենից, Գ.ր. Ղափանցյանը հետևելով Կ. Բասմաջյանին և Ն. Սադին, իրավացիորեն հանգել է այն եզրակացության, որ պատմական Հայաստանի Այրարատ աշխարհի Արենեանք գավառի անունից է սերում սեպազիր դարաշրջանի Abiliani երկրանունը: Հետևաբար, այն պետք է տեղորոշել նույն տարածքում՝ Արաքսի վերին հոսանքի ծախսափնյա հատվածում<sup>5</sup>:

### Հաւնուիր-<sup>KUR</sup>Abuni

Նկատի ունենալով այս տեղանկան ևս վանկի փոխարեն ըստերցումը, ինչպես նաև Տորութերանի Ապահովնիք գավառի անունը՝ Ն. Սառը ենթադրում է, որ իջշալ երկիրը հենց Ապահովնիքն է՝ Վանա լճից հյուսիս, Արածանիի վերին հոսանքում<sup>6</sup>: Միևնույն կարծիքն է հայտնում նաև Գ.ր. Ղափանցյանը, սակայն, միաժամանակ կասկածի տակ է առնում այդ երկրի աշխարհագրական տեղադրյան հնարավորությունը<sup>7</sup>:

Փաստական նյութի լրացուցիչ ուսումնասիրությունը մեզ բերել է այն համոզման, որ Գ.ր. Ղափանցյանի տարակուսանքները տեղին են: Ն. Հարուրյունյանը իրավացիորեն հիմնավորում է Հաւնունիք - <sup>KUR</sup>Abuni գուգահետք, երբ սեպազիր առյուրների այդ երկրանունը վերընթերցել է <sup>KUR</sup>Ա-սո-ն և այն նույնացրել իին Հայաստանի Հաւնունիք գավառի հետ<sup>8</sup>:

<sup>KUR</sup>Abuni-Հաւնունիք աշխարհագրական միավորների նույնացման խնդրում Ն. Հարուրյունյանը առաջին հերթին նկատի է ունեցել ուրարտա-հայկական լեզվական ընդհանրությունները բնութագրող առանձնահատկությունները. ուրարտերենի և և հայերենի և(վ) հնչյունափոխությունը (հմմտ. իսբ-հովիտ), «Հաւնունիք»-ի սկզբի «հ» հագագային թույլ հնչյունը կարող է սղվել (հմմտ. ուրարտ. <sup>4</sup>Aldi և <sup>4</sup>Aldi), իսկ այս տեղանկան միջանկյալ «ն» հնչյունի բացակայությունը ուրարտական <sup>KUR</sup>Abuni-ում հիմնավորվում է Սովու Խորենացու «Հայոց պատմության» մեջ նաև «Հաւնունիք» անվան գոյությամբ<sup>9</sup>:

Ինչ վերաբերում է ուրարտա-հայկական գավառների տարածքային համապատասխանությանը, ապա այդ մասին վկայում են Արգիշտի Ի-ի և Սարդուրի II-ի տարեգրությունների հավաստի փաստական նյութերը:

Արգիշտի 1-ի Խորխարյան տարեգրության համաձայն, երբ արշավանքի երթուղին ընթանում էր հյուսիսից՝ (Diauhi-Sայրից), ապա Էրիախի երկրի նվաճումից հետո ուրարտացիները ուղևորվում են ավելի հարավ՝ Արունի<sup>10</sup>: Խորխարյան տարեգրության տվյալները վկայում են, որ Արունի երկիրը գտնվել է Eriahi-Շիրակից հարավ-արևմուտք:

Մյուս կողմից, համաձայն Սարդուրյան տարեգրության՝ ուրարտացիները կրկին արշավերկ հյուսիսից (այս անգամ Էրիախի երկրից), Էրիախին նվաճելուց հետո արշավում են Իշտելուա(նի), Կայիհա(նի) երկրներ: Այսուհետև, հայտնվում են խնդրո առարկան ԱԵՍՈՒ-ՀԱՅՆՈՒԹՅՈՒՆ և Abiliani-Աքեղեանքում<sup>11</sup>: Այս արշավանքի տվյալները հատակ վկայում են, որ երթուղին ընթացել է հյուսիսից՝ Eriahi-Շիրակից դեպի հարավ-արևմուտք՝ ԱԵՍՈՒ-ՀԱՅՆՈՒԹՅՈՒՆ և Abiliani-Աքեղեանք, այսինքն՝ Արարու զետի ծախափնյա և աջափնյա հատվածները:

Ի մի թերեւով վերը նշված փաստական նյութը՝ մասնագիտական գրականության մեջ հանգել են այն հետևության, որ պատմական Հայաստանի Շիրակ գավառի մոտակայքում գտնվող Հայունիքը եղել է ուրարտական սեպագիր՝ <sup>KUR</sup>ԱԵՍՈՒ-ի նախատիպլլ:

### Տուարածատափ - <sup>KUR</sup>Τuarašinieī հubi

<sup>KUR</sup>Τuarašinieī-հubi-ն ուրարտական սեպագիր աղբյուրներում հիշատակվում է միայն Խորխարյան տարեգրության 12-րդ տարվա ոսկեմական արշավանքի վերնագրային տեքստում: Այսուղ հաղորդվում է Խալդի աստծու անունից Տուարածատափի հովտի երկրից մինչև Գուրկու լեռը նվաճման մասին<sup>12</sup>: Խորխարյան տարեգրության <sup>KUR</sup>Τuarašinieī-հubi երկրը դեռևս 20-րդ դարի սկզբներին Հ. Սանդարջյանի կողմից իրավանք նույնացվել է հին Հայաստանի Տուարածատափ գավառի հետ, որը գտնվել է Վանա լճից հյուսիս-արևմուտք, Արածանիի վերին հոսանքում<sup>13</sup>: Ինչ վերաբերում է Տուարածատափին հարևան ՏԱՅՈՒ Կորպու-ին, ապա մասնագիտական գրականության մեջ առաջինը Գ.ր. Ղափանցյանն այն նույնացրել է հայկական աղբյուրների Ծարքն լեռան հետ, որը գտնվել է Հաշտեանք գավառում, Աշտիշատ քաղաքի մոտակայքում<sup>14</sup>, այսինքն՝ մեզ հետաքրքրող <sup>KUR</sup>Τuarašinieī-հubi- Տուարածատափ գավառից մի փոքր հարավ-արևմուտք:

Ի դեպք, ուրարտական սեպագիր աղբյուրների <sup>KUR</sup>Τuarašinieī-հubi գավառի տեղադրության կապակցությամբ կարևոր է նաև Ի. Ռ. Դյակոնովի կարծիքը, որը Խորխարյան տարեգրության այդ տեղանունը համապրում է աստրեատանյան սեպագիր աղբյուրների Տսատշու-ի հետ: Ասորեստանյան մ.

թ. ա VIII դ. թագավոր Թիգլարքալասար III-ի մոտ այն հիշատակված է Ենզի և Ուրարտու նվաճված քաղաքների շարքում<sup>15</sup>: Եռց-Եռցի մասնագիտական գրականության մեջ նույնացվում է անտիկ աղբյուրների Ենզինեների և իին հայկական աղբյուրների<sup>16</sup>: Անձիս գավառի հետ՝ Խարբերդի Խարթավայրում, Արևմտյան Տիգրիսի ակունքներից արևմուտք և Արծանիս-Արածանիից հարավ<sup>17</sup>:

**KUR** Հարա՛շիւ-իսի-ի տեղորշմանը նայատում են նաև Խորխարյան տարեգության և Մենուա արքայի Արծվաբերդի արձանագրության<sup>17</sup> տվյալները՝ միևնույն տարածքում Դահնալի գետից անցկացված ոռոգիչ ջրանցքների մասին: Խորխարյան տարեգության 12-րդ տարվա տվյալների համաձայն, Դահնալի գետից ջրանցքը անցկացվել է Տուարածատափ գավառի տարածքում: Իսկ Արծվաբերդի արձանագրության (Արծեշից հյուսիս-արևելք) համաձայն՝ ուրարտացիները նույնպիսի շինարարական գործունեություն են ծավալել Վանա լճից հյուսիս: Հետևաբար, Դահնալիի հիշատակությունը Արածանիից հյուսիս (Խորխարյան տարեգություն) և նրանից հարավ (Արծվաբերդի արձանագրություն) հանգեցնում են այն համոզման, որ սեպագիր դարաշրջանի Դահնալիի տակ ենթադրվում է պատմական Հայաստանի Արածանիի վերին հոսանքի հատվածը՝ աստրեստանյան սեպագիր աղբյուրների Արշանա-յի նախատիպը<sup>18</sup>:

Հայ-ուրարտական տեղանունների համարդարյունների մեջ Գ. Ղափանցյանի ներդրած նորույթները վերը նշված փաստերով չեն սահմանափակվում և դրանք այսօր էլ շարունակվում են մնալ գիտության մեջ հատուկ ուսումնասիրության առարկա: Բավականին ժամանակ է անցել, երբ Ուրարտուի տեղանունների ուսումնասիրության առումով ուրարտագիտությունը մեծ առաջընթաց է ապրել, սակայն Գ. Ղափանցյանի դիտարկումները առայսօր էլ իրավամբ պահպանել են իրենց ուրույն տեղը այդ առաջընթացում:

**SONA GRIGORYAN  
(IOS)**

## ACADEMICIAN GRIGOR KAPANTSYAN AND THE TOPOONYMS OF OLD ARMENIA IN THE URARTIAN CUNEIFORM WRITINGS

When one considers the problem of the Urartian cuneiform toponyms, which concern the territory of Armenia, one must take into consideration that, in difference to the former wrong view, the research has to do not with Urartian toponyms but chiefly with toponyms of old Armenia which found their place in Urartian cuneiform writings when that old eastern nation carried out its campaigns to conquer other territories. Also G. Kapantsyan considered in his works the comparison of the Armenian-Urartian toponyms and the determination of the territories they occupied. With respect to the toponym Abegheank - <sup>m</sup>KUR Abiliani, following K. Basmadjian and N. Marr, came rightly to the conclusion that

the name Abilian which belongs to the cuneiform era takes its origin from the province Abegheank of the state Ayrarat of historical Armenia. He says that the Abegheank lies at the left bank of the upper stream of Araks. He identifies the toponym Havnunik - <sup>KUR</sup>Abuni with the province Apahunik which lies to the north of the lake of Van, in the upper streams of Aratsani. N. Harutyunian rightly substantiates the parallel Havnunik - <sup>KUR</sup>Abuni, when he defined that toponym of cuneiform sources as <sup>KUR</sup>Abuni and identified it with the province Havnunik of old Armenia which is mentioned in the "History of Armenia" by Movses Xorenatsi. Kapantsyan rightly identified the Tuarašinici-ħubi, which is mentioned in the Xorxorean annals, in the title text of the 12th year war campaign, with the province Tuaratzatap of old Armenia, which lied to the north-west of the lake Van, in the upper stream of Aratsani. What concerns the mountain <sup>SADU</sup>Gurqu neighboring with Tuaratzatap, Kapantsyan is the first scholar in Urartology who identified it with the mountain Karke of Armenian sources which was located in the province Hashtank, in the neighborhood of the town of Ashtishat, to the south-east of the province <sup>KUR</sup>Tuarašinici-ħubi-Tuaratzatap.

#### ԾԱՆՈԹԱՎՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Арутюнян Н.В., Корпус урартских клинообразных надписей, Еր., 2001, 173, I, սոլ 17 (այսուհետ՝ КУКН).
2. КУКН, 241С, սոլեր 25-35:
3. КУКН, 179, սոլ 3:
4. КУКН, 241F, սոլ 14-15:
5. Բասմաջան Կ.Հ., Հայ նախարարությամները բնեուածե արձանագրութեան մեջ, «Համամակ», Փարիզ, 1902, №7-9, էջ 239; Marr H., Orbeli I. A., Археологическая экспедиция 1916г. в Ван, Пб., 1922, с. 66 (այսուհետք՝ АЭВ); Каланџян Г.А., Историко-лингвистическое значение топонимики древней Армении, Еր., 1940, с. 4-6, (այսուհետ՝ ИЛТДА), նույն՝ Հայոց լեզվի պատմություն, Եր., 1961, էջ 47, 133 (այսուհետ՝ ՀԼՊ); Chetto- Armeniaca, Еր., 1931, էջ 104; Պրադունի Պատմություն, Եր., 1940, էջ 158, 164, 171, 182 (այսուհետ՝ ՌԻՊ):
6. Marr H., Orbeli I. A., АЭВ, էջ 58-59:
7. Каланџян Г.А., ИЛТДА, էջ 46; նույն՝ ՀԼՊ, էջ 57; ՌԻՊ, էջ 128, 158, 170, 182:
8. Арутюнян Н.В., Байанили-Урарту, Еր., 1970, էջ 399-402; նույն՝ Топонимика Урарту, Еր., 1985, էջ 9-10 (այսուհետ՝ ТУ); նույն՝ Байанили-Урарту (издание второе), Санкт-Петербург, 2006, էջ 309-311:
9. Սովորսի Խորեմացոյ Պատմության Հայոց, Տվյալիս, 1913, էջ 111 և ծըր. 11:
10. КУКН, 127, I, սոլեր 6-12; 128 В1, սոլեր 34-38:
11. КУКН, 241F, սոլեր 4-14:
12. КУКН, 173, V, սոլեր 11-13:
13. Sandaljian J., Les inscriptions cunéiformes uratiennes, Venise, 1900, էջ 428; Каланџян Г.А., Хайаса-колыбель армян, Еր., 1947, էջ 195, ծըր. 2:
14. Каланџян Г. А., ИЛТДА, էջ 44, նույն՝ ՌԻՊ, էջ 163, 170; հեյշեն Շահ G. Djahukian, Armenian words and proper names in Urartian inscriptions. Proceedings of the Fourth International Conference on Armenian Linguistics, Cleveland, Ohio, 1991, էջ 54-55:
15. Дьяконов И.М., Ассирио-аввилонские источники по истории Урарту, (ВДИ, 1951, № 2-4), 45 և ծըր. 2 (այսուհետ՝ АВИИУ):
16. Դափնանցյան Գ.ր., ՀԼՊ, էջ 66; նույն՝ ՌԻՊ, էջ 19, 134, 223:
17. КУКН, 75, սոլ 26:
18. Арутюнян Н. В., Байанили-Урарту, Санкт-Петербург, 2006, էջ 294-295:

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒԱ  
(ԵՊՀ)  
«ԽՍԼԱՍՍՎԱՐ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ» ՍԱՅԻԿ ԿՈՒՏՏԻ  
ԱԾԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Իր մահապատճից ավելի քան չորս տասնամյակ անց Եզիպտացի Սայիդ Կուտըրը (1906-1966թթ.) շարունակում է մնալ ժամանակակից իսլամական աշխարհի ամենաազյեցիկ գաղափարախոսներից մեկը: Կուտըրի գաղափարներն արևմտյան բազմաթիվ հեղինակների կողմից ներկայացվում են որպես վտանգ աշխարհիկուրյանը, դեմոկրատական արժեքներին, վերջին հաշվով՝ Արևմտյան ընդհանրապես: Առավել հանրամատչելի ծևակերպումների համաձայն Ս.Կուտըրն իսլամական ահարեկչուրյան ու «Խակասրևմոյան ջիհադի» նախահայրն է:

Այս աշխատանքում կիրութենք ցույց տալ կուտրյան այն ծևակերպումները, որոնք առանձնանում էին թե իր ժամանակի, թե իրեն նախորդած մուսուլման բարեփոխչների տեսություններից ու մեկնարանուրյուններից:

Նասերյան հեղափոխությունից հետո օրակարգային էր Եզիպտոսի արդիականացման հարցը: Ինչպես և դառնալ ժամանակակից և քայլել աշխարհի հետ: Նասերականներն ու Կուտըրի հետևորդներն այս հարցին բոլորովին տարբեր կերպ էին պատասխանում: Եթե Վերջիններն ամեն հաջորդություն պայմանավորում էին իսլամի սկզբունքներսվ, ապա նասերականները դրանք համարում էին հասարակուրյան զարգացման խոշնություն: Կուտըրի խնդիրը նախ՝ մուսուլմանի ինքնուրյան Վերարժմություն էր, ապա իսլամական ինքնազմտակցությամբ ու իսլամական սկզբունքներով առկա խնդիրների լուծումներ տալը:

Կուտըրն իսլամը ներկայացնում է որպես մուսուլմանի ինքնուրյան հիմնական բաղադրիչ, որի համար մուսուլմանը ոչ թե ամրագ աշխարհից ներողություն պետք է խնդիր, այլ հակառակը՝ լինելով մուսուլման՝ իրեն ավելի բարձր դասի մյուսներից:

Իհարկե, իսլամական հանրության արդիականացման խնդիրը նոր չէր: Դեռ 19-ր սկսվել էր իսլամի բարեփոխման (*խպահ*) բավական ազդեցիկ շարժում, որի գաղափարախոսներ Զամալ ալ-Դին ալ-Աֆղանին (1838-1897), Սուհամմադ Արդըն (1849-1905) և այլք փորձում էին ցույց տալ, որ իսլամը ոչ միայն ժամանակակից գիտատեխնիկական զարգացումների թշնամին չէ, այլև խրախուսում է և կարող է համադրվել դրանց: Ավելին, Կուտըրը ժամանակակից

գիտության ծագումը կապում էր Արևմտաք խալամի մուտքով, ուստի գիտական զարգացումը չի կարող օտար ու անհամատելի լինել խլամական աշխարհին, որտեղից սկիզբ էր առել<sup>1</sup>:

Ս.Կուտրն առանձնացավ իր կտրուկ ու ոչ ավանդական մոտեցումներով: Նա խլամ քարոզեց ոչ թե պաշտպանողական, ինչպես դա անում էին իր նախորդները, այլ հարձակուղական դիրքերից: Մա արմատական տարրերություն էր խլամի ժամանակակից գործիչների ու նախորդ դարի քարեփոխչների միջև: Եթե Վերջինները տեխնոլոգիային ու գիտությանը նայում էին վախեցած հայացքով և կարծես ներսություն խնդրում այս ոլորտներում խլամի բոլորթյան համար (դրանում փաստորեն մեղադրելով մուսուլմաններին), ապա Ս. Կուտրը պնդում էր, որ ոչ միայն մուսուլմանների, այլև ամրող մարդկության փրկությունը կրտսական ու քարոյական վերածննդի մեջ է, որի ներուժը կարող է ունենալ մուսուլմանը<sup>2</sup>:

Կուտրի քարոզության մյուս գրավչությունը ջիհադի վերաիմաստավորումն էր: Ըստ Կուտրի ջիհադի իմաստը պարզունակ ու հասարակ է դառնում, եթե դրան վերագրվում է զուտ պաշտպանական նապատակ, այսինքն՝ ջիհադի միջոցով մուսուլմանները զուտ պաշտպանվում են անհավատներից: Կուտրը պնդում է, որ, եթե նույնիսկ ջիհադը պաշտպանական շարժում է, ապա պետք է ընդայնել պաշտպանություն բարի իմաստը՝ «մարդու պաշտպանությունն այն ամենից, որ սահմանափակում է նրա ազատությունը»<sup>3</sup>: Ջիհադի միջոցով խլամը մարդուն ազատագրելուց հետո հնարավորություն է տալիս ազատ ընտրության:

Կուտրը նոր բնութագիր տվեց նաև անհատին ու հասարակությանը:

«Անհատականության» մակել Կուտրը ներկայացնում է երեք հասկացությունների միջոցով՝ մարդկային բնույթ (արար.՝ ֆիտրա), հավատ (‘ալիջա) և գործողություն/շարժում (հարարա):

Ըստ Կուտրի ֆիտրան ի սկզբանե դրական է, ի տարրերություն նախկին քարեփոխչների, որոնք այն դիտում էին թույլ քացասական և մարդու վայրի մտածողության փափոխությունը պայմանավորում միայն աստվածային գիտելիքով: Այն միշտ անդրադառնում է մարդու վարքին. եթե մարդը գործում է ֆիտրային ներդաշնակ, ապա պարզևատրվում է, հակառակ դեպքում պատժվում է<sup>4</sup>: Ընդ որում, մարդն անկարող է վերլուծել ու նկարագրել իր բնույթը: Փոխարենը՝ արարիչը մարդուն ուղարկել է սրբազն տեխստը, որով նրան ցույց է տալիս իր կենսածի ամրողական համակարգը: Եթե մարդը հետևում է այդ ցուցումներին, ուրեմն՝ ներդաշնակ է իր բնույթին: Խնկ հետևելու համար պետք է քացարձակորեն հավատա Ալլահին: Հավատը՝ ‘ակիդան, քարացած որպէս չէ, այլ Ալլահի խոսքին հետևադի դիճամիկ էքզիստնեցիալ վիճակ: Դա արտահայտվում է մուսուլմանի գործողությամբ հարաբայով, որի

առաքելությունն ու նպատակը ջահիլիայի՝ համատարած տգիտության ոչնչացումն է<sup>5</sup>:

Հասարակության բնութագրման Կուտրի հիմնական հասկացություններն են ջահիլիան, այսինքն՝ այն, ինչ կա՝ նյութական քաղաքակրթություն (Արևմտյան), և հարիմյան՝ այն, ինչ պետք է լինի (Ալլահի գերիշխանության): Զահիլիան համատարած տգիտությունն ու Ալլահի իշխանության մերժումն է, իսկ հարիմյան՝ Ալլահի գերիշխանության ընդունումը: Այս երկու տերմինները կուտրյան սիստեմափորձած ու պարզ լեկսիկոնի գլխավոր բաղադրատարրերից են, որոնցով նա փորձում է ցույց տալ մի ամբողջական համակարգի եռություն:

Այս հասկացությունները հիմք են ծառայում գործողության արմատական կոչի համար. կա թշնամի թիրախ՝ ջահիլիան՝ իշխող քաղաքական էլիտայով, որը խել է աստվածային իշխանության ֆոնկցիաներն ու լիազորությունները: «Ի՞ս պետք է փոխարինվի հարիմյայով՝ Ալլահի իշխանությամբ»:

Ելնելով այս պատկերացումներից՝ Կուտրը հաճգում է նրան, որ խալամ իր եռությամբ բռնապետությունն ու անարդարությունը տապալելու հեղափոխություն է: Յուրաքանչյուր մուսուլման, հետևարար, հեղափոխական է: Սուսուլմանի պայքարը ֆիզիկական է, քանի որ խոշոնդրությունը, որոնք կան աստվածային կարգը ստուդելու ճանապարհին, ևս ֆիզիկական են: «Միայն քարոզչական միջոցները քավական չեն զաղափարական փոփոխությունների համար, պետք է օգտագործել նաև ֆիզիկական ուժն ու ջիհադը՝ ոչնչացնելու ջահիլիայի համակարգը, որ մարդկանց տաճում է մոլոր ճանապարհով ու տիխում նրանց ծառայել բռնապետերին և ոչ ամենակարող Ալլահին», -գրում է Կուտրը<sup>6</sup>:

Որպեսզի հասկանանք խալամի դերի վերաբերյալ կուտրյան մտքի զարգացումը, համեմատենք երկու նախադասությունները, որոնցով սկսվում են «Սոցիալական արդարությունն իսլամում» (1948) և «Ուղենիշներ» (1962) գրքերը: Առաջինը սկսվում է այս տողերով. «Եզակառություն և խալամական աշխարհում ընդհանրապես մենք շատ քիչ ուշադրություն ենք դարձնում մեր սեփական հոգևոր պաշարներին և ինտելեկտուալ ժառանգությանը, փոխարենը մտածում ենք օտար սկզբունքների ու օտար արժեքների ներմուծման կամ օտար սովորությունների ու իրավունքների փոխառումն մասին»<sup>7</sup>: Հաջորդ՝ այլքեն արմատական մոտեցումներով հայտնի «Ուղենիշները» բացվում է այս տողերով. «Մարդկությունն այսօր անդունի եղրին է...Մարդկությանն անհրաժեշտ է նոր առաջնորդություն, որն է խալամը»<sup>8</sup>:

Այսինքն՝ եթե խալամը սկզբում դիտվում էր «ճիշտ ճանապարհ» համական աշխարհի համար, ապա հետագայում՝ փրկություն և

այլնորանքային ուղի ամրող աշխարհի համար: Ըստ Կուտբի, Խալամն է միակ ուսմունքը, որ քարոյապես ու գաղափարապես չի սպառվում, ի տարրերություն մյուս՝ հիմնականում արևմտյան ուսմունքների ու համակարգերի<sup>9</sup>:

SONA GRIGORYAN  
(YSU)

**"ISLAMIC SOLUTIONS" IN THE WORKS OF SAYID QUTB**

The paper is an attempt to underline the formulations of the famous Arab ideologue Sayid Kutb which stood out among the interpretations of Islam given by both his contemporary and earlier reformers. Significance of Kutb's works is accounted for by his quite thorough description of the "Islamic Solution". First and foremost, Kutb had an objective to revalue the identity of the Muslim by the medium of Islam and, thereafter, solve existing problems with the assistance of Islamic consciousness and methods. For this very reason he introduced a new model of characterization of the society and individual.

Kutb's propaganda was also directed at re-conceptualization of Jihad, which instead of a "defensive" action should be understood as an "offensive" one, since the aim of Jihad is not only to protect the Muslim from infidels but also liberate the whole world from "fake and unjust" teachings. Thus, Kutb was stressing the universal nature of Islam, which, according to him, is the guiding force of humanity and the only philosophy that can not be exhausted unlike other, mainly Western, ideologies.

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆԵՐԸ**

1. Կուտբ Ս., Խալամը և քաղաքակրթության խնդիրները, (*Al-islaam wa mushkilaat al-hadhaba*), Բեյրութ, 1967:
2. Կուտբ Ս., Այս կրոն (Haadaa al-diin,), Կահիրե, 1967, էջ 67:
3. Կուտբ Ս., Ուղենիշներ,  
[http://www.youngmuslims.ca/online\\_library/books/milestones/hold/chapter\\_7.asp](http://www.youngmuslims.ca/online_library/books/milestones/hold/chapter_7.asp)
4. Կուտբ Ս., Խալամը և քաղաքակրթության խնդիրները. ( *Al-islaam wa mushkilaat al-hadhaba*), Բեյրութ, 1967, էջ 41-45:
5. Կուտբ Ս., Ուղենիշներ,  
[http://www.youngmuslims.ca/online\\_library/books/milestones/hold/chapter\\_10.asp](http://www.youngmuslims.ca/online_library/books/milestones/hold/chapter_10.asp)
6. Ս. Կուտբ,  
[http://www.youngmuslims.ca/online\\_library/books/milestones/hold/chapter\\_7.asp](http://www.youngmuslims.ca/online_library/books/milestones/hold/chapter_7.asp)
7. Qutb, S. (1948) 1970. Social Justice in Islam. Translated by John B. Hardie. New York, p.1.
8. Կուտբ Ս., Ուղենիշներ,  
[http://www.youngmuslims.ca/online\\_library/books/milestones/introduction.asp](http://www.youngmuslims.ca/online_library/books/milestones/introduction.asp)
9. Կուտբ Ս., Ապազան այս կրոնին է, (Al mustaqbal li haada diin), 1967, Բեյրութ 1967, էջ 15:

## ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳՈՌ

(ԱԻ)

2008թ. ԱՊՐԻԼԻՆ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ  
ԻՆՔՍԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԱՐՍԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՀՈՒՐՁ

Վերջին տարիներին ասիական և աֆրիկյան մի շարք երկրներում լայն թափ են ստացել օրյեկտիվորեն սկիզբ առած քաղաքական համակարգի արդիականացման և ժողովրդավարացման գործընթացները: Եզիապոսում իշխառ «Ազգային-դեմոկրատական» կուսակցությունը<sup>1</sup> (ԱԴԿ), ի դեմս նախագահ Հոսնի Մուբարաքի, նույնպես փորձում է իրականացնել ժողովրդավարացման ուղղված քայլեր, որոնք պայմանավորված են թե՝ ներքին և թե՝ արտաքին գործուներով:

2008թ. ապրիլի 8-ին Եզիապոսում անցկացվեցին տեղական ինքնակառավարման մարմինների<sup>2</sup> (ՏԻՄ) ընտրությունները<sup>3</sup>, որոնք բոյկոտեց երկրի ամենահզոր ընդդիմադիր ուժը՝ «Մուսուլման եղբայրներ» կրոնա-քաղաքական կազմակերպությունը<sup>4</sup>: Երաժարվելով մասնակցել ընտրություններին: Հարկ է նշել, որ ՏԻՄ ընտրությունները պետք է տեղի ունենայն 2006թ., սակայն իշխանությունների կողմից հետաձգվել էին երկու տարով: Իշխանությունները մտավախտություն ունեին, որ իսլամիստները կվարողանան կրկնել 2005թ. խորհրդարանական ընտրություններում ճեղք թրած հաջողությունները: «Մուսուլման-եղբայրներ» կազմակերպության նման կեցվածքը անսպասելի էր, քանի որ 2008թ. փետրվարի 21-ին կազմակերպության առաջնորդ Մուհամեդ Մահմիլ Աքեֆը հայտարարել էր, որ իրենց մասնակցությունը ՏԻՄ ընտրություններին միտված է խրանելու Եզիապոսի ներքաղաքական կյանքը: Ըստ եռյան, «Մուսուլման-եղբայրներ» կազմակերպության՝ ՏԻՄ ընտրություններին մասնակցությունը իշխանությունների դեմ պայքարի գործընթացի շարունակությունն էր: 2008թ. մարտի 9-ին «Մուսուլման-եղբայրներ» կազմակերպության պաշտոնական կայքէջում տեղադրված էր կազմակերպության նախընտրական ծրագիրը, որտեղ հանգանանալից ներկայացված էին ներքաղաքական քարեփոխումների դրույթները: Այս

ամենը վկայում է, որ կազմակերպությունը լրջորեն նախապատրաստվել էր մասնակցել **ՏԻՄ** ընտրություններին: Նույնիսկ ընտրությունների նախօրեին «Մուսուլման եղբայրներ»-ը հայտարարեցին, որ ցանկանում են կրկնել 2005թ. դեկտեմբերին Ազգային ժողովի ընտրություններում<sup>5</sup> իրենց հաջողությունները, երբ կազմակերպության կողմից ընտրվեցին 88 անկախ պատգամավորներ<sup>6</sup>: Հատկանշական է, որ քաղաքական մեծ փորձ ունեցող շարժումը, որի մասնաճյուղերը գործում են Եգիպտոսում և արարական մի շարք երկրներում, ճգոտում է իշխանության գալ և որոշակիուն խալամականացնել պետության ներկայիս սոցիալ-քաղաքական համակարգը<sup>7</sup>: Եգիպտոսում 2005թ. դեկտեմբերին կայացած խորհրդարանական ընտրությունների արդյունքում «Մուսուլման եղբայրներ» դարձան հանրապետական Եգիպտոսի պատգամության մեջ Ազգային ժողովում թվաքանակով ամենամեծ ընդդիմությունը<sup>8</sup>:

2008թ. ապրիլի 8-ին կայանալիք **ՏԻՄ** ընտրություններից երկու օր առաջ «Մուսուլման եղբայրներ» հայտարարեցին, որ չեն մասնակցելու ընտրություններին: Շարժման ներկայացուցիչները իրենց որոշումը հիմնավորում էին հետևյալ կերպ, որ, եթե իրենք չեն մասնակցում ընտրություններին, ապա այդ ընտրությունները արդեն իսկ կանխավ չեն կարող լինել ժողովրդավարական: Նման դեպքում ընտրությաններին կմասնակցեն միայն «Ազգային-Դամոկրատական» իշխան կուսակցությունը և նրան սատարող կենդ ընդդիմադիր ուժերը: Հարկ է նշել, որ **ԱԴԿ-ն** իր գոյության ողջ ընթացքում բոլոր ընտրություններում ծնոր է բերել ընտրածայների ճնշադ մեծամասությունը<sup>9</sup>: Հարկ է նշել, որ «Մուսուլման եղբայրներ»-ը **ՏԻՄ** ընտրություններին առաջարկել էին 7754 քեկնածու, իսկ **ԱԴԿ-ն՝** 53.000<sup>10</sup>: Սակայն մարտի 13-ին Եգիպտական իշխանությունների կողմից **ՏԻՄ** ընտրություններին մասնակցելու հնարավորությունից զրկել էին «Մուսուլման-եղբայրներ»-ի կողմից առաջարկված քեկնածուների մոտ 90%-ին<sup>11</sup>: Մարտի 14-ին **ԱՍԽ-ի** Սպիտակ տաճ մամլո խոսնակ Դամա Փերինան քննադատեց Եգիպտական իշխանությունների կողմից իրականացված քայլերը: Վաշինգտոնը մտահոգություն էր հայտնամ Եգիպտոսում մարտու իրավունքների ուժնահարման կապակցությամբ<sup>12</sup>:

Եգիպտոսի Ազգային ժողովի իսլամիստների կողմից առաջարկված անկախ քեկնածուների խորհրդարանական ֆրակցիայի դեկավարի տեղակալ Հասեյն Իբրահիմը **ՏԻՄ** ընտրությունների նախորդ օրը կոչ արեց հայրենակիցներին շմանակցել ընտրություններին: «Մուսուլման-

**Եղբայրներ»** կազմակերպության իրավաբան Մուճիմ Արդ Ալ-Մասուդը հայտարարել էր, որ ընտրություններից առաջ եգիպտական իշխանությունները ընտրություններին մասնակցելու հնարավորությունից զրկեցին «Մուսուլման-Եղբայրների» և 100 թեկնածուի<sup>13</sup>: Ապրիլի 4-ին «Մուսուլման-Եղբայրներ» կազմակերպության մամլո խտանակը հայտարարեց, որ նշված օրը եգիպտական իշխանությունների կողմից ձերքակալվել են կազմակերպության 34 ակտիվիստ<sup>14</sup>: Եգիպտական իշխանությունների կողմից «Մուսուլման-Եղբայրների» կազմակերպության թեկնածուների նախընտրական գործընթացից դրւու քողելը, ինչպես նաև փետրվար-մարտ ամիսների ընթացքում տեղի ունեցած զանգվածային ձերքակալությունների արդյունքում (կազմակերպության մոտ հազար ակտիվիստներ), SbU ընտրությունների նախօրեին «Մուսուլման-Եղբայրներ» կազմակերպությունն ուներ ընդամենը 21 թեկնածու<sup>15</sup>: SbU ընտրությունների արդյունքում ընտրածայնների մեծամասնությունը (97%) ձեռք բերեց իշխան ԱՌ-Կ-Ա, իսկ մնացած ձայնները միմյանց միջև բաժանեցին «Ալ-Վաֆի<sup>16</sup>», «Թագամմու<sup>17</sup>», «Ալ-Ղաջ<sup>18</sup>» կուսակցությունները և նաև երականները<sup>19</sup>:

2008թ. SbU ընտրությունները դարձան 2000թ. անցկացված ընտրությունների նմանօրինակը, եթե իշխան ԱՌ-Կ-Ա ձեռք բերեց ձայնների մեծամասնությունը: Ընտրություններից երկու օր անց, ԱՍՆ-ի Սահմանադրության վեհական հայտարարեց, որ Վաշինգտոնը մտահոգված է Եգիպտական ապրիլի 8-ին անցած ընտրություններով, ինչը պայմանավորված է քազմաթիվ ընտրախախտումներով և քաղաքական հետապնդումներով<sup>20</sup>: ԱՍՆ-ի վարչակազմը հույս է հայտնել, որ եգիպտական իշխանությունների և ընդդիմության միջև կիաստատվեն երկխոսության կամուրջներ<sup>21</sup>: Եգիպտոսում, քաղաքական ներկայիս համակարգի պահպաննան պարագայում, ցանկացած ընտրություններ կանխավ դատապարտված են նույնանման սցենարի կրկնությանը: Սակայն, հավանական է, որ «Մուսուլման-Եղբայրներ» կազմակերպության կողմից SbU ընտրությունների բոյկոտը կարող է ագրավի դերակատարություն ունենալ Եգիպտոսի ներքաղաքական համակարգի և հասարակական կյանքի փոխիշման հարցում: Հարկ է նշել, որ վերջին շրջանում ԱՍՆ-ի և Եվրամիտթյան նախաձեռնությամբ քաջաხերվող քաղաքացիական հասարակության կառուցման, իշխանության համակարգի բարեփոխման-արդիսկանացման և ի վերջո ժողովրդավարական

պետության կայացման նախաձեռնությաւնները արարական մի շարք երկներում պարարտ հող են գտնում կարծրացած և ժառանգապես փոխանցվող իշխանության դեմ տարիվող պայքարի համատեքսում:

ՏԻՄ ընտրություններին «Մուսուլման-Եղբայրների» ինքնարացարկի հանգամանքը ուղեկցվեց բազմաքանակ ցույցերով, որոնցից ամենամեծը տեղի ունեցավ Ալ-Չուրրա քաղաքում, որին եզիւդուական ոստիկանական ուժերի միջամտության արդյունքում գրիվեց մեկ անշահահաս, և վիրավորվեցին բազմաթիվ ցուցարարներ: Եզիւդուակ իշխաղ ԱՌէ-ի համար ներքաղաքական իրավիճակի լարվածությանն է միախառնվում նաև 2007թ. վերջին և 2008թ. սկզբին ի հայտ եկած պարենային ճգնաժամը՝ հացի և այլ անհրաժեշտ ապրանքների նկատմամբ գների աճը, ինչպես նաև եզիւդուական իշխանությունների Նազար՝ եզիւդուապատեսայինան սահմանի հարցում հսկողության ուժեղացումը: Այսպիսով եզիւդուական իշխանությունների առջև ծառացած են մի շարք օրյեկտիվ և սուրյեկտիվ ներքաղաքական խնդիրներ, որոնք լուծում են պահանջում: Հաշվի առնելով մի շարք զարգացած երկների կառուցողական դիրքորոշումը ընդդիմության նկատմամբ, եզիւդուական իշխանությունները ևս՝ բոլով «Մուսուլման-Եղբայրների», պատմաքաղաքական զարգացման օրյեկտիվ տեսանկյունից վաստակած «իրավունքին», օրինական մասնակցությունը ներքաղաքական գործընթացներում, հնարավոր կրաքանչն երկրում լարվածության մթնոլորտի բորբակամը՝ ի վերջո հանգեցնելով խնդիրների որոշ առումով համատեղ ու համապարփակ լածմանը: Օրինակ 2004թ. նարտին «Մուսուլման-Եղբայրների» կողմից «Քարեփոխուսումների նախաձեռնություններ» ծրագրի իրավարակումը զգալիորեն նպաստեց Եզիւդուակ նախագահ Հոսի Մուրաքարի կողմից սկսված սահմանադրական քարեփոխուսումների իրականացմանը, որոնց արդյունքում, ժողովրդավարության տեսանկյունից, մի շարք դրական փոփոխությունների ներքրկվեց նաև պետության նախագահի ընտրության կարգը<sup>22</sup>:

**GOR GEVORGYAN  
(IOS)  
ON THE MUNICIPAL ELECTIONS IN EGYPT ON APRIL, 2008**

The Municipal elections in Egypt have been passed on April, 2008. The most powerful opposition force – the religious-political organization “Muslim Brothers” decided to boycott them. The great part of organization’s candidates has been previously deprived of participation in elections by the Egyptians authorities. As a

result the organization had to boycott the elections and previously called them not democratically.

The ruling "National-Democratic" party has won the 97% of votes. Every election has to be passed in the same scenario under the existing political system.

A lot of inter-political problems that exist in Egypt would be possible to solve only with the cooperation between authorities and opposition.

### ԾԱԼՈԹՎԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Ազգային-դեմոկրատական» կուսակցությունը ստեղծվել է 1978թ. հունիսին Եգիպտոսի նախագահ Աբվար աս-Սադարի որշմամբ: 1982թ. հունիսից մինչ օրս ԱՇ-Կ-ի նախագահն է Հումի Մուրարարը: <http://news.bbc.co.uk/>
2. Եգիպտոսում ՏԻՄ գործներությունը և ընտրությունները կարգավորվում է 1979թ. ընդունված N 43 համապատասխան օրենքով, ըստ որի ՏԻՄ-ը ընտրվում են քաց, ոսդու թվաքայլության միջոցով հինգ տարի ժամկետով: Մասնաւուն տես՝ Արաբական Հանրապետություն, Մասնաւուն տես՝ Արաբական Հանրապետություն, ունի երկրի ներքաղաքական կյանքում: համաձայն 2005թ. անցկացրած սահմանադրության քարեփինստինների՝ այս կամ այն քաղաքական ուժը պետք է առնվազն հավաքի 140 տեղ ՏԻՄ-ի ընտրություններում, որպեսզի հնարավորություն ունենա անկախ թեկնածու առաջարի 2011թ. նախատեսվող նախագահական ընտրություններին: ՏԻՄ-ը ամփակվանորդն կազմակերպում և կամոնակարգում են եզիստական հասարակության ստորին շերտերի մասմակցությունը երկրի ներքաղաքական կյանքին: ՏԻՄ-ի ընտրությունների արդյունքում կազմվում են խորհրդներ, որտեղ պարտադիր ծևով պետք է ընդգրկված լինի մեկ կիս: Խորհրդների գործունեության շրջանակներում կարևորագույն դերականությունը ունեն վարչական-տարածքային միավորների դեկավարները՝ նահանգապետներ, քաղաքապետներ, շրջանի նախագահներ, գյուղական բարեկամաների դեկավարներ, որոնք անմիջականորեն նշանակվում են երկրի գործող իշխանությունների կողմից: <http://news.bbc.co.uk/>
3. Վարչորոգացեա Ի.Ա., Եօնկոտ "Բրատյամ-մուսուլմանամ" մոնիկուլանին ընտրությունների կողմից: <http://news.bbc.co.uk/>
4. «Սուսուլման-եղբայրներ» կրոնա-քաղաքական կազմակերպությունը անցել է գարգաման քարտ և իրարամեր ժամանակաշրջան: Եթե զոյլության սկզբանական շրջանում նրանք քաջակերում էին խամական խայիֆայության ստեղծման գաղափարը, ապա վերջին շրջանում կազմակերպությունը ավելի շատ շեշտը դնում է եպիստոլամ խորհրդարանական պետություն կառուցելու հանգամանքին՝ իշխանության խամական տարրի պահպանմամբ: Մասնաւուն տես՝ Աբգարյան Ե.Ա., Ռелигиозно-политическая организация "Братъя-мусульмане" в Египте, Ислам в политической жизни стран современного Ближнего и Среднего Востока, Մ., 1986, с. 52-55; Lia B., The Society of the Muslim Brothers in Egypt: The Rise of an Islamic Mass Movement 1928-1942, UK-Ithaca press 1998, p. 27-30, 1954թ. մայիսի 4-ին կազմակերպության առաջնորդ Խողեյրի կողմից Եգիպտոսի վարչապետ Գամալ Նասերին ուղղված նախակուում «Սուսուլման-եղբայրներ» պահանջում են պետությունը հաստատել կառավարման պալատական համակարգ, վերականգնել խորի ազատությունը և այլն: Տես՝ Mitchell R.P., The Society of the Muslim Brothers, L., 1969, pp. 134-135; Ներկայումս «Սուսուլման-եղբայրներ» կազմակերպությունը գործում է ընդհատակում, իսկ պետության ներքաղաքական գարգացումներին, մասմակցում է անկախ թեկնածուներով:
5. [www.i-r-p.ru/library.html](http://www.i-r-p.ru/library.html)

6. Куделев В.В., Ситуация в Египте: апрель 2008г., [www.iimes.ru](http://www.iimes.ru); Եղիպտոսի Ազգային ժողովը քաղկացած է 458 պատգամավորից, որոնցից 448-ը ընտրվում են համընդիմությունից ուղիղ ընտրույթումների միջոցով, իսկ 10-ին նշանակում է երկրի նախագահը: Պատգամավորների ընտրույթումները անցնում են 48 ընտրատարածքներում՝ մեծամասնական և համամասնական ընտրույթումների հիման վրա:
7. «Մուսուլման-եղբայրները» փոփոխելով պետության քաղաքական համակարգը, ենթադրում են ստեղծել ատվածավետուրյուն, սակայն յուրահատուկ խորհրդարանական կարգերով: Եղիպտական իշխանությունները խստորեն վերահսկում են շարժման գործունեությունը՝ պարբերաբար իրականացներով ակտովներումների ճերքակալուրյուններ, կիրառելով բռնուրյուններ ու պատժամիջոցներ: [www.albawaba.com/cn/countries/Egypt/211310](http://www.albawaba.com/cn/countries/Egypt/211310)
8. [www.Al-Jazeera.com](http://www.Al-Jazeera.com)
9. Օրինակ՝ Եղիպտոսի Ազգային ժողովի 1984թ. ընտրույթումներում Ա'Դ-Յ-ն հավաքաց ընտրածայնների 73%, 1987թ.՝ 70%, 1990թ.՝ 80%, իսկ 2000թ.՝ 87% (պատգամավորական 458՝ 353): Sbu' <http://news.bbc.co.uk/>
10. Куделев В.В., Ситуация в Египте: апрель 2008, [www.iimes.ru](http://www.iimes.ru)
11. Куделев В.В., Ситуация в Египте: март 2008, [www.iimes.ru](http://www.iimes.ru)
12. Куделев В.В., Ситуация в Египте: апрель 2008, [www.iimes.ru](http://www.iimes.ru)
13. Царегородцева И.А., Եշվ.աշխ., [www.iimes.ru](http://www.iimes.ru):
14. "Братья-мусульмане" призвали к бойкоту муниципальных выборов в Египте, [www.islamrf.ru](http://www.islamrf.ru)
15. Муниципальные выборы в Египте и политическая позиция США, Եշվ.աշխ., [www.iimes.ru](http://www.iimes.ru)
16. «Ալ-Վաֆդ» կուսակցությունը ստեղծվել է 1919թ. և համարվում է Եղիպտոսի ամենահին կուսակցություններից մեկը: Կուսակցության գործնեությունը արգելվեց Գամազ Նասերի իշխանության տարիներին վլոյն կուսակցությունների հետ միավեն: 1977թ. Հուայտ Սիրազ ադ-Դինի նախաձեռնությամբ կուսակցությունը վերանվանվելով «Նեռ-Վաֆդ»: Sbu' Hiro D., The essential Middle East, New-York 2003, pp. 563-564.
17. «Թագամու-Ազգային-առաջադիմական» կուսակցությունը ստեղծվել է 1976թ. Արարական սոցիալիստական դաշինքի «Ճախ» թիվ հիմքի վրա: Կուսակցությունը գլխավորեց Խաղեղ Մոհի եղ Դիմը: Կուսակցության նախատակն է Եղիպտոսում կառուցել սոցիալիստական պետություն: 2000թ. Ազգային ժողովի ընտրույթումներում կուսակցությունը ստացավ 6 մանգաս: Sbu' <http://news.bbc.co.uk/>
18. «Ալ-Ղադր» կուսակցությունը հիմնվել է 2004թ. հոկտեմբերին՝ Այման Նուրի նախաձեռնությամբ, որն էլ դարձավ կուսակցության նախագահը: «Ալ-Ղադր»-ը համարվում է այսպիս կոչված վարդագոյն կուսակցություն, որը ըստ որոշ տեղեկությունների գտնվում է Արևմտաթի անմիջական հովանավորության ներու: Sbu' [www.mcaest.ru](http://www.mcaest.ru)
19. Куделев В.В., Եշվ.աշխ.:
20. Մանրամասն տես՝ Մуниципальные выборы в Египте и политическая позиция США, [www.i-r-p.ru](http://www.i-r-p.ru)
21. Նոյն տեղում:
22. Այս մասին մանրամասն տես՝ Գ-Լորյան Գ., Եղիպտոսում 2005թ. կայացած նախագահական ընտրույթումների շորջ, Մերձավոր Արևելք, Եր., 2006, էջ 47; Գ-Լորյան Գ., Սահմանադրական քարեփիշտումները Եղիպտոսում. ժողովողավարություն թե՛պատրանք, Եր. 2007, էջ 36:

## ԶԱԹԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

(ՀՅԹԻ)

ԱՍԵՐԻԿՅԱՆ ՄԻՍԻՈՆԵՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ  
ՕՍՍԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԸ.

ՊԱՏՍԱԳՐՈՒԹՅԱՆ

ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Ամերիկյան միսիոներները Օսմանյան կայսրությունում ակտիվ գործունեություն էին ծավալել 19դ. առաջին կեսից, նպատակ ունենալով «ապետարանականցմել» ողջ Սերճավոր Արևելքը: Հենց սկզբից քախվելով Օսմանյան կայսրությունում մուսուլմանների կրօնափոխարքան խիստ արգելմներին, միսիոներների ջանքերն ուղղորդվեցին դեպի կայսրության քրիստոնյա փոքրանասնություններ, մասնավորապես՝ դեպի հայեր: Միսիոներները ծավալեցին աշխայժ կրոնա-մշակութային գործունեություն, որը, սակայն, կտրուկ ընդհատվեց Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայերի ցեղասպանությամբ:

Դեպի Օսմանյան կայսրություն ամերիկյան միսիոներների ներքափանցման և դրա հայկական առջությունների հիմնախնդիրը իր յուրօրինակության շնորհիվ կարող է հետաքրքրել, որը միայն հայագետներին, թուրքագետներին, կամ այլ նեղ ճյուղային մասնագետներին, այլև տեսական-մեթոդաբանական որոշակի հետաքրքրություն կարող է առաջացնել օրինատալիզմի և Արևելք-Արևմուտք հարաբերությունների տեսաբանների համար:

Հարկ է նկատել, որ վերջին մի քանի տասնամյակի ընթացքում ամերիկյան միսիոներների գործունեությունը Սերճավոր Արևելքում, մասնավորապես՝ Օսմանյան կայսրության հայաշատ վայրերում ամենատարբեր լուսաբանման է արժանացել, որում նկատելի են նաև ժամանակի աշխարհաքաղաքական ընկալումները: 1960-ական քր., օրինակ, և՝ Արևմուտքում և թե՛ ԽՍՀՄ-ում խնդրին վերաբերող ոչ մեծարիկ աշխատություններում ամերիկյան միսիոներների գործունեությունը լուսաբանվում էր Արևելք-Արևմուտք, իմաստիալիզմի,

մարքսիզմի մասին տեսությունների լույսի ներքո և դրանում Օսմանյան կայսրության հայերը ներկայացվում էին կամ իրքն ամերիկյան ուշադրությունից հանդիրավի օգտվողներ, կամ որպես Թուրքիան գաղութացներու ամերիկյան պլաններին օժանդակողներ:

Առկա է նաև մեկ այլ տեսանկյուն, այն է՝ ներկայացնել ամերիկյան միսիոներներին իրքն արևմտյան լուսավորության, այն էլ միակ տարածողներ, որոնք բախվում էին Արևելքի խավարամտությանն ու քարացածությանը, ինչը կարելի է անվանել օրինտավորական հենց այն սահմանմամբ, որ տվել է Ե. Սայիդը<sup>1</sup>:

Խնդրին առնչվող պատմագրական կամ արևելագիտական գրականությունը պայմանականորեն կարելի է բաժանել 3 հիմնական խմբի՝ ըստ ծագման, սակայն նաև ըստ գաղափարախոսական ուղղվածության: Ամենահստակը այս ուղղվածություններում խորհրդայինն էր, այդ բվում և՝ հայ խորհրդայինը, որի գաղափարական հիմքերն, անշուշտ գալիս էին ԽՍՀՄ-ում իշխան մարքսիզմ-լենինիզմից: Հայ հետխորհրդային պատմագիտությունը միայն էպիզոդիկ և հընթացս այլ խնդիրների է անդրադառնում նշված թեմային:

Երկրորդ՝ հստակ գծագրված խումբը թուրքական (պաշտոնական) պատմագրությունն է՝ իր վառ արտահայտված ազգայնական, հակագաղութատիրական ուղղվածությամբ, որն ըստ եւրյան շատ աղերսներ ուներ խորհրդային պատմագրության հետ: Երկրորդ՝ և ավելի պայմանական խումբը ամերիկյան, կամ Արևմտյան պատմագրությունն է, որում առկա է տեսակետների և կարծիքների շատ ավելի մեծ քազմագանություն, քան նշված առաջին երկուտակ: Տեսակետներում նաև առկա է որոշակի շեշտադրումների փոփոխություն՝ կապված ժամանակի և ճրան քննորոշ գարգացումներ հետ: Պայմանականորեն կարելի է առանձնացնել նաև ամերիկահայ հեղինակներին, որոնց սակայն ամերիկյան դպրոցի մաս դիտարկելը տեխնիկապես սխալ չէր լինի:

Խորհրդային պատմագրությունն այս հարցում որոշակի մերուդարձանական հակասության կամ անհստակության մեջ է: Սի կողմից՝ մարքս-լենինիզմի հակախմաբերիալիստական բնույթը հնարավորություն չի տալիս տեսնել արևմտյան մշակութային ներքափանցման մեջ դրական տարրեր, մյուս կողմից էլ՝ ինքը՝ մարքսիզմը հանձինս իր դասականների, ունի օրինտավորական որոշակի մոտեցում (Վերցնենք թեկուզ Մարքսի

նշանավոր «արտապության ասլական ձևի մասին» դպրությունը, և ասեմբ Օսմանյան կայսրության հասցեին Մարքսի և Էնգելսի բացասական արձագանքները<sup>2</sup>:

Այսպես, օրինակ՝ նկարագրելով ամերիկյան միսիոներների՝ Արևմտյան Հայաստան թափանցելու վաղ փորձերի անհաջողությունները, Խալֆինը և Մուրավյանը իրենց աշխատությունում հեճվում են տեսդենցիոզ ուստական աղբյուրների տեղեկությունների և նրանց դատողությունների վրա, համարյա անտեսում կամ խսրական մոտեցում էին ցուցաբերում այլ աղբյուրների տեղեկությունների նկատմամբ<sup>3</sup>:

Նման դիրքերում էին կանգնած նաև այլ խարիդահայ հետազոտողներ, ինչպես օրինակ Հակոբյանը, ով միսիոներների՝ Օսմանյան կայսրություն թափանցելու մեջ ոչինչ, բացի զաղութացումից և իմպերիալիստական դաշտությունից, չեր տեսնում և անգամ ցեղասպանության տարիներին տարագոյալ հայերին նրանց կողմից մարդասիրական օգնության մեջ տեսնում էր ամերիկյան մոնոպոլիաների շահերը<sup>4</sup>:

Սուպել հավասարակշռված, թեև միսիոներների գործուներության նկատմամբ որոշակի քննադատական մոտեցում է ցուցաբերում Ա. Կիրակոսյանը: Նա նաև իր համաձայնությունն է հայտնում ամերիկյան հետազոտող Դենօվոյի այն պնդմանը, որ ամերիկյան միսիոներների զիշավոր միջոցները կրթական և առողջապահական հաստատություններն էին, որում արտացոլվում էր իրենց քաղաքակրթության առավելագույնը<sup>5</sup>:

Ազգայնական խոր ավանդույթներով թուրքական պատմագրությունում ամերիկյան միսիոներների գործունեությունը նույնպես պատկերվում է քավական խիստ երանգներով, որոնց կարևոր մոտիվը հայերին՝ Արևմուտքի կողմից իրեն իմպերիալիզմի և զաղութացման առաջամարտիկների ներկայացումն է: Այդ գրվածքներում հայ ազգայնականության կայացման գործում Արևմուտքի և ամերիկյան միսիոներների դերը հաճախ չափազանցված է:

Օրինակ՝ թուրք ժամանակակից հեղինակ Ի. Օրթայլըն հայտարարում է, որ «ժամանակակից հայ Սփյուռքի [...] տիրապետող աշխարհայացքն ու քաղաքականությունը թերևս այսօր էլ այդ կորության [այսինքն՝ ամերիկյան միսիոներների մատուցած-S. Զ.] արդյունքն են ...»<sup>6</sup>:

Նաև նաև համեմատաբար զուսպ գնահատականներ, ինչպես, օրինակ՝ Է. Չաղըին, Վերլուծելով, կամ ավելի շուտ՝ նկարագրելով ամերիկյան միսիոներների նկատմամբ օսմանյան իշխանությունների բացասական վերաբերունքը, նշում է, որ «նկատի ունենալով հայկական ... ազգայնականությունում ամերիկյան հաստատությունների շրջանավարտների դերը, կարելի է հասկանալ Բարձր Դռան զգայունությունը այս հարցում»<sup>7</sup>:

Ամերիկյան հետազոտողներին 1960-70-ական թթ. հարցը հետաքրքրել է քուրք-ամերիկյան հարաբերությունների ֆոնի վրա և այդ առումով կամ մի քանի կարևոր աշխատություններ՝ հրատարակված Սյեննեապոլիսի և Օհայոյի համալսարանների կողմից: Ամերիկյան Յ կարևոր հետազոտողների՝ Զ. Դենովոյի, Ռ. Թրասփի և Ռ. Դենիելի աշխատությունները արտացոլում են իրենց ժամանակը՝ հետզաղութատիրությունը, ինչպես նաև սառը պատերազմն ու քուրքամերիկյան զինակցությունը: Նրանում միսիոներների աշխատանքը «քաղաքակրթելու» Թուրքիան գնահատվում են դրական, մինչեւ, օրինակ՝ հայկական ազգայնականությանը և առավել ևս այն սատարելը՝ իբրև բացասական երևույթներ: Միաժամանակ Արևմուտքում, մասնավորապես՝ ԱՄՆ-ում քուրքերի բացասական կերպարի ծնավորման հիմնական մեղավորներ են համարվում միսիոներները՝ իրենց նեղմիտ կրոնական աշխարհայացքով<sup>8</sup>:

Խնդրին նվիրված այլ աշխատություններում հայ ազգայնականության և ընդհանրապես արդիականացման վրա ամերիկյան միտոներական գործունեության դերը որոշակիորեն չափազանցված է, այս անգամ արդեն՝ մշակութային առավելության գլուխակցման դիրքերից, ինչը հաճախ արդարացված չէ:

Ժամանակակից ամերիկյան հետազոտություններում այս խնդիրը հաճախ է ի հայտ գալիս նաև հայերին և հայոց ցեղասպանությունը հետազոտողների մոտ, որոնք սակայն հիմնականում անդրադառնում են փոքր-ինչ սինմատիկ և հիմնականում հպանցիկ: Նրանցում ամերիկյան միսիոներները հանդես են գալիս իբրև հայերի բարեկամ կամ նրանց մասին տեղեկությունները աշխարհին հասցնողներ, և նրանց համարյա բացառապես հետաքրքրում է 19-րդ դարի վերջին տասնամյակի և 1918թ. միջև ընկած ժամանակահատվածը:

Ի դեմս Օսմանյան կայսրությունում ամերիկյան միսիոներների ծավալած գործունեաւթյան մենք ունենք մշակութային գաղութացման օրինակ: Մեր կարծիքով, խնդրի վերաբերյալ հայրենական պատմագրությունը զգալիորեն կշահեր, եթե փորձեր ուստիմնասլիքության մերողաբանությունում ներառնել նաև է. Սայդի՝ օրինատականի մասին տեսությունը, հատկապես նրա՝ մշակութային իմացերիալիզմի մասին դրույթներից որը առավել լայն մերողաբանական բազա ապահովում:

Է. Սահման, օրինակ, իմացերիալիզմի և մշակույթի միջև ամենակարևոր կապը տեսնում է նարրացիայի կարողության/իշխանության և այլ պատմաշարերը/նարատիվները արգելափակելու մեջ: Էլ ավելի կարևոր է, - նշում է Սահման, - որ Էմանսիպացիայի և Լուսավորաւթյան գեր-պատմաշարերը մորիկացրին գաղութային աշխարհի մարդկանց<sup>9</sup>:

Հարկ է նշել, որ որոշ բուրքական ժամանակակից հետազոտողներ, ըստ էության օգտվում են օրինատականի մասին Է. Սայդի տեսությունից: Որոշակի բուրքամտն հայացքների տեր նշանավոր արևելագետ Քեռնարդ Լյուիսն, օրինակ հստակ շարունակում է այդ գիծը: Սակայն կարծում ենք սխալ կիմներ այդ տեսությունը համարել մեր գիտական գինանոցին ոչ հարիր: Ավելին՝ այստեղ բերվող խնդիրը լուսաբանելով օրինատականիզմի, պայմանականորեն ասված՝ «Երշկերտ օրինատականի» դիրքերից, մենք բերևս կնպաստեինք նաև տեսության որոշակի հղկմանը:

Եվ այսպես, վերոնշյալ խնդրում մեր մերողաբանական մոտեցումը հետևյալն է՝

ա. հարկ է հաշվի առնել սույն խնդրի «Երշկերտությունը», այսինքն՝ եթե մենք մոտենում ենք խնդրին զուտ Արևել-Արևմտաք հակադրությունն ունենալով աշքի առաջ, կարող ենք աշքից բաց բողնել այնպիսի մի երևույթ ինչպիսին է «ներքին օրինատականիզմը» մեկ հասարակության ներսում: Տվյալ դեպքում խիստ հետաքրքրական կիմներ դիտարկել միսիոներների վերաբերմունքը «հայերի» և «քուրքերի» նկատմամբ, ինչպես նաև ամերիկյան միսիոներական հաստատություններին կապված հայերի վերաբերմունքը այլ հայերի կամ բուրքերի նկատմամբ: Հատուկ պետք է ընդգծել, որ հայերի վերը նշված խավը հաղորդ էր միմնատիկ մրցակցությունում, իսկ այս փաստը որոշակի և խարը գնացող հետևությունների կարող է բերել:

թ. Սենք համարում ենք, որ նշված խնդրում դասական արևելագիտությունը իր վերջնական խոսքը չի ասել: Համեմայն դեպքու մեզ հայտնի չեն որևէ ամփոփ աշխատություն կամ երկ, որում մենք կարողանայինք տեսմել նշված երևոյթի «արևելյան» կամ ավելի սոույց «հայամական» պատասխանը, փոխարենը առկա են տարրեր մարդկանց պատահիկային դիտարկումները: Նկատի ունենալով, որ խնդրը ժամանակագրութեն համապատասխանում է Օսմանյան կայսրությունում մի կողմից աշխարհիկ ազգայնական, մյուս կողմից կրոնական ուժքորմիտական զարթոնքին, հետաքրքիր կիհներ դիտել սա օրինտալիզմի հակոտնյա թևողից՝ այսպես կոշված օքսիդենտալիզմի դիրքերից:

TIGRAN ZAKARYAN  
(AGMI)

### THE AMERICAN MISSIONARY ACTIVITY IN THE OTTOMAN EMPIRE AND THE ARMENIANS: THE QUESTIONS OF HISTORIOGRAPHY AND METHODOLOGY

The activities of the American missionaries in the Ottoman Empire since the first half of the 19<sup>th</sup> century are mainly concentrated on the Armenian community of the Empire, since the American missionaries failing in their initial plans to convert Moslems, turned to the Christian communities of the Empire, focusing on the Armenians. The approaches on this issue can be broadly divided into three major parts two of which, namely the Soviet and the Turkish are rather stable, with critical views. If the former one is concentrated on the imperialist, colonial nature of the missionary expansion, the latter is critical of the missionary activities' "subversive" nature, namely instigating Armenians to rebellion against the Ottoman authorities. The third and the most conventional one is the 'Western' or 'American', which maintains internal disagreements. If the scholars of 1960's under the influence of the postcolonialism were rather critical of the missionaries' attitudes and their inherent 'orientalism', the current American scholarship has developed other attitudes stemming from the perspective of a student of Armenian history.

The current paper tries to invest the notions of cultural imperialism and orientalism into this particular discourse as new perspective for research.

#### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Said E.W., Orientalism: Western Conceptions of the Orient, Penguin Books: London, 1979, p. 140.
2. Տես, օրինակ, այդ մասին՝ E. Said, Culture and Imperialism, Vintage Books: New York, 1993, p. 168.

3. Տես, օրինակ՝ Խալֆին Հ. Ա., Մորածյան Ա. Ա., Յանքի և Վոստոք, կամ կոլոնիալիզմ և ապահովություն, Երևան, 1966, էջ 186-188: Վանդակամ հյուպատոս Կողութակինն, օրինակ մեղադրություն է միսիոներներին բարոգրության վրա կենտրոնացնելու և մատադրական բարեգործական ծեռնարկները բողնություն մեջ,, նույն տեղում, էջ 189:
4. Ակոպյան Ս. Մ., Հայաստանը և Արմենիան մեջ առաջարկած ազգային պատմությունը և պատմական ազգային պատմությունը մեջ, Երևան, 1967.
5. Կիրակոսյան Ա. Ջկ., Վելիկобրիտանիա և Արմենական հարցը, Երևան, 1990, էջ 140-141, առաջնային աշխատանքը՝ John DeNovo American Interests and Policies in the Middle East, 1900-1939, Minneapolis: The University of Minnesota Press, 1963, էջ 10-11.
6. İlber Ortaylı, Soykırım iddiasının arkasındaki gerçekler, in: Sefa Kaplan, 90. Yılında Ermeni Trajedisi, 1915'te Ne Oldu? İstanbul: Hürriyet, 2005, s. 138.
7. Cagri Erhan, Ottoman Official Attitudes Towards American Missionaries in: <http://research.yale.edu/yicias/database/files/MESV5-11.pdf>
8. Տես օրինակ, R. R. Trask, The United States Response to Turkish Nationalism and Reform, 1914-1939, Minneapolis: The University of Minnesota Press, 1971, էջ 12, առաջնային աշխատանքը՝ R. L. Daniel, American Philanthropy in the Near East, 1820-1960, Athens, Oh: Ohio University Press: 1970, էջ 93-123, առաջնային աշխատանքը՝ John A. DeNovo American Interests and Policies in the Middle East, 1900-1939, Minneapolis: The University of Minnesota Press, 1963, էջ 31-32.
9. Said E.W., Culture and Imperialism, Introduction, Vintage Books: New York, 1993, p. 151.

## ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՇՈՒԾ

(Ար)

### ՍՈՒՖԻԶՄԸ ՈՐՊԵՍ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՓՈՐՁԵՆԹԱՑ ԻՍԼԱՄԻ ՀՈԳԵՎՈՐ ՀԱՍՏԿԱՐԳՈՒՄ

Սուֆիզմը, որպես կրոնափիլիառփայական ուսմունք, իր առաջացման պահից առ այսօր մեծաթիվ հետևողդներ է ունեցել ողջ արարամուտալմանական աշխարհում: Նման հաջողությունը պայմանավորված էր այն մեծ հուզականությամբ և հոգեկան լարումով, որով օժտված էր այս ուսմունքը, և որով լիովին հակադրվում էր ուղղահավատ իպամի կարծրացած համակարգին: Մարդուն զրկելով կամքից և «ես»ի գիտակցությունից, նրան հետացնելով կյանքից՝ սուֆիզմը ցույց էր տալիս նրան դեպի աստվածային ճշմարտություն տանող միստիկական ուղին, քացում նրա առջև լրիվ նոր, նախկինում անհայտ տարածություն, զնջում սահմանները մարդու և Աստծո միջև: Սա հակադրվում էր ուղղահավատ կրոնին, որը հստակորեն սահմանազատում էր մարդուն Աստծուց: Ըստ սուֆիզմի փիլիսոփայության մարդը աստվածային եռթյան կրողն է, և եթե նա ընտրի ճանաչողության՝ ճշմարիտ միստիկական ուղին և իր ողջ սիրով, նվիրումով ու հնազանդությանը դիմանա փորձություններին և անցնի այդ ուղու երեք աստիճանները, ապա կիսանի ճանաչողության բարձրագույն աստիճանին և կմույնանա աստվածային եռթյան հետ:

Սուֆիզմը իր ձևավորման սկզբնական փուլում (VII դ.) հանդիս է եկեղ ասկետիզմի տեսքով: Իսլամի առաջացման հենց սկզբնական շրջանում ասկետական ուղղության ստեղծման պատճառներն են ումնայում ծագած սոցիալ-քաղաքական խնդիրները, ինչպես նաև կրոնի հաճախակի շահարդկումը: Այս առումով սուֆիզմի առաջացումը դիտվում է որպես մուսուլմանների արտահայտած պասիվ բռնորդ<sup>1</sup>: Հետագայում ասկետիզմի հետ սուֆիզմում ի հայտ եկան միստիցիզմի և Աստծո միստիկական ճանաչողության տարրերը, ինչի արդյունքում է սուֆիզմը վերածվեց այն «Աստվածային սիրո հիմնին»<sup>2</sup>... Աստծո հանդեպ անսահման սիրո գաղափարը դարձավ սուֆիզմի շարժիչ ուժը: Ի տարրերություն ուղղահավատ կրոնի և քարեպաշտ կրոնավորների, որոնք վախ էին քարոզում Աստծո հանդեպ, միստիկներն իրենց հետևողդներին սեր էին քարոզում առ Աստված, նրա քացարձակ և անանցողիկ գեղեցկության հանդեպ<sup>3</sup>:

Միստիկական ինքնակատարելագործման ուղին սուֆիզմում քաժանվում է երեք փուլերի՝ շարիաթ, տարիկար և հակիկար:

Առաջին փուլը շարիաթն է, որը պարտադիր է յուրաքանչյուր ուղղահավատ մուսուլմանի համար, այս աստիճանում սուֆիզմ

ուսումնասիրում են խալամի հիմնավան դրույթները, սակայն դրանց տպով այլարանական մնանաբանություն: Սրանից ենու միայն մարդու առջև կարող է քացվել դեպի հաջորդ փուլը՝ տարիկա, տանող ուղին: Տարիկան, որպես սուֆիզմի տերմին, առաջացել է XI դարում, քարգմանվում է որպես ճանապարհ, ուղի և իրենից ներկայացնում է ինքնակատարելագործման ձգտող մարդու համար տարբեր քարոյահոգերանական մերոդների համակարգ: Այդ համակրագը նպատակին՝ քարձրագույն ճշմարտությանը հասնելու միակ և ամենակարծ ճանապարհն է, այն կարելի է բնորոշել որպես ուղեցույց Աստծուն փնտրող հոգու համար<sup>4</sup>: Այդ ճանապարհին կան որոշակի հանգրվաններ՝ մակամար, և դրանցից յուրաքանչյուրը իրենից ներկայացնում է միատիկական ուղու տվյալ փուլին հատուկ որոշակի հոգերանական վիճակ: Այս հոգելոր աստիճանները մոտեցնում են սուֆիին վերջնական նպատակին ճշմարտության ճանաշմանը: Այս մակամների դասակարգմանը և նկարագրմանը անդրադարձել են քազմարիվ հեղինակներ, և շատ հաճախ տարբեր հեղինակների մոտ նշվում է մակամների տարբեր քանակներ և հաճախ տրվում տարբեր մեկնաբանություններ: Հիմնականում, սակայն, նշվում են թվով յոր մակամներ.

Ուղին սկսվում է քառորդայով (գղջում): Սուֆիզմում սա քացատրվում է ոչ միայն որպես մեղքերի քավություն կամ ապաշխարում, այլ ավելի շատ խորիրդանշում է ինքնակատարելագործման ուղին անցնելու հաստատ որոշում:

Հաջորդ էտապը համարվում է վառան՝ շրջահայացություն: Այս էտապին բնորոշ է քույլատրելիի և արգելվածի տարանջատումը և հստակեցումը: Վառան համարվում է հասարակ մարդու վերջին և ընտրյալի առաջին աստճանը:

Շրջահայացությանը հաջորդում է գուհյը՝ ասկետիզմ կամ հրաժարում: Սա ենքարդում է ասկետական կյանքի վարում՝ այսինքն հրաժարում երկրային անցողիկ հաճույքներից և Աստծուց հեռացնող ամեն ինչից:

Հաջորդ էտապը ֆակրն է՝ աղքատություն: Բացի իր քառացի ընկալումից՝ այդ է երաժարում աշխարհիկ բալոր քարիքներից և մտադրված կերպով ջավոր կյանքի վարում, այս երևույթը ունի ավելի հոգելոր բնույթ և խորիրդանշում է հոգու աղքատություն, երբ այն մաքուր է և պատրաստ ընկալելու ճշմարտությունը և Աստծո հանդեպ սեփական աղքատության գիտակցումը:

Յաքրին ենթաւում է սարբը՝ համբերություն, որը սուֆիի համար կարևորագույն հատկանիշ է: Այս տերմինը քացատրվում է որպես ամենայն գժվարաւթյան և շարշարանքի հնազան ընդունում:

Հաջորդ էտապը քավաքրովն է՝ ապաշխանում Աստծուն: Այս էտապը սկսվում է նրանով, որ մարդն իրեն ազատում է վաղվա օրվա հետ

կապված բոլոր հոգսերից, բավարարվում ներկա պահով՝ ունենալով այն համոզվածությունը, որ Աստված ինչպես այսօր, այնպես էլ վաղը հոգ կտանի իր մասին: Այս երևոյթի ժայրահեռ ընկալումը հանգեցնում է բացարձակ հրաժարման սեփական կամքից, ինչը մեծ վտանգ էր ներկայացնում՝ հանգեցնելով մարդու գործունեության ուղղակի ընդհատման և հասարակությունից նրա մեկուսացման:

Յոթերորդ էտապը ոիդյան է՝ հնագանդում: Սա մի այնպիսի վիճակ է, երբ մարդ ոչ միայն հնագանդուն տանում է ճակատագրի յուրաքանչյուր հարված, այլ ավելին՝ անգամ չի հիշում, թե ինչ է վիատությունն ու հուսահատությունը: Նա կորցնում է շրջապատող աշխարհի հանդեպ հետաքրքրությունը և իրականության զգացողությունը:

Սութի հեղինակների մոտ նշվում են նաև միստիկական ուղու ընթացքում սութիի հոգևոր կյանքում պատահած կարճատև խորը ներշնչանքի վիճակներ՝ հալեր: Հայր Էքստատիկ վիճակ է, այն ի վերուստ տրված մեծ շնորհ է: Հայր դասակարգման վերաբերյալ շկա որևէ միասնական կարծիք: Առավել հաճախ հիշատակվող հալերն են կուրող՝ մերձնեցում, մահարան՝ սեր, խառնք՝ վախ, ռաջան՝ հույս, շառուղ՝ կիրք և այլն:

Տարիկայի փուլում գտնվող սութիի միտքը չպետք է գրադված լինի ոչնչով, բացի ճշմարտության բացահայտման գգոտմից: Նա պետք է վերացնի իր անհատականության, «Ես»-ի գիտակցումը, որը համարվում է նպատակին հասնելու ամենամեծ խոչընդուռը:

Տարիկաքը ավարտվում է անցունով վերջին փուլ՝ հակիկաք: Այս տերմինը բացատրվում է որպես իրական, ճշմարիտ կեցություն: Հասնելով հակիկաքին սութիին ինսուլիտիկ կերպով բացահայտում է աստվածային եռթյունը՝ այդպիսով տարրալուծվելով նրա մեջ:

Միստիկական շատ դպրոցների համար Աստծո հետ մերձեցման ուղու վերջնական նպատակը ֆանան է, երբ սութին հասնում է ինքնակատարելագործման այնպիսի մակարդակի, որ կորցնում է իր անձի գիտակցությունը, արտաքին աշխարհի ընկալումը, սա կամքի իսպան վերացման վիճակ է, որի ժամանակ մարդկային ոգին միանում է «տիեզերական ոգուն»: Այս դեպքում նրա ցանկացած արարք թիսում է Աստծոց, և նա, միանալով տիեզերական ոգուն, ստանում է աստվածային բնույթ, նոյնանում Աստծո հետ: Ահա այս ժամանակ մարդը կարող է ասել «Ես եմ ճշմարտությունը»:

Սութիկական ուսմունքի համաձայն ճանաչողությունը Աստծո ճանաչումն է՝ իր բոլոր հատկանիշներով և անուններով: Բոլոր իրերի և երևոյթների մեջ նրանք տեսնում են Աստծոն: Եթե ուղղահավատների համար «Ծկա Աստված Ալլահից բացի», ապա սութիների համար «Ծկա գոյություն Ալլահից դուրս»:

IX-Հդդ. սուֆիական ուսմունքը արդեն լիովին ձևավորվել էր որպես մի ամբողջական կայուն համակարգ:

ԻXդ. ընթացքում սկիզբ առավ սուփիզմի փիլիսոփայուրյան և փարմենքացի մշակման գործընթացը: Առաջացան մի շարք սուփիական դպրոցներ, որոնցից ամենախոչըրն էին Բասրայի, Բաղդադի և Քուֆայի դպրոցները: Այս ժամանակաշրջանում սկսվում է նաև սուփիական համայնքի կազմակերպման գործընթացը: Այն անձը, որը ընտրել էր միստիկական կատարելագործման ուղին՝ տարիկան, չէր կարող դա անել մեկուսացած, առանց որոշակի զիտելիքի, ուստի արդեն ձևավորվում է մուրիդ-մուրշիդ՝ աշակերտ-ուսուցիչ համակարգը: Յուրաքննյուր մարդ, ով ընտրել էր այդ ուղին, պետք է առաջնորդվեր հոգևոր առաջնորդի՝ շեյխի կամ պիրի օգնությամբ, որին ընտրում էր ինքը: Աշակերտը պետք է լիովին ենթարկվեր ուսուցչի կամքին, անվերապահորեն կատարեր նրա բոլոր ցուցմունքները, առանց մտորելու դրանց նշանակության կամ նպատակահարմարության մասին՝ այդպիսով իր կամքը հանձնելով ուսուցչին: Մուրիդի ուղին սկսում էր բազմաթիվ փորձություններով, որոնց միջոցով ստուգվում էր նրա հնագանդիվալու պատրաստակամության չափը: Եվ այդ փորձությունները անցնելուց հետո մուրշիդը մուրիդի կողմից ստանում էր թույլտվություն (իջազա) աշակերտներ հավաքելու և իր ուսուցչի ավանդույթները փոխանցելու համար: Մուրիդ-մուրշիդ համակարգի միջոցով էլ հիմք դրվեց և հետագայում սուփիական տարիկաների կառուցվածքային զարգացման հետևանքով ամրապնդվեց սիլսիլա երևույթը: Սիլսիլան հոգևոր ժառանգականության շրբան է, երբ տարիկայի ղեկավար-շեյխը իրենից ներկայացնում է ժառանգականության շրբայի միջանկյալ օղակ և հանդիսանում է տարիկայի հիմնադրի ու նրա կողմից հիմնված ուրույն միստիկական համակարգի հոգևոր ժառանգ<sup>6</sup>:

Սուփիզմի փորձընթացում շատ կարևոր դեր է գրաղեցնում զիքը՝ իջատակումը, այսպես է կոչվում աղոթքը: Զիքը տարբեր տարիկաներում կատարվում է երկու ձևով՝ բարձրածայն զիքը՝ սամա և լուս զիքը՝ խաֆի: Սաման սուփիների համար միջոց է հասնելու բացարձակ ճշմարտությանը, դրա շնորհիվ սուփին ընկնում է էքստատիկ վիճակի մեջ և հասնում Աստծո ճանաչողության բարձրագործուն աստիճանին: Սակայն, ըստ սուփիների բնորոշման, լինում է նաև կեղծ էքստագ, ինչպես իրենք են անվանում՝ երևակայական էքստագ, որն իհարկե անթույլատրելի է:

Սամայի ծխակարգի անբաժան մասն են երաժշտությունը և պարը, որոնց միջոցով էր սուփին հասնում էքստատիկ վլիճակի<sup>7</sup>: Երաժշտության երևույթի հության և բավանդակության ընկալման, դրա օգտագործման հարցում սուփիները հակառակվում էին իսլամական զաղափարախոսությանը, որն, ինչպես հայտնի է չի ընդունում և

վիրավորական է համարում դրա օգտագործումը աղոթքների և Աստծո պաշտանութեանքի ժամանակ<sup>8</sup>: Սուֆիզմը երաժշտությանը վերաբերվում է որպես մի երևոյթի, որ եկել է այնկողմնային և մարդու տեսողության ու գիտակցության համար անհայտ աշխարհից: Երաժշտությունը պատկանում է «մարդու աշխարհին»: Այն ներկայացնում է Աստվածային հոգու ներդաշնակությունը և երկրային աշխարհում հանդես է գալիս որպես միջոց, որն օգնում է մարդուն խուսափել մեկուսացումից Աստծուն մերձենալու ճանապարհին: Սուֆիները չեն ընդունում երաժշտության որպես զվաճանքի միջոցի ընկալումը, որ շեղում էր սուֆիին աստվածանաշողության ուղղությունը:

Պարային արվեստը սուֆիզմում ընկալվում է որպես մարդուն հասանելի ուրախության, ցնծության գագարնակեսու, որը և նպաստում է ստեղծագործական ներշնչանքին<sup>10</sup>: Այն իր մեջ ներառում էր երեք տիպի շարժում՝ քայլ, պտույտ, ցատկ և ամեն մի շարժում հոգևոր եռթյան խորհրդանքի էր հանդիսանում<sup>11</sup>: Միստիկական պարը օգտագործվում է, Աստծո հետ սիմվոլիստական, երևակայական միավորման և հոգին մարմնական կապանքներից ազատելու նպատակով:

Սուֆիզմի վիխսոփայության սկզբնավորման և ձևավորման համար հիմնական միջոց է հանդիսանում պոեզիան: Սուֆի պոետները պատեզիայի միջոցով նկարագրում էին իրենց միստիկական փորձը և փոխանցում իրենց աշխարհներային: Քանի որ սուֆիզմի հիմնական շարժիչ ուժը միստիկական սերն է, նրանց բանաստեղծությունները ունեն կրթության սիրերգությունների բնույթ: Իրենց գայումը առ Աստված սուֆիները նույնացնում էին սիրո, իսկ աստվածային ճշմարտությանը հասնելու երստատիկ վիճակը՝ արքեցման հետ: Սուֆիական սիմվոլիկան իր երեք հիմնական թեմաներով՝ սեր, գինի, տիեզերքի գեղեցկություն, ձևավորվել է արարական ավանդական պոեզիայի համապատասխան ժանրերի հիմքի վրա: Սակայն սուֆիզմը վավեր ձևափոխեց ավանդական պոեզիան՝ դրանում մտցնելով հատուկ սիմվոլիստական ոճ<sup>12</sup>: Այս պատկերներից յուրաքանչյուրը սուֆիական քնարերգությունում վերածվեց մշտական, անփոփոխ իմաստ ունեցող սիմվոլի: Այստեղից է բիտմ սուֆիական լիրիկայի իմաստային երկատվածությունը, երբ տեսանելի՝ «երկրային» պատկերների տակ քարճական է միստիկական իմաստը: Օրինակ սիրեցյալը սուֆիական սիմվոլների համակարգում աստվածային ճշմարտությունն է, սիրեցյալի խոպոպները՝ երկրային գայրակրությունը, փոթորկությունը ծովը՝ մարմնական ցանկությունները, կայծակի մոխրացնող փայլատակումը աստվածային քացարձակ ճշմարտությանն է և այլն:

Խել, սկսած սուֆիզմը սկսում է բաժանվել տարրեր տարիկաների, որոնցից յուրաքանչյուրը հանդես է գալիս որպես առանձին կազմակերպություն: Միարանությունները, որպես կանոն, կոչվում էին իրենց հիմնայինների կամ մուշչինների անունով: Մրանք միանական

միավորումներ էին, որոց նպատակն էր ճշմարտության ճանաչողության միստիկական ուղու իրենց մերողի տարածումը և ուսուցումը, այն մերողի, որը տարածել է տվյալ տարիկայի հիմնադրի միջոցով։ Ավանդության համաձայն XII-XIVդդ. առֆիզմում ձևավորվեցին նրա տասներկու գիտավոր՝ «մայր» եղբայրությունները։ Այս տարիկաների շրջանում ձևավորվեցին միստիկական փիլիսոփայության և փորձընթացի հիմնական դպրոցները, և դրանց բազմաթիվ ճյուղավորումների ու ուղղությունների միջոցով առֆիզմը տարածում գտավ աշխարհի տարբեր ծայրերում և մեծ բվով հոտևորդներ ունեցավ։

**ANUSH TAMRAZYAN**

(IOS)

**SUFISM AS PHILOSOPHY AND PRACTICE IN ISLAMIC SPIRITUAL SYSTEM**

Sufism as a mystical religious doctrine till now, had a lot of progenies in all Arab-Islamic world. The success of Sufism is connected with the great emotionality and spiritual exertion. Here is the difference between orthodox Islam and Sufism. The final goal of sufi is the direct spiritual contact with divinity. It can be reached through ecstasy or inner irradiation, that is gifted from on high. From XI century sufism divided into ensemble orders. Each of them was a separate organization that practised its separate method of mystical perception. Further in XII-XIV centuries there were formed 12 main orders and in framework of them were shaped main schools of mystic philosophy and practice. Due to this sufism had big dissemination in all Arab-Islamique world.

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Петрушевский И. П., Ислам в Иране в VII-XVвв., Л. 1966, с. 13.
2. Бертельс Е. Э., Избранные труды : суфизм и суфийская литература, М., 1965, с.1.
3. Мухаммедходжаев А., Гносеология суфизма, Душамбе 1990, с.1.
4. Бертельс Е.Э., Աշխ. աշխ., էջ 36:
5. Նոյն տեղում, էջ 39:
6. Marshall G. S. Hodgson, The Venture of Islam, Volume two: The Expansion of Islam in the Middle periods, The University of Chicago Press, 1974, p. 213.
7. Тримингэм Дж. С., Суфийские ордены в исламе, М., 1989, с. 161.
8. Курбанмамадов А. Г., Эстетическая доктрина суфизма, Душамбе, 1967, с. 47.
9. Նոյն տեղում, էջ 48:
10. Նոյն տեղում, էջ 69:
11. Тримингэм Дж. С., Աշխ. աշխ., էջ 161:
12. Суфизм в контексте мусульманской культуры, М., 1989, с. 225.

## ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

(Փհ)

### ԺԱ ԴԱՐՈՒՄ ՇԻՐՎԱՆԸ ԱՎԵՐԻ ԴԻՆԱՍՏԻԱՅԻ ԻՐԱՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Արևելյան Այսրկովկատում պարսկերենով մշակութային հաղորդակցության ավանդույթը գոյաբրյուն է ունեցել առնվազն դեռ միջին սասանյան ժամանակաշրջանից (Ե-Զ դդ): Ըստ հայ և վրաց մատենագրության պահպանած տվյալների՝ պարսկերենը հանդիս էր գալիս որպես տեղական ազնվականության, պետական ծառայողների և կրթյալ դասի հաղորդակցության (առավելապես քանավոր մակարդակում՝ մայրենի լեզվին զուգահեռ) լեզու թե՛ Հայաստանում ու Վրաստանում և թե՛ Աղվանքում: Միաժամանակ այս ժամանակաշրջանում էր, որ համաձայն աղբյուրների վկայության՝ Բուն Աղվանքի արևելյան հատվածում՝ Կորից մինչև Դերբենդի լեռնանցքը, առաջացան մի շարք տարածքային միավորներ, որոնց տիրակալներին սասանյան շահնշահեր Հազկերտ Բ-ի (439-457) և Խոսրով Անոշիրվանի (531-579) կողմից շնորհվեցին «շահի», այսինքն՝ «արքայի» տիտղոսներ (իհարկե տեղական իշխանի նշանակությամբ): Կովկասի լեռնային ամրությունների ուժեղացման նպատակով<sup>1</sup>: Անկասկած, այդ տիտղոսների շնորհումը որևէ էրնո-տարածքային միավորի, այդ բնում նաև՝ Շիրվանի (ըստ ամենայնի՝ որպես «ճիղոք» ցեղաերկրանվան իրանականացված ծևի)<sup>2</sup> նկատմամբ որոշակի տոհմի ժառանգական իրավունքի հաստատում պիտի նշանակեր: Եվ պատահական չէ, որ Շիրվանի՝ որպես առանձին տարածքի և Շիրվանշահերի՝ որպես այդ տարածքի իշխանների դինաստիայի սկզբնափորումն ավանդաբար հենց այս ժամանակաշրջանից է քվագրվում<sup>3</sup>:

Սակայն Շիրվանի տիրակալների արքայական այս առաջին հարստության վերաբերյալ աղբյուրների հաղորդած տեղեկությունները, որոնք մասնավորապես արար հետիմակները գրի են առել երկու-երեք դար հետո, մեզ ավելին չեն ասում: Սույ են նաև տեղի ազնվականության մասին արարական արշավանքների առաջին երկու դարերին վերաբերող տվյալները: Այս առումով հետաքրքրական է Ժ դարի պատմիչ Տարարիի հաղորդած մի տեղեկություն: Ըստ դրա՝ Երր 643թ. Օմար խալիֆայի կողմից Դերբենդը գրավելու հրաման է ստացվում, արարական զորքը Սուրակա իրն Ամրի գլխավորությամբ շարժվում է դեպի Շիրվան: Երբ արարները մոտենում են Դերբենդին, նրանց իր հետաքրքրությունն է հայտնում տեղի ժառանգական տիրակալ Շահրարազը՝ պայմանով, որ հարկեր մուծելու փոխարեն այդ գումարները ծախսվեն սահմանները պաշտպանող զինվորների

վարձատրության համար: Պայմանն ընդունվում է, և արարմերն ազատվում են այստեղ գորք պահելու անհրաժեշտությունից<sup>4</sup>: Եթե նույնիսկ նշված Շահրաբազրը հաստատապես միայն Դերենի տիրական է, այլ ոչ նաև Ծիրվանինը, կարելի է գոնե ենթալլիք, որ արարմերի կողմից նմանատիպ պայմաններ են առաջարկվել Դերենիցից հարավ Ծիրվանի և հարևան մյուս մասն իշխանություններին՝ պահպաննով տեղի ազնվականության իրավունքներն այդ տարածքների նկատմամբ, առավել ևս, երբ հայտնի է, որ Այսրկվկասում արարական տիրապետությունն ընդունակ միջն է դարի վերջը կրել է բավական անկայուն և ժամանակավոր բնույթ<sup>5</sup>:

Հետագա երկու դարերի համար տեղական իշխանական տներին վերաբերող տեղեկությունները գրեթե բացակայում են: Ըստ ավելի հարուստ է այս տարածքի Թ-ԾՍ դարերի պատմությանը վերաբերող նյութը՝ շնորհիվ «Թարիխ ալ-Բարի», որը Ծիրվանի այդ ժամանակահատվածի պատմության հիմնական ալբյուրն է: Ըստ դրա՝ 861թ. Մուրավարքի խալիֆայի սպանությունից հետո ծագած ընդդունումներից օգտվելով՝ Ծիրվանում կառավարող Հայսամ իր խալիլն իրեն անկախ հռչակեց և հայտնի դարձավ որպես Ծիրվանշահ<sup>6</sup>: Նրա եղրայր Յազիդ իր Ահմադն էլ (որի բառ Արու Թահիր Յազիդը՝ 917թ. պիտի տիրանար Ծիրվանի զահին) անկախացավ հարևան Լայզանում<sup>7</sup>: Հայսամն ու Յազիդը, որոնք դարձան Ծիրվանում Մազյայան դիմաստիայի հիմնադիրները, 787-788թթ. Արմինիայի և Ասրպատականի ոստիկան ճշանակված Յազիդ իր Մազյայի բոռներն էին և ծագում էին արարական շայրան շեղից: Նրանց տոհմարանության վերաբերյալ աղյուսի հաղորդած տեղեկությունները հստակ են և կասկածելու տեղիք չեն տալիս<sup>8</sup>:

Արար պատմի Մասուդին, որն իր աշխատաթյունն ավարտել է 943թ., գրում է, որ իր ժամանակ Ծիրվանում բազավորող Մուհամմադ իր Յազիդը ծագում է Սասանյան շահնշահ Բահրամ Գուրից (420-439)<sup>9</sup>: Սակայն մեր կարծիքով՝ պատմիչին հասած այդ տեղեկությունն արդյունք է Ծիրվանշահների վաղ շրջանի դիմաստիայի վերաբերյալ դեռ այդ ժամանակ պահպանված հիշողության և կարող է վկայել Ե դարում Սասանյանների և նրանց միջև խնամիական կապերի հաստատման մասին<sup>10</sup>:

Ծիրվանի Մազյայան դիմաստիայի արարական անունների շարքը շարունակվում է մինչև ԾՍ դարի 20-ական թվականները: Սակայն Յազիդ իր Ահմադ բազավորի մեզ հայտնի յոր զավակներից հինգը կրում են իրանական անուններ (Սանուշեր, Սալար, Անոշիրվան, Քուրայ, Չամբույշ)<sup>11</sup>: Ժամանակի ընթացքում մոռացության է մատնվում նաև Մազյայանների արարական ծագման փաստը, և արդեն ԺԲ դարում նրանք հանդես են զայիս նոր՝ Քեսրանշահ տոհմանվամբ՝ նկատի ունենալով իրենց իր իրանական ծագումը<sup>12</sup>: Հետագա դարերի

պատմիշներն արդեն որևէ կերպ կասկածի տակ չեն առնում այդ փաստը: Դա նշանակում է, որ դիմաստիայի ներսում ձևավորված իրանական մշակութային ավանդույթն արդեն այդ ժամանակներում ամրադրությամբ ստվերել էր արարական ծագման մասին հիշողությունները:

Դիմաստիայում իրանական անվանաբանական ավանդույթի ձևավորումը, որը շարունակական դարձավ հետագա դարերի համար՝ ընդհուած միշև վերջին թագավորները, ժամանակին պատճառ է դարձել մի՝ ամենայն հավանականությամբ սխալ տեսակետի ձևավորման համար, ըստ որի ինչ-որ ժամանակ Ծիրվանում տեղի է ունեցել դիմաստիայի փոփոխություն<sup>13</sup>, մինչդեռ «Ժարիխ ալ-Բարում» հստակ է երևում ժառանգական ուղղությամբ:<sup>14</sup> Այսպիսի նոր ինքնուրյան ձևավորումն, անկասկած, կարող է վկայել որևէ իրանական տոհմի հետ Ծիրվանշահերի մտերմանալու մասին: Խնդիրը գրավել է նաև այլ հետազոտողների ուշադրությունը: Մասնավորապես, Վ. Սինորսկին հնարավոր է համարել, որ Յազիդ իր Ահմաջի օրոք ամուսնական կապեր են հաստատվել Ծարքարանի հին իշխանական տաճ հետ<sup>15</sup>:

Այս առումով չափազանց արժեքավոր է ԺԷ դարի սկզբում Ծիրվանշահերի պետության մեջ տարբեր դիրքեր գրանցրած պաշտոնյա Մասուդ իր Նամդարի թերած մի տեղեկաւթյուն: Իր երկերի ժողովածոյում նա մի քանի անգամ հիշատակում է Բահա աղ-Դին ալ-Կալույիի անունը<sup>16</sup>: Նշվում է նաև, որ արդեն երրորդ սերունդն է, ինչ Կակույինների ընտանիքը գրադեցնում է Ծիրվանի վեզիրի պաշտոնը<sup>17</sup>: Հայտնի է, որ Կակույինների տոհմը հանդիսանում է դեմիկների նշանավոր դիմաստիայի՝ Քոյինների մի ճյուղավորմաբը: Ողջ ԺԱ դարի ընթացքում այդ տոհմի ներկայացուցիչներն իշխել են կենտրոնական և արևմտյան Իրանի այնպիսի կարևոր քաղաքներում, ինչպիսիք են Սպահանը, Համադանը, Ռեյը, Ներկավանդը և Յազդը<sup>18</sup>: Չաս հավանական է, որ հենց Կակույինների հետ են Մազյայյան տոհմի Ծիրվանշահերն ամուսնական կապեր հաստատել արդեն ԺԱ դարի սկզբում՝ Փոխարենը նրանց տալով վեզիրի պաշտոնը, որը դարձավ ժառանգական<sup>19</sup>: Այս տեսակետի օգտին է խոսում նաև այն, որ ԺԱ դարի ընթացքում թե՛ Ծիրվանշահերի և թե՛ Կակույինների մոտ տարրածված են դատում Խարիրուրգ, Գարշասպ, Քուրայք, Քավուս իրանական անունները, որոնք չեն հանդիպում հարևան մյուս իշխանական տներում: Խոկ Բահա աղ-Դին ալ-Կալույիի պայի ապրած ժամանակն էլ պետք է որ համընկներ Յազիդ իր Ահմաջի զահակալության ժամանակաշրջանին:

Այսպիսով, թեև ԺԷ դարում Ծիրվանշահերի տոհմանունը Մազյայյանի փոխարեն հայտնի է դատում արդեն որպես Քեսրանյան՝ ակնարկելով Խոսրով Անոշիրվանից սերելու մասին, այդուհանդեռձ աղբյուրները փաստում են դրանց միջև ուղղությամբ մասին: ԺԱ դարի առաջին քառորդից Ծիրվանի տիրակալների արարական

դիմաստիայում իրանական աճունների ի հայտ գալը որևէ իրանական տոհմի, հավանաբար՝ դեկիլի Կակոյիների հետ խնամիական կապի հաստատման արդյունք էր: *Քերոսմյան* ստմանվան առաջացումը պետք է բացատրել նախև առաջ դիմաստիայի ներկայացուցիչների մոտ իրանական ինքնազիտակցության բարձրացմամբ, ինչպես նաև իրանական մշակութային հզոր միջավայրի առկայությամբ: Մյուս կողմից, ինչպես նկատել է Վ.Սինորսկին, հնարավոր է, որ 1075թ. սեպուլյան արշավանքին հաջորդած մուր ժամանակներում այստեղ ինչ-որ երկիշխանություն հաստատված լիներ, որի հետևանքները վերացներուց հետո Շիրվանշահերին հարկ կլիմեր վերականգնել սեփական հեղինակությունը՝ ասեմք, դիմաստիային վերագրելով իրանական ազնվական ծագում<sup>20</sup>: Ինչ վերաբերում է Մազայյանների և Վաղ (սասանյան) շրջանի Շիրվանշահերի միջև կապի խնդրին, ապա դրան վերաբերող առյուրների տվյալներն ավելի շատ հիմք են տալիս Ժատելու, քան հաստատելու այդպիսի կապը:

ARSEN HAKOBYAN  
(IOS)

### ON THE ISSUE OF THE SHIRVANSHAH'S DYNASTY'S IRANIZATION IN THE 11<sup>TH</sup> CENTURY

According to the Armenian and Arabic historical sources, the beginning of the early Shirvanshahs' dynasty can be dated from the Sasanian times when «king» titles were awarded to a number of rulers of the Eastern Transcaucasus. But then up to the 9<sup>th</sup> century we have no authentic records about the local aristocracy. The «Tarikh al-Bab» gives in details the history of the Mazyadid rulers of Shirvan. The dynasty rises from the arab stem of *al-Shayban* and its representatives had arab names until the first quarter of the 11<sup>th</sup> century. From that time Iranian names appear in the onomastic tradition of the Mazyadid dynasty. This fact made some researchers to suppose that a dynastical change had taken place in Shirvan. But the «Tarikh al-Bab» shows us that the Mazyadid dynasty went on ruling in the state after that time as well. V.Minorsky supposed that the Mazyadids could establish nobile relations with some old Iranian family, for example, of Shabaran.

Mas'ud ibn Namdar, who served in the Shirvanshahs' state as an administrative official, spreads some light on this issue. He mentions for several times the name of Baha ad-Din al-Kakuyi, who was the Shirvanshahs' vezir in the third generation. So the Kakuyids (a branch of Daylamit dynasty of Buyids) were the family with which the Shirvanshahs had established nobile relations in the beginning of the 11<sup>th</sup> century.

Though from the 12<sup>th</sup> century the Shirvanshahs were famous as Kesranids and the Iranian onomastic tradition continued in the dynasty up to its decline, however a dynastical change had not taken place. In reality the change of the dynastic name could mean a change of the self-consciousness of the Shirvanshahs from Arabian into Iranian under the influence of a strong Iranian cultural environment of the region which had strong and deep historical roots.

1. Եղիշելի Վասի Վարդանայ և Հայոց պատերազմին, աշխատութեամբ Ե.Տեր-Մինասեանի, Եր., 1957, էջ 198; Բալաձուրի, Կнига завоеваний стран. Араб. текст, пер. П.К.Жузе, Баку, 1927, с.7-8; Մասуди, Մուրուջ աճ-Ճահաբ, пер. и коммент, Минорского В.Ф., в кн.: История Ширвана и Дербента X-XIVвв., М., 1963, с. 190-191; РЦШ. Ակոպյան Ա.Ա. Ալբания-Ալանք և греко-латинских и древнеармянских источниках, Еր., 1987, с.119; Семенов И.Г., Этно-политическая история Восточного Кавказа в III-IV веках, автореф. канд. ист. наук, Махачкала, 2002, с.23-25.
- 2.Տե՛ս Հակոբյան Ա., «Ծիրվան» երկրանվան ծագման հարցի շուրջ // «Մերժավոր արևելք», IV, Եր., 2007, էջ 61-65:
3. Минорский В.Ф. История Ширвана и Дербента X-XIVвв., М., 1963, с.176; Աշոբելի Ս. Государство Ширваншахов (VI-XVIIвв.), Баку, 1983, с.43.
4. Արքացի մատենագրեր Հայաստանի մասին. Տարարի (V, 2663, 2665): Թարգմ. Ք.Խաչարեանց//«Համելս ամսօրեայ», ԺՇ տարի, Վիեննա, 1905, էջ 160, 244:
5. Տեր-Գևոնդյան Ա.Ի. Արմենիա и Арабский халифат, Ер., 1977, с. 44-45, с.50, 71.
6. Минорский В.Ф., Աշխ., էջ 47:
7. Նույն տեղում, էջ 48; Լայզանը համապատասխանում է Ծամախու շրջակայրից արևմուտք՝ Գիրդիմանջայ և Ալսու գետերի վերին հովիտների տարածքին (Ա.Հ.):
8. Минорский В.Ф., Աշխ., էջ 43-47, 84:
9. Մասудի, Աշխ., էջ 190-191:
10. Նմանատիպ Խնամինական կասպերի մասին տե՛ս օյինակ՝ Յակոբյան Ա., «Վաշագանի Վեպը» և Արշակունեաց բազավորութեան խնդիրը Դ-Զ դարերի Աղումբում// «Համելս ամսօրեայ», ՑԺԷ տարի, Վիեննա-Երևան, 2003, էջ 93-94, 130-131:
11. Минорский В.Ф., Աշխ., էջ 53-56:
12. Նույն տեղում, էջ 169, 176-177; Արքապարսկական ավանդույթում Քիորա ամվամբ համելս է զայիս Խուրու Անուշիրվանը (Ա.Հ.):
13. Տե՛ս История Азербайджана в 3-х томах, под. ред. И.А.Гусейнова, А.С.Сумбатзаде, А.Н.Гулнева, Е.А.Токаржевского, Баку, 1958, с.128-129, 141.
14. Минорский В.Ф., Աշխ., էջ 52-53:
15. Նույն տեղում, էջ 90,157:
16. Mac'ud ибн Намдар. Сборник рассказов, писем и стихов. Факс. текста, предисл. и указатели Бейлиса В.М., М., 1970, лл. 9а, 116, 13а, 366, 155б, 157б, 159а; V.Minorsky, Cl.Cahen, Le Recueil Transcaucasien de Mas'ud b. Namdar// Journal Asiatic, t. CCXXXVII, 1949, p. 115.
17. Mac'ud ибн Намдар, 13а, 159а; Бейлис В.М., Сочинения Mac'uda ибн Намдара как источник по истории Аррана и Ширвана начала XIIв. И памятник арабской литературы, автореф. дисс. докт. ист. наук, Баку, с.42-43.
18. Bosworth, C.E. The Islamic Dynasties. A Chronological and Genealogical Handbook, Edinburgh University Press, 1967, pp. 97-98; Ահմադ-ի Քյաշրավի, Ըսկրիյարամ-ի գոմնամ, Թեհրան, 1385, էջ 12 (պարսկ.):
19. Հման. Бейлис В.М., Աշխ., էջ 42:
20. Минорский В.Ф., Աշխ., էջ 176:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՑԱՆ ԱՂԱՎԵԻ  
(ԱԵ)  
ԶԺՀ-Ի ՍԵՐՋԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
1970-ԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐՁԵՐԻՆ

Ինչպես հայտնի է, 1966-1976թթ. «Մշակութային հեղափոխության» տարիները բացասական անդրադարձ ունեցան ինչպես ողջ աշխարհի, այնպես էլ Սերծափոր Արևելքի (այսուհետ՝ ՍԱ) երկրների հետ Չինաստանի ժողովրդական Հանրապետության՝ ԶԺՀ-ի հարաբերությունների վրա<sup>1</sup>: 1970-1976թթ. ժամանակահատվածում ԽՍՀՄ-ի կողմից ԶԺՀ-ին սպառնացող ուազմական վտանգի<sup>2</sup> հետ կապված մտավախության պայմաններում, Պեկինի մերձավորարևելյան քաղաքականությունը խորհրդային հեգեմոնիզմի դեմ ուղղվածություն էր ձեռք բերել<sup>3</sup>: ՍԱ-ի երկրների հետ դիվանագիտական ոչ բավարար հարաբերությունների, ինչպես նաև Պեկինի քաղաքական ազդեցության, տնտեսության բուրության և ուազմական հզորության բացակայության պատճառով Չինաստանն ի վիճակի չէր տարածաշրջանում մնձ հաջողություն ապահովել<sup>4</sup>:

Իրադրությունը փոխվել սկսեց միայն 1976թ. Սառ Զեդունի մահվանից և «Մշակութային հեղափոխության» ավարտից հետո, երբ Պեկինի արտաքին քաղաքականության մեջ կարևորվեց ՍԱ-ի տարածաշրջանի երկրների հետ քաղաքական և տնտեսական հարաբերությունների ընդլայնումն ու բարելավումը<sup>5</sup>:

1978թ. Չինաստանի կոմկուսի կենտկոմի պատմական նստաշրջանից ի վեր, Դեռ Սիառպինի նախաձեռնությամբ, Չինաստանի արդիականացման՝ «քարեփոխումների և բաց դրների» քաղաքականության կենսագործման համար միջազգային համակրելի միջավայր ստեղծելու նպատակով Պեկինի արտաքին քաղաքականության մեջ գաղափարական ուղղվածությունն իր տեղը զիջեց գործնական դիվանագիտությանը: Երկրի տնտեսության արդիականացման գործընթացի խթանման նպատակով ԶԺՀ-ը սկսեց ակտիվորեն անդամագրվել միջկառավարական և ոչ-կառավարական, համակապես ֆինանսական կազմակերպությունների մեջ՝

աստիճանաբար դուրս գալով մասնային ժամանակաշրջանի միջազգային մեկուսացվածության վիճակից<sup>6</sup>:

Չինական քարոզության և արտաքին քաղաքականության գլխավոր ուղղություն դարձած հակասովետիզմը ծառայեց Հնագործություն Արևելքում ԽՍՀՄ-ի դեմ հակակշխության ապահովելու մտադրությամբ ԱՄՆ-ՉԺՀ-ի միջև 1969թ.-ից քացահայտ երկխոսության հաստատմանը<sup>7</sup>: Փաստորեն, առաջնորդվելով երկու կայսերականությունների միջև չարյաց փոքրագույնի սկզբունքով, Պեկինը նախապատվությունը տվեց Վաշինգտոնի հետ հարաբերությունների բարեկամմանը<sup>8</sup>: Արդյունքում երկու երկրների միջև 1972թ. դիվանագիտական կապեր հաստատվեցին, որոնք ամրապնդվեցին 1976թ. խորհրդային ծավալապաշտության դեմ պայքարում համագործակցության շուրջ ձեռք բերված համաձայնությամբ<sup>9</sup>: Հարկ է նկատել, որ ԱՄՆ-ի հետ մերձեցման ճգոտումը պայմանագործական էր ոչ միայն Մոսկվայից ու Տոկիոյից Պեկինի կախվածության բոլոցման, այլև ՉԺՀ-ի տնտեսության ու զինված ուժերի արդիականացման գործընթացների համար ԱՄՆ-ից ունտեսական աջակցության ապահովման ակնկալիքներով<sup>10</sup>:

Ուշագրավն այն է, որ արդիականացման ուղին բռնած ՉԺՀ-ն իր «քննամիներին ու բարեկամներին», այդ թվում մերձավորարևելյան, սկսեց տարրութել ոչ թե Վաշինգտոնի կամ Մոսկվայի հետ ունեցած հարաբերությունների կտրվածքով, այլ երկրի բարեկամության ու ուղղությամբ նրանց աջակցությունն ապահովելու հրամայականությունով<sup>11</sup>:

1978թ. Չինաստանը դիվանագիտական հարաբերություններ հաստատեց Օմանի, Ջիբուտիի, Հորդանանի և Լիբիայի հետ՝ սկիզբ դնելով Պարսից ծոցի և Արարական թերակղզու երկրների ուղղությամբ իր առաջիսաղացմանը<sup>12</sup>: Այս գործընթացն ուղեկցվեց չինացի քաղաքական գործիչների կողմից արարական մի շարք երկրներ կատարած այցելություններով, որոնց ընթացքում վերջիններիս հաջողվեց անհրաժեշտ տեխնոլոգիաներ գնելու նպատակով արարական բանկերից 1 մլրդ. դոլարի փոխառություն ստանալ: Այնուհեանդեմ, Պեկինը չկարողացավ հասնել Սաուման Արարիայի կողմից ՉԺՀ-ի ճանաշմանը և նրա հետ դիվանագիտական ներկայացուցությունների փոխանակմանը, որն իր հերթին կանգեցներ Բահրեյնի, Կատարի, Միացյալ Արարական Էմիրությունների հետ

դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը<sup>13</sup>: Խնդիրն այն է, որ Սառույան Արարիան ՉԺՀ-ի նկատմամբ նախապատվորությունը տալիս էր Թայվանի հետ դիվանագիտական և առևտրային սերտ հարաբերություններին՝ քավարարելով Վերջինիս նավթային պահանջարկի մեծ մասը<sup>14</sup>: Այս ամենն այնուհանդերձ խոշջնորտ չհանդիսացավ, որպեսզի Չինաստանը քացահայտ սատարի ՕՊԵԿ-ի անդամ երկրների, այդ բվում սառույանների կողմից նավքը որպես ճնշամիջոց օգտագործելով քաղաքականությունը: Հետևելով ՕՊԵԿ-ի անդամ երկրների օրինակին, Պեկինն իր հերթին 1978թ. հունվարին 8 %-ով քարձրացրեց ՉԺՀ-ից Շապոնիա արտահանվող նավքի գները<sup>15</sup>:

Իրանի հետ հարաբերությունների առնչությամբ հարկ է նշել, որ երես նախրան 1979թ. ՉԺՀ-ը սատարում էր Հարավ-արևմտյան Ասիայում ԱՄՆ-ի օգնությամբ հզորագույն ռազմական ուժ դառնալուն ուղղված Իրանի շահի ջանքերը<sup>16</sup>, ապա խալամական հեղափոխությունից հետո Պեկինն իր աջակցությունը հայտնեց Խոմեյնու գլխավորած խալամական հեղափոխությանը: Չինաստանը չէր կարող հաշվի չառել Իրանի կարևոր ռազմավարական դիրքը, Մլուշին ու Մերձավոր Արևելքում, ինչպես նաև Ասիայում Թեհրանի աճող ազդեցությունն ու խալամական աշխարհի առաջնորդի դերի նկատմամբ նրա հավակնությունները: Ավելի ուշ, Իրանի հետ հարաբերությունների քարելավման և իր «ասիական համերաշխության» դրսորման մտադրությամբ, Պեկինը, հրաժարվեց 1979թ. Թեհրանում ամերիկացի դիվանագետների պատանդ վերցնելու առնչությամբ ԻԻՀ դեմ ԱՄՆ-ի և նրա արևմտյան դաշնակիցների կողմից սահմանած տնտեսական շրջակակմանը միանալուց: Դեռ ավելին, Իրանի համար այդ դժվարին պահին ՉԺՀ-ը սկսեց Թեհրանից որոշ այլանձնատեսակներ՝ հատկապես նավք գնել՝ փոխարենն առաքելով շրջակակման արդյունքում վերջինիս համար անհրաժեշտ պարագաներ<sup>17</sup>:

Ինչ վերաբերվում է արար-իսրայելական հակամարտության նկատմամբ Պեկինի դիրքորոշմանը, ապա հարկ է նշել, որ 1963-65թթ. իմանված չին-պաղեստինյան հարաբերությունները (1964թ. Պեկինում պաղեստինյան ներկայացուցչություն քացվեց) մնում էին իրեն Պեկինի մերձավորակնելյան քաղաքականության կարևոր գործուն<sup>18</sup>: «Մշակութային հեղափոխության» տարիներին Պեկինը սատարում էր 1967թ-ից պաղեստինցիների անկախ պետություն ստեղծելու

իրավունքը<sup>19</sup>, և արաքական աշխարհի հետ հարաբերությունները վճառելու մտավախությունից ելնելով՝ կտրականապես հերքում էր Խրայել պետության գոյության իրավունքը<sup>20</sup>: Սակայն 1978թ. մարտից ի վեր Պեկինն Խրայելի դեմ արաքական հեղափոխական գործի ջերմեռանդ պաշտպանից աստիճանաբար սկսեց անցում կատարել արաբ-խրայելական հակամարտության նկատմամբ ԱՄՆ-ի որդեգրած քաղաքականության սատարմանը<sup>21</sup>: Չին-եզրական հարաբերությունների ջերմացումը, ըստ ամենայնի, պայմանագործած էր խրայելանգիպտական սեպարատ քանակցային (քեմփ-դևլյան) գործընթացի և ուզմավարական որոշ խնդիրների նկատմամբ չին-ամերիկյան դիրքորոշումների համընկելու հանգանակով<sup>22</sup>:

Փոխադարձ ճանաշման և դիվանագիտական հարաբերությունների հաստատման ուղղությամբ հայտարարություններ արվեցին նաև Խրայելի և ՉժՀ-ի արտաքին գերատեսչությունների դեկավարների կողմից<sup>23</sup>, որոնք նախքան երկու երկրների միջև 1992թ. դիվանագիտական հարաբերությունների հաստատումը, ոչ պաշտոնական (հատկապես ուզմական ոլորտում) կապերի հիմնադրման առիթ հանդիսացան<sup>24</sup>:

Ասիայի, ԱՄ-ի և Աֆրիայի երկրների շրջանում երկրի հեղինակությունն ամրապնդելու նպատակով Պեկինը, նկատի ունենալով Իրանի փորձը, վերամայեց նաև նախորդ իշխանությունների վարած կրոնական քաղաքականությունը՝ դավանանքի նկատմամբ անհանդուրժողականության երևույթները վերջիններիս թերացումը համարելով: Պեկինը հաշվի էր առնում ինչպես մուսուլմանական երկու տասնյակի հասնող երկրների հետ դիվանագիտական կապերի, այնպես էլ ՉժՀ-ի կարևոր սահմանային շրջաններում ազգային փոքրամասնություն կազմող չինացի մուսուլմանների քնակվելու հանգանակը<sup>25</sup>: Չինաստանի մուսուլման փոքրամասնությունների դրությամբ մտահոգություն դրսերեց նաև Սառույան միապետությունը, որոնց «Մշակութային հեղափոխաւթյունից» հետո առաջին անգամ քույլատրվեց Մեքքա ուխտագնացություն կատարել: ՉժՀ-ում վերականգնվեց Խալամական ասոցիացիան և սկսեցին նշվել կրոնական տոնները: Պեկինը քույլատրեց անգամ իրանական մոլլաններին ՉժՀ-ի մուսուլմանների դրության ուղղությամբ քննություն անցկացնել: Հարկ է նկատել, որ կրոնի հարցերում չինական իշխանությունների

քաղաքականության ազատականացումը հիմնականում կոչված էր ազգային փոքրամասնությունների կողմից Պևկինի արդիականացման ուղեգծի աջակցության ապահովմանը<sup>26</sup>:

Այսպիսով, թեև 1970-ականների երկրորդ կեսից ի վեր Պևկինը տնտեսապես ակտիվացավ, այնուհետեւ քաղաքականացես շարունակեց լուսանցքային դեր խաղալ ՍՍ-ում՝ ներքուստ դժկամորեն և զուցեց ժամականավորապես ընդունելով ԱՄՆ-ի գերակայությունը: Այս իրավիճակը շատով լրջորեն փոխվեց՝ կապված ոչ միայն Չինաստանի տնտեսական աճի և միջազգային գործերում աճող դերակատարության հետ, այլ ՉԺՀ-ՍՍ տնտեսական հարաբերությունների լուսանցքային բնույթը փոխող երկու «քարենպաստ հանգամանցների»՝ 1980-ականներից ՉԺՀ-ից ՍՍ գենքի աննախադեալ արտահանման և 1990-ականներից ՍՍ-ից ՉԺՀ նավթի աննախադեալ ներկրման շնորհիվ:

**AGHAVNI HARUTYUNYAN  
(IOS)  
PRC'S MIDDLE EASTERN POLICY BY THE LATE 1970's**

1966-1976 Cultural Revolution paralyzed China's relations with the outside world, including the Middle East. But with the accession of Deng Xiaoping, Beijing started to adopt a less ideological (revolutionary ideology of self-reliance) and more practical (Open Door) policy, with the aim of creating a favorable international environment for China's modernization program. Beijing no longer made a state's relations with Washington or Moscow the criterion for distinguishing between enemy and friend; instead, benefits to China itself became the basis of decisions. This approach led to relations with almost all Middle Eastern, especially pro-Western countries and a substantial increase in Chinese influence as a result. China's economically activation in the Middle East, which although remained marginal by the late 1970-s, was soon to change seriously thanks to two factors: massive and unprecedented arms export in the 1980s and equally massive and unprecedented oil import since the 1990.

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Зоммер Т., Китайская карта, 900-миллионный парод на пути к 2000 году, М., 1980, с. 264. «Մշակուրային հեղափոխության» տարիներին, հատկապես 1966-68թթ., Պևկինը իր դիվանագետներին հետ էր կանչել ԱՄ-ի բոլոր երկմերից: ՉԺՀ միակ դիսպանը գտնվում էր Եվրասուսում:
2. 1960-61թթ. շին-խորհրդային կապերի խզումից հետո պամ-արաբական ազգայնականության նկատմամբ ՉԺՀ-ն առավել արմատական դիրքորոշում գրավեց, քան ԽՍՀՄ-ը: Վերջինիս դաշնակցներ եղիպտոսի ու Սիրիայի հետ

- Օժէ-ի հարաբերությունները ստեցին, իսկ արևմտամետ Իրանի ու Թուրքիայի հետ զերծացան:
3. *Guang Pan, China's Success in the Middle East, The Middle East Quarterly, Vol. IV: No. 4, Dec., 1997.* Օժէ-ը դիվանագիտական կապեր հաստատեց ԱՄ-ի արևմտամետ երեք երկրների՝ Թուրքիայի, Իրանի և Լիբանանի հետ:
  4. *Yizhak Shichor, Competence And Incompetence: The Political Economy of China's Relations With The Middle East, Asian Perspective, Vol. 30, No. 4, 2006, p. 39.*
  5. TACC, Ալլաս, № 40 (691), 6.10.1970, ս. 53.
  6. *Evan S. Medeiros and M. Taylor Fravel, China's New Diplomacy, Foreign Affairs, Council on Foreign Relations, November/December, 2003, p. I.*
  7. TACC, Ալլաս, № 13 (768), 28.4.1972, ս. 14. Այդ հարցում մեծ դեր խաղաց ԱՄ-ի «շինական լորրին»՝ ի դեմ ամերիկյան քաղաքական գործիչների, գործարարների և հրապարակախոսների, որոնց հետևում կանգնած էին Ֆորդի և Ռոքֆելլերի հիմնադրամները:
  8. *Yitzhak Shichor, The Middle East in China's Foreign Policy 1949-1977, Cambridge University Press, 1979, p. 168.*
  9. Encyclopedia Year Book 1977, Grolier Incorporated, USA, 1977, p. 159. Չինացիներին դուր չեղ գալիս ԱՄ-ի դետամուր ԽԱՀԱ-ի հետ: 1977թ. սեպտեմբերի 26-ին Օժէ-ի միջուկային փորձարկումը ցույց տվեց, որ Պեկինը ի վիճակի է իր պաշտպանությունն ամրապնդել ԽԱՀԱ-ի պահական սպառնալիքի դեմ:
  10. Блок А.Е., Внутренняя и Внешняя политика КНР в трудах американских авторов начала 1970-х годов, Информационный Бюллетень, (N 94), Вопросы истории и историографии КНР, М., 1978, с. 52.
  11. Flynt Leverett and Jeffrey Bader, *Managing China-U.S. Energy Competition in the Middle East, The Center for Strategic and International Studies and the Massachusetts Institute of Technology, The Washington Quarterly, 29:1, 2005, pp. 187-201.*
  12. Կիтай և արաբական միություն, TACC, ԲՊИ, N 236, 5.12.1979ր, ս. 41. Ծոյն տարածքության երկրների և Պեկինի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման գործում իրեն միջնորդ հանդիս եկավ Թեհրանը՝ Օմանի հետ հարաբերությունների կարգավորման և Բահրեյնի հետ հաստատման նպատակով:
  13. "South China Morning Post", Hongkong, 31.05.1979.
  14. Политика Китая в отношении Саудовской Аравии, TACC, Аլլաս, N 32 (1101), 11.8.78, с. 46. Չինաստանի հետ հարաբերությունների հաստատումից խուսափելու հարցում ոչ պակաս դեր էր խաղում նաև կոմունիզմի նկատմամբ քաջավոր Խավակի խոր անվտանգության հանգամանքը: Այս մասին տես՝ "Far Eastern economic review" 7.12.1979.
  15. **المستقبل**, 10.11.1979: Նավի արդյունահանումն ավելացնող Չինաստանը մտադիր էր ՕՊԵԿ-ի նմանությամբ նոր կազմակերպություն ստեղծել, եթե ՕՊԵԿ-ը հրաժարվեր ընդունել Օժէ-ին իր շարքերը: ԱՄ-ի Կենտրոնական Հետախուզության վարչության գնահատականներով՝ շինական ցամաքային պաշարները (հայտնաբերված և հավանական) համեմատվում էին ԱՄ-ում դիևու չօգտագործված պաշարների հետ, այսինքն՝ 39 մլրդ. քարեն: Այս մասին տես՝ "Le Monde Diplomatique", Paris, April, 1979.
  16. *Bates Gill, Chinese Arms Exports To Iran, Middle East Review of International Affairs, Journal, Vol. 2, No. 2, May, 1998.* Պեկինի համար շահական Իրանը Պարսից ծոցի ուղղությամբ ԽԱՀԱ-ի ծավալապաշտության դեմ պարիսա՞՝ «ընդհանուր թշնամու դեմ միասնական ճակատ» կամ «պաշտպանական գոտի» էր:
  17. Белов Е., Ушаков В., Китай-Иран: состояние и перспективы отношений (1978-1988гг.), Восток и Современность, Научно-информационный Бюллетень, №. 4 (50), М., 1988, с. 38.
  18. Կիтай и Палестинская проблема (1964-1976гг.), Информационный Бюллетень, N 103, Экз. N 00521, М., 1979, с. 149.

19. ТАСС, БПИ, №. 132, 10.7.1979, с. 93.
20. "Митэн" о китайской политике на Ближнем Востоке. ТАСС, Атлас, № 28 (1094), 14.7.78, с. 48.
21. ТАСС, БПИ, №. 132, 10.7.1979, с. 39; ТАСС, Атлас, 12 (1081), 24.3.78, с. 51; "Far Eastern Economic Review", 7.12.1979.
22. Шербухина И., Отношения Египта и Китая после октябрьской войны 1973 г., Информационный Бюллетень, № 103, Экз. № 00521, М., 1979. с. 97. Պեկինը տազմական աջակցություն ցուցաբերեց Կահիրեին՝ «ՄԻԳ-19» և «ՄԻԳ-20» խորհրդային արտադրության ինքնարդիոնների շարժիչներ տրամադրելով: Այս մասին տես՝ *المستقبل*, 10.11.1979:
23. "South China Morning Post", Hongkong, 5.05.1979.
24. *Yitzhak Shichor, Mountains Out Of Molehills: Arms Transfers In Sino-Middle Eastern Relations, Middle East Review of International Affairs, Journal, Vol. 4, No. 3, September 2000.*
25. "New York Times", 15.6.1983. 1982ր. ազգային մարդահամարի արդյունքում ստացած վիճակագրությունը ցույց էր տային, որ Չինաստանի ազգային փորրամասնությունների շրջանում մուտքամբների թիվը կազմում էր մոտ 13 մլն., իսկ ոչ պաշտօնական տվյալներով՝ 20 մլն. մարդ: Մինչըստանում կար 12.000 գործող մզկիթ, 15.000 մուտքամբներ հոգևորական:
26. "Far Eastern Economic Review", 7.12.1979.

## ՀԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՎԱ

(Ա)

ԾԱՊՈՒՆԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՍԵՐԳԱՎՈՐԱՐԵՎԱԵԼՅԱ

ՈՐՈՇ ԵՐԿՐՄԵՐԻ ՆԿԱՏՄԱՄ 1973թ. ՆԱՎԱՅԻՆ ՇԱԽԱԺԱՄԻ  
ԸՆԹԱՑՑՈՒՄ

1973թ. հոկտեմբերի 6-ին սկիզբ առավ արար-խրայելական չորրորդ պատերազմը: Պատերազմող կողմնքի միջև իրադադարի հաստատման, ԱՄՆ-ի և արևմտյան պետությունների նկատմամբ ճնշում գործադրելու նպատակով, Նավք Արդյունահանող Արարական Երկրների Կազմակերպությունը (ՆԱԱԵԿ)<sup>1</sup> ի դեմ Սառույան Արարիայի քաջավոր նեյսալի<sup>2</sup>, 1973թ. հոկտեմբերի 20-ին հայտարարեց նավքի գների 70%-ով բարձրացման և 5%-ով նավքարդյունահանման կրճատման վերաբերյալ<sup>3</sup>: ՆԱԱԵԿ-ի կողմից Խարայնի գլխավոր դաշնակիցներ համարվող Միացյալ Նահանգներին ու Նիդեռուանդներին նավքի վաճառքի արգելման որոշմամբ սկիզբ դրվեց վերջիններին նկատմամբ արարական նավքարդյունահանող երկրների կողմից կիրառվող նավքային եմբարգումին: Նավքին իրու քաղաքական և տնտեսական գենք օգտագործելու մասին ՆԱԱԵԿ-ի որոշումը տնտեսական լուրջ ճգնաժամի պատճառ դարձավ արարական նավքից կախում ունեցող երկրներում՝ ԱՄՆ-ում, Արևմտյան Եվրոպայի երկրներում և ճապոնիայում<sup>4</sup>:

Փաստորեն ճապոնիան և արարների կողմից անուղղակիորեն դասվեց «ոչ բարեկամական» երկրների շարքին, որի հետևանքով ճապոնիա արտահանվող նավքի ծավալը կրճատվեց 10%-ով: Ըստ 1973թ. տվյալների՝ ճապոնիա է ներկրվել ընդհանուր առմամբ 290 մլն. տ. նավք, որը կազմում էր ամբողջ համաշխարհային արտահանման մոտ 8%-ը: Տոկիո ներկրվող նավքի մոտ 43%-ն առարկում էր արարական երկրներից, ընդ որում՝ Սառույան Արարիայից՝ 10,7%, Քուվեյթից՝ 6,9%<sup>5</sup>, իսկ 16%-ն առարկում էր Ինդոնեզիայից<sup>6</sup>: Այդ հանգամանքը բացասական ազդեցություն ունեցավ “ծագող արևի երկրի” տնտեսության վրա, քանի որ վերջինիս սպառողական էներգիայի 70%-ը ստացվում էր նավքից<sup>7</sup>:

Հարկ է նշել, որ մինչ 1973թ. Տոկիոն գլխավորապես համագործակցում էր Խարայի հետ<sup>8</sup>, որը մինչ 1973թ. էմբարգոն, ապահովում էր ճապոնիա առարկող նավքի 41%-ը<sup>9</sup>: Սակայն 1973թ. եմբարգոյի կիրառումից հետո ԱՄՆ-ի կողմից իրանական նավքի մեծաքանակ ներկրման արդյունքում համապատասխանարար կրճատվեց ճապոնիա առարկող նավքի քանակը (1973թ.՝ 31% նավք)<sup>10</sup>:

Ստեղծված իրավիճակում, երկրն անհրաժեշտ վառելահումբով ապահովելու նպատակով, ճապոնիան հարկադրված էր վերանայել արարական երկրների նկատմամբ իր դիրքորոշումը՝ հստակ գիտակցելով, որ այդուհետ նավը գնելու համար գուտ ֆինանսական միջոցներն անբավարար են<sup>11</sup>: Այդ մասին անգամ հայտարարել է ԱՄՆ-ում ճապոնիայի նախկին դեսպան Ֆումիիհիկո Տոգոն՝ նշելով. «Ճապոնիան մինչև 1973թ. Մերձավոր Արևելքի երկրների հետ կշռադատված քաղաքականություն չէր վարում, քանի որ դրամի առկայության դեպքում մենք միշտ կարաղ էինք նավը գնել»<sup>12</sup>:

Այսպիսով, արարական երկրների հետ հարաբերությունների հաստատման առաքելությամբ Մերձավոր Արևելք (ԱՄ) գործողվեց ճապոնիայի փոխվարչապետ Տակեն Միկին, որը 1973թ. դեկտեմբերի 10-28-ը այցելություններ իրականացրեց Եզիւլոս, Իրաք, Կատար, Քուվեյթ, Արարական Միացյալ Էմիրություններ (ԱՄԷ), Սաուդյան Արարիա, Սիրիա: Փոխվարչապետին հաջողվեց նավարայունահանող արարական երկրներին համոզել, որպեսզի վերջիններս ճապոնիային դասեն «քարեկամական տերությունների» շարքին<sup>13</sup>:

Հարկ է նշել, որ ճապոնիան, բոլոր դեպքերում, ստիպված էր գնալ նաև որաշ գիշումների և վերանայել իր դիրքորոշումն արարիստայելական հակամարտության մասնակից կողմերի նկատմամբ: Եթե մինչ այդ ճապոնիան պաշտպանում էր արարիստայելական հակամարտության նկատմամբ ԱՄՆ-ի դիրքորոշումը, ապա այժմ դատապարտում էր Խսրայելի քաղաքականությունն արարմերի նկատմամբ: Այդ դիրքորոշումն ակնհայտ դարձավ, երբ 1973թ. նոյեմբերի 22-ին ճապոնիան ընդունեց 1967թ. նոյեմբերի 22-ի Միացյալ Ազգերի Կազմակերպության (ԱՄԿ) Անվտանգության Խորհրդի կողմից ընդունված N 242 քանածելը, համաձայն որի, Խսրայելը պարտավորվում էր դրսության մեջ իր գործերը գործված տարածմանից<sup>14</sup>: Բացի այդ, Տոկիոն սահմանադրության (ՊԱԿ) հետ՝ ընդունելով կիսապաշտոնական հարաբերություններ հաստատել Պաղեստինի ազգային պարտավորության (ՊԱԿ) հետ՝ ընդունելով Պաղեստինի արաք ժողովրդի ինքնորոշման իրավունքը և պաշտպանելով Մերձավորակելյան հակամարտության խաղաղ քանակացային գործընթացում ՊԱԿ-ի մասնակցության անհրաժեշտությունը<sup>15</sup>: Ավելին, ճապոնիան ոչ միայն իր անուղղակի միջնորդությունն էր առաջարկում արարիստայելական հակամարտության կարգավորման գործընթացին<sup>16</sup>, այլ ցանկանում էր կապող օրակ դառնալ նավարայունահանող և ներկրող երկրների միջև: Այս առնչությամբ հայտարարությամբ հանդիս եկավ նաև ճապոնիայի Էներգետիկայի տնօրեն Մ.Ի.Կուտան, նշելով. «Մենք պարտավոր ենք նպաստել նավարայունահանող և ներկրող երկրների միջև երկխառնության հաստատմանը: Ճապոնիան կարող է և պետք է միջնորդ

դառնա Մերձավոր Արևելքի ճավթարդյունահանող երկրների և Արևմուտքի միջև»<sup>17</sup>: Կարծում ենք, որ նման կարգի քաղաքական զիջումները կարող էին նավքի ներկրման հարցում ճապոնիային լուսուցիչ երաշխիքներ ապահովել:

Ճապոնական դիվանագիտությանը հաջողվեց հարաբերություններ հաստատել նաև Իրաքի հետ՝ օգտագործելով Վերջինիս ներքին խնդիրները<sup>18</sup>, և 1974թ. իրաքյան նավքի ներկրման վերաբերյալ միջկառավարական պայմանագիր կնքել: Իր հերթին ճապոնիան պարտավորվում էր մոտ 2 մլրդ. ԱՄՆ դրամի վարկ և փոխառություն տրամադրել Իրաքին<sup>19</sup>: Դեռ ավելին, Իրաքի (այդ թվում նաև Սաուսյան Արարիայի) ճավթարդյունական համալիրներ գործուղվեցին ճապոնացի փորձագետներ, որոնք իրենց փորձով պետք է ճապաստեին տեղի նավթարդյունաբերության զարգացման գործիմ<sup>20</sup>:

Փասորուն, ՍՍ-ի երկրներին ուղղված Տոկույի՝ ֆինանսավարկային, տեխնիկական և այլ քննությի աջակցությունը վճռորոշ դեր խաղաց նշյալ տարածաշրջանում ճապոնիայի տնտեսական ծավալապաշտության խորացման գործում: Կոնկրետ դեպքում, եթե 1974թ. դրությամբ ճապոնական կապիտալն ակտիվ էր միայն տարածաշրջանի հիմն պետություններում՝ Սաուսյան Արարիայում, Իրանում, Իրաքում, Հորդանանում և Եգիպտոսում, ապա 1980-ականներին այն ակտիվություն ցուցաբերեց նաև Բահրենում, ԱՄՆ-ում, Կատարում, Օմանում, Քուվեյթում, Սիրիայում և Եմենում<sup>21</sup>:

Այսպիսով, Վերջարադրյալից կարելի է գտն այն հետևողայն, որ 1973թ. նավթային ճգնաժամը ճապոնիային ստիպեց վերանայել իր դիրքորոշումը մերձավորարևելյան երկրների հետ հարաբերությունների հաստատման և դրանց հետագա խորացման շուրջ: Կարծում ենք, որ այդ ուղղությամբ ճապոնիայի վարած մկուն և կշողադատված քաղաքականության շնորհիվ նրան հաջողվեց թե՛ հարթեցնել իր հարաբերությունները ճավթարդյունաբերող արարական երկրների հետ, և թե՛ պահպանել քարի դրացիական հարաբերություններն ԱՄՆ-ի հետ:

YEVA HARUTYUNIAN  
(IOS)

### THE JAPAN'S POLICY TOWARDS SOME OF THE MIDDLE EASTERN COUNTRIES DURING 1973's OIL CRISES

After the 4<sup>th</sup> Arab – Israeli war on 6<sup>th</sup> of October in 1973, OAPEC decided to increase the prices of oil by 70% and the quantity of oil was decreased by 5% for Israel and those countries which supported Israel's policy toward Arab-Israeli dispute. On October 20, 1973 Saudi Arabian king Feysal announced the establishment of embargo on the USA, its allies in Western Europe and Japan.

Japan, whose economy depended on oil export, considered as one of "unfriendly countries" by the OAPEC and oil export to Japan was declined by about 10% which had its negative influence on Japanese economy.

Until 1973 Japan imported 41% of its oil from Iran at that time the ally of the USA who tried not to interfere in Arab-Israeli dispute. Japan also preferred to get oil from Iran in order not spoil its relations with the USA.

But after the 1973's oil crisis when USA added its oil import from Iran, Japan enforced finding ways for purchasing oil from the Arab countries. From 10 to 28 December, 1973, Japan's prime-minister Takeo Miki visited Egypt, Iraq, Qatar, Kuwait, United Arab Emirates (UAE), Saudi Arabia and Syria in order to establish relations with the Middle East countries. In result of this trip the Japanese prime-minister succeeded in persuading Arab countries to consider Japan as a friendly country. In order to prove its friendship to Arabs Japan had to review and change its position to the sides of Arab-Israeli dispute. Japan's government accepted the UN Security Council resolution N242, due to which Israeli forces had to withdraw from territories occupied in 1967. Moreover, Tokyo had to establish semi-official relations with Palestine Liberation Movement (PLM), accepting the right of Palestinian people's self-determination. The politicians of "Sun rising country" announced also that they accepted the rights of Palestinians to get their own independent country. Besides, Japan not only offered its mediation for regulation of Arab-Israeli conflict, but also eagered to become one of interrelated countries between oil-producing and oil-buying states.

Japanese diplomacy also managed to establish relations with Iraq, using the former's internal problems and signed an agreement on Iraqi oil importation. In its turn Japan had to give Iraqi government about 2 billion USD credit and lending. Furthermore, Japanese technical experts were sent to Iraq (also to Saudi Arabia) in developing oil-industry in this country.

In fact, Tokyo's financial and technical support played a great role in deepening Japanese Middle Eastern expansion. For example, if in 1974 Japanese capital was active only in five Middle Eastern countries such as Saudi Arabia, Iran, Iraq, Jordan and Egypt, in 1980's its capital activity also spread to Bahrain, UAE, Qatar, Oman, Kuwait, Syria and Yemen.

Eventually due to Japanese "flexible policy", it could establish good relations with Arab countries meanwhile keeping its good relations with the USA. As a result Japan's government managed to overcome the difficulties of 1973's oil crisis and provided its country with vitally important fuel.

### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. [www.cnr.vt.edu/lsg/intro/oil.pdf](http://www.cnr.vt.edu/lsg/intro/oil.pdf). 1968թ. Խոմվարի 9-ին Քեյրորդ կմքեց պայմանագիր Թուվեյրի, Սատոյան Արարիայի և Լիբանանի միջև՝ Նավք Արդյունահանող Արարական Երկրների Կազմակերպության (ՆԱՍԵԿ) ստեղծման վերաբերյալ: ՆԱՍԵԿ-ը մշտական գործող միջազգային կազմակերպություն է, որը ստեղծվել է նավարոյումահանող տերությունների կողմից: նավիր գները կանոնակարգելու նպատակով: ՆԱՍԵԿ-ի կազմի մեջ են մտնում մերժավորակելյան 11 պետություններ՝ Ալժիրը, Բահրեյնը, Եգիպտոսը, Իրաքը, Հռումեյրը, Լիբանանը, Կատարը, Սատոյան Արարիան, Սիրիան, Թումինը և Արարական Միացյալ Էմիրությունները (ԱՄ): Այս կազմակերպությանը զուգահեռ

գործում է նաև մեկ այլ տարածաշրժանային, մշտապես գործող ոչ պետական կազմակերպություն՝ Նավք Արդյունահանող Երկրների Կազմակերպությունը (ՆԱԵԿ), որը հիմնվել է 1960թ. սեպտեմբերի 10-14-ին կայացած Բաղրատի գիտաժողովի ընթացքում: ՆԱԵԿ-ի նպատակն է նավարյունահանող երկրների գործունեությունը վերահսկելու և նավքի կայուն զները պահպանելու ուղղությամբ ընդհանուր քաղաքականության մշակումը: Սկզբանական շրջանում այս կազմակերպության անդամներն են Իրանը, Իրաքը, Հռուսական Արարիան և Վենեսուելան: Հետագայում այս կազմակերպությունը հիմնադրու հիմք պետություններին միացան նաև 9 պետություններ՝ Կատարը (1961), Ինդոնեզիան (1962), Լիբանանը (1962), ԱՍՏ (1967), Ալժիրը (1969), Նիգերիան (1971), Էկվադորը (1973—1992, 2007), Գարներ (1975—1994), Անգոլան (2007): Ներկայում ՆԱԵԿ-ն ունի 13 անդամ և վերջինիս հսկողության տակ է գտնվում համաշխարհային նավային պաշտոնականության մշակումը:

- 2 1973թ. որոշակիորեն սրբեցին սաստիս-ամերիկան հարաբերությունները: ԱՄՆ-ը մի կողմից ճգոտում էր լավ հարաբերություններ պահպանի Սաուսայի Արարիայի և արարական այլ պահպանողական երկրների հետ, իսկ մյուս կողմից վիրխարի ուազմա-տնտեսական օգնություն էր ցոյց տախու Իրային: Վերջին փաստը նպաստում էր Սաուսայի Արարիայում հակասարայիշական տրամադրությունների ուժեղացման՝ վլուածի տակ դնելով նաև սաստիսամերիկան հարաբերությունները: Այս մասին տե՛ս Նիկոլայ Հովհաննիսյան, Արարական երկրների պատմություն, Եր., 2007թ., էջ 363:
- 3 Կաձախու Տօր, 50 լեռ յանուարի դիվանագույն (1945—1995), Մ., 1996թ., ս. 120; Wu Yuan — Li, Japan's Search For Oil, A Case Study On Economic Nationalism And International Security, Stanford, 1977, p. 1.
- 4 Նավքային եմքարդոյի հետևանքով նավքի մեկ քարելի գինը համաշխարհային շուկայում քարձարացավ 5.12-ից մինչև 11.65 ԱՄՆ դրամ: Այս մասին տե՛ս Ռուբեն Կարապետյան, Արարական երկրների նոր և մորագույն պատմություն, Եր., 2003թ., էջ 205:
- 5 Wu Yuan — Li, ճշվ. աշխ., էջ 72:
- 6 Вербицкий С.И., Япония: время сложных перемен, М., 1974г., с. 29.
- 7 William Polk, ճշվ. աշխ., էջ 417.
- 8 Այդ ժամանակ իրանական պատության առաջնորդը էր ամերիկանու միապետ Ռեզա շահը, որն իր հավատարմության դիմաց խոշոր ֆինանսական օգնություն էր ստամու Սիացյալ Նահանգներից: ԱՄՆ-ի հետ քարի դրացիական հարաբերություններ պահպաններու նկատառությունից ելենով՝ Իրանը չէր միջամտում արար-իրայիշական հակամարտությանը: Այս մասին տե՛ս Կալվոկարեսսի Պ. Մարօնական պատմությունը 1945 թվականից հետո ամերիկանու մասին աշխատանքը կազմու է 37.3 %: Այս մասին տե՛ս Յանուար Ա.Դ., Ճապոնական դիվանագույն ներկայացուցակը 1970—1980-ական տարբերակը (1970—1980-ական տարբերակը), Մ., 1988թ., ս. 108.
- 9 Wu Yuan — Li, ճշվ. աշխ., էջ 72:
- 10 Հարկ է նշել, որ մինչ այդ նապանիան արարական երկրների հետ իր տնտեսական և քաղաքական հարաբերություններն իրականացնում էր ԱՄՆ-ի միջնորդությամբ: Այդ դիրքորոշումը պայմանավորված էր նրանով, որ նապանիայի տարածությունը Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո տեղեկացվել էին ԱՄՆ-ի գործընթացը: Այդ իրավիճակը տևեց մոտ 7 տարի և ավարտվեց Սան-Ֆրանցիսկոյի խաղաղության պայմանագրի (1952թ. ապրիլին) կնքմամբ: Վերջինիս գուգահեռ, ԱՄՆ նաև ճապոնա-ամերիկան, այսպես կոչված, «Ամերիկա-ճապության պահպանման պայմանագիր» պարտադիր ստորագրեց, որի համաձայն՝ ԱՄՆ իրավունք էր ստամու տեղեկացվել իր օդային, ծովային և ցամաքային զորքերը ճապոնիայի տարածքում: Այսպիսով, ճապոնիան, լինելով ԱՄՆ-ի ուազմական դաշնակիցը, ճգոտում էր իր արտաքին քաղաքականությունը համապատասխանեցնել

- ամերիկյան արտաքին քաղաքականության հետ: Այս մասին տե՛ս Յերբեքի Հ. Ա.՝ էջ 47.
- 12 Յոսիտս Միշալ Մ., Caught In The Middle East, Toronto, 1984, p. 3.
- 13 Բոգատրօս Ա.Դ., նշվ. աշխ., էջ 107:
- 14 <http://www.un.org/russian/documents/scresol/1967/>
- 15 Այդ մասին 1975թ. փետրվարի 6-ին նապահական խորհրդարանում հայտարարեց փոխվարչապետ Տակես Սիլին:
- 16 նապահական միջնորդության եռորդունը կայանում էր նրանում, որ վերջինս փորձում էր ՆԱԱԵԿ-ին համոզել, ենելով տարածաշրջանում ստեղծված իրավիճակից, զնալ «փոխվարչությունների»՝ ԱՍԽ-ի և Խորայի հետ հարաբերությունները վերականգնելու նպատակով: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ արարական տարածքում է տեղակայված խորայի կամ գորքերը, դա փաստորեն նշանակում էր միակողմանի զիջումներ նաև արարայունահանող արարական երկրների կողմից:
- 17 Բոգատրօս Ա.Դ., նշվ.աշխ., էջ 108:
- 18 Իրարժ, իր բնական պաշարների պահպանման նկատառություններից ելնելով, երկրից դուրս էր մղել օտարերկրյա կապիտալը, որի արդյունքում ամոր-ազգային ընկերությունները (ԱԱԸ) բոլորարկել էին Իրարի դեմ:
- 19 Բոգատրօս Ա.Դ., նշվ.աշխ., էջ 66:
- 20 Նոյն տեղում, էջ 113-114:
- 21 Ոլյանիչև Ս.Ս., Ежегодник, Япония 1975, Энергетические проблемы Японии: их влияние на экономику, Наука, М., 1975, с. 161.

**ՀՍԱՅԱԿՅՄՆ ՀԱՍՍԻԿ**  
**(Ա)**  
**ԱՐԵՎԱՊԱՇՈԽԹՅՈՒՆԸ ՎԱՆԱ ԼՃԻ ԱՎԱԶԱՆՈՒՄ**

Արևի պաշտամունքը սկիզբ է առել Հայկական լեռնաշխարհում վաղնջական ժամանակներից և հարատեսել է հազարամյակներ շարունակ: Այս երևոյթի հնագույն նյութեղեն վկայություններն են ժայռապատկերներում հաճդիպող արևի զանազան պատկերումները, քրոնգեղերյան ժամանակաշրջանի դամբարաններից հայտնաբերված ամենատարբեր պաշտամունքային իրերը: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում ժայռափոր կոմպոզիցիոն սյուժեներում արևի մարդակերպ աստվածությունների կերպարները՝ կենդանիների և արևի երկրաչափական պատկերների ուղեկցությամբ: Այս պաշտամունքի նյութեղեն վկայություններ առկա են նաև վաղ երկար դարի մշակույթում դամբարաններից գտնված հնագիտական նյութերում, խեցեգործական առարկաների՝ սափորների, կուտերի, քանդրի վրա, որոնց հիմնական մասը ծիսական կիրառություն են ունեցել:

Այս ողջ հնագիտական նյութը, ինչպես նաև մեր հոգևոր քանավոր մշակութային ժառանգությունը՝ ավանդությունները, եպոսը, լեգենդները, հանելուկները, հերիաքնները, ծեսերն ու սովորությունները վկայում են, որ Հայկական լեռնաշխարհի բնակիչների (ինչպես նաև այլ հնագույն ժողովուրդների, օրինակ՝ եզիտացիների) համար արևը հանդիսացել է նրանց կենսափիլսոփայության առանցքներից մեկը, նրա հետ է կապվել բնության և կյանքի զարգության, գարնան վերաբարձր ու ընդիմանապես վերածնության, պտղաբերության և արդարության զարգացմանը:

Արևի պաշտամունքի հնագույն օրբան է Վանա լճի ավազանը: Այս մասին են վկայում թե՛ Երկրորդ հազարամյակի խեթական, թե՛ ավելի ուշ շրջանի ուրարտական սեպագիր առյուրներում, ինչպես նաև հայկական առասպեկտներում և ավանդագրույցներում պահպանված նյութը: Խեթական առյուրները ներկայացնում են Արևին նվիրված հիմներ<sup>1</sup>, ինչպես նաև Օվկիանոսի կողմից Արևի առևանգման<sup>2</sup>, Արևի և Օվկիանոսի մասին առասպեկտներ<sup>3</sup>, որոնցում առկա են ծովից քարձրացող, ինչպես նաև Օվկիանոսի մեջ սուզվող Արևի մասին պատկերացումները: Ըստ հանրահայտ ուսու գիտնական լեզվաբան Վյաշեսլավ Խվանովի, ծովից կամ մեծ լճից ծագող արևի մասին խեթական այս պատկերացումները կարող են կապված լինել խեթերի նախնական տարածման շրջաններից արևելք ընկած որևէ մեծ լճի կամ ծովի հետ: Եվ վարկած է առաջադրում, որ դա կարող է լինել նաև Վանա

լիճը<sup>4</sup>: Խեթական վերտնշյալ Արևին նվիրված հիմները մեզ են հասել խեթական միջին քագավորաբարյան շրջանից: Դրանք ծխական տերստեր են, որոնք հավանաբար արտասանվել են Արևի աստծուն գոհարերություններ կատարելիս: Հետևյալ հատվածում խոսվում է Արևի՝ ծովից ծագելու մասին. «Տեր իմ, Երկնային Աստված Արև, մարդկության հովիվ: Ծովից ես դու քարձրանում վեր, երկնային Աստված Արև»: Մյուս առասպելում խոսվում է այն մասին, որ Օվկիանոսը (ծովը կամ մեծ լիճը) քարկանալով երկնքի, երկրի ու մարդկային ցեղի վրա, կանում է Արևին: Նշենք, որ հնագույն առասպելաբանական մտածողության համաձայն, ծովը, ջրային տարերքը նոյնացվում են նաև անդրաշխարհի հետ, և այս առասպելում ի հայտ են զայխ այն պատկերացումները, որ Օվկիանոսը կլանում է մայր մտնող Արևը, որն առավոտյան վերադարձվում է պտղաբերության հովանափոր խեթական Տելեպինուս աստծո կողմից: Հաջորդ առասպելում պատմվում է այն մասին, թե ինչպես է Օվկիանոսը հյուրընկալում Արևին՝ նրա համար պատրաստելով զահ, փղոսկրյա սեղան, իսկ Արևի Աստվածը երկնակամարով ճանապարհ է ընկնում Օվկիանոսի մոտ և իշնում ներքև հանգստանալու: Ուշագրավ է, որ ըստ վաննեցիների պատկերացման, Արևի ննջարանը գտնվում է հենց Վանա լճի հատակին. «Արևը կըմտնի ծովը, կըլողնա, մաքրվելու և հանգնելու ըրած ուղևորութենեն... անոր անկողինը ծովուն տակը ծզված է փրփորի վրա»<sup>5</sup>:

Ավելի ուշ, ուրարտական ժամանակաշրջանում, Ուրարտուի մայրաբաղար Տուշպան՝ հայկական Վանը, հանդիսանում է արևի աստված Շիվինիի<sup>6</sup> և նրա կնոջ՝ Տուշպուտեայի պաշտամունքային կենտրոնը: Վերջինիս անունով էլ կոչվել է Տուշպա-Վան քաղաքը: Այս առումով հայկական ավանդագրույցներում պահպանվել է Վանա լճի ավագանում գտնվող Արծակ լճի հետ կապված երկու ավանդություն: Արծակի ջրերում ապրում են մի երեղեն տղամարդ, մի երեղեն կին և մի երեղեն ծիի<sup>7</sup>: Ըստ մյուս լեգենդի՝ Արծակի լճում ապրում է երեղեն հարսը, որը լողացել է Արծակի աղբյուրում: Ասում են, թե այս աղբյուրի ջուրը խմողը կրօրքորչի անարատ սիրով, իսկ ծայնն էլ անուշ կդառնա<sup>8</sup>: Ենթադրելի է, որ այս երեղեն հարսի կերպարում պահպանվել է Արևի աստվածունու մասին Վանա լճի շրջակայրում գոյություն ունեցող հնագույն հավատալիքների արձագանքը, աստվածունու, որն օժտված է սիրու և պտղաբերության գործառույթներով: Իսկ երեղեն տղամարդու, կնոջ և ծիու մասին ավանդությունում ակնհայտորեն նկատելի է արևային աստվածային գոյզի և այդ պաշտամունքի խորհրդանշիչը հանդիսացող ծիու մասին պատկերացումների արձագանքը: Հայունի է, որ հնդեվրոպական առասպելաբանություններում արեգակը պատկերացվում է ծիեր լծած կառուվ: Հայերին ևս բնորոշ էր ծիու և Արևի աստծո կապը: Ըստնոփոնը վկայում է, որ հայերը Արևին կամ Արևի

աստծոն ծիեր են զոհաբերում<sup>9</sup>: Այս մասին վկայում են նաև հնագիտական պեղումների արդյունքում հայտնաբերված ծխու զոհաբերության բազմաթիվ փաստերը:

Հետազայում Վաճ քաղաքը հայկական առասպելաբանության մեջ կապվում է Ծամիրամի հետ, որի կերպարը մասնագետները բխեցնում են Նինվեի Խշրարից (միջագետքյան սիրո և պտղաբերության աստվածուիի): Վաճ քաղաքը և նրա շրջակայքը, ըստ պատմահայր Խորենացու, կառուցել է տվել Ծամիրամը<sup>10</sup>: Նրա մահը ևս տեղի է ունենում Վաճա լճի ափին. փախչելով իրեն հետապնդողներից՝ նա հասնում է ծովի ափին և հուտութեները նետելով ծովը՝ քարանում է<sup>11</sup>: Ակնհայտ է Ծամիրամի կապը Վաճի, ինչպես նաև ուրարտական Տուշպուեա արևի դիցուհու կապը Տուշպա-Վաճ քաղաքի հետ: Հնարավոր է ենթադրել, որ այս երկու կերպարները միաձուլվել են:

Ուրարտական ժամանակաշրջանում Վաճա լճի խալդյան դարպանները կոչվող ժայռին է փորագրվել ուրարտական ողջ պետական դիցարանն արտացոլող պաշտամունքային սեպագիր արձանագրությունը: Խալդին ուրարտական դիցարանի գերագույն աստվածությունն էր և, դատելով պատկերագրությունից, ունեցել է արևի աստծո հատկանիշներ: Հետազայում նրա կերպարը հավանաբար միաձուլվել է Միթրայի և հայկական եպօսի չորրորդ ճյուղի գլխավոր հերոս Փոքր Սիերի հետ: Ըստ ավանդության հենց այդ նույն խալդյան՝ հետազայում Սիերի դուռ կոչվող դարպանից է ներս մտել աշխարհի անարդարությունից խոռված Փոքր Սիերը: Կարծիք է հայտնվել, որ խալդիի և Միթրայի պաշտամունքները միաձուլվել են, որին մասնակցել է մի միջնորդ աստվածություն<sup>12</sup>: Խալդի, Միթրայի և Սիերի կերպարների նույնականությունը ապացուցվում է նրանց պաշտամունքներում առկա որոշակի ընդհանրություններով, օրինակ՝ այրուծի, գինու և խորոյի առկայությունը նրանց պաշտամունքներում<sup>13</sup>:

Հայկական հավատալիքներում արևային հատկանիշներ ունեցող աստվածություններից է նաև Վահագնը. «նա հոր հեր ուներ, ապա թէ բոց ուներ մորուս եւ աշկունը էին արեգակունը»<sup>14</sup>: Վահագնի մականունն էր Վիշապաքաղ, այսինքն, Վիշապասպան, նա ծնվելոց անմիջապես հետո պայքարի մեջ է մտնում Վիշապների հետ և հաղթում է նրանց: Հայկական ավանդապատումներում Վաճա լճի մասին պահպանվել է հետևյալ գրույցը. Վաճա լճում ապրում էին ահեղի Վիշապներ, որոնց հրեշտակները քարձրացնում էին արևի մոտ, և արևը այրում էր նրանց՝ վերածելով սև մոխրի<sup>15</sup>: Վահագն է, որպես արևային աստված, համարվում է Վիշապասպան: Ընդհանրապես, Վիշապի հետ արևային աստծո պայքարի մոտիկը հնդեվրոպական հիմնական առասպելական սյուժեներից է: Շիշտ է, Վահագնի պաշտամունքային կենարունները չեն կապվում Վաճա լճի հետ, նրան նվիրված տաճարները գտնվել են Աշուշատում, Սիերականում, Փոքր Ալբակում,

սակայն երկնքի, երկրի և ծովի երկումքից ծնվող աստծո մասին նկարագրող հետևյալ հատվածը հիշեցնում է արևային աստծո ծովից ծագելու մասին խերական, վերայական պատկերացումները. «Երկներ երկին և երկիր, Երկներ և ծովն ծիրանի, Երկն ի ծովուն ուներ զկարմրիկն եղեգնիկ»<sup>16</sup>:

Արևի աստծո խորհրդանիշներից է համարվում նաև մեծ թռչունը, արծիվը, որը հանդիպում է ինը ժողովորդների առասպելաբանական պատկերացումներում: Արծիվը երկնային, արևի լուսի, կրակի և անմահության խորհրդանիշն էր<sup>17</sup>: Վաճա լին հետ կապված մի ավանդագրաւոյցում, երբ արևը դուրս է գալիս ծովից, երկրին շատ մոտիկ է լինում և եթե նրա դիմաց դուրս չգա մի մեծ թռչուն, որն իր հսկայական թևերով հովանի է անում երկրին, արևը կարող է այրել ու մոխրացնել երկրը: Թոշնի թևերը խանձվում են, նա անկենդան ընկնում է ծովի մեջ, գովանում, բուժվում և մյուս առավոտ կազդրութած նորից դուրս է գալիս արևի դիմ՝ երկրին հովանի անելու<sup>18</sup>:

Մեկ այլ լեզենդ էլ է կապված Վաճա լճի Աղբամար կղզու հետ, որն առավել հայտնի դարձավ Հովհաննես Թումանյանի հրաշալի մշակմամբ: Ըստ այս լեզենդի, ամեն զիշեր երիտասարդ պատանին նեստվում էր լիճը և լողալով հասնում իր սիրած աղջկա՝ Թամարի մոտ, որը ջանը ձեռքին սպասում էր նրան: Սի օր էլ կղզու բնակիչները, հմանալով երիտասարդ սիրահարների մասին, հանգցնում են կրակը: Պատանին ալեկոծ լճում կորցնելով ճանապարհը՝ մոլորվում է ալիքների մեջ և մրմբնաշալով սիրած աղջկա անունը. «Ա խ Թամար, ա խ Թամար, այս ինչ արդի ինձ», - խեղդվում է: Կողին այդ օրվանից կոչվում է Աղբամար<sup>19</sup>: Այս լեզենդը որպէս առումներով կարելի է հանգեցնել սիրո և պտղաբերության աստվածութու և նրա սիրեցյալ՝ մեռնող-հարություն առնող արևային աստծո մասին առասպելույթին, որը տարածված էր Շումերից ու Աքքալից մինչև Հունաստան, Փոքր Ասիա և Հայկական լեռնաշխարհ: Շումերում դա Իննանան և Դումուզին են, Աքքալում՝ Իշքարն ու Թամուզը, Հունաստանում՝ Աֆրոդիտեն և Ալտինիսը, Փոքր Ասիայում՝ Կիրեկեն և Աստիխը, իսկ հայկական հավատալիքներում՝ Արա Գեղեցիկն ու Շամիրամը: Նկատենք, որ Աղբամարի լեզենդում տղան գովիտ է զիշերով ալեկոծ լճում, որն, ինչպես նշեցինք արդեն, ըստ հնագույն պատկերացումների, խորհրդանշում է անդրաշխարհը: Վերոնշյալ բռնոր աստվածությունները՝ Դումուզին, Թամուզը, Աղբնիսը, Արա Գեղեցիկը ևս մահանում և անդրաշխարհ են ընկնում աստվածութու սիրո պատճառով: Նրանց մահն ու Վերածնունդը խորհրդանշում են բնության մեծ ու փոքր շրջափուլները՝ ցերեկ-զիշեր, զարուն-ձմեռ: Այս աստվածությունների Վերակենդանացմանը զարբանք է ապրում բնությունը, Վերստին ծագում է արևը:

Այս ուղ շարադրանքը վկայում է այն մասին, որ Վաճա լճում և նրա ավագանում հնագույն ժամանակներից ի վեր տարածված է եղել արևի

պաշտամունքը, որի արձագանքները հասել են մինչև քսաներորդ դարն անգամ: Վան քաղաքի մերձակայքում ապրող հայերի մեջ քսաներորդ դարում տարածված է եղել հետևյալ սովորույթը. արևածագին նորապատճերը բարձրացել են տան տանիքին՝ դեմքով շրջվելով դեպի արեր, իսկ ներքևում կանգնած մարդիկ երկնային լուսատուին ուղղված ձռն-երգով արև են խնդրել թագավորի ու թագուհու՝ այսինքն փեսայի ու հարսի համար:

Էզ (այզ), քարե, ա' էզ, քարե,  
Էզմ արևուն տանք քարե,  
Տա քագավորին շատ արե,  
Վահե՝, Վահե» :

Էզ (այզ), քարե, ա' էզ, քարե,  
Էզմ արևուն տանք քարե,  
Տա քագուհուն շատ արե,  
Վահե՝, Վահե<sup>20</sup>.

Ուշադրություն դարձնենք, որ այս վերջին թագակաչությունը՝ Վահե, Վահե, կարծես ակնարկում է Վահագն աստծուն, որին նվիրված մելիյանը Աշտիշատում կոչվում էր Վահեվանյան: Այսինքն, մինչև 20-րդ դարը հասած այս արևապաշտական ծեսն իր ակունքերով հնարավոր է հանգում է Վահեվանյան Վահագնի պաշտամունքին:

### HASMIK HMAYAKYAN (IOS)

#### THE SUN CULT IN THE BASIN OF THE LAKE VAN

The Sun cult emerged in the Armenian Highlands from the time immemorial existing for centuries. The most ancient cradle of this cult was the Lake Van basin, which is evidenced by Hittite, Urartian inscriptions, Armenian sources, legends and rituals. The author of the article summarizes the available material as far as it is possible relating the sun cult in the Lake Van basin showing that the tradition survived up to the 20th century among Armenians.

#### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆԵՐ

1. Иванов В. В., Луна, упавшая с неба, Древняя литература Малой Азии, Гимны Солнцу, М., 1977, с. 105.
2. Иванов В. В., Апий и Апеллес, Телепинус и дочь Океана, с. 54-55.
3. Նույն տեղում, Солнце и Океан, с. 154.
4. Гамкрелидзе Т.В., Иванов В.В., Индоевропейский язык и индоевропецы, Реконструкция и историко-типологический анализ праязыка и прокультуры, Тбилиси, 1984, т. 2, с. 896.
5. Մրգնական գ., Երևան, հ.1, Եր., 1978, էջ 76-77, Հարությունյան Ս., Հայ առասպելարանություն, Բեյրութ, 2000, էջ 45:

6. Ծիվնիի ամունը բացատրվում է խեթերեն հնագ - աստված, արեի աստված բառով՝ Գամկրելիձե Տ.Վ., Իվանոս Բ.Վ., Հնդօւրոպեյսկի լեզու, Գամկրելիձե, Բ.Վ. Իվանոս, Հնդօւրոպեյսկի լեզու, տ. 2, ս. 791.
7. Պանալամեյան Ա., Ավանդապատում, Երև., 1969, էջ 83:
8. Նույն տեղում, էջ 106:
9. Քսենոփոն, Անարասիս, բարգմանուրյունը Սխմոն Կրկյաշարյամի, Երևան, 1970, գիրք չորրորդ, (34-36), էջ 98:
10. Մովսես Խորենացի, Պատմուրյուն Հայոց, բարգմանուրյունը, ներածուրյունը և ծանրապրուրյունները ակադեմիկոս Ստ. Մայլսասյանցի, Երև., 1968, գլուխ ԺԶ, էջ 98-101:
11. Մովսես Խորենացի, Պատմուրյուն Հայոց, գլուխ ԺԸ, էջ 102-103:
12. Դյակոնով Ի.Մ., Կ վօրոսւ օ սիմվոլ Խալդի, Դրեմնի Վոստօք, 1983, IV, ս. 193.
13. Պետրոսյան Ա., Արմանակի Մեր, զարդարական Միտրա և սրբազն Խալդի, Հայկական «Սասան ժերեր» էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգուրյունը, Երև., 2004, էջ 42-60:
14. Մովսես Խորենացի, Պատմուրյուն Հայոց, գլուխ ԼԱ, էջ 119-120:
15. Ղանալամեյան Ա., Ավանդապատում, էջ Հ2:
16. Մովսես Խորենացի, Պատմուրյուն Հայոց, գլուխ ԼԱ, էջ 119-120:
17. Միֆի նարու միջազգային էպիկական ժառանգուրյունը, Երև., 1966, էջ 269:
18. Պանալամեյան Ա., Ավանդապատում, էջ 3-4:
19. Նույն տեղում, էջ 83-84:
20. Հարայան Ե., Վասպուրական, Թիֆլիս, 1911, եր. 44; Լեռ, Երկերի ժողովածու, հ. 1, Երև., 1966, էջ 269:

## ՀՈՎԱՆԵՓՅԱՆ ԼԵՎՈՆ

(ԶՀԻ)

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԵՎ ՀԱԿԱՕԴԱՅԻՆ  
ՊԱՇՏՈԱՆՈՒԹՅԱՆ, ՀՐԹԻՌԱՅԻՆ ՀԱՍԱԿԱՐԳԵՐԻ  
ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՐՑԻ ԾՈՒՐՉ

Թուրքիայի զինված ուժերի (այսուհետ՝ ԶՈՒ) արդիականացման լայնածավալ ծրագրի համատերսում ուղղմավարական կարևորություն է նիեղեայցնում տիեզերական հետազոտությունների ազգային հավակնութ նախագիծը, որը նախատեսում է տիեզերքի ուսումնասիրման համար անհրաժեշտ ենթակառուցվածքի ստեղծում: Թուրքական «Տիեզերական նախագիծը» առաջարկել է այդ երկրի Ազգային անվտանգության խորհուրդը (բուրք. Milli Güvenlik Kurulu), մշակվել Թուրքիայի գիտության և տեխնոլոգիայի բարձրագույն խորհրդի կողմից և հետազայում լայնորեն ուսումնասիրության ենթարկվել պաշտպանական արյունաբերության գործադիր կոմիտեի նիստերում: Ծրագրի իրականացումը դրված է Թուրքիայի գիտական և տեխնոլոգիական հետազոտությունների խորհրդի (TÜBİTAK) վրա, որը պետք է համագործակցի ԶՈՒ գլխավոր շտարի, ուղմաօդային ուժերի, տրանսպորտի նախարարության, ինչպես նաև համալսարանների հետ: 2006 թ. Թուրքիան ձեռնամուխ է լինում մոլորակների շարժումների և տիեզերական գործներացների մշտական ուսումնասիրմանը<sup>1</sup>:

Ծրագրի առաջին գործնական քայլը եղավ 2001թ. նախարարների խորհրդի որոշմամբ Թուրքական տիեզերական գործակալության (բուրք. Türk Uzay Kurulu) ստեղծումը, իսկ 2002թ. ընդունվեց «Ազգային տիեզերական գործակալության մասին» օրենքը: Նույն քվականին այդ նպատակներով հատկացվեց շուրջ 250 մեջ ԱՄՆ դոլար:

Թուրքիայի պատմության մեջ առաջին անգամ ակտիվ քայլեր են ձեռնարկվում սեփական արքանյակային համակարգի ստեղծման ուղղությամբ: Հավակնութ այդ ծրագիրը նախատեսված է ավարտին հասցնել 2015թ.: Ծրագրով, մասնավորապես, նախատեսված է մինչև 2010թ. բուրքական ուղմաօդային ուժերի սպաներից պատրաստել վեց տիեզերագնացներից բաղկացած ջոկատ և մինչեւ 2012թ. կառուցել ազգային տիեզերակայաց: 2012թ. Թուրքիան միանալու է Եվրամիության տիեզերական ծրագրին, սակայն հիմնական շեշտը դրվելու է Լուսնի վրա տիեզերական բազայի ստեղծման և այնտեղ տեղակայվելու համակարգերի օգնությամբ սահմանակից Հյուսիսային Իրաքում քուրդ զինյալների տեղաշարժերի մասին տվյալներ ստունարար վրա: Տիեզերական հետախուզության տեղեկատվության շնորհիվ բուրքական բանակը կամխարգելի միջոցներ կարող է ձեռնարկելու

Երկիր գրոհայինների ներթափանցում բույշ չտալու համար, ինչպես նաև ապահովելու և տարանցիկ նավթամուղների ու գազամուղների անվտանգությունը<sup>2</sup>:

Տիեզերակայանի շինարարությունն իրականացվելու է՝ Հյուսքոնում (ԱՄՆ) NASA-ի և Բայկոնուրում (Ղազախստան) Ռուսաստանի տիեզերական գործակալության տիեզերանավերի արձակման գործող կենտրոնների փորձի հաշվառմամբ: Մինչեւ 2012թ. նախատեսված է ավարտել մեկնարկային համակարգի շինարարությունը, որի նպատակով Անկարայի, Սնրսինի, Անթալիայի և Իզմիրի վիճայերներում ուսումնամիբում են հարմար տեղանքները<sup>3</sup>:

Այն Թուրքիայի կողմից դիտվում է որպես ուղղամասարական կարևորության նախագիծ, ինչն առնչվում է քաղաքական, ուղղամասան, անվտանգության, գիտության ու տնտեսության ոլորտներին: Այն ենթադրում է ինչպես քաղաքացիական, այնպես էլ ուղղամասան բաղադրիչներ: Ընդհանուր առմամբ այդ նախագիծը նախատեսվում է քաղաքացիական-ուղղամասան կիրառում՝ ներառնելով նաև օդային-տիեզերական պաշտպանության համակարգ<sup>4</sup>:

Տիեզերական նախագծով նախատեսվում է միանալ Եվրոպական տիեզերական ծրագրին, 2008թ.<sup>5</sup> բարձր հեռահարության տիեզերանավերի նախագծում և մշակում, տիեզերագնացների պատրաստման ուսումնական ծրագրերի իրականացում, 2009թ.<sup>6</sup> արձակման համակարգի, նոր հրթիռների և հետախուզական արբանյակների արտադրություն, 2010թ.<sup>7</sup> հասուկ հեռադիտակների ձեռքբերում, 2012թ.<sup>8</sup> ազգային տիեզերակայանի կառուցում և 2014թ.<sup>9</sup> «Ազգային հետազոտությունների արբանյակի» արձակում տիեզերք:

Թուրքիայի պաշտպանական արդյունաբերության խորհրդը ամենիկյան արբանյակային ծառայություններից հրաժարվելու նպատակով սկսել է հետախուզության և հսկողության սեփական արբանյակային համակարգի ստեղծման աշխատանքները՝ շուրջ 200 մլն դրամ ընդհանուր արժեքով: Ենթադրվում է, որ գործարկվելիք այդ համակարգը ուղղամասարական դերակատարություն կունենա, հատկապես, Քրդական աշխատավորական կուսակցություն կազմակերպության գործունեության հարցում հետախուզություն ապահովելու գործում<sup>10</sup>:

Առաջին թուրքական «Gökturk RFP» անունը կրող արբանյակային հետախուզական համակարգը կազմված կլինի էլեկտրաօպտիկական հսկիչ ուղեծրային արբանյակից և մեկական անշարժ ու շարժական երկրային կայաններից: Արտասահմանյան ընկերությունների հետ միասին մրցույթին որպես հիմնական ընկերություն հրավիրվել է նաև Թուրքիայի օդագնացության և տիեզերագնացության ընկերությունը (TAI): Ենթադրվում է, որ բարձր հստակության նկարներ երկիր ուղարկելու համար նախատեսված արբանյակի ծրագրի իրագործմանը

կմասնակցեն թուրքական տեղական՝ TAI, ASELSAN ընկերություններն ու Թուրքիայի գիտական և տեխնոլոգիական հետազոտությունների խորհուրդը։ Թուրքիայի ռազմաօդային ուժերի կողմից «առաջնային ծրագիր» հոչակված արքանյակի ստեղծման հայտամրցություն պատրաստվում են հայրել արքանյակային արտադրության մեջ մասնագիտացված ամերիկյան, ֆրանսիական, իտալական, իսրայելական, ճապոնական, կորեական և այլ ուազմաարդյունաբերական ընկերություններ։ 600-650 կմ քարձրության ուղեծրում տեղակայվելիք այդ արքանյակը թուրքական ԶՈՒ-ին կծառայի 4-6 տարի<sup>7</sup>։

Վերջին տարիներին Թուրքիան մտադիր է հիմնովին արդիականացնել երկրի հակաօդային պաշտպանության (ՀՕՊ) համակարգը և զարգացնել ռազմական գործողությունների սեփական հակաբերիուային պաշտպանությունը (ՀՀՊ)։ Դա շատ բանով կաված է սպառագիմությունների աճող մրցավագրի և զանգվածային ոչնչացման գենրի (ԶՈԶ) ու հրթիռային տեխնոլոգիաների տարածման խնդիրների հետ Մերձավոր Արևելքում<sup>8</sup>։

Մասնավորապես 2006թ. հունիսին Թուրքիայի պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեի նիստում պաշտոնապես որոշվեց սկսել ՀՀՊ և ՀՕՊ արդիականացման լայնածավալ ծրագրի իրագործումը<sup>9</sup>։

Մասնավորապես 2006թ. սկզբին վարչապետ Էրլորդանի գլխավորությամբ պաշտպանական արդյունաբերության քարտուղարության գործադիր կոմիտեն որոշում կայացրեց հեռահար ՀՕՊ համակարգերի ձեռքբերման համար։ Հայտամրցություն մասնակցում են ամերիկյան (Patriot)-ը, ռուսական (С-300ПМУ-2 Փավորիտ)-ը և ամերիկա-իսրայելյան համատեղ արտադրության (Առու-2)-ը։ Թուրքիան պլանավորում է 2006-2009թթ. ընթացքում գնել մեծ հեռահարության 4 համակարգ՝ 800 մլն դրամ ընդհանուր արժողությամբ, իսկ 2010-2014թթ. գրեթե նույն արժողությամբ ձեռք բերել հակաբերիուային պաշտպանության հեռանկարային 4 համակարգեր։ Ռուսական կողմից հետ Թուրքիայի ռազմական ներկայացուցիչները ռուսական գործարան կատարած այցի ընթացքում քննարկել են նաև պաշտպանական տեխնոլոգիաների ոլորտում երկկողմ համագործակցությանը վերաբերող հարցեր<sup>10</sup>։ Երկար ժամանակ վերջնական որոշում չէր կայացվում և 2008թ. մայիսին պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեն վերջնականապես վերահստատեց ՀՕՊ հեռահար համակարգերի ձեռքբերման անհրաժեշտությունը, որի ընթացքում հաստատվեց նաև շինական համակարգի մասնակցությունը հայտամրցությին<sup>11</sup>։

2006թ. օգոստոսին Թուրքիայի պաշտպանության նախարար Վեզոյի Գյոնուլը հայտարարեց, որ պատրաստվում են օտարերկրյա

ռազմական գնումների ուժիներով ԱՄՆ-ից 139 մլն դոլար արժողությամբ SLAM-ER տիպի 50 հրթիռներ գնել: Ըստ աղբյուրների՝ Գյոնուլը հաստատել է Թուրքիային այդ քանակի հրթիռներ վաճառելու հարցով ԱՄՆ պաշտպանության և անվտանգության համագործակցության վարչության կողմից ԱՄՆ կոնգրես դիմելու մասին լուրը: Նոր գնվելիք այդ հրթիռները նախատեսված են հեռահար գործողության և օդից ցամաք հարվածներ հասցնելու համար<sup>12</sup>:

Նույն թվականի ապրիլի վերջին Պենտագոնը տեղեկացրել էր ԱՄՆ Կոնգրեսին, որ ծրագրել է ընդհանուր առմամբ 162 մլն դոլար արժողությամբ 50 հատ «AGM-84K SLAM-ER Cruise» կոչված հրթիռներ, դրանց սպասարկման համար ռազմական բաղադրամասեր և ծառայություններ վաճառել Թուրքիային, որոնք F-16 ինքնարիռների միջոցով կարող են հարված հասցնել ցանկացած օրյեկտի<sup>13</sup>:

2006թ. օգոստոսին հրապարակված տեղեկատվության համաձայն՝ ԱՄՆ-ը առանձին բանակցություններ էր վարում Թուրքիայի հետ՝ «Patriot Advanced Capability-3» մակնիշի կատարելագործված 6 գեներացիոն կայանքների վաճառքի շուրջ, որի արժեքը կազմում է շուրջ 1 մրդ դոլար<sup>14</sup>:

Ամերիկյան առաջատար Lockheed Martin ընկերությունը բանակցություններ էր վարում բորբական Aselsan և Roketsan ռազմաարդյունաբերական ընկերությունների հետ՝ տեխնոլոգիաների տրամադրման շուրջ: Սպասվում էր, որ Թուրքիայի պաշտպանական արդյունաբերության բարտուղարությունը կիրապարակի փոքր հեռահարության հրթիռային պաշտպանության համակարգերի ծրագրի վերաբերյալ իր պայման-առաջարկությունները՝ նախագծին հետաքրքրություն դրսարող օտարերկրյա ընկերությունների համար: Նախատեսվում էր, որ Թուրքիան այդ հրթիռային համակարգերի առաջին գործարքից հետո կզնի երկրորդ համակարգը: «Patriot»-ը նախատեսված է ինքնարիռների և թեսակոր հրթիռների դեմ օգտագործելու համար, բայց կարող է վնասազերծել նաև հեռահար բալիստիկ հրթիռները: Ըստ ռազմական վերլուծաբանների՝ վերոնշյալ համակարգը կարող է մրցել ոուսական S-300 և S-400 ՀՕՊ համակարգերի հետ<sup>15</sup>:

Թուրքիայի հրթիռային համակարգերի արդիականացման ծրագրի շրջանակներում 2006թ. վերջին պաշտպանական արյունաբերության բարտուղարությանը առաջարկված աներկայացվեց հարավաֆրիկյան Denel ընկերության կողմից, որն առաջարկում էր «Երկիր-Երկինք» դասի Umkhonto կոչվող հրթիռներ վաճառել այդ երկրին: Նման առաջակի հետ կապված ախնոյզիական հնարավորություններն ու պայմաններն ուսումնասիրվել են Roketsan ընկերության մասնագետների կողմից Հարավաֆրիկյան հանրապետություն կատարած այցի ընթացքում: Շուրջ 130 կգ

ընդհանուր քաշով, 23 կգ ծանրությամբ ոռում կրող եւ 12 կմ հեռահարության այդ հրթիող կարող է միաժամանակ 8 թիրախների հարվածել<sup>16</sup>:

Գրեթե նույն ժամանակահատվածում տեղեկատվություն եղավ, որ ամերիկյան Textron Systems ընկերությունը, որն ակտիվորեն համագործակցում է ԱՄՆ ռազմաօդային ուժերի հետ, Թուրքիային է վաճառելու ցամաքային և հատկապես ծովային ռազմական գործողությունների համար «անկրկնելի» CBU-105 տիպի կառավարվող հրթիոներ՝ այդ երկրի ռազմաօդային ուժերի F-16 ոմբակոծիչների վրա տեղադրելու համար<sup>17</sup>:

2007թ. հունվարին Պաշտպանության արդյունաբերության քարտուղարությունը ցամաքային ուժերի հրամանատարության սպառազինության ուժեղացման շրջանակներում 80 հատ միջին հեռահարության հակատանկային հրթիոային համակարգերի (յուրաքանչյուր այդ գնդի համակարգի գլխին 10 արձակվող հրթիռ, ընդհանուր առմամբ 800 հրթիռ) (OMTAS) ձեռքբերման նպատակով մրցույթ հայտարարեց, որին մասնակցում էին ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան ընկերությունները<sup>18</sup>: Երկար ծգգումներից հետո քորքական կողմը կատարեց իր վերջնական ընտրությունը և չնայած, որ քորքական սպառազինության հիմնական մասը ամերիկյան և իսրայելական արտադրության են, այնուամենայնիվ նախապատվությունը տրվեց ռուսականին: 2008թ. ապրիլին Թուրքիայի Ռազմական արդյունաբերության գործադիր կոմիտեի նիստում հաստատվեց միջին հեռահարության հակատանկային հրթիոային համակարգերի ձեռքբերման 200 մլն դրամ արժողության ծրագիրը, որտեղ քուրք զինվորականները նախապատվությունը տվեցին ռուսական «Ռուսորոռոնիքսպորտ»-ին պատկանող «Կորնետ» համակարգին: Նախատեսվում է ձեռք քերել 80 այդպիսի համակարգ և 800 հրթիռ: Հայտամրցույթին մասնակցում էին ամերիկյան Raytheon Tow կոնսորցիոնը և իսրայելական Rafael պետական արդյունաբերական ընկերությունը, որոնց մերժումը կապված է ավելի շատ այդ երկրների նկատմամբ քաղաքական ճնշում գործադրելու թուրքիայի նախավարական քայլի հետ<sup>19</sup>:

2007թ. հուլիսի քորքական աղյուրների տեղեկատվության համաձայն՝ ԱՄՆ Կոնգրեսը հավանություն է տվել Պենտագրնին՝ Թուրքիային վաճառել շուրջ 51 Block II Tactical Haproon հականակային հրթիոներ, ինչպես նաև առանձին սարքավորումներ և անհրաժեշտ ծառայություններ տրամադրել 159 մլն դրամ ընդհանուր արժողությամբ: Ձեռքբերվելիք հրթիոներն օգտագործվելու են երկրի ռազմածովային ուժերի (այսուհետ՝ ՌԾՈՒ) կողմից՝ քարմացնելով և ավելի ուժեղացնելով ՌԾՈՒ գյուղական ուժեղություն հրթիոային արսենալը<sup>20</sup>:

«Տիեզերական նախագիծը», ինչպես նաև հրդիուային համակարգերի նորագույն տեսակների ձեռքբերումն ու արդիականացումն ընդհանուր առմամբ տեղափորվում են Թուրքիայի ԶՈՒ համընդհանուր արդիականացման, ինչպես նաև նորագույն ռազմական տեխնիկայի, սպառազինության ձեռքբերման և ռազմական արդյունաբերության զարգացման ռազմավարության ընդհանուր ծրագրերի մեջ<sup>21</sup>:

Թուրքիայում, ինչպես նաև տարածաշրջանում քրդական հիմնախնդիր առկայությունը, մերձավորարևելյան տարածաշրջանում վտանգավոր և անկանխատեսելի զարգացումները, բուրգ-հունական լարված հարաբերությունները, Կիպրոսի հիմնախնդիրը, Իրանի միջուկային ծրագիրն ու դրա շուրջ ստեղծված միջազգային իրադրությունը, որոնք որպես հավանական մարտահրավերներ նշված են 2005թ. աշնանն ընդունված «Ազգային անվտանգության քաղաքականության փաստաթորում», այդ երկրի համար առաջնահերթ դարձնում տարածաշրջանում ռազմական գերակայության ապահովումը, սեփական հզոր հրդիուային պաշտպանության համակարգի առկայությունը:

LEVON HOVSEPYAN  
(IPR)

**ON THE PROBLEM OF TURKEY'S "SPACE PROJECT" AND  
MODERNIZATION  
OF AIR-DEFENCE AND MISSILE SYSTEMS**

In the process of modernization of the Turkish Armed Forces a strategic importance is given to the ambitious program of space research which pre-supposes creation of necessary infrastructures for studying the space.

For the first time in Turkey's history active steps are being carried out for creating own satellite system. The ambitious program approved by the country's National Security Council is expected to be completed in 2015. Turkish Defense Industrial Council has started works on creating its own satellite system of investigation and control. Together with foreign companies Turkish Aeronautics and Space Flight Company (TAI) has been invited as a main company to participate in the tender.

During the recent years Turkey is planning to completely modernize the anti-air defense system of the country and develop own anti-Missile defense. In June 2006 in the session of the Executive Committee of Turkey's Defense Industry it was officially decided to start the implementation of Anti-Missile Defense and Air Defense program. "Space Project", as well as acquiring new types of racket systems and the modernization, overall, are part of Turkey's general program of complete modernization of Armed Forces.

## ԾԱՍՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. <http://www.rcgnum.ru>, 06.11.2006.
2. Yeni Safak, 08.01.2007.
3. <http://www.rcgnum.ru>, 06.11.2006.
4. Savunma Havacılık ve Uzay Sanayii Panel Raporu/Ek-5, (Türk Uzay Sektöründe İliskin Değerlendirme), <http://www.vizyon2023.tubitak.gov.tr>
5. IDEF 05, <http://www.thcnew Anatolian.com>
6. Aksam, 20.07.2006.
7. Նույն տեղում:
8. Մինասյան Ա., Խորյշելս-թուրքական ռազմաքաղաքական համագործակցությունը քրդական հիմնախնդրի համատեքստում, «21-րդ դար», N 4, Եր., 2006,էջ 86:
9. Turkish Daily News, 01.04.2007.
10. Правительство Турции приняло решение о проведении тендера на закупку средств ПВО большой дальности; <http://www.arms-tass.ru>; 21.02.2006.
11. Միշա հիմն բուրքական բանակում մարտական հերքապահության մեջ չկան մեծ հեռահարության ՀՕՊ համակարգեր: Ներկայուն Թուրքիայի օդային տարածքը հսկում են փոքր հեռահարության Rapier և Stinger հրթիռային համակարգերը, ինչպես նաև միջին հեռահարության I-Hawk արդիականացված հրթիռակայանները: Թուրքական աղյուսների համաժայռ՝ որոշ առումներով նախապատվությունը սրվում է ռուսական համակարգերին, սակայն այդ խնդրի շուրջ դեռևս վերջնական մուտքում չկա: Զերքը վելիք ՀՕՊ համակարգերից երկուսը նախատեսվում է մարտական հերքապահության դեմք Ամերիկայի և Մտամրուի օդային տարածքները հսկելու համար: <http://www.ssm.gov.tr/> TR/dokumentasyon/basinbulteni/Pages/20080501.aspx.
12. Milliyet, 10.08.2006.
13. Թուրքական մանուկի հաղորդմանը՝ ամերիկյան հայկական և հունական լորդիները ձեռնարկումներ էին սկսել ուսամական այլ գործարքը խոշնողություն համար: Նրանք նամակ էին հղել կոնգրեսի ուսամական ծառայությունների և միջազգային հարաբերությունների համանաժողովներին և առանձին կոնգրեսականներին, որտեղ ասվում է, որ զենքերի վաճառքով ուսամական հավասարակշռությունը Կիպրոսում կիսախստվի, և որ այդ զենքերով հենարավոր է Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցում Ալբերտ Ազարյանի աջակցող Թուրքիան սպառնա Հայաստանի: Ասվում էր, որ այդ վաճառքը չի կարող ծառայել ԱՄՆ շահերին և արժեքներին, և որ հրդինների վաճառքի հետ կապված ծրագիրը պետք է վերանայվի: Տե՛ս Milliyet, 15.05.2006.
14. <http://www.azatutyun.am>, 26.08.2006.
15. Turkish Daily News, 01.04.2007.
16. <http://www.gbulleten.ssm.gov.tr>, 10.10.2006.
17. <http://www.gbulleten.ssm.gov.tr>, 05.11.2006.
18. <http://www.gbulleten.ssm.gov.tr>, 05.02.2007.
19. <http://www.gbulleten.ssm.gov.tr>, 11.04.2008.
20. <http://www.ssm.gov.tr/TR/dokumentasyon/basinbulteni/Pages/20070702.aspx>
21. Թուրքիայի ԶՈՒ արդիականացման մասին տես Լևոն Հովսեփյան, Թուրքիայի ԶՈՒ արդիականացման խնդրի շորջ, Մերձավոր Արևելք, հ.3, Զանգակ-97, Եր., 2006: Լևոն Հովսեփյան, Թուրքիայի ուսամարդունաբերական համայնքի զարգացման և զինված ուժերի արդիականացման ուսամարդունաբերական համայնքի զարգացման ու պաշտպանության հիմնախնդրները, «Զարդարական հետազոտությունների հնատիտուու», Վերլուծական նյութեր 1, Եր., 2007:

## ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՀԱՅԿ

(ՀՅԹԻ)

ԱԴԱՄԱՅՈՒՄ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՀՅՈՒՊԱՏՈՍ ՕՅԳԵՆ ԲՅՈՒԳԵՒ  
ԶԵԿՈՒՑԱԳՐԵՐԸ

20-ՐԴ ԴԱՐԻ ՄԿՅՋԻ ՀԱՅԵՐԻ ԶԱՐԴԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գերմանիան Օսմանյան կայսրությունում Առաջին աշխարհամարտի տարիներին ունեցել է քավականին մեծ թվով դիվանագիտական ներկայացուցիչներ: Գոյություն ունի տարածված տեսականութ, որ նրանք բոլորն էլ ունեցել են հստակ հակահայ միտվածություն և գործել են ի վեճա մեր ազգի: Սակայն արխիվային փաստարդները գալիս են փաստելու, որ դա այդքան էլ չի համապատասխանում իրականությանը, որ ոչ բոլորն են եղել այդպիսին: Եվ այդ անհատներից մեկն էլ Աղանայում գերմանական հյուպատոս Օյգեն Բյուգեն էր: Գուցե առաջին հայացքից նա շատ ջանաշիրաբար հանդես չի եկել ի նպաստ հայերի, բայց միևնույն ժամանակ չպետք է մոռանալ, որ Թուրքիան Գերմանիայի դաշնակիցն էր ու չէր կարող (ու նաև չէր ուզում) կարուկ քայլերի դիմել իր բարեկամ երկրի հպատակ ժողովուրդներից մեկի վիճակը քարելավելու համար: Վահագն Դադրյանը ևս խորհուրդ է տալիս զերծ մնալ միանշանակ զնահատականներից ու միակողմանի մոտեցումից: «... Պետք է ոչ միայն քացառել գերմանացի պաշտոնյա անձանց և ծառայողների մի խմբի նման [Խայահալած] ներգրավածությունը, այլ նաև անհրաժեշտություն կա շեշտել և ներկայացնել նրանց դերը ցեղասպանությանն ընդդիմանալու գործում: Այս կատեգրիայի մեջ ներառված են գերմանացի հյուպատոսները, փոխսյուպատոսները, դեկավաները, հյուպատոսական գործակալները և նույնիսկ դեսպան՝ կոմս ֆոն Մետերնիխը, գեներալներ ֆոն Լուսկը և Կոնսենչրայնը, ինչպես նաև գնդապետ Շքանգեն: Այս մարդկան հաճախ վտանգում էին իրենց պաշտոնը, առողջությունը և նույնիսկ կյանքը որպեսզի ... կանչեն, Թուրքիայի ներսում և ավելի ուշ՝ ոռոսական Հայաստանի որոշ հատվածներում տեղի ունեցող կոտորածները, որոնք այդ ժամանակ օկուպացված էին թուրքական զօրքերի կողմից: Պարտադիր չէ, որ նրանք լինեին հայասերներ. նրանք գերմանական պետության պարկեշտ ու աստվածավախ ծառաներ էին... Արժե այս գերմանացիներին անվանել անարգված մարդկության աներկյուղ ասպետներ»<sup>1</sup>:

Աղանայի վիլայեթն ունեցել է զգալի թվով հայ բնակչություն, սակայն թվաքանակի մասին տեղեկությունները թափականին

հակասական են: 1922թ. տպագրված «Տարեցույց»-ում թեոդիկը կոտորածներից առաջ հայերի թիվը նշում է 137.000<sup>2</sup>, իսկ «Հայկական Հարց. Հանրագիտարանում» կարդում ենք 178.000<sup>3</sup>:

Այս վիլայերի մասին արխիվային փաստաթղթերի մեծ մասի հետինակը 1910թ. մայիսից մինչև 1918թ. հյուպատոսի գործառույթներն իրականացրած Օյգեն Բյուգեն է, որին Հիլմար Կայզերը որակում է որպես «Աղանայի եռանդուն բողոքող հյուպատոս»<sup>4</sup>: Աղանայի վիլայերի հայ բնակչության տառապանքներն ուժգնանում են հատկապես 1915թ. մայիսից: Գերմանական հյուպատոս Բյուգեն հայերի նկատմամբ իրականացված բռնությունների մասին ահազանգում է դեսպանություն և միջամտելու նախաձեռնությամբ հանդես գալու առաջարկ է անում, սակայն դեսպան Վաճագենիայմը պատրաստ և տրամադրված չէր հետևելու Բյուգենի նախաձեռնությանը: Նա պատասխանում է, որ «ցավայի, քայլ որոշ տեսակետից նաև իրենց շահերի համար է ձեռնոտու հայկական բնակչության հետապնդումը, և սահմանամերձ վիլայեթներում վերջին զարգացումների միջոցով, ինչպես օրինակ ապստամբությունը Վաճում և այլ իրադարձություններ, կարծի է արդարացնել իշխանության բռնի գործողությունները երկրում: Այդ պատճառով դեսպանատունն առայժմ այս միջոցառումներին արգելվ չի հանդիսանում»<sup>5</sup>:

Բյուգենի առաջին գեկույցներն ավելի շատ են աշքի ընկնում տարբեր աղբյուրների մեջքերմամբ: Հյուպատոսը մարտի 13-ին դեսպան Վաճագենիայմին ուղղված իր նամակին կցում է իր երաշխավորյալի նամակը: Այստեղ նա, չվերցնելով վստահելիության ամբողջ պատասխանատվությունը, կարծիք է հայտնում, որ «գործը միանգանայն ճիշտ է ներկայացված»<sup>6</sup>: Իր հաջորդ հեռագրերից մնկով նա, կարծես քոյլտվություն խնդրելով, հայտնում է, որ Սահ Հայոց կարողիկոսը ցանկանում է հյուպատոսության և դեսպանության միջնորդությամբ Զեյթունի իրադարձությունների մասին տեղեկություններ հաղորդել Կոստանդնուպոլիսի պատրիարքարանին: Իսկ երկու օր անց արդեն փոխանցում է տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ հայոց կարողիկոսի ապրիլի 21-ի նամակը: Օրեր անց հյուպատոսը գրում է բառացիորեն հետևյալը. «Տս կարող եմ ամենահնագանդ ձևով կրկնել, որ հայերի ապատամբության հնարավորության համար բացակայում են բոլոր նախապայմանները»<sup>7</sup>:

Հետագա մի շաբթ այլ գեկուցագրերով ևս Բյուգեն մտահոգություն է հայտնում ստեղծված իրավիճակի մասին: Մասնավորապես, եթե մայիսի 18-ին հյուպատոսը փաստում է. «Աղանայի վիլայերի ողջ հայ բնակչությունը կառավարության գործողությունների պատճառով մեծ վախի մնջ է: Հարյուրավոր ընտանիքներ արտաքսվել են, բանտերը լիբն են, և այսօր՝ վաղ առավոտյան, կրկին շատերին մահապատճի ենթարկեցին ... Հատկապես զգալիորեն տուժեց Գերմանական

արևելյան բանկը և խնդրեց ինձ կասեցնել հայերի արտաքսումը<sup>8</sup>, ապա հունիսի 23-ի գեկույցում արդեն ընդգծում է, որ «Աղանայի վիլայեթում հայերի ապատամբություն չկա»<sup>9</sup>:

Սակայն Բյուզեի կողմից եղել են նաև այլ ոճի հաղորդագրություններ, այդ թվում նաև պաշտոնական գերմանական դիրքորոշման տատին համապատասխանող: Քանի որ մի քանի նահանգների հյուպատոսների գեկույցներն ու մոտեցումները «ոչ դրականորեն» տարբերվում էին մյուսներից, մայիսի 31-ի ծանուցմանը «ղետպանը տեղեկացնում էր Էրգրումի, Մոսուլի, Հալեպի, Բաղդադի և Աղանայի հյուպատոսներին, որ օսմանյան կառավարությունը շարունակելու է իր միջոցառումները հայերի դեմ: Հայկական թերթերը և դպրոցները փակվելու են, հայոց լեզվով նամակագրությունն արգելվելու է»: Սա կարծես նախազգուշական ցուցում լինի, որպեսզի իրականացվելիք բռնությունների բնույթին հյուպատոսները ծանոթ լինեն ու առանձնապես չբողոքեն դրանց դեմ: Իսկ հետևյալ նախադասությամբ դեսպան Վանքենհայը պարզաբանում է դեսպանատան ելակետը՝ ակնարկելով գործել դրա շրջանակներում. «Թուրքիայի քաղաքական և ուղմական իրավիճակում մենք չենք կարող զանգվածային միջոցառումներին հիմնավորապես արգելք հանդիսանալ, այլ կարող ենք փորձել մեղմել իրենց ձևի մեջ»<sup>10</sup>:

Բյուզեն անդրադառնում է նաև հայկական լրտեսության մասին շրջանառվող լուրերին. «Նվազագույնն այնքանով, որքանով նկատի է առնվում Աղանայի իրադրությունը, հայկական լրտեսության կասկածներն անհիմն գրույցներ են: Այստեղ նաև գոյություն չունի ոչ մի գաղտնի կամ հեղափոխական հայկական միություն կամ նման որևէ բան: ... Ընդհանրապես Աղանայի հայերի համար պետք է ասել, որ նրանք, հաշվի առնելով կոպիտ վերաբերմունքը, որին պարբերաբար արժանացել և այժմ կրկին արժանանում են, հանդես են թերում բավականին չեզոք տրամադրություն: Պահանջել նրանցից ավելին միշտ չէր լինի»<sup>11</sup>:

Աղանայի նահանգում աքսորներին արգելք հանդիսանալու Բյուզեի ջանքերն ի դերև են եղնում: Հետագա շաբաթներին Բյուզեն և Նարհանը (ԱՄՆ-ի հյուպատոսը) անընդհատ գեկուցում էին շարունակվող բնաջնջման և աքսորվողների տխուր ճակատագրի մասին: Միաժամանակ, գերմանական հյուպատոսն ընդգծում էր, որ հայերի ոչնչացումն իրականացվում է ծրագրավորված կերպով<sup>12</sup>:

Չարունակելով իր հիմնական գրելառը՝ սեպտեմբերի 6-ին ուղարկած հեռագրում հյուպատոս Բյուզեն էլ ավելի աղաղակող փաստեր է արձանագրում. «Հայերի արտաքսումն ընդունում է ամենօրյա կոտորածների բնույթ: Վերջերս ժանդարմների կողմից Ուլու-Շլայի մոտ յոթ հայեր են սպանվել: Այսօր ականատեսներն ինձ հայտնեցին, որ օգոստոսի 20-ին Կեսարիայից հյուսիսի 120 տղամարդիկ

Չորումից իրենց ընտանիքների աշքի առջև սպանվել են, իսկ 62 երիտասարդ կանայք տարվել են»<sup>13</sup>: Իսկ սեպտեմբերի 10-ին նա գրում է. «Բարձր Դուռը կողմից կայսերական դեսպանությանը հայերի վերաբերյալ օգոստոսի 31-ին տված հաղորդումը (որը խեղաքայուրում էր իրականությունը) սույ մի անպատկառ խարեւություն է, որովհետև իշխանության մարմինները ... շարունակում են արտաքսում՝ առանց դավանանքի խորության: Սպանված հայերի թիվն այստեղ, հավանաբար, անցնում է երիտրոլցերի 1909թ. կոտորածի (որտեղ, ի դեպ, նշվում է զոհերի 22.000-26.000 թիվը) զոհերի թվաքանակից»<sup>14</sup>: Ավելին, մի քանի օր անց հղած հաջորդ իսկ հետագրով խնդրում է հստակ պատասխանել իրեն, թե հույս կա՞ արդյոք չնյալ հայտարարելու հայերի դեմ ճենարկված միջոցառումների խստացումը: Իսկ ահա հոկտեմբերի 1-ին հյուպատոսը կարծես վերջնական գնահատական է տախս՝ «ամենուր և ցանկացած դեպքում պատասխանատվությունն ընկնում է թուրքական իշխանությունների վրա»<sup>15</sup>:

Հյուպատոս Օյգեն Բյուգեն, բնականաբար, անմիջականորեն ենթակա էր Օսմանյան կայսրության մայրաքաղաքում դեսպան Հանս ֆոն Վանգենհայմին, որն ամեն կերպ արգելք էր հանդիսանում իր որոշ ենթականների փոքրիշտան հայանպատ քայլերին: Ի պաշտոն Վանգենհայմը կապող օղակ էր հանդիսանում Գերմանիայի իշխանությունների և հյուպատոսությունների միջև: «1915թ. ապրիլին Վանգենհայմը քացահայտորեն տեղեկացնում էր Բեռլին, որ հայերի դրությունը այս կամ այն չափով անհուսալի էր և գերակա գերմանական շահերը պահանջում էին, որ կառավարությունը շմիջամտի»<sup>16</sup>: Այսպիսին էր Գերմանիայի դեսպանի խորհրդադիրությունների միջև: «1915թ. ապրիլին Վանգենհայմը քացահայտորեն տեղեկացնում էր Բեռլին, որ հայերի դրությունը այս կամ այն չափով անհուսալի էր և գերակա գերմանական շահերը պահանջում էին, որ կառավարությունը շմիջամտի»<sup>17</sup>: Այսպիսին էր Գերմանիայի դեսպանի խորհրդադիրությունների սեփական իշխանություններին, ով Միացյալ Նահանգների դեսպան ազգությամբ երեա Հենրի Մորգենթաուին հաճոյանալու համար (Վերջինիս բնորոշմանը) նրան ասել էր. «Ես կօգնեմ սիրնիստներին, բայց ես ոչինչ չեմ անի հայերի համար»<sup>18</sup>: Իսկ Մորգենթաուի այն հարցին, թե ինչու չես կարող, որպես մարդկային արարած տեսնել, որ այդ մարդիկ իրավունք ունեն ապրելու, Վանգենհայմն առանց վարանելու պատասխանել էր. «... Ես չեմ միջամտի: Մեր նպատակն այս պատերազմը հաղթելն է»<sup>19</sup>:

Այսպիսով, հյուպատոս Բյուգեն 1915թ. տեղի ունենալիք իրադարձություններին արձագանքել է հիմնականում երեք ծևով. ա) նշել է միայն փաստեր՝ առանց որևէ մեկնարաբանության, բ) թերել է տվյալներ՝ վկայակոչելով մեկ այլ առյուր՝ երաշխափորելով դրա հավաստիությունը կամ դրական կարծիք հայտնելով հուսալիության վերաբերյալ, գ) ինքն անձամբ է փորձել միջամտել, արել է առաջարկներ, դիմել է խնդրանքներով՝ իրավիճակը շտկելու կամ առնվազն մեղմելու ակնկալիքով: Նա իր վերադասներին հստակ տեղյակ է պահել իրերի ընթացքի և հմարավոր զարգացումների մասին՝

Առյօնիսկ դեմ զնալով իրավիճակն ավելի մեղմ ներկայացնելուն միտված վերջիններիս հրամաններին ու ջանքերին: Գերմանական հյուպատոսների և այլ պաշտոնյաների պահվածքն ու գործելակերպը հիմնականում պետք է վերագրել Գերմանիայի ռայխսկանցեր Բերման-Հովկեգին, որն այն համոզմանն էր, որ իրենց միակ նպատակը Թուրքիային մինչև պատերազմի ավարտն իրենց կողմում պահելն է, անկախ Երանից, կմահանան հայերը, թէ՝ ոչ<sup>19</sup>, և Թուրքիայում նրա զիսավոր ներկայացուցչի՝ դեսպան Վանգենհայմին ու նրանց կողմից որդեգրած բաղաքականությանը: 1915թ. հոկտեմբերի 25-ին Վանգենհայմի մահանալուց և Բոսֆորի ափին՝ Թերապահայի գերմանական ամառային դեսպանատան հողում բաղվելուց հետո Մորգենթաուն եղրափակում է. «Նա միակ մարդն էր և նրա կառավարությունը՝ միակ կառավարությունը, որը կարող էր կասեցնել այս սարսափները ... ազգի կոտորածը»<sup>20</sup>:

Աղանձայի գերմանական հյուպատոսը, եթե Առյօնիսկ սկզբնական շրջանում անտարբեր է եղել հայերի ճակատագրին, ապա աքտորի և ջարդերի ժամանակ նա աստիճանաբար փոխել է իր նոտեցումը և ծավալել է եթե ոչ հայանպատ, ապա գոնե մարդասիրական գործունեություն:

### HAYK MARTIROSYAN

(AGMI)

### REPORTS OF THE GERMAN CONSUL OF ADANA EUGENE BUGE ON THE MASSACRES OF ARMENIANS IN THE BEGINNING OF 20<sup>TH</sup> CENTURY

During World War I Germany had fifteen consuls in the Ottoman Empire. One of them was the Consul of Adana, Eugene Buge, distinguished from other consuls by his non-Turk-oriented, unbiased reports and steps undertaken, whereas the Ambassador Wangenheim, focusing on "more important German interests", was insisting that Germany should not intervene. German authorities were ready to keep Turkey as an ally at any cost - even by not interfering or preventing genocide committed against a subordinate nation - till the end of the War, since Germany pursued only one goal - to win the War by all means.

### ԾԱՄՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Dadrian V.N., German Responsibility in the Armenian Genocide: a review of the historical evidence of German complicity. Watertown, 1996, էջ 16:
2. Թեոդիկ, «Ամենուն տարեցույցը», ԺԶ տարի, 1922, էջ 262:
3. «Հայկական Հարց.Համբազիտարան», Եր., 1996, էջ 9:
4. Hilmar K., Dic deutsche Diplomatic und der armenische Völkermord. *Osmanismus, Nationalismus und der Kaukasus*, Fikret Adanir und Bernd Bonwetsch (Hg.), Wiesbaden, 2005, էջ 234:
5. Նոյյն տեղում, էջ 222-223:

6. Deutschland und Armenien 1914-1918: Sammlung diplomatischer Aktenstücke. Herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius, Bremen, 1986, էջ 32:
7. Der Völkermord an den Armeniern 1915-16: Dokumente aus dem Politischen Archiv des deutschen Auswärtigen Amts. Wolfgang Gust (Hg.). Hamburg, 2005, էջ 124:
8. [http://www.armenocide.de/armenocide.nsf/WebStart\\_Dc?OpenFrameset](http://www.armenocide.de/armenocide.nsf/WebStart_Dc?OpenFrameset)
9. Deutschland und Armenien 1914-1918, Աշկ. աշխ., էջ 88:
10. Hilmar K, Die deutsche Diplomatic, էջ 223:
11. Die Armenische Frage und der Genozid an den Armeniern in der Türkei (1913-1919). Dokumente aus dem politischen Archiv des Deutschen Auswärtigen Amts. Zusammengestellt und eingeleitet von Prof. Dr. W. Mikaeljan. Jerewan, 2004, էջ 167-168:
12. Kaiser Hilmar, Die deutsche Diplomatic, Աշկ. աշխ., էջ 226:
13. Die Armenische Frage und der Genozid an den Armeniern in der Türkei (1913-1919). ..., էջ 201:
14. Deutschland und Armenien 1914-1918, Աշկ. աշխ., էջ 151:
15. Die Armenische Frage und der Genozid an den Armeniern in der Türkei (1913-1919). ..., էջ 210:
16. Vahakn N. Dadrian, The History of the Armenian Genocide. Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus. Oxford, 2005, էջ 269:
17. Նույն տեղում, էջ 270:
18. Նույն տեղում, էջ 271:
19. Der Völkermord an den Armeniern 1915-16 Աշկ. աշխ., էջ 395:
20. Dadrian V.N., The History of the Armenian Genocide, Աշկ. աշխ., էջ 271: Այս կարծիքի հետ շահմածայնելն անհնար է, թեկող հաշվի առնելով, թե ինչպես է արտահայտվել Թայթարը Գերմանիայի մասին զերմանական ռազմական կցորդ գնդապետ Օտտոն ֆոն Լասովի ներկայությամբ. «Գերմանիան մեր հայրն է, մինչդեռ Ավստրիան՝ միայն հարևանը»: (էջ 269):

## ՄԵԼՔՈՆՅԱՌ ՌՈՒԲԵՆ

(ԵՊՀ)

### ՀԱՅ ԵՐԵԽԱՄՆԵՐԻ ԻՍԼԱՍՏԱՑՈՒՄ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (ԸՍ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՄՆԵՐԻ)

Թյուրքական ցեղերի Փոքր Ասիա և Հայկական լեռնաշխարհ ներխուժելուց հետո այդ տարածքներում պարբերաբար տեղի են ունեցել ոչ մուսուլման բնակչության բռնի իսլամացումներ: Կրոնափոխության հարմար թիրախներից են միշտ համարվել երեխաները, որոնց իսլամացնելով վաղ տարիքում կարելի էր ավելի հեշտ ջնջել ազգային և կրոնական դեռևս ձևափորվող ինքնագիտակցությունը: Հենց այս տրամարանությամբ է գործել Օսմանյան կայսրությունում մեծ տարածում գտած և երկար դարեր կիրառված մանկահավաքի (Դևշիրմե) հնստիտուտը, որն ունեցել է նաև «արյան հարկ» անվանումը: Մանկահավաքի ժամանակ կայսրության ոչ մուսուլման բնակչությունից հավաքվել են փոքրահասակ տղա երեխաները, որոնց տրվել է կրոնական և ուսումնական կրթություն, և հենց նրանցից էլ ձևափորվել են ենիշերիների գորագոնդերը<sup>1</sup>:

Հայերը, լինելով Օսմանյան կայսրության ոչ մուսուլման հիմնական ազգերից մեկը, բնականարար պարբերաբար ենթարկվել են բռնի իսլամացման, որը տարբեր ժամանակներում ունեցել է տարբեր ծավալներ: Հայտնի է, որ հայերի իսլամացման վերջին լայնածավալ ակցիան տեղի է ունեցել Հայոց ցեղասպանության տարիներին: Առանձին և լուրջ ուսումնասիրության թեմա է ցեղասպանության ընթացքում առևանգված կամ ծնողների կոտորվելուց հետո մի կերպ փրկված հայ երեխաների հարցը: Ինչպես վկայում են մի շարք առյօններ, այդ թվում և թուրքական, Հայոց ցեղասպանության տարիներին մեծ թվով հայ երեխաներ են առևանգվել թուրքերի և քրտերի կողմից: Որք մնացած հայ երեխաների մի մասն էլ օսմանյան իշխանությունների իրամանով և նախաճենությամբ բաժանվել են մուսուլման ընտանիքներին<sup>2</sup>, ինչպես նաև հավաքվել են թուրքական որբանոցներում և իսլամացվել: Այս մասին վկայող փաստեր են պահպանված օսմանյան արխիվներում: Սակայն առկա են նաև որոշակի փաստեր, որոնք թույլ են տալիս խոսելու որք հայ երեխաներից կազմված Օսմանյան կայսրության թերևս վերջին և թուրքիայի հանրապետության

առաջին Եմիշերիների մասին: Այսպես, հայտնի է, որ տիսրահոչակ թուրք գորավար Քազզը Քարաքերիր՝ արևելյան ճակատում հավաքելով որք, անտուն, անշնամ մնացած հայ երեխաներին նրանց տալիս է ուազմական բազմակողմանի կրթություն, ինչպես նաև դաստիարակում մոլի «Գուրքականության» ոգով: Նաև այս երեխաներից է հետազայում կազմավորվում այսպիս կոչված «Գյուրքուզլեր օրդուսու» զորամիավորումը, որը բարգմանաբար նշանակում է «ամրակազմների բանակ»: Թուրքական աղբյուրները մանկահավաքության այս գործընթացը ներկայացնում են որպես Քարաքերիր «ամրդասիրական զգացումների» դրսորում, որ իր այդ ամենը նա արել է ելեկով հումանիստական նկատառումներից: Ինչև, խոսվում է նաև, որ «Գյուրքուզլեր օրդուսու»-ի շատ անդամներ հետազայում որոշակի դիրքեր են գրավել թուրքական զինվորական համակարգում:

Համարյելով թուրքական տարրեր աղբյուրների ներկայացրած փաստերը կարելի է եղակացնել, որ Հայոց ցեղասպանության տարիներին հայ երեխաների բռնի իսլամացումն և ծովումը կատարվել է երկու մակարդակով՝ պետության և հասարակության լայն խավերի կողմից. այս փաստը չի էլ ժխտվում թուրքերի կողմից, ուղղակի փորձ է արվում դա ներկայացնել այլ լրսյի ներքո և օգտագործել քարոզչական նպատակով:

1. Ծնողներին կորցրած, կոտորածից մի կերպ փրկված, անտեր, անտուն, անխնամ մնացած հայ որք երեխաները պետության աջակցությամբ իսլամացվել են և բաժանվել մուսուլման ընտանիքներին: Որպես վերը նշվածը հաստատող մի օրինակ կարելի է մեջքերել օսմանյան արխիվում պահպանված 1915թ. հուլիսի 10-ի թվագրված մի պաշտոնական հրաման, որտեղ ասվում է, որ իսլամացված որք հայ երեխաներին պետք է հանձնել բարեկեցիկ մուսուլման ընտանիքներին և հատկապես այն գյուղերում ու գյուղադաշտաներում, ուր հայեր չկան: Եթե երեխաների թիվը մեծ է դրանց պետք է հանձնել դժվարությամբ ապրուստը հոգող մուսուլման ընտանիքներին և ամեն երեխայի համար ամսական նրանց վճարել 30 քուրուշ: Պետք է ցուցակագրել այդ երեխաների թվի և գոնվելու վայրերի մասին տվյալները ու դրանք ուղարկել կենտրոն:<sup>3</sup> Հատուկ նշվում է, որ այս երեխաները հանձնվում են այդ ընտանիքներին այն պայմանով, որ նրանց տրվի մուսուլմանական կրթություն: Նոյնարովանդակ գրություններ հանդիպում են նաև հետազայում՝ ուղղված տարրեր նահանգների դեկավարներին: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ հրամաններում հատուկ նշվում է, որ երեխաներին պետք է բաժանել հատկապես այն վայրերում,

որ չկան հայեր<sup>4</sup>: Մրա նպատակը, զստ երևույթին, այն էր, որ թնկուզ հետագայում էլ այդ երեխաները հնարավորություն չունենան շփվել իրենց ազգակիցների հետ և շատ հեշտությամբ ծովզեն ու խլամանան:

Մրան գուգահեռ օսմանյան կառավարությունը, չնայած պատերազմական վիճակին, իր նախաձեռնությամբ որք հայ երեխաներին հավաքել է բուրքական որբանոցներում՝ խլամացնելու և բուրքացնելու նպատակով: Կրկին օսմանյան արիստվաներուն պահպանվել են երիտրուրքական պարագլուխ Ենվերի գրությունները՝ ուղղված ներքին գործերի նախարար Թալեարին, որտեղ նա ցանկություն էր հայտնում և պահանջում, որ որք հայ երեխաները ուղարկվեն հատկապես բուրքական որբանոցներ: Ենվերը՝ իր 1916թ. մայիսի 9-ի գրության մեջ ուղղված ներքին գործերի նախարարությանը, գրում է. «Կրոնափոխ և ոչ կրոնափոխ հայ որբերին եթև վերցնեք մեր որբանոցները, ես պատրաստ եմ ուազմական բյուջեից հոգալու դրա համար անհրաժեշտ ծախսերը»<sup>5</sup>: Քանի որ որբանոցները ենթակա էին կրքության նախարարությանը, Թալեարը, կրքության նախարարի համաձայնությունը ստանալուց հետո, 1916թ. մայիսի 16-ին տեղեկացնում է Ենվերին, որ խլամացած և ոչ խլամացած հայ երեխաները կվերցվեն բուրքական որբանոցները, և ծախսերը կհոգա ներքին գործերի նախարարությունը<sup>6</sup>: Արդեն 1916թ. հունիսի 1-ի կրքության նախարարության՝ Սարդինի նահանգապետարան ուղարկված ծածկագիր հեռագրում նշվում է, որ Սարդինի որբանոց պետք է վերցնել միայն խլամացած հայ երեխաներին<sup>7</sup>: Ավելի վաղ է՝ 1916թ. ապրիլի 30-ի ներքին գործերի նախարարության՝ անխնամ մնացած հայ կանանց և երեխաների վերաբերյալ հրապարակած ընդհանուր հրամանի 3-րդ կետում հստակ նշվում է. «Սինչև 12 տարեկան հայ երեխաներին վերցնել մեր որբանոցները»<sup>8</sup>:

Կարելի է եզրակացնել, որ Ենվերի և մյուսների շահագրգուվածությունը, որ հայ որք երեխաները վերցվեն հատկապես բուրքական որբանոցներ, պայմանավորված էր նրանց խլամացնելու և ծովզելու ցանկությամբ, քանի որ այդ տարիներին Օսմանյան Կայսրության տարածքում գործում էին եվրոպական, ամերիկյան, միսիոներական որբանոցներ ևս:

Որք հայ երեխաների խլամացման և ծովզման հարցով բավական հետաքրքրված մյուս բարձրաստիճան պաշտոնյան հայտնի երիտրուրքական պարագլուխ Զենալ Փաշան էր, որը գրադարձ է Սիրիայում և Լիբանանում գտնվող հայ որբերի հարցերով: Նրա

նախաձեռնությամբ Ային Թուրա ֆրանսիական ճիզվիտական միսիային պատկանող մենաստանում ստեղծվել է որրանոց, ուր հավաքվել են հայ երեխաները՝ իսլամացվելու և թուրքացվելու նպատակով։ Հատուկ այս գործի համար Զեմալը Ստամբուլի հրավիրել է պանթուրքիստ կին գրող Հալիդէ Էդիրին, որը հայտնի է ցեղասպանության տարիներին հայ երեխաների իսլամացման և թուրքացման գործում իր ակտիվ ջանքերով։

2. Հայ երեխաների իսլամացման և թուրքացման գործում մեծ ջանքեր են գործադրել նաև թուրքական հասարակության լայն շրջանակներ։ Ինչպես նշեցին Հայոց ցեղասպանության տարիներին թուրքերը և քրութը առևանգել և խել են բազմաթիվ հայ մանուկների և իսլամացրել։ Թուրքական կողմը՝ չկարողանալով ժխտել այս անառարկելի փաստը, միևնույն ժամանակ շրջանառության մեջ է գցել այն վարկածը, թե իբր «Քարեգործ» թուրքերը ուղղակի հումանիստական գագացումներից եկնելով «Փրկել» են աքսորյալ հայ երեխաներին։ Կողմ չինելով բացարձակ գնահատականների, հնարավոր ենք համարում ընդունել, որ երեխեն, շատ հազվադեպ դեպքերում, կարելի է չբացառել նման վարկածը, բայց գերակշիռ դեպքերում հայ երեխաներին խել են՝ բռնությամբ նրանց իսլամացնելու, թուրքացնելու նպատակով և դա անելիս առաջնորդվել են որ թե հումանիստական, այլ գրատ անձնական, ավելին, նաև տնտեսական շահերից։ Հասկանալու համար թուրքերի և քրութի՝ աքսորյալ հայ երեխաներին «Փրկելու» և իսլամացնելու շարժադիրները, մեր կարծիքով, ամենին երկրորդական չպետք է համարել իսլամա-թուրքական իրականության որոշ նրբերանգներ։ Խելով և ծովելով հայ երեխաներին, թուրք և քրութ գյուղացները մի կողմից ծեռք էին բերում ճրի ախտառժ և մյուս կողմից հատկապես հայ աղջիկ երեխաները դառնում էին նրանց հարեմների զոհը։ Մի կարևոր նրբերանգ էլ կա կապված իսլամա-թուրքական ամուսնության սովորույթների հետ, համաձայն որի տղայի կողմը ուղղակի գնում է հարսին՝ նրա ծնողներին վճարելով որոշակի գումար։ Զեռք բերելով հայ աղջիկ երեխաներին, ինչպես ցույց են տախս բազմաթիվ փաստերը նրանք, այնուհետև այդ աղջիկներին ամուսնություն իրենց տղաների հետ՝ այդպիսով խուսափելով նաև ամուսնական «զլիսագին» վճարելու ծանր պարտականությունից։ Ներկայումս էլ Թուրքիայում ծայր առած «Քրիստ ճգնաժամի» քննարկման շրջանակներում անընդհատ ի հայտ են գալիս նոր փաստեր ցեղասպանության ժամանակ առևանգված հայ երեխաների, հատկապես աղջիկների, մասին, որոնց մուսուլմանների հետ ամուսնության հետևանքով

Յերկայիս Թուրքիայում ծևավորվել է խառնածինների հոծ բանակ, որոնք հայկական արյան որոշակի տոկոս ունեն:

Այսպիսով, վերոնշյալ փաստերի զուգադրման արդյունքում կարող ենք եզրակացնել, որ օսմանյան ղեկավարությունը և հասարակության լայն շերտերը՝ Հայոց ցեղասպանության տարիներին բռնի իսլամացնելով մի կերպ փրկված հայ որք երեխաներին շարունակել են ոչ մուսուլման ազգերի ձուլման քաղաքականությունը:

RUBEN MELKONYAN  
(YSU)

THE ISLAMIZATION OF ARMENIAN CHILDREN IN THE PERIOD  
OF THE ARMENIAN GENOCIDE  
(ACCORDING TO THE TURKISH SOURCES)

After the intrusion of the Turkic tribes into the Asia Minor and the Armenian Highland the population inhabited in those territories was continuously forcefully Islamized. Children have always been considered the best targets for the conversion of religion as at such an early age it is easy to wipe away their still forming religious and national self-consciousness. By this very logic was working the wide spread institute in the Ottoman Empire called devshirme (gathering baby boys) also called "tribute for blood", which had been applied for many centuries. Being one of the main non-Muslim nations of the Ottoman Empire the Armenians were continuously Islamized, which at different periods embraced different quantities. It is known that the last wide ranging action of the Islamization of Armenians was implemented at the period of the Armenian Genocide. According to some sources as well as the Turkish ones, a big number of Armenian children were kidnapped by the Turks and Kurds at the period of the Armenian Genocide. By the order of the Ottoman Empire the Armenian orphans were gathered in Turkish orphanages and Islamized. The Information preserved in the Ottoman archives has come to prove it.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մանրամասն տե՛ս, Չաքարյան Ա., «Արյան հարկը» Օսմանյան կայսրությունում, Աշխիրմ, Եր., 2006:
2. Başyurt E., Ermeni evlatlıklar, İstanbul, 2006, s. 36.
3. Gürün K., Ermeni dosyası, Ankara, 1988, s. 287, նույնը տե՛ս նաև, Atıur İ., Türkiyedeki Ermeni kadınları ve çocukların meselesi (1915-1923), Ankara, 2005, s. 65.
4. Atıur İ., Türkiyedeki Ermeni kadınları ve çocukların meselesi (1915-1923), Ankara, 2005, s. 66.
5. Նույն տեղում,էջ 56-57:
6. Նույն տեղում,էջ 57:
7. Նույն տեղում:
8. Նույն տեղում,էջ 67:

## ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՀԱՅԿԱՐԱՄ

(ՀՀՀ)

### ԱԴՐԲԵԶԱՆԱԿԱՆ ԼՈԲԲԻՍԴԻ ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Արտասահմանի                          ադրբեջանական                          համայնքների  
ինքնակազմակերպման, հասարակական տարրեր կառույցների ի հայտ  
գալու, լորրինգի ձևավորման փորձերը միջազգային գիտական կամ  
ուազմավարական ուսումնասիրություններ կատարող մասնագետների  
կողմից առաջմ քիչ են ուսումնասիրված: Որպես դրա օրյեկտիվ  
պատճառներ կարող են նշվել ադրբեջանազիտության ոչ այնքան  
զարգացած լինելը, բուն ադրբեջանական լորրինգի նորագույն  
իրողություն լինելը և այլն: Որպես եզակի բացառություններ կարող են  
նշվել մուսկովյան ««Հիասպորի» անկախ գիտական հանդեսում ՌԴ և  
Վրաստանի ադրբեջանական համայնքների վերաբերյալ հոդվածների  
հրապարակումը<sup>1</sup>: Այսպիսով, նշված թեմայով ուսումնասիրություն  
պատրաստելիս պետք է առավելապես հիմնվել ադրբեջանական և  
միջազգային լրատվամիջոցներում թեմայի շուրջ առկա  
տեղեկատվական նյութերի և վերլուծական անդրադարձների վրա:

Հայկական կողմի համար ադրբեջանական ««Հիասպորաների» ինքնակազմակերպման գործընթացը հետաքրքրական է առաջին հերթին ուազմավարական շահերի դիտանկյունից, քանի որ Բաքվի լորրիստական աշխատանքը կրում է հակահայկական ուղղվածություն: Ավելին, ադրբեջանական «սիյուռի» ձևավորման պատճառներից մեկը հենց հայկական սիյուռին դիմակայելու գերխննիքն էր: Մասնավորապես «ադրբեջանական սիյուռի» հետ աշխատանքների կազմակերպման համար հիմնված Արտասահմանում բնակվող ադրբեջանցիների հետ աշխատանքային պետական կոմիտեի նախագահ Նազիմ Իրրահիմովի խոսքով «իրենց գերատեսչության հիմնադրման առաջնահերթ նպատակներից մեկը հայկական սիյուռին հակագրելն էր»<sup>2</sup>:

Ադրբեջանական լորրինգի ակտիվացման խնդիրն առավել ծավալուն ուսումնասիրության առարկա կարող է հանդիսանալ, ըստ այդմ, նշված անդրադարձի մեջ ներկայացնենք մի քանի տիպական օրինակներ:

Աղբեջանն ԱՊՀ տարածքում երրորդ պետությունն էր, որի շահերի պաշտպանության համար Սիացյալ Նահանգների Կոնգրեսում ձեռագործությունը հանձնախումը: Մինչև այդ ԱՄՆ օրենսդիրում գործում էին հայկական և ուկրաինական հարցերով հանձնախմբեր:

2004թ. մարտի 25-ին Աղբեջանի պաշտպանության նախարար Սաֆար Արիկի ԱՄՆ այցի օրերին Կոնգրեսում գրանցվեց Աղբեջանի հարցերով հանձնախումը, որը կոչվում էր «Աղբեջանի քարեկամների խումբ»<sup>3</sup>: Համանախազահներն էին դեմոկրատական կուսակցությունները Սոլոմոն Օրտիսը (Տեխաս) և հանրապետական Կուրտ Ուելլոնը (Փենսիլվանիա): 2007թ. մայիսին Կուրտ Ուելլենին փոխարինեց Բիլ Շաստերը (հանրապետական, Փասադենա): Գրանցման պահին խմբակցությունն ուներ 8 անդամ: Այնուհետև, կառույցի անդամների քվի աճն ունեցավ հետևյալ պատկերը. 2006թ. հունիսին՝ 17<sup>4</sup>, 2007թ. մարտին՝ 18, հուլիսին՝ 20, հոկտեմբերին՝ 24, նոյեմբերին՝ 26<sup>5</sup>: 2008թ. փետրվարի սկզբին «Աղբեջանի քարեկամների» քիվն էր 31<sup>6</sup>, այնուհետև Ռենդի Քուի, Շելի Մուր Կապիտոյի եւ Հորվարդ Գորի խմբին միանալով՝ 34, մարտին՝ Թելմա Դրեյկ (հանրապետական Վիրջինիա), Պիտ Սեշընս (հանրապետական, Տեխաս), Էդոլֆուս Թաունս (դեմոկրատ՝ Նյու Յորք) 37<sup>7</sup>, ապրիլին՝ Նիկ Ռահալ (դեմոկրատ, Վիրջինիա), Ջո Բարբոն (հանրապետական, Տեխաս) և Գրեսիեմ Բերրեթ (հանրապետական, Հարավային Կարոլինա)<sup>8</sup>:

Այսպիսով 2007թ. նոյեմբերից 2008թ. ապրիլն ընկած ժամանակահատվածում Աղբեջանի հետ քարեկամացել են 14 կոնգրեսական: Հայկական հանձնախմբի անդամների ցուցանիշն այդ ընթացքում 155-ից դարձել է 156:

Նշենք, որ Նյու Յորքից դեմոկրատ Ռենդի Քուին ավելի վաղ հանդիսացել էր Մեծ Եղեռնի օրինագծի հաստատման աջակիցներից, ապա հետ է կանչել իր ստորագրությունը եւ դարձել «Աղբեջանի քարեկամ»: «Կոնգրեսմենը միացավ հանձնախմբին այն քանից հետո, եթե Սոլոմոն Օրտիսը և Բիլ Շաստերը նամակով դիմեցին իրեն խմբին անդամակցելու առաջարկով», նշված էր Աղբեջանի ԱԳ նախարարության հայտարարության մեջ: Հանձնախմբի անդամների ամի թեմայով Աղբեջանի արտաքին գերատեսչությունը պարբերաբար հանդիս է գալիս հաղորդագրություններով:

Սիացյալ Նահանգներում աղբբեջանական լորրինգի ծավալման պարագայում կարեւոր են նաև նախագահական ընտրություններում աղբբեջանական համայնքի ակտիվանալու, համայնքային քվեն ընտրություններում փորձիշատե ազդեցիկ գործոնի վերածելու փորձերը: 2004թ. Բարուն առաջին անգամ փորձ արեց աղբբեջանական համայնքը ներգրավել ընտրական գործընթացում: Զորջ Բուշ - Զոն Քերի մրցակցության մեջ աղբբեջանական համայնքը կողմնորոշվեց դեպի Բուշը: Պատճառը՝ հստակ էր. դեմոկրատ Քերին նախընտրական փուլում դրսերում էր ընդգծված հայանապատ մոտեցումներ: Աղբբեջանական մամուլում նույնիսկ հրապարակում եղավ առ այն, որ Քերին առաջարկում էր «Աղբբեջանին զցել ավտորուսի տակ, իրաքյան պատերազմում ԱՄՆ-ին ոչ բավարար աջակցելու համար»<sup>9</sup>: Այս մասին որեւէ հրապարակում ԱՄՆ մամուլում կամ Զոնի Քերիի կայքում չի հանդիպել և ակնհայտ խոսքն աղբբեջանական հերթական ապատեղեկատվական աշխատանքի մասին էր: 2004թ. նոյեմբերի 3-ի ընտրություններից կարճ ժամանակ առաջ գործարկվեց «Աղբբեջանը հանուն Բուշի»՝ [www.azerbaijanforbush.com](http://www.azerbaijanforbush.com) կայքը<sup>10</sup>: «Իր դիրքորոշումը աղբբեջանական համայնքը հիմնավորում է այն իրուրիթյամբ, որ նախագահ Բուշն աջակցում է Աղբբեջանին, Սահիտակ տունը ընդունում է, որ Աղբբեջանը սատարում է Սիացյալ Նահանգներին ահարեկչության դեմ պայքարում»,- նշված էր այս թեմայով ուսաստանյան կայքի վերլուծականում<sup>11</sup>:

Ժամանակի սղության և փորձառության պակասի պատճառով կայքը և համապատասխանարար Սիացյալ Նահանգներում քնակվող ազերիները չկարողացան բավարար աշխատանք կատարել: 2008թ. ընտրություններում պատկերը որակապես տարբերվում է: Դեռևս «փրայմերիզմերի» շրջանում, երբ գույգ կուսակցություններում վիճարկվում էր նախագահի թեկնածուի հարցը, ԱՄՆ աղբբեջանական համայնքը կողմնորոշվեց դեպի հանրապետական Զոն ՄըկՔեինը:

Որպես դրա պատճառներ նշվում էին վերջինիս այցն Աղբբեջան, Ֆեղասպանության հիմնախնդրում պասիվ դիրքորոշումը դեմոկրատ թեկնածուներ Բարաք Օբամայի և Հիլլրի Քինտոնի համեմատությամբ: Նաև ընդունված տեսակետ է, թե հանրապետական կուսակցությունն ավանդաբար առավել կողմնորոշված է դեպի Թուրքիան: «Աղբբեջանական համայնքի համար առավել նախընտրելի թեկնածու էր

Չոն Մըկքեյնը, իսկ հայկական կողմի համար համապատասխանաբար Բարակ Օրաման: Այս ֆոնին Հիլըրի Քինտոնին աջակցելու հարցը նահանջեց հետին պլան», նշում է Լու Անգելեսում Աղրքեցանի հյուպատոս Էլին Սուլեյմանովը<sup>12</sup>: Այսրանով հանդերձ, հյուպատոսի խոսքով, ԱՄՆ աղքադանական համայնքի սահմանափակ թվով ակտիվիստներ սատարում են Հիլըրի Քինտոնին:

Աղրքեցանական լորինգի ակտիվացման աշխատանքի տեսանկյունից տիպական կարող է համարվել նաև Նիդերլանդների Հազար քաղաքում 2008թ. փետրվարի 24-ին «Խոչայի ցեղասպանության» զոհերի հուշարձանի տեղադրումը<sup>13</sup>: Սա Թուրքիայից և Աղրքեցանից դուրս առաջին հակահայկական հուշարձանն է: Ավելին, փաստացի մինչև օրս արտասահմանյան երկրներում տեղադրվել են Մեծ Եղեռնի զոհերի հուշարձաններ և թուրքաղքեցանական կողմը այս դեպքերում գտնվել է պաշտպանվողի դիրքում: Այժմ Բաքուն ճգնաժամ է փոխել ստատոս թվոն:

Բացման արարությանը ներկա էին Աղրքեցանի եւ Թուրքիայի դեսպանատների աշխատակիցները, թեման լայնորեն լուսաբանվել է թուրք-աղքադանական ԶԼՄ-ներում: Հուշարձանի տեղադրման աշխատանքները ստանձնել եր Նիդերլանդների աղքադանական միությունը, որի դեկավար հիման Աշքընը ծնունդով Թուրքիայից է, իդգիրի տարածաշրջանից: Հուշարձանի բացումը նաև երևակեց թուրք-աղքադանական համայնքային միությունների աստիճարնական մերձեցման խնդիրը, որը կարևոր գործոն է թվում հակահայկական լորրինցի հնարավոր հեռանկարները և միտումները պատկերացնելու դիտանկյունից:

2008թ. ապրիլին Արտասահմանում բնակվող աղքադանցիների հետ աշխատանքային կոմիտեի նախագահ Նազիմ Իբրահիմովը Աշքընին պարգևատրեց «Գորուստան» մեդալով: 2007թ. հաստատված «Գորուստան» մեդալը տրվում է այն անձանց կամ կառունցերին, որոնք մեծ ներդրում են ունենում աղքադանական սփյուռքի ձեւավորման, ամրապնդման, քարոզչական աշխատանքների գործում<sup>14</sup>:

Որպես աղքադանական լորրինցի ակտիվացման տիպական օրինակ տեղին է ներկայացնել նաև Խարայելի Քննեսետում Հայոց ցեղասպանության հարցի առաջքաշման շուրջ ձևավորված վիճակը: Աղքադանական մամուլում զգալի թիվ կազմեցին օրինագիծը

վատարանելու, հակագդելու իրապարակումները, ծավալվեց քարոզական աշխատանք: Բաքուն փորձեց աշխատել նաև Խրայելի աղբեջանական համայնքի հետ: Խրայելի աղբեջանցիների Կոնգրեսի ղեկավար Ալեքս Շապիրո-Սուլիմանը հայտարարեց, թե «պատմական հարցերի ուսումնասիրման պարագայում պարզ կդառնա, որ առաջին աշխարհամարտի ընթացքում ոչ թե հայերն են ենթարկվել ցեղասպանության, այլ բուրքերն ու աղբեջանցիներն են ենթարկվել հայերի ցեղասպանությանը»<sup>15</sup>: Անհասկանալի է, թե ինչպես կարող էին հայերը ցեղասպանության ենթարկվել բուրքերին Օսմանյան կայսրության համընդհանուր հայտափաման պայմաններում: Աղբեջանական Կոնգրեսը դիմեց Խրայելի նախագահ Շիմոն Պերեսին, օրենսդիր և գործադիր իշխանություններին, իրենց բնորոշմամբ, «այս հարցում արդար դիրքորոշում դրսեւորելու կոչով»: Խրայելում գործող «Աղբեջան - Խրայել» միության նախագահ, խորհրդարանական Խոսի Շագալն օրենսդիրում ակտիվ աշխատանք ծավալեց օրինագծի հաստատումը խափանելու նպատակով<sup>16</sup>:

Ուշագրավ է Քննեսետի Խրայել-Հայաստան քարեկամության խմբի նախագահ Զեն Էլյինի հայտարարությունը, որ օրինագիծն առաջադրած պատգամավորները «մեծ ճնշում են զգում ԱԳՆ-ի և քուրքական լորրիի կողմից, որին միացել է նաև աղբեջանականը»: «Պետք է ընդգծեն, որ նրանք քավական օպերատիվ կերպով արձագանքեցին, ինչը, ցավոք, չեմ կարող ասել Հայաստանի և հայկական սիյուտքի մասին», - հայտարարել է Էլյինը<sup>17</sup>: Քննեսետում Հայոց ցեղասպանության հարցի բննարկումները եւս ի ցույց են դրեցին քուրք-աղբեջանական լորրիատական աշխատանքները մնկտեղելու միտումը:

Ներկայացվեցին աղբեջանական լորրինգի ակտիվացման մի քանի տիպական օրինակներ Միացյալ Նահանգներում, Եվրոպայում և Սերծափոր Արևելքում: Վերընշված, ինչպես նաև այլ փաստերի համադրումը վկայում է, որ Բաքուն շարունակելու է աշխատանքը համայնքների կազմակերպման ուղղությանը եւ այս աշխատանքը կրելու է ընդգծված հակահայկական ուղղվածություն:

**HAYKARAM NAHAPETYAN**  
**(PTCA)**  
**THE TENDENCIES OF THE ACTIVIZATION OF AZERI LOBBY**

Azerbaijan turned to be the third state in former USSR to organize Caucus in US Congress. Currently there are 40 congressmen in Azebaijani Caucus, while Armenian Caucus consists of 156 Congressman. While Azerbaijani Diasporas lobbying activities in US are far below the level Armenian side performs, the intentions and processes are noteworthy. At the same time, in February 2008 first anti-Armenian monument dedicated to "Khojali Genocide" was unveiled in Haague thanks to activities of Azerbaijani as well as Turkish organizations of Netherlands. Azerbaijani lobbying activities in Near East, Russia and Ukraine are interesting as well. As Azerbaijani authority declared: one of the purposes of Azerbaijani lobby is to counter Armenian Diaspora.

**ԾԱՆՈԱԿԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. "Азербайджанцы в Грузии: этнические граници в постмногнациональную эпоху", Румянцев С., "Диаспоры", М., 2007 N 1 – 2, "Азербайджанцы в России – Смена имиджа и социальных ролей", Ариф Юнусов, "Диаспоры", 2005 N 3.
2. "Ибрагимов Н.: - Создание азербайджанского лобби стоит дорого", Э. Фахрединоглу, "Эхо".
3. "Американские конгрессмены прибыли в Баку", [www.echo-az.com](http://www.echo-az.com), 27.05.2004.
4. "American Turkish Association Assambley Needs Azerbaijan Support for not loosing Armenians", 27.06.2006, [www.ans.az](http://www.ans.az)
5. "Демократ из Алабамы вошел в рабочую группу Конгресса США по Азербайджану", "Zerkalo", 09.11.2007
6. "Рабочая группа по Азербайджану пополнилась еще двумя конгрессменами США", [www.day.az](http://www.day.az), 09.02.2008.
7. "Еще два республиканца стали членами рабочей группы по Азербайджану " 03.03.2008 "Еще один конгрессмен стал членом Конгресса США по Азербайджану", 17.03.2008, [www.day.az](http://www.day.az).
8. "Число конгрессменов в рабочей группе по Азербайджану достигло 40", [www.day.az](http://www.day.az), 07.04.2008.
9. "В Баку паника. Живущий на грязные деньги армянских террористов Дж. Керри обещал бросить Азербайджан под автобус", 12.10.2004, <http://www.centrasia.ru/newsA.php?st=1097560440>  
Եթ <http://www.asbarer.com/> 10.28.2004.
10. [http://www.rol.ru/news/misc/ncwssng/04/11/02\\_007.htm](http://www.rol.ru/news/misc/ncwssng/04/11/02_007.htm)
11. Сулайманов Э.: "Если для азербайджанской диаспоры наиболее предпочтительным кандидатом выглядит Маккейн Д., то для армянской – соответственно Барак Обама", [www.day.az](http://www.day.az), 07.02.2008.
13. [13 <http://www.azcriunited.com/content/blogcategory/21/52/lang,english/>](http://www.azcriunited.com/content/blogcategory/21/52/lang,english/)
14. "Открытые памятника жертвам Ходжали в Гааге – это большая победа", [www.zerkalo.az](http://www.zerkalo.az), 10.04.2008.
15. "Израиль не признает Геноцид армян", [www.echo-az.com](http://www.echo-az.com), 30.03.2008.
16. Спивак Л.: «За обсуждение закона о «геноциде армян» в израильском Кнесете должно голосовать все депутаты от арабских партий (мусульман)», [www.day.az](http://www.day.az), 11.04.2008.
17. «Զեր Ելին. բորբըր, ի տարբերություն հայերի, օպերատիվ կերպով արձագարեցին Կանանդալ ցեղասպանության բնարկմանը», [www.panarmenian.net](http://www.panarmenian.net), 10.04.2008.

## ՆԱՎԱՍԱՐԴՅԱՄՆ ՆԱԶԵԼԻ

(Փ)

ՊԱՐՄԿԱԿԱՄ ԿՈՉԱՎԿԱԿԱՄ ԲՐԻԳԱԴՐ ՈՐՊԵՍ ՑԱՐՎԿԱՄ  
ԸՈՒՍՍԱՏԱՆԻ ՔԱՂԱՔՎԿԱՄ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՄ ԼԾԱԿ  
ՂԱԶԱՐՎԿԱՄ ԻՐԱՌՈՒՄ

Մինչև 19-րդ դարը իրանական բանակը հիմնականում կազմված էր բռշվոր ցեղերի հեծելազորային ջոկատներից, որոնք հավաքագրվում էին նահանգներում անհրաժեշտության դեպքում՝ հիմնականում պատերազմներից առաջ: Կանոնավոր բանակ կազմավորելու առաջին փորձնը ձեռնարկվել են 19-րդ դարի առաջին կեսին Ֆարե Ալի շահի կողմից<sup>1</sup>: Պատրաստվելով ոուս-պարսկական առաջին պատերազմին (1804-1813թթ.)՝ դաջարական կառավարող շրջանակները սկսեցին փորձեր ձեռնարկել երկրում կանոնավոր ռազմական միավորումներ ձևավորելու ուղղությամբ: Նրանք Անդրկովկասում իրենց նախկին դիրքերը վերականգնելու նպատակով՝ օգտագործում էին մի կողմից անգլո-ֆրանսիական, մյուս կողմից անգլո-ուստական և ֆրանկո-ուստական հակամարտություններն Արևելքում: Մինչև 1809թ. երկրի զինված ուժերում բարեփոխումներ իրականացնում էին ֆրանսիացի ռազմական խորհրդականները, ապա նրանց փոխարինեցին անգլիացիները: Արդեն երկրորդ ոուս-իրանական պատերազմի ընթացքում (1826-1828թթ.) իրանական բանակը որոշակիորեն կանոնակարգվեց, և ձևավորվեցին 28 հետևակազորային գնդեր ու հեծելազորային մի քանի գորամիավորումներ: Արքաս Միրզայի մահից հետո (1883թ.) նրա ստեղծած բանակը սկսեց կազմալուծվել<sup>2</sup>: Այսուհետև 1837-38թթ. արշավանքը դեպի Հերար, 1858թ. Սերահսի հանձնումը, ինչպես նաև 1856-1858թթ. անգլո-պարսկական պատերազմը, 1861թ. Սերվի անկումը վերջնականապես կազմալուծեցին իրանական բանակը<sup>3</sup>:

Իրանում կանոնավոր բանակ ստեղծելու հերթական փորձը ձեռնարկվեց Նասր Էդ-Դիմ շահի օրոք՝ (1848-1896թթ.) նրա Եվրոպա կատարած շրջագայությունների արդյունքում: Տեսականորեն Նասր-Էդ-Դիմ շահը ողջումում էր ռազմական ոլորտի բարեփոխումները, սակայն նա չուներ ոչ միջոցներ, և ոչ էլ քաղաքական կամք այդ գաղափարը

իյարժեքոյն իրականացնելու համար: Իրանի իշխանությունները ռազմական խորհրդականներ ընտրելու հարցում այս անգամ նախապատվությունը տվեցին Ռուսաստանին: Դրան մեծապես նպաստեցին Նասր Էդ-Դին շահի անձնական համակրանքն ու կապերը<sup>4</sup>: 1879թ. ռուս սպաների հետ միասին Իրան էին հրավիրվել նաև ավստրիական ռազմական խորհրդականները՝ երկրի գինված ուժերում բարեփոխումներ իրականացնելու նպատակով: Ավստրիացի սպաներին Իրանի հարավային շրջաններում, որտեղ նահանգապետ էր Նասր-Էդ-Դին շահի որդի՝ Զիլ-Էս-Սալտանն, նախկին քանակից պահպանված գինվորական միավորումների հենքի վրա վերածնավորեցին նոր զորամիավորումներ, որոնց գինվորների թիվը հասնում էր 30.000<sup>5</sup>: Հարկ է նշել, որ Իրանում գորակոչը իրականացվում էր բոլոր նահանգներից «Բոնիշչ»-ի օրենքով<sup>6</sup>, որը Նասր-Էդ-Դին շահի օրոք մշակվել է վարչապետ (սաղր-ազամ) Միրզա Թաղի խանի կողմից: Հենց վերջինիս եռանդուն ջանքերի շնորհիվ հիմնականում սկսվեց իրանական քանակի վերակազմավորումը: Սակայն այս գործնքացը շահի կողմից դիտվում էր որպես որդու կողմից իրեն զահընկեց անելու վորձ: Այդ իսկ պատճառով, երկրում ձևավորված զորամիավորումների մի մասը կազմալուծվեց, Զիլ-Էս-Սալտանի ենթակայությունից դուրս եկան որոշ նահանգներ, իսկ Միրզա Թաղի խանը արտաքսվեց երկրից<sup>7</sup>: Վերը նշված զորամիավորումների գինվորները հաշվառվեցին արձակուրդում, իսկ զորամիավորումները գոյություն ունեին միայն թղթի վրա (հաշվառված 80 հազարանոց հետևազորային գինվորներից, որոնք սկսված էին երկրի տարբեր նահանգներում, գործնականում գոյություն ուներ միայն 40 հազարը)<sup>8</sup>: Չունենալով ընդհանուր նպատակ և միասնական կարծիք իրանական գինված ուժերի և երկրի պաշտպանության հետ կապված խնդիրների շուրջ՝ դաշարական իշխանություններին այլ քան չեր մնում, քան այս հարցում հիմնական դերակատարումը ընձեռել ցարական սպայական խորհրդականներին: Ֆինանսատնտեսական ոլորտում մենաշնորհային ազդեցություններ ձեռք բերելու հարցում գիշերով Սեծ Բրիտանիային՝ Ռուսաստանն առավել մեծ կարևորություն էր տալիս ռազմական ու քաղաքական ներքափանցմանն Իրան<sup>9</sup>:

1878թ. Ալեքսանդր II-ի և Նասր Էդ-Դին շահի միջև պայմանավորվածության արդյունքում Ռուսաստանը ձեռք բերեց

Իրանում ուազմական բարեփողիստումներ իրականացնելու քառասունամյա կոնցեսիա<sup>10</sup>: 1879թ. մայիսին ուսուական սպայական կազմը Ռուսաստանի գլխավոր սպայակույտի գնդապետ Ալեքսեյ Խվանովիչ Դոմանտովիչի գլխավորությամբ ժամանեց Իրան և նախաձեռնեց պարսկական կողակական բրիգադի ծևավորման գործընթացը, որն անվանվեց «Զերդ Մածության շահական պարսկական կողակական բրիգադ»<sup>11</sup>: Հակառակ բրիտանացիների և իրանական որոշ սպաների գործնական խոչընդուներին Դոմանտովիչը կարողացավ պատշաճ մակարդակով կազմակերպել բրիգադը և արդեն 1879թ. ամռան վերջին այն պատրաստ էր ներկայանալու շահին: Գումարտակն անմիջապես գրավեց շահի ուշադրությունը, իսկ Դոմանտովիչը դարձավ իրանական կառավարող շրջանակների առաջատար մասնակիցներից մեկը՝ շրջանցելով անգամ երկրի գինված ուժերի նախարարին: Այս իրավիճակը շարունակական էր Իրանում նաև բրիգադի հաջորդ չորս իրամանատարների ծառայության ժամանակ<sup>12</sup>: Կողակական բրիգադի հրամանատարներից էր նաև գնդապետ Վ.Ա. Կոսագովսկին, որը ծառայել է Իրանում 1894-1903թթ.: Այս իրամանատարը մյուսներից առանձնանում էր նրանով, որ ունենալով լուրջ կապեր դաշտարական կառավարող շրջանակների հետ՝ իր օրագրում հավաստի տեղեկություններ է հայտնում XIX դարում Իրանի սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակի մասին, ինչպես նաև լավագույն նկարագրում իրանական արքունիքում տիրող սերտաճած կաշառակերության և ամենաթողության վերաբերյալ<sup>13</sup>:

Միավորման սպայակույտը գտնվում էր Թեհրանում: Ուր ջոկատները «ատրյադ»՝ տեղակայված էին Թեհրանում, Խսֆահանում, Մաշհադում, Համադանում, Գիլյանում, Մազանդարանում, Արդարիլում և Ուրմիայում: Յուրաքանչյուր ջոկատ բաղկացած էր հետևակից, հրետանուց և հեծելազորից<sup>14</sup>: Բրիգադի հրամանատարը և բարձր սպայական կազմը պետք է ուսուահպատակ լինեին, իսկ ցածր սպայական կազմը հավաքագրվում էր իրանցիներից: Բրիգադը գործնականում ուսուական ուազմական կանոնակարգի օրինակով իրանական բանակի համար սպայական կադրեր պատրաստելու դարբնոց էր<sup>15</sup>: Պարսկական կողակական բրիգադ էին գորակոչվում նաև Իրանից Նախիջևանի և Երևանի նահանգներ գաղթած և հաստատված ընտանիքներից գորակոչիկներ: Պարսկական կողակական բրիգադի

կազմակերպումը ցարական կառավարության համար լավագույն միջոցն էր անմիջական շփման մեջ գտնվել շահի հետ, ինչպես նաև մշտապես քաջատեղյակ լինել շահական կառավարությունում տեղի ունեցող անցուղարձի մասին: Եվ հարկ եղած դեպքում չխուսափել վերջիններիս վրա ճնշում գործադրելու հնարավորություններից<sup>16</sup>:

1910թ. հիմնվում է բրիգադին կից դպրոցը, որտեղ պատրաստվում էին հետագայում կողակական ջոկատներում ներգրավվող զինվորները: Դպրոցում ուսանում էին ինչպես կողակական բրիգադի պարսկի զինվորների, սպաների, այնպես էլ պետական պաշտոնյաների որդիները<sup>17</sup>: Այսինքն կողակական բրիգադում ծառայություն անցնելն այդ երիտասարդներին իրական հնարավորություն էր ընձեռում ապագայում ավելի արագ և հեշտ առաջ գնալ երկրի ռազմական և քաղաքական ծառայության բնագավառներում: Ուեզա շահը և նրա կառավարության անդամներից շատերը նույնպես սովորել և ծառայել են պարսկական կողակական բրիգադում, ինչպես նաև հայազգի Մարտիրոս Խանը, որը գրալեցրել է բրիգադի շտարի հրամանատարի պաշտոնը<sup>18</sup>:

Բրիգադի ֆինանսական համակարգն ամբողջովին կենտրոնացված էր ոուսական իշխանությունների ձեռքում: Նրա բյուջեն ապահովում էին ոուսական վերահսկողության ներքո գտնվող Իրանի հյուսիսային բոլոր մաքսային կետերը: Բրիգադի գլխավոր հրամանատարը, սպայական և ենթասպայական կազմը վարձատրվում էին ինչպես Ս. Պետերբուրգից, այնպես էլ որպես ռազմական խորհրդականներ՝ իրանական կառավարությունից: Այսպիսով ոուսական սպայական կազմն ուներ հատուկ կարգավիճակ, իրանահպատակ սպաները (մոտ -300 հոգի), թեև ոուս սպաների նկատմամբ բավականին ցածր էին վարձատրվում, սակայն բրիգադից դուրս գտնվող իրենց ընկերների համեմատ ավելի նախապատվելի վիճակում էին: Միավորման բարձր սպայական կազմում ընդգրկված կողակները գտնվում էր ոուսական կովկասյան բանակի անմիջական ենթակայության տակ: Նրանց հիմնական խնդիրն էր հանդիսանում իրանում ոուսական ազդեցության ընդլայնում<sup>19</sup>: Ոուս պաշտոնյաները կողակներին մեկուսացրել էին պարսկական միջավայրից, մտավոր կյանքից և մշակույթից: Կազակական զորամիավորումների ներսում գործածվող լեզուները բուրքերենն ու ոուսերենն էին: Օրը երեք անգամ զինվորները

պարտավոր իհմ թուրքերնով բղավել «Hurah Emperor, çok sağ ol shah», «Կեցցե՛ կայսրը, երկար կյանք շահին»<sup>20</sup>: Վերջիններիս իհմնական գործառույթն էր շահական կառավարության և օտարերկրյա դիվանագիտական առաքելությունների անվտանգության պահպանությունը: Մեծ է նաև պարսկական կողակական բրիգադի գործունեության կարևորությունը 1905-1911թթ. իրանական Սահմանադրական հեղափոխության տարիներին: Սակայն խնդիրը հանակողմանի ներկայացնելու անհարաժեշտությունը և տվյալ աշխատության սահմանափակ ծևաչափը հնարավորություն չեն ընծեռում առավել մանրամասն անրադառնալ այդ հարցին: Այս առումով անհրաժեշտ ենք համարում նշել, որ բրիգադը բացասարար հանդես եկավ Իրանի հեղափոխական և լիբերալ էլեմենտների նկատմամբ՝ աջակցելով Ռուսաստանի ստատուս-քվին և իրականացրած քաղաքականությանն Իրանում, ինչպես նաև դաջարական իշխանությունների կողմից երկրում առաջացած շարժումը ուղղակիորեն ճնշելու դիրքերից<sup>21</sup>: Թեև վերապահումով, բայց պետք է համաձայնել, որոց հեղինակների այն պնդմանը, որ կողակական բրիգադը սկսած 1880-ական թթ. ընդունակ մինչև առաջին համաշխարհային պատերազմ և Ռեզա շահի ռազմական քարեփոխումների ժամանակահատվածը (1921թ.), հանդիսանում էր իրանական բանակի կանոնավոր միակ ռազմական միավորումը, որի կազմում 1906թ. հաշվառվում էր 4 գումար՝ երկուական հեծելազորային վաշտերով և 1 հետևակային գումարտակ<sup>22</sup>:

Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում՝ 1917թ. պարսկական կողակական բրիգադը ռուսական իշխանությունների պնդմամբ վերաճեց դիվիզիայի: 1921թ. հեղաշրջումից հետո բրիգադի հենքի վրա ծևավորվեց իրանական միասնական բանակը<sup>23</sup>:

Իրանի և Զարական Ռուսաստանի կառավարող շրջանակների համար կողակական գործոնը երկկողմ շահարկումների առարկա էր: Իրանական կառավարությունն անընդհատ օգտագործում էր «կողակական խնդիրը»՝ Ռուսաստանից տարբեր հարցերում զիջումներ ստանալու նպատակով: Ռուսաստանն էլ իր հերթին, իրանական բյուջեի հաշվին ավելացնելով կազակների թիվը և ուժեղացնելով նրանց ռազմական պատրաստվածությունը, օգտագործում էր վերջիններիս ինչպես իրանական կառավարության վրա ազդելու, այնպես էլ Իրանում օտար այլ ազդեցությունների դեմ պայքարում:

XIX դարի վերջին և XX դարասկզբին եվրոպական տիայի բանակ ստեղծելու անհաջող փորձերն ունեին մի շարք պատճառներ: Բանակի կազմավորման գործընթացն իրականացվում էր առանց հաշվի առնելու երկրի ներսում առկա ծանր սոցիալ-տնտեսական իրավիճակը, ինչն իր ուղղակի ազդեցությունն էր ունենաւ բանակի վրա: Ակնհայտ է, որ դաջարական կառավարությունը գրեթե ամրողովախն կորցրել էր իր քաղաքական և տնտեսական կենսունակությունը: Եկրում առկա խորը սոցիալ-տնտեսական և քաղաքական ճգնաժամի պայմաններում ուսական իշխանությունները փորձում էին առավելագույնս ամրապնդել իրենց քաղաքական և ուսմական դիրքերն՝ ի հակակշիռ Սեծ Թրիտանիայի՝ Իրանում ունեցած տնտեսական հզորության:

NAZELY NAVASARDYAN  
(IOS)

THE COSSACK BRIGADE AS RUSSIAN EMPIRE'S INFLUENCE LEVER  
IN QAJAR PERSIA

Until 19<sup>th</sup> century Iranian army mainly consisted of nomadic tribes' cavalry units that have been gathered in the provinces before the wars. The next in turn attempt to create the regular army in Iran has been done by Shah Nasr Al-Din (1848-1896). Qajar authorities that time gave the preference to Russian military advisers. Greatly in was the result of Nasr Al-Din's personal sympathy with Russia. Being backward of Great Britain in acquisition of monopole influences in financial-economic sphere, Russia gave the importance to military and political penetration in Iran.

According to the arrangement of 1988 between Alexander II and Shah Nasr Al-Din Russia acquired military reforms realization concession for 40 years in Iran.

In May 1879 the Russian military officers' personnel arrived to Iran and undertook the formation of Persian Cossacks brigade.

The factor was the subject of double-sided speculations. The Iranian government always used "Cossack factor" trying to receive concessions from Russia. In its turn Russia utilized that factor in putting pressures on Iranian government as well as in struggle with other foreign influences in Iran.

In the end of XIX and the beginning of XX century the failures of creation of European type army in Iran had some causes. The process of formation was going on without the consideration of heavy socio-economic situation in the country. The Qajar government completely has lost its political and economic viability.

Using the deep socio-economic and political crisis in Iran Russian authorities tried to strengthen the political and military positions in counterbalance of Great Britain's economic power in Iran.

## ԾԱԼՈՎԱԿՈՂԻՆԵՐԻՆԵՐ

1. Персия: Обзор вооруженных сил. С приложением очерка экономического и политического положения по данным к 1 июля 1923г. Составил Ф.П.Льзов. Издание Развеездывательного Отдела Штаба Р-К. К. А., М., 1923, с. 1-2.
2. Рихсиева Н. Р., К истории иранских казачьих частей (по архивным материалам) Востоковедение (литературоведение, история), сборник научных трудов N564, Ташкент, 1978, с. 129.
3. Фируз Казем-Заде, Борьба за влияние в Персии. Дипломатическое противостояние России и Англии. М., 2004, с. 137-138.
4. Նույն տեղում, էջ 138-139:
5. Персия: Обзор вооруженных сил, նշվ. աշխ., էջ 1:
6. Ըստ «Բոնիշե»-ի օրենքի, կրկի նստակաց բնակչությունը Սերկայացնում էր գորակոյի զինվորներ կամ ծառայության դիմաց վճարում համապատասխան հարկ: Յուրաքանչյուր շրջանի կամ գյուղի համար սահմանված էր որոշակի գորակոյի հիմքի թվաքանակ: Քաղաքային բնակչությունն, ավատատերերը և հոգևորական դասը չեր գորակովում: Քանի որ դաշտարական հրամում նարդահամար չեր անցկացվում, հարուստ ավատատերերը իրենց մոտ աշխատող գյուղացիներին հիմնականում տարրեր միջոցներով ազատում էին ծառայությունից: Այսպիսվ, գորակոյի հիմնական ծանրությունը ընկնում էր այն աղքատ և շրաբոր գյուղացիների վրա, որոնք ինքնուրույն շին կարող ծառայության դիմաց հարկ վճարել:
7. Персия: Обзор вооруженных сил, նշվ. աշխ., էջ 2:
8. Из тегеранского дневника полковника Косаговского В.А., Академия наук СССР Институт Востоковедения М., 1960, с. 135.
9. Մանրամասն տե՛ս Նավասարդյան Ն., Անգլ-պուսական գործոնը և Խրանի տնտեսական ճգնաժամն առաջին աշխարհամարտից առաջ, Մերձավոր Արևելք, Եր., 2006, էջ 115-118:
10. Donald N. Wilber Riza Shah Pahlavi: The Resurrection and Reconstruction of Iran. Hicksville, New York, 1975, p. 6-7.
11. Выборнов М., Персия и ее вооруженные силы, М-Лен., 1928, с. 53.
12. Фируз Казем-Заде, с.139-140, Из тегеранского дневника, с. 3-5, с. 133-137.
13. Մանրամասն տե՛ս Իз тегеранского дневника полковника Косаговского В.А. с. 135.
14. Donald N. Wilber Riza Shah Pahlavi, նշվ. աշխ., էջ 7:
15. Բայրության Վ., Իրանի պատմություն Եր., 2006, էջ 489-490:
16. Donald N. Wilber Riza Shah Pahlavi: նշվ. աշխ., էջ 6-7:
17. Նույն տեղում, էջ 8:
18. Рихсиева Р., К истории иранских, նշվ. աշխ., էջ 132, Donald N.Wilber, Riza Shah Pahlavi p. 8-13.
19. Выборнов М., Персия и ее, նշվ. աշխ., էջ 54-55:
20. Donald N. Wilber Riza Shah Pahlavi, նշվ. աշխ., էջ 7:
21. Մանրամասն տե՛ս ՝ P. Sykcs, նշվ. աշխ., էջ 132, Рихсиева Р., К истории иранских, նշվ. աշխ., էջ 132-135:
22. Персия: Обзор вооруженных сил, նշվ. աշխ., էջ 2:
23. Выборнов М., Персия и ее вооруженные силы, М-Лен., 1928, с. 56.

## ՉԱՎԻԿՅԱՆ ՊԵՏՐՈՍ

(ԵՊՀ)

### ԹՈՒՐՖԻԱՅՈՒՄ ԿՈԽԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԳԵԼՍՄԱՆ ՀԱՐՑԻ ԾՈՒՐՉ

Թուրքիայի III-րդ հանրապետությունում իշխող Արդարություն և Զարգացում կուսակցության փակման նպատակով Սահմանադրական դատարան ներկայացրած (այսուհետ՝ ՍԴ) հանրապետության գլխավոր դատախազի դիմում-մեղադրականը՝ քաղաքագիտության պատմության մեջ անհախաղեա երևույթ էր: Գլխավոր դատախազը իր մեջադրականում<sup>1</sup> պահանջում էր աշխարհիկ պետության հիմքերի խարիսման գործունեության կենտրոն դարձած կուսակցությունը փակել, իսկ նրա 71 անդամներին, այդ թվում հանրապետության նախագահին<sup>2</sup>, վարչապետին և 40 պատգամավորներին գրկել կուսակցական ակտիվ կյանքից, իինգ տարի ժամկետով<sup>3</sup>, այն դեպքում, եթե նա վայելում էր մեծ ժողովրդականություն և ստացել էր վերջին խորհրդարանական ընտրություններում ժողովրդի ծայլերի 46.6 %-ը՝ անընդմեջ ընտրվելով<sup>4</sup>: Այս փաստը առանձին մասնագետների կողմից որակվեց որպես դատական հեղաշրջում քաղաքական համակարգում<sup>5</sup>:

Ըստ մեզ Թուրքիայում 1960թ. և 1982թ. իրականացված գինը կուրական հեղաշրջումներին հաջորդող սահմանադրությունների կառուցած պետական իշխանական մարմինների լիազորությունները նպաստավոր չեն եղել կուսակցական համակարգի կայուն զարգացման համար: Քանի որ 1961թ. սահմանադրության օրոք՝ 6 իսկ 1982թ. սահմանադրության օրոք 16 կուսակցություններ փակվեցին<sup>6</sup>:

Այժմ քննարկենք բոլորական երեք սահմանադրությունները:

1924թ. սահմանադրության օրոք գործող Ազգային Ժողովը (այսուհետ՝ ԱԺ) ժողովրդի իշխանության միակ ներկայացուցիչն էր: Սահմանադրությամբ չէր նախատեսվել օրենքների հակասահմանադրականությունը դատական կարգով վիճարկելը և տվյալ պայմաններում ընդունված օրենքների սահմանադրականությունը երաշխավորված չէր<sup>7</sup>: I-ին հանրապետության և միակուսակցական, և քաղմակուսակցական<sup>8</sup> շրջանում կիրառված մեծամասնական ընտրակարգի արդյունքում

խորիրդարանում մեկ կուսակցության մեծամասնության համակարգը աշխատում էր գործադիրի գերակայությամբ<sup>9</sup>:

Հիշեցնենք, որ 1950թ. Աքարօւրքի հիմնած Ժողովրդահանրապետական կուսակցությունը ընդհանուր ընտրությունների արդյունքում կորցնելով իշխանությունը՝ հայտնվել էր ընդհիմադիր շարքերում: 1924թ. սահմանադրության օրոք կուսակցությունները գործել են «Սիությունների մասին օրենքի» և «Քաղաքացիական օրենսգրքի» շրջանակներում ու փակվել են՝ և նախարարների խորիրդի և՝ դատարանների կողմից, այսինքն՝ քաղաքական իշխանությունները վճռորոշ դեր են կատարել այդ հարցում:

1960թ. զինվորական հեղաշրջմանը<sup>10</sup> հաջորդող 1961թ. սահմանադրությունը՝ ի հակադրումն 1924թ. սահմանադրության պետիշխանական մարմիններից թուացրեց օրենսդիրն ու գործադիրը և ձևավորեց լիարժեք դատական համակարգ՝ ՍԴ-ով հանդերձ:

Օրենսդիր մարմինը դարձավ երկապատճեն՝ բաղկացած լինելով՝ Ազգային Ժողովից և Սենատից<sup>11</sup>, այսպիսով բարդացվեց օրենքների ընդունման գործընթացը (1961/h.92): Համաժողովրդական քվեներով ընտրվում էին ԱԺ-ի (հ.67) 450 և Սենատի 150 անդամները՝ բացի Սենատի այն 15 անդամներից, որոնք նշանակվում էին հանրապետության նախագահի կողմից (1961/h.70):

Այս վերջին կետը կարևոր է այնքանով, որ 1961-1980թթ. ընտրված երեք նախագահներից, որոնք նախկինում բարձրաստիճան զինվորականներ էին, դրանցից երկուսը ընտրվել են հանրապետության նախագահի կողմից նշանակված սենատի անդամներից<sup>12</sup>, իսկ մեկը՝ ազգային միասնության կոմիտեի անդամ լինելով՝ սահմանադրությամբ դասվել էր Սենատի բնական անդամների շարքին (1961/h.70): Այլ խոսքով, ԹԱՄԾ-ում ներկայացված կուսակցություններին պարտադրվել է ընտրել նախկինում բարձրաստիճան զինվորականներին՝ հակառակ խորիրդարանի անող դիմապրության: Իսկ 1980թ. նախագահական ընտրությունների 6 ամիս ծգձգումը դարձավ այն պատճառներից մեկը, որը զինվորական հեղաշրջմամբ վերջ դրեց Ա-րդ հանրապետությանը<sup>13</sup>:

Գործադիրը իր լիազորությունները կիսում էր գլխավոր սպայակույտի (հ.110), ազգային անվտանգության խորիրդի (հ.111), ինքնավար հանրային հաստատությունների (հ.120-121)<sup>14</sup>,

պետականավորման ինստիտուտի (հ.129) և հաշվիչ պալատի (հ.127-128) հետ: Այս շրջանի գերիշխող Արդարություն կուսակցությունը բողոքում էր այս իրավիճակից և պահանջում փոփոխություններ կատարել<sup>15</sup>:

Սահմանադրության h.114-ով<sup>16</sup> կառավարության բոլոր գործարքները դատական կարգով վիճարկման ենթակա էին:

Քաղաքական թևոացվածությունը, քաղաքական ահաբեկումները պատճառ դարձան 1971թ. մարտի 12-ի զինվորական միջամտությանը<sup>17</sup>: Երկու տարի տևող անցումային շրջանում կոալիցիոն կառավարություններ ծևավորվեցին, իսկ սահմանադրությունում կատարվեցին այնպիսի փոփոխություններ, որոնք ուղղված էին և՝ գործադիրի ուժնացմանը և՝ զինվորականների՝ քաղաքական համակարգում ամրապնդմանը<sup>18</sup>: Այս փոփոխություններից էին բխում համալսարանների ինքնավար կարգավիճակի գիծումները և պետական ռադիո-հեռուստաշնչերության անկողմնակալության վերացումը<sup>19</sup>:

1961թ. սահմանադրությունը ենթակա 1949թ. Գերմանիայի սահմանադրության օրինակից՝ որդեգրեց «մարտական ժողովրդավարության»<sup>20</sup> սկզբունքները, ամրագրեց ինչպես կուսակցական և քաղաքական կյանքի մասին երաշխիքներ, այնպես էլ սահմանափակումները<sup>21</sup>:

Սահմանադրության 56-րդ հոդվածով կուսակցությունները համարվում էին քաղաքական կյանքի անքածան տարրեր, ծևավորվում էին առանց նախնական թույլտվության և դրանց անդամակցելը՝ ազատ էր: 57-րդ և 19-րդ հոդվածներով կուսակցությունները պարտավորվում էին իրենց գործունեությունը համապատասխանեցնել աշխարհիկ հանրապետության սկզբունքներին, այդ դեպքում կփակվեին ՄԴ-ի կողմից<sup>22</sup>:

Այս շրջանի ամենակարևոր օրերգումն է 1965թ. ընդունված «քաղաքական կուսակցությունների» մասին օրենքը<sup>23</sup>, որը աշխարհում առաջիններից էր<sup>24</sup>: Համամասնական ընտրակարգի և սահմանադրության ազատական<sup>25</sup> ոգու արդյունքում խորհրդարան մտավ առաջին սոցիալիստական կուսակցությունը՝ Թուրքիայի քանվորական կուսակցությունը՝ 1965թ., որը փակվեց 20.05.1971թ., զինվորական միջամտությունից հետո, երեք ամսվա ընթացքում:

1982թ. III-րդ հանրապետության սահմանադրությունը ծևավորվեց «պետական իշխանությունը թուլացնող» II-րդ հանրապետության

բննադատականների շուրջը<sup>26</sup>: Սակայն քաղաքական կուսակցությունները ոչ մի դեր չխաղացին այս սահմանադրության ստեղծման հարցում, քանի որ լուծարվել էին զինվորական իշխանության կողմից<sup>27</sup>: Քաղաքական կուսակցությունների դեկավար դեմքերը և խորհրդարանականները քաղաքական գործունեությունից գրկվեցին 5 և 10 տարի ժամկետով (անցումային հ.4), սույն արգելքը վերացվեց 1987թ. հանրարկելի արդյունքում: Սակայն արգելքի վերացումը չնպաստեց քաղաքական կյանքի կայունացմանը, որի վառ ապացույցն է քացի առաջինից, հաջորդող ընտրությունների արդյունքում ոչ մի կուսակցության միայնակ իշխանության չգալը, մինչև 2002թ. ԱԺ-ի ընտրությունները: Չմոռանանք նշել, որ հանրապետության մասշտարով 10%-ոց ընտրապատճեցը ևս նպաստեց դրան:

Սահմանադրությունը օրենսդրական գործընթացը արագացնելու նպատակով վերականգնեց միապալատ խորհրդարանական համակարգը, իսկ գործադիր իշխանության ոլորտում անհամեմատ ընդլայնեց հանրապետության նախագահի լիազորությունները<sup>28</sup>: Ուշադրության է արժանի հանրապետության նախագահի լիազորությունների շարքում, հատկապես դատական իշխանության ոլորտին առնչվողները, որի շնորհիվ նա որոշիչ դեր էր կատարում քաղաքական համակարգում: Նա նշանակում էր ՍԴ-ի բոլոր անդամներին, դատավորների և դատախազների խորհրդի բոլոր անդամներին, պետական խորհրդի անդամների 1/4-ին, գլխավոր դատախազին և տեղակալին (1982/ հ.104): Անցած գումարման խորհրդարանում մեծամասնություն կազմող իսլամամետ ԱԶ կուսակցության նախագահի թեկնածուն ցանկալի չէր քենալական «քյուրոկրատական էլիտայի» համար, որի արդյունքում նախագահական ընտրությունները տապալվեցին: Անցկացվեցին արտահերթ խորհրդարանական ընտրություններ, որի արդյունքում ԱԶ կուսակցությունը ստանալով քվեարկողների ձայնների 46.6 %-ը՝ իշխանության եկալ՝ իր դիրքերը էլ ավելի ամրապնդելով: Իրականացված նախագահական ընտրություններում ընտրվեց այս կուսակցության նույն թեկնածուն, թեկուզ մի քանի ամիս ուշացումով<sup>29</sup>:

Գործող սահմանադրության ընթացքում զինվորականները զերծ շմնացին քաղաքական միջամտություններից՝ 1997թ.<sup>30</sup> և 2007թ.<sup>31</sup>: Առաջինի դեպքում դա լուրջ հարված հասցրեց իշխանության պահպա-

Առողջական «Բարօրություն» կուսակցությանը, որը այդ ժամանակվա կուալիցիոն կառավարության մեծամասնական տեղ էր զբաղեցնում: Մեղադրվեց աշխարհիկ պետության հիմքերը խարիսկելու համար, փակվեց ՍԴ-ի կողմից: «Բարօրություն» կուսակցության ժառանգորդ «Արդարություն և զարգացում» կուսակցությունը այսօր իշխանությունում է: ԱԶ-ն, երբ նախաձեռնեց 1982թ. սահմանադրությունը նորով փոխելու և պատրաստվեց առաջին տարբերակը հանրության դատին ներկայացնելու նախաձեռնությամբ<sup>32</sup>, լուրջ հակագրեցության հանդիպեց ԺՀ կուսակցության կողմից: Այն իրականացման դեպքում հոչակվելու էր հանրապետության երկրորդ քաղաքացիական սահմանադրությունը՝ 1924թ. սահմանադրությունից հետո:

1982թ. սահմանադրությունում կատարված թվով 13 փոփոխությունները չեն նպաստում քաղաքական կուսակցական համակարգի կայուն զարգացմանը: Այստեղ այլևս հրամայական է դարձել ոչ միայն զաղափարախոսությունից անկախ՝<sup>33</sup> սահմանադրություն ունենալը, այլև ընկալել աշխարհիկության՝<sup>34</sup> սկզբունքը՝ քաղմականիկ և քաղմակրոն հասարակության կյանքի միջազգային չափանիշներին համապատասխան:

**PETROS CHAVIKYAN  
(YSU)**

**ON THE ISSUE OF BAN OF THE POLITICAL PARTIES IN TURKEY**

The Turkish Attorney General's petition with respect to ending the activities of Justice and Development, the country's ruling party, is the first such case in the history of political science.

In the republican era numerous parties closed. A total 24 parties were closed following the Constitutional Court's relevant rulings. With this article, we will attempt to analyze the case of party closings with the framework of power relations created by the past two constitutions.

In our view, such cases are the manifestation of the power struggle at different levels, between 'bureaucratic oligarchy' and the opposing forces. We also will draw attention to concepts militant democracy and jurisdocracy.

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. 'İddianame', Radikal, 16.03.2008.
2. Ըստ 1982/h.101-ի հանրապետության նախագահ ընտրվելուց հետո դադարում է նախագահի կողմանցական պատկանելիությունը և ազգային ժողովի անդամությունը:
3. 'İddianame', s.162, Radikal, 16.03.2008.
4. [www.tuik.gov.tr/PreHaberBultenleri.do?id=1898](http://www.tuik.gov.tr/PreHaberBultenleri.do?id=1898)
5. Neşe Düzçel, 'Doç. Dr. Serap Yazıcı: Bu, yargıçlar devleti kurulması süreci', [www.taraf.com.tr](http://www.taraf.com.tr), 25.5.2008.
6. 13.03.2003-ի դրույամբ.... 'Türkiye'de 44 yılda 24 siyasi parti kapatıldı', [www.cnnturk.com](http://www.cnnturk.com), 16 Kasım 2007.
7. Ergun ÖZBUDUN, *Türk Anayasa Hukuku*, Ankara, Yetkin, 2000, s.39.
8. Քաջակուսակցական համակարգի սկզբունքը է ընդունվում 1946թ., եթե ս/թ. հունվարին հիմնվեց «Ժողովրդավարական» կուսակցությունը A.E.TURAN, *Türkiye'de Seçmen Davranışı*, İstanbul, 2004, s. 13.
9. K. H. YAVUZ, *Türkiye'de Siyasal Sistem Arayışı ve Yürütmeyenin Güçlendirilmesi*, Ankara, Seçkin, 2000, s.421.
10. 1960թ. զինվորական հեղաշրջման առյունքում տապալված ժողովրդավարական կուսակցության բազմարիվ վարչային դեմքեր դատվեցին: Հակասահմանադրական օրենքները ընդունելու մեջադրանքով վարչապետն ու 2 նախարարներ մահապատճի ենթարկեցին օրվա նախագահը դատավար հայրենայականության մեջադրանքով (1961/h.41): YAVUZ, 62վ. աշխ., էջ 412:
11. Աժ-ի անհան կարող էր դառնալ 30 տարին լրացած յուրաքանչյուր բուրք, իսկ Սենատի անհան քարերագոյն կրորույամք 40 տարին լրացած անձիք, կրորույան սահմանափակումը յէր տարածվում միայն հանրապետության նախագահի ըշանակած անդամների համար (1961/h.72):
12. İsmet Demirdögen-Erol Tuncer, 'Sezer'li 7 yıl', Radikal, 22/28.04.2007.
13. 1961/h.97-ով սահմանված է հանրապետության նախագահի լիազորությունները...
14. «Համալսարանները» ինքնավարության մասին, (h.120): «Ռայֆո, հեռուստատեսության և լրատվական գործակալությունների» անկողմնակարգության սկզբունքը (h.121):
15. Ergun ÖZBUDUN, 62վ. աշխ., էջ 45:
16. Երկարաւանի խորհրդարանը, ընտրություններում համամասնական ընտրակարգի կիրառությունը և սահմանադրական դատարանի պահանջները 1950-60 թթ. ընդրիմանդր շարքերը գրաված ժողովրդավարական կուսակցության ծրագրերում տեղ էին գտնել Ali E. TURAN, 62վ. աշխ., էջ 48.
17. Talat TURHAN, *27 Mayıs 1960'tan 28 Şubat 1997'ye*, c. 1, İstanbul, Sorun, 2001, s.420.
18. Kemal GÖZLER, *Türk Anayasa Hukuku*, Bursa, Ekin, 2000, s. 90.
19. Փոփոխություններ կատարվեցին՝ h.64, 61, 120, 121, 11, 119, h.136, 140 Kemal GÖZLER, s.90.
20. Ֆաշիստականության, կոմունիստականության նման ժողովրդավարության սպառնացող զաղափառների դեմ ակտիվ պայքար նախատեսող սահմանադրական տեսակետ: Տերմինը առաջին անգամ օգտագործվում է Karl LOEWENSTEIN, "Militant Democracy and Fundamental Rights I". The American Political Science Review, Vol:XXXI, No:3, June 1937, p.22; H Yusuf Çevki HAKYEMEZ, *Militant Demokrasi Anlayışı ve 1982 Anayasası*, Ankara, Seçkin, 2000, s. 24.
21. Քաղաքական կուսակցություններին սահմանադրական երաշխիքներ տվող երկրների շարքում Թուրքիան հաջորդում է Խոսհիային, Գերմանիային, Ֆրանսիային HAKYEMEZ, 62վ. աշխ., էջ 140-150:
22. Քեմապական պետությունը սպառնալիք էր դժուարկում հակասաշխարհիկ շարժումները, ազգային անջատականությունը և կոմունիզմը..M. BOZDAĞ, *Türkiye'de Siyasal Parti Kapatma*, Ankara, 2004, 263 s.

23. 13.07.1965-648 püjäväijäri oikeus:
24. Արգեմանինա (1956) Թուրքիա (1965) D.PERİNÇEK, *Anayasa ve Partiler Rejimi*, İst., 1985, s. 31-32.
25. Թուրք սահմանադրազետների ընդհանուր տեսակետը՝ 1961 և 1982 pp. սահման համեմատելիս:
26. Kemal GÖZLER, Եշվ. աշխ., էջ 91:
27. Bülent TANÖR-Necmi YÜZBAŞIOĞLU, *Türk Anayasa Hukuku*, İstanbul, Beta, 2005, s. 9-10.
28. Kemal GÖZLER, Եշվ. աշխ., էջ 100:
29. Խոսքը Արդիակ Գյուղի մասին է...Մինչև նախորդ գումարնան (XXII) խորհրդարանի լիազորությունների ավարտը ընդունվեց և հանրաքվեի միջոցով հաստատվեց օրենքը, որի համաձայն հանրապետության նախագահն այլև պիտք է ընտրվեր ժողովրդի կողմից (Radikal, 22.10.2007).
30. Talat TURHAN, *27 Mayıs 1960'tan 28 Şubat 1997'ye*, İstanbul, Sorun, 2001, s.423-425.
31. 'Genelkurmay Basın Açıklaması', 27 Nisan 2007, No:BA-08/07 [www.tsk.mil.tr](http://www.tsk.mil.tr)
32. 'Özbudun başkanlığındaki komisyon tarafından hazırlanan Anayasa taslak metni', Radikal, 12.09.2007.
33. Yasemin Arpa, 'Hukukçular 'Kemalist Anayasa'yı tartışıyor', 30.07.2007, NTV-MSNBC, [www.sodev.org.tr](http://www.sodev.org.tr)
34. Ergun Öz budun, 'İki laiklik anlayışı (1)/(2)', Zaman, 26/27.05.2008.

## ՍՏԵՓԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ

(ԳՊՀ)

### ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍՈՒՄ «ԱԴՐԲԵԶԱՆԻ» ԷԹՆԱՆՎԱՆ ԳՈՐԾԱՌՄԱՆ ՀԱՐՑԻ ԾՈՒՐՉ

Տասնամյակներ շարունակ, աղրբեջանական պատմագիտական միտքը (Զ. Բունիաթով, Ֆ. Մամեդովա, Ս. Մամեդով, Ռ. Մելիքով, Ա. Սումբատզադե և ուրիշներ) Բուն Աղվանի և Շիրվանի պատմությանը նվիրված աշխատություններում խնդարյուրելով ժամանակակից աղրբեջանական ժողովրդի կազմավորման էթնիկական պատմությունը, սկսեցին «աղրբեջանցիներ», «աղրբեջանական ցեղեր», կամ «աղրբեջանական ռասսա» փնտրել ամենուր՝ փորձելով «ապացուցել», թե իրը աղրբեջանցիները Արևելյան Այրկովկասում ապրել են վաղնջական ժամանակներից: Մասնավորապես, աղրբեջանցի պատմաբանների մոտ «քյուր» ըմբռնումների և ներկա քաղաքական շահարկումների տեղից է տվել XVIII դ. ոսւսական և պարսկական վավերագրերում Արևելյան Այրկովկասի պարագայում հաճախակի հոլովկող Իրանի «Ասրպատական-Ազարքայջան» հարկային, վարչական պայմանական տերմինի հանգամանքը, որին փորձում են տալ էթնիկ իմաստավորում և դրա տակ ներկայացնել «միասնական էթնո-պատմամշակութային գոտի, որտեղ ապրում է մեկ ժողովորդ՝ աղրբեջանցի»<sup>1</sup>: Սակայն սկզբնադրյուրների հաղորդած տեղեկությունների համայիր քննությունը ցույց է տալիս. վեճի առարկա չէ այն փաստը, որ աղրբեջանցի իրնանվանմամբ ժողովրդի կազմավորումն ընթացել է նոր ժամանակներում, իսկ «Ասրպատական-Աղրբեջան» տերմինը քացառապես եղել է վարչա-քաղաքական երկրանուն և չունի էթնիկ որևէ հիմք<sup>2</sup>:

Գիտությունը վաղուց ի վեր պարզել է, որ Արևելյան Այրկովկասի տարածքում մինչև 1918թ. բնավ գոյություն չի ունեցել «Աղրբեջան» անվամբ պետություն, առավել ևս՝ «աղրբեջանցի» էթնանուն, իսկ XI-XVII դդ. ողջ ընթացքում Արևելյան Այրկովկաս ներբափանցած քյուրքալեզու բնակչության տարրեր հատվածներն ու ցեղերը մինչև XXI. սկզբները կոչվել են տարրեր էթնանուններով՝ փաղարներ,

շահսևաններ, ջինլիններ, ջուանշիրներ, թյուրքեր, թաթարներ, կովկասյան թյուրքեր և այլն<sup>3</sup>, որոնք միասնական էրնոս չեն և չեն հավակնել հավաքական էքնանվան, առավել ևս «աղբեջանցի» էքնիկ անվան:

XVIII դարի երկրորդ կեսին երկրամասում ճանապարհորդած գիտնականները (Սամուել Գմելին, Ֆրիդրիխ Մարշալ ֆոն Բիբերշտեյն և ուրիշներ), հետևելով իրենց նախորդ ճանապարհորդներին, իրենց աշխատություններում թյուրքալեզու վերոհիշյալ էքնոնինների փոխարեն ավելի հաճախակի սկսում են գործածել թաթար անունը<sup>4</sup>: Թաթար անվանումը շարունակեց գործածվել նաև հետագայում՝ Այսրկովկասում Ռուսաստանի տիրապետության հաստատման շրջանում: Ըստ կովկասագետ Ստեփան Զելինսկու (Սկրտչյան)<sup>5</sup> թարվի նահանգում տարաբնակ թյուրքալեզու էքնիկ խմբերի մեծագույն մասը XIX դարի երկրորդ կեսին դեռևս նստալյաց չէր դարձել և տակավին պահպանում էր քոչվորական ապրելակերպը: Նրանք զրադշուն էին անասնապահությամբ և թափառախմբերով տեղափոխվում էին տեղից-տեղ<sup>6</sup>: Հարկ է նշել, որ տարաբնակ թյուրքալեզու այդ ցեղերի շրջանում, XIX դ. սկզբներին դեռևս միասնական լեզվի ու էքնիկ միատարր անվան բացակայությունը չեն ժխտում աղբեջանցի ազգագրագետներից ունանք: Է. Քերիմովի խոսքերով՝ «Ժողովրդի (իմա՝ թյուրքալեզու բնակչության - Գ. Ռ.) և լեզվի անվանման համար XVIII դ. և XIX դ. սկզբներին դեռևս գոյություն չունեին միասնական տերմիններ»<sup>6</sup>:

XIX դ. երկրորդ կեսին վերաբերող ռուսական վիճակագրական տեղեկագրերում, պաշտոնական փաստաթղթերում ու վավերագրերում «թյուրքեր» և «կովկասյան թյուրքեր» տերմինների կողքին առավել գործածական է դառնում թաթար տերմինը, որն աստիճանաբար դառնում է այստեղ ներթափանցած թյուրքալեզու ցեղերի համար մեկ ընդհանուր հավաքական էքնանվանում: Օրինակ, կովկասագետ Ն. Զեյդիջը երկրամասի թյուրքական ցեղերի նկատմամբ բացառապես օգտագործում է թաթար անվանումը<sup>7</sup>: Արդեն XIX դ. վերջի պաշտոնական զրականությունում տիրապետող է դառնում ավանդական դարձած թաթար անվանումը: Ս. Պետերբուրգում 1890թ. լույս տեսած «Հանրագիտարանային թառարանում», ի թիվս կայսրության այլ թյուրքական և մահմետական ժողովուրդների, թաթար է անվանվում նաև Կովկասի թյուրքալեզու բնակչությունը<sup>8</sup>: Թարվի նահանգին վերաբերող 1897թ. համառուսաստանյան առաջին

մարդահամարի նյութերում «քուրք-բաթարական» անունը կրող սյունակում թյուրքակեզու բնակչությունը հիմնականում նշված է բաթար անվամբ<sup>9</sup>: Միայն XX դ. սկզբներին վերջիններիս սկսեցին անվանել «անդրկովկասյան բաթարներ»<sup>10</sup>, որպեսզի Կազանի և Կրիմի բաթարներին տարբերակեն Այսրկովկասի բաթարներից, թեպետ ազգային պատկանելության դեպքում Կովկասի մահմեղականներն իրենց հազվադեպ են անվանել բաթար: Նրանց շրջանում առավել գործածական էր թյուրք, կովկասցի, կամ մուսուլման ինքնանվանումները<sup>11</sup>:

Ակնհայտ է, որ տարաբնակ խմբերի մեջ ընթացող էքնիկական գործնքացների և էքնանունների կայացման ընթացքում լեզուն ունի ոչ միայն կարևորագույն էքնոմիական գործոն, էքնիկ ինքնուրյան կարևոր բաղադրիչ է, այլև արտահայտում է այս կամ այն ժողովրդի էքնոգենետիկ առանձնահատկությունները<sup>12</sup>: Այսրկովկաս ներթափանցած թյուրքական և բաթար-մոնղոլական քոչոր բափառական ցեղերի լեզուներն անվանվել են թյուրք-բաթարական բարբառներ կամ լեզուներ<sup>13</sup>, և տիրապետող են եղել եռալեզու տարբերակով<sup>14</sup>, ինչը դրսւորվել է բաթարներն՝ որպես թյուրքներենի խառնուրդ<sup>15</sup>, բարբառային բաթարներն և թյուրքներեն<sup>16</sup>: Հարցին լավագիտակ մասնագետներից արևելացին Վ. Բարտոլդը թուրք ժողովրդի էքնոգենետիկ հարցերին նվիրված աշխատությունում առաջ է քաշում այն դրույթը, համաձայն որի՝ XIII դ. թյուրքերի վրա մեծ ազդեցություն է ունեցել ծևավորվող բաթար-մոնղոլական կայսրությունը<sup>17</sup>: Ըստ Բարտոլդի, նախկինում բաթարները եղել են այնքան հզոր, որ թյուրքակեզու ժողովուրդները, բացառությամբ օսմանների, ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Արևմտյան Եվրոպայում հաճախ անվանվում էին բաթարներ<sup>18</sup>: Այս եզրակացությունը մեզ հանգեցնում է այն մտքին, որ նշված գործոնների համատեքստում պետք է տեսնել թյուրքակեզու բազմապիսի էքնանունների փոխարեն բաթար տերմինի կիրարկման հանգամանքը: Հետևարար, հիմնավոր է այլոֆ. Պ. Մուրադյանի այն կարծիքը, որ ներկայիս առորեջանցիների պարագայում «Ծագումնաբանական առումով ավելի արդարացված էին կիրառվող բաթար, կովկասյան բաթար և թուրք անվանումները»<sup>19</sup>:

Հարկ է նշել, որ Այսրկովկասի բաթարներին «աղբրեջանցի» կոչելը շատ դեպքերում շփոթության տեղիք են տվել ցարական կարգերի

Ժամանակ անցկացված վիճակագրական որոշ աղբյուրներ, որոնցում  
 թաքարների կողքին նշված է նաև «աղբյուրների» տերմինը: Այսպես,  
 Բաքվի քաղաքային վարչության 1913թ. հոկտեմբերի 22-ին անցկացված  
 վիճակագրության տեղեկագրում նշված է «քարար աղբյուրների»  
 տերմինը (տեղեկագրում՝ «տարար ադերբեյնդյ.»)<sup>20</sup>: Փաստերի  
 համադրումը մեզ թերել է այն համոզման, որ մարդահանարի նյութերում  
 քարար էր նաև վարչության գուգակն վկայված աղբյուրների տերմինն  
 ամենահին էլ չափոր է հասկանալ որպես էթնանուն և առավել ևս փորձել  
 վերագրել հարևան Աղբյուրների համար Հանրապետությունում բնակող  
 այսօրվա աղբյուրների համար աղբյուրներին: Տարաժամանակյա փաստերի համալիր  
 քննությունը ցույց է տալիս, որ ոուս վիճակագրիները այն վկայել են  
 աշխարհագրական տեղանվան իմաստով և նկատի են ունեցել Իրանի  
 հնագույն նահանգ Ատրպատական-Աղբյուրներից Արևելյան  
 Այրկովկաս վերաբնակեցված թյուրք-թաքարական ցեղերի այն ստվար  
 հատվածին, որոնց տեղափոխված երկրի անունով անվանել են  
 աղբյուրներիներ (իմա՞ ատրպատականցիներ - Գ. Ա.): Իրավացի է  
 արևելագետ Հ. Վամբերին, երբ նկատում է, որ «...այսօրվա  
 Անդրկովկասի թյուրք բնակչության ստվար մասը անկասկած հարավից  
 է եկել հյուսիս, այսինքն նրանք ներկայացնում են Ազգարքայշանից ու  
 Կասպից ծովի հարավային ափերից ելած այն թյուրք երսակների  
 թեկորները (ընդգծումը մերն է - Գ. Ա.), որոնց դեպի Կովկաս են նետել  
 քաղաքական դեպքերը Սելջուկների երևալուց սկսած, մինչև  
 Ռուսաստանի ամրողական տիրապետությունը, այսինքն՝ մինչև 18-րդ  
 դարի վերջերը»<sup>21</sup>: Այսիսով, վերոհիշյալ փաստարկումներից հետևում  
 է, որ ընդիուպ մինչև XVIII դ. վերջերը իրանական Աղբյուրներից  
 թյուրքական ցեղերի մի ստվար զանգված զարթել է Արևելյան  
 Այրկովկաս և Եթուկապես աստիճանաբար միախառնվել տեղական  
 թյուրքական բնակչության հետ, որի հետևանքով վերջիններիս անվան  
 կողմին գործածական է դարձել նաև «աղբյուրների» որակումը: Հարկ է  
 նշել, որ Բաքվում հաստատված իրանական և կովկասյան թյուրքալեզու  
 ցեղերը հստակ կերպով տարանջատված էին Բաքվի քաղաքային  
 վարչության վիճակագրական թյուրոյի՝ 1904թ. իրատարակած  
 տեղեկագրում, որտեղ ասվում է. «Տարար ադերբեյնդյան  
 (սրանց տուա), ուրսական և կավկազական»<sup>22</sup>: Ուստի, պետք է  
 արձանագրել, որ XIX դ. երկրորդ կեսից սկսած վիճակագրական

տեղեկագրերում հանդիպող «աղբեջանական» տերմինը կիրառվել է ոչ էրնանվան, այլ աշխարհագրական իմաստով և հետևանք է լոկ այն միտումի, համաձայն որի՝ մարդահամարի նյութերում թարարների թվում պետք է արտահայտվեր Իրանական Աղբեջանից Արևելյան Այրկովկասում վերաբնակեցված թյուրքալեզու բնակչության առկայության հաճամանքը։ Սույն եզրակացությունն իր հաստատումն է գտնում նաև հետևյալ փաստարկմանք. ոուս պատմաբն-վիճակագիր Ս. Գլինկան, 1826-1828թթ. ոուս-պարսկական պատերազմից հետո պարսկահայերի՝ Արևելյան Հայաստան ներգաղթին նվիրված աշխատության մեջ Խոյ, Սալմաս և Ուրմիա գավառներից գաղթող հայերին նույնպես բազմից հիշատակում է «աղբեջանական հայեր» (արման աճերբանական) անվամբ<sup>23</sup>:

Հայտնի է, որ Արևելյան Այրկովկասում Աղբեջան անվամբ պետությունը ի հայտ եկավ միայն 1918թ. մայիսի 26-ին Անդրկովկասյան Սեյմի լուծարումից հետո, երբ թարարական Ազգային խորհուրդը երիտրուրքերի թելադրանքով մայիսի 28-ին Թիֆլիսում հոչակեց նոր պետության ստեղծումը և Իրանի հյուսիս-արևմտյան երկրամասի՝ պատմական Ատրպատական-Աղբեջան անունով այն կոչվեց Աղբեջանական Դեմոկրատական Հանրապետություն<sup>24</sup>։ Նկատենք, որ թեև ստեղծվեց Աղբեջան անվամբ պետություն, սակայն թյուրքալեզու բնակչությունը դեռևս չէր կրում աղբեջանցի անվանումը։ Ինչպես օրինակ՝ 1926թ. մարդահամարի պաշտոնական նյութերի ցանկում դեռ միմյանցից տարանջատ նշված են թյուրքեր և թարարներ էրնանունները, իսկ լրացուցիչ ցանկում հանդիպում են նաև աղբեջանցի թյուրքեր, աղբեջանցի թուրքեր և աղբեջանցի թարարներ էրնիկ միավորները<sup>25</sup>։ Էրնանունների բազմազանությունն ինքնին փաստում է այն իրողությունը, որ թեպես Արևելյան Այրկովկասում թյուրքալեզու էրնիկ ընդհանրության ծևափորումը և աղբեջանցիների կոնսոլիդացումը որպես ազգ սկսվել է XIXդ. երկրորդ կեսից<sup>26</sup>, այդուհեներձ, ընդհուպ մինչև XXդ. առաջին երկու տասնամյակները պաշտոնական մարդահամարի նյութերում և էրնոժողովրդագրական ու էրնոլեզվական հարցերին նվիրված ուսումնասիրություններում «աղբեջանական թյուրքեր»<sup>27</sup> տերմինի առկայությունն ինքնին հիմք է տալիս եզրակացնելու, որ դեռևս XXդ. 20-ականների կեսերին, երկրամասում ավարտուն տեսք չէին ստացել թյուրքալեզու ցեղերի

Եթոնիամախմբման գործընթացները, հետևաբար և *աղյորեջանցի* էթոնսի ձևավորումն իր էթոնտարրերակող գործոններով՝ միասնական լեզվով, մշակույթով, ինքնազիտակցությամբ և ինքնանվամբ: «Աղյորեջան» երկրանունը դեռևս չէր դարձել թյուրքալեզու տարրեր բարբառներով խոսող ցեղերի բաղադրական ընդհանրությունը բնորոշող հավաքական անուն: Աղյորեջանական Հանրապետության մեջ թյուրքալեզու ցեղերը՝ երկրի անունով աղյորեջանցիներ (ինքնանվանումը՝ ազերրայջանլըլար) կոչելը ժամանակակից էթոնիկ իմաստով պաշտոնական, զանգվածային լայն կիրառում ստացավ և վերջնականապես ամրագրվեց 1936թ. դեկտեմբերի 5-ի ԽՍՀՄ նոր սահմանադրության ընդունումով ու Անդրֆեղերացիայի կազմալուծումից հետո: Թեև 1937թ. հունվարի 6-ին անցկացված համամիութենական մարդահամարի պաշտոնական նյութերում թյուրքալեզու բնակչությունը դեռևս անվանվում էր *թյուրք*<sup>28</sup>: Հարկ է նկատել, որ հանրահայտ այս իրողությունը չեն ժխտում նաև աղյորեջանցի պատմաբաններից ոմանք: Օրինակ՝ Ա. Ալեքպերովը Աղյորեջանի հնագիտության ու ազգագրության հարցերին նվիրված աշխատության մեջ, «Աղյորեջանցիներ» վերտառությամբ զիստմ պարզորոշ գրում է. «...այս անվանումը (իմա՝ աղյորեջանցի - Գ. Ս.) բնակչության շրջանում լայն կիրառում գտավ միայն 1936թ. սկսած»<sup>29</sup>:

Այսպիսով, վերը բերված փաստարկումների համադրումը թույլ է տալիս արձանագրել, որ Արևելյան Այսրկովկասում երբեք գոյություն չի ունեցել աղյորեջանցի ինքնանվամբ էթոնու: Միաժամանակ նշելի է, որ իրականության մեջ XX դ. սկզբներին դեռևս չձևավորված խմբի՝ *աղյորեջանցիների* էթոնիկ վերջնական համախմբման համար գերակշիռ դեր է խաղացել էթոնքաղաքական գործոնը, երբ «Աղյորեջան» վարչաքաղաքական անվանը հետևեց «աղյորեջանցի» էթոնունը: Այսինքն՝ Արևելյան Այսրկովկասի թյուրքալեզու էթոնիկ խմբերի անվանումներին «աղյորեջանցի» տերմինը փոխարինելու նկավ միայն XX դ. 30-ականների կեսերին, որն առավելապես կապված էր ոչ այնքան էթոնիամախմբման զարգացումների, որքան էթոնքաղաքական գործընթացների հետ:

# GEVORG STEPANYAN

(GSU)

## THE USAGE OF THE ETHNIC NAME OF "AZERBAJANIAN" IN THE EASTERN TRANSCAUCAZUS

For decades, the azerbaijanian historical scientific spirit (Z. Buniatov, Ph. Mamedova, S. Mamedov and others) in the works devoted to the history of Bun Aghvank, Shirvan and Azerbaijan, inspired by the idea of making ancient the history of the modern azerbaijanian peopel in the Eastern Transcaucasus they began tribes ,azerbajaniansb, ,azerbajaniian tribesb, ,azerbajaniian raceb everywhere. Destorting the formation of the ethniki history of the latter, they tried to prove that the azerbaijanians had lived in the Eastern Transcaucasus since the ancient times. But the reasoning of compareasons made during different periods allow to recort that such self- pointed ethnas has never existed in the Eastern Transcaucasus. The term azerbaijanian came to replace the turkish speaking nomadic tribes which has settbed massively in the region in the mid 20-30<sup>th</sup> of the -20<sup>th</sup> century. This was not connected for the reason of developing of the ethnic cohesion, but for the reason of political processes.

### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆԵՐ

1. Мамедов С. Армянские источники об истории Азербайджана и азербайджано-армянских взаимоотношениях в XV-первой половине XVIII вв., автореф. дисс. докт. ист. наук, Баку, 1982, с. 4.
2. Շորբյան Պ., Հայութ-Վլացական փոխարքուրյունները ԺՈ դարի երկրորդ կեսին, Ա, Երևան, 2006, էջ 37:
3. Сысоев В. Тюркское население Азербайджана в XVII веке, Баку, 1926, с. 3-16.
4. Гмелин С. Путешествие по России для исследования трех царств естества, СПб., 1771, с. 115-116, шեն Շահ Բутков П. Материалы для новой истории Кавказа, с 1722 по 1803г., СПб., 1869, ч. I, с. 91. Керимов Э. Из истории этнографического изучения Азербайджана в русской науке (XV—первой четверть XIX в.). Азербайджанский этнографический сборник. Исследования и материалы, вып. I, Баку, 1964, с. 212, Броневский С. Новейшая географическая и историческая известия о Кавказе, ч. II, М., 1823, с. 434.
5. Зелинский С. Племенной состав, религия и происхождение государственных крестьян Закавказского края. Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края, т. II, Тифлис, 1887, с. 29.
6. Керимов Э. Եղ. աշխ., էջ 217:
7. Списки населенных местъ Российской империи по Кавказскому краю, LXV, Бакинская губерния. Списокъ населенныхъ местъ по сведениямъ 1859 по 1864 годъ. Издан Кавказскимъ статистическимъ комитетомъ при главномъ управлении наместника Кавказского. Составленъ главнымъ редакторомъ комитета Н. Зейдлицемъ, Тифлисъ, 1870, с. 85-89.
8. Энциклопедический словарь, под ред. проф. Андреевского И., т. I, СПб., 1890, с. 818-819.
9. Первая всеобщая перепись населения Российской империи, 1897, LXI. Бакинская губерния. Издание центрального статистического комитета министерства внутренних дел, под редакцией Н.А. Тройницкаго, СПб., 1905, т. 61, таблица XIII, с. 53.
10. Весь Кавказ. Промышленность торговля и сельское хозяйство Северного Кавказа и Закавказья. Составил и издал Шаплович М. С., Баку, 1914 (Закавказья, Бакинская губерния), с. 22.

11. Алекперов А. Исследования по археологии и этнографии Азербайджана, Баку, 1960, с. 72.
12. Этнические процессы в современном мире, отв. ред. Бромлей Ю., М., 1987, с. 60.
13. Երեսներ Դ., Թուրքերի ծագումը (ծագումը և էրեխկական պատմության հիմնական էլեմենտները), Եր., 1975, էջ 175:
14. Яковлев Н. Языки и народы Кавказа. краткий обзор и классификация, Тифлис, 1930, с. 9.
15. Гербер И. Г., Описание стран и народов вдоль западного берега каспийского моря. 1728 г., История, география и этнография Дагестана XVIII-XIX вв. (архивные материалы), под редакцией Коссена М. О. и Х. М. Хашаева, М., 1958, с. 100.
16. Подробное описание путешествия Голштинского посольства в Московию и Персию в 1633, 1636 и 1639 годахъ, составленное секретаремъ посольства Адамомъ Олеариемъ, М., 1870, с. 518, անդ նաև Серебров А., Историко-этнографическое описание Дагестана. 1796 г., ИГЭД, с. 178-179, անդ նաև Керимов Э. Եղվ. աշխ., с. 217.
17. Бартольд В. Работы по истории и филологии тюркских и монгольских народов. Обзор истории тюркских народов, т. V, М., 1968, с. 435.
18. Бартольд В. Работы по истории и филологии тюркских и монгольских народов. Татары, т. V, М., 1968, с. 560.
19. Մուրայլան Պ., Ալբրեխտ. Տարածքը և էրեխկական կազմը, Հայաստանի հարակից երկների պատմություն, Եր., 1992, էջ 183:
20. Перепись Баку 1913 года, ч. III. Население, вып. I, гор. Баку. Издание статистического отдела Бакинской городской управы, Баку, 1916, с. 4-5.
21. Hermann Vambery, Das Türkenvolk (Ethnologischer und Ethnographischen Beziehungen), Leipzig, 1885, S. 571, անդ նաև Վահրերի Հ., Իրանեան բուրքը կամ պարտյաներ, «Ծորճ», Թյաֆիլի, 1905, N 11-12, էջ 107:
22. Статистическое бюро Бакинской городской управы. Пособия при разработке материала переписи г. Баку 22-го октября 1903 года, Баку, 1904, с. 102.
23. Глинка С. Описание переселения армян азербайджанских в пределы России. с кратким предварительным изложением исторических времен Армении, М., 1831, с. 1, 3, 9, 92.
24. Swietochowski T. Russian and Azerbaijan: 1905-1920, Cambridge, Cambridge University Press, 1985, p. 129.
25. Итоги всесоюзной переписи населения 1926 года по г. Баку и Промыслово-Заводскому району, т. I, ч. I, Баку, 1929, с. VII, 50-51, 118.
26. Советская историческая энциклопедия, т. 1, М., 1961, с. 266 (այսուհետև СИЭ), անդ նաև Современные этнические процессы в СССР, отв. ред. Бромлей Ю., М., 1977, стр. 60, անդ նաև Азербайджанцы, Народы Кавказа, т. II, под редакцией Гарданова Б., Гулиева А., Еремяна С., Лазрова Л., Нерсесова Г., Читая Г., М., 1962, с. 52.
27. Яковлев Н. Եղվ. աշխ., с. 41, 57, անդ նաև Бергер А. Азербайджанка, М., 1928, - с. 8, անդ նաև Борка Ф. Заметки о кавказских языках (б. м. и г.).
28. Всесоюзная перепись населения 1937г.: Материалы для докладчиков, М., 1936, с. 29.
29. Алекперов А. Եղվ. աշխ., էջ 71 :

ԱՏԵՓԱՆՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ  
(Ահ)  
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐՆ ԻՐԱՎՈՒՄ  
1920-1940-ԱԿԱՆ ԹԹ.

XX դարի սկզբին Իրանի տնտեսությունը գտնվում էր քայլայված վիճակում: Իրանն ուներ պետական բյուջեի, արտաքին առևտրի հաշվեկշռի պակասուրդ, արտաքին փոխառություններ և քայլայված հարկային համակարգ:

1920-ական թթ. սկզբին ուղարկան նախարար, ապա վարչապետ Ռեզա խանի կողմից իրականացված կենտրոնացման քաղաքականության արդյունքում երկրում հաստատվեց հարաբերական կարգուկանոն, որն էլ նախադրյալներ ստեղծեց տնտեսության զարգացման համար: Սակայն ձեռքբերված կայունության պահպանման, զինված ուժերի արդիականացման և տնտեսության զարգացման ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ էր ապահովել պետական եկամուտների կայուն աճ:

Հենց այդ նպատակով էլ Իրանի կառավարությունը դիմեց ԱՍՆ-ի կառավարությանը՝ ֆինանսական առաքելություն ուղարկելու խորհրդական ԱՍՆ-ից ժամանեց ֆինանսական փորձագետ Արքուր Միլսպոն, որին շնորհվեցին արտակարգ լիազորություններ և կարգավիճակ<sup>1</sup>: Միլսպոյի գլխավորած՝ տասներեք ֆինանսական փորձագետներից բաղկացած խմբի առաջնահերթ պարտականությունը պետական եկամուտների զանձման գործում կարգուկանոն հաստատելն էր, որից բացի նրանք պետք է գրադպահին զանձարանի կենտրոնացման և ֆինանսական այլ խնդիրներով: Նրանց հաջողվեց կենտրոնացման և հավասարակշռի բերել Իրանի բյուջեն, որի արդյունքում կառավարությունը սկսեց արտաքին պարտքերի վճարումը և նոր նախագծերի ֆինանսավորումը<sup>2</sup>:

Գործունեության սկզբնական շրջանում Ռեզա խանի և Արքուր Միլսպոյի համագործակցությունը փոխահակառ էր: Սակայն հետագայում երկկողմ շահավետ հարաբերությունները վատացան:

Կարծում ենք՝ կարևոր հանգամանք էր այն, որ լիարժեք իշխանություն ձեռքբերելուց, բանակային բարեփոխումների և կայունության հաստատման ժախսերն ապահովելուց հետո, 1925թ. շահ հոչակված Ուեզա Փակավին այլևս չէր գգում Սիլսպոյի ծառայությունների կարիքը: Բացի այդ, Սիլսպոն էլ էր ծեռք բերել գրեթե անսահմանափակ իշխանություն Իրանում, որը հակասում էր Ուեզա շահի ազգայնական՝ Արևմուտքի մեխանիզմները օգտագործելու, սակայն նրանց ազդեցությունից հնարավորին չափ խուսափելու քաղաքականությանը: Չհամաճայնելով կառավարության կողմից առաջարկված նոր պայմաններին՝ Սիլսպոյի հանձնախումը 1927թ. հեռացավ երկրից:

Անդրադառնալով Սիլսպոյի առաքելության գործունեությանը՝ նշենք, որ այն սկսվեց Իրանի պետական եկամուտների կարգավորումից: Առաջնային խնդիրը առկա ռեսուրսների արդյունավետ ուղղումն էր դեպի պետական զանձարան: 1921թ. Իրանի պետական եկամուտների հիմնական արդյուններն էին՝ պետական հողերը, ներքին հարկերը և արտաքին առևտուրից ստացվող մաքսային տուրքերը<sup>3</sup>:

Պետական հողերից ստացվող եկամտի հիմնական միջոցը ամբողջական գյուղեր մասնավոր անձանց վարձակալությամբ հանձնելը էր, որի միջոցով հողից ստացվող եկամտի մի մասը վերադառնում էր պետությանը: Պետական եկամուտների կարգավորման քայլերից էր Մեջլիսի որոշումը կանխիկ գումարով դրանց մի մասի վաճառքի վերաբերյալ, որն այդ տարիներին ունեցավ շարունակական բնույթ<sup>4</sup>: Առավել արժեքավոր պետական հողերը դարձան բարձրաստիճան բանակային սպաների և սահմանակից խոշոր հողատերերի սեփականությունը: Կարծում ենք՝ պետք է մտապահել, որ Մեջլիսի կազմում միշտ էլ եղել են խոշոր հողատերեր, որոնց շահերից էր բխում փաստացիորեն իրենց ենթակայության տակ գտնվող հողերի օրինական սեփականացումը: Սակայն այդ ամենում կար մեկ դրական կողմ պետության համար. այդ հողերն արդին իրենցից ներկայացնում էին իրավական հաստատում ունեցող մասնավոր սեփականություն, որը ենթակա էր հարկման:

Պետական եկամուտների երկրորդ առբյուրը ներքին հարկերն էին: Կառավարության ջանքերը սկզբնական շրջանում ուղղվեցին հարկերը հավաքելու համար առավել արդյունավետ եղանակ մշակելուն:

Միլսպոյի առաքելության անդամները իրականացնում էին ներքին հարկերի գանձումը՝ ցուցաբերելով խիստ մոտեցումներ և խտրականություն շնորհով հարուստների և աղքատների միջև<sup>5</sup>, որի արդյունքում հնարավոր դարձավ որոշակի հաջողությունների հասնել այդ ոլորտում: Այդուհանդերձ, Միլսպոյի գործունեությունը հանդիպում էր դիմադրության ինչպես խոշոր հողատերերի, այնպես էլ ցեղապետերի կողմից, քանի որ ավանդույթների համաձայն՝ նրանք էին իրականացնում հարկահավաքը, որից պետությունը, կարելի է ասել, եկամուտ չեր ստանում, և չէին պատրաստվում զիջել իրենց դիրքերը: Ուստի երկրում հետզիեստ բռնկվում էին ցեղերի և խոշոր հողատերերի դժգոհության դրսնորումներ, որոնք կառավարությունը ստիպված էր լինում ճնշել:

Հարկային բարեփոխումների ոլորտում հաջորդ քայլը նոր հարկատեսակների սահմանումն էր: Թերևս կարևոր էր, որ 5 տարով հարկերից ազատվում էին այն հողերը, որոնք օգտագործվում էին արտահանվող, արդյունաբերությանը անհրաժեշտ տեխնիկական կուլտուրաների մշակման համար, ինչպես նաև այն հողերը, որոնք նոր էին ընդգրկվում զյուղատնեսության մեջ, որով խթանվում էր ինչպես արդյունաբերության, այնպես էլ զյուղատնեսության զարգացումը: Իրանի տնտեսության զարգացման համար կարևոր իրադարձություն էր 1930թ. Մեջիսի VII-րդ նստաշրջանը, երբ ընդունվեց հարկային օրենսդրությունը, համաձայն որի՝ վերացվում էին բնամթերքով վճարվող հարկերը<sup>6</sup>: Կարծում ենք՝ դա ևս մեկ քայլ էր կիսաֆեռդալականից կապիտալիստական հարաբերություններին անցման ճանապարհին: 1930թ. ընդունվեց եկամտահարկի վերաբերյալ առաջին օրենքը, իսկ 1938թ. ներմուծվեց հարկման պրոգրեսիվ սանդղակը<sup>7</sup>:

Բարեփոխումների շնորհիվ ուղղակի հարկերից ստացվող եկամուտները աճեցին. 16 մլն ռիալից 1934/35թ.՝ հասնելով 230 մլն ռիալի 1940/1941թ.: Սակայն դա չէր գերազանցում հարկերից ստացվող եկամուտների 10-15%, քանի որ կառավարությունը հիմնական շեշտը դնում էր անողողակի հարկերի ավելացմանը, որի հաշվին էր պետական ստանում հարկերից գանձվող եկամուտների 85-90%<sup>8</sup>: Դա հիմնականում անդրադառնում էր լայն սպառողների վրա՝ միևնույն ժամանակ արտացղերկ պետության ազդեցության մակարդակը երկրի տնտեսական կյանքում: Ակզենական շրջանում անողողակի հարկումն

իրականացվում էր մաքսատուրքերի և արցիզների, 1926թ. ներմուծված ճանապարհահարկի միջոցով, իսկ հետագայում աստիճանաբար առաջնային դարձան պետական մենաշնորհները, որոնց թիվը հասնում էր 27-ի:

Պետական եկամուտների առավել արդյունավետ և հուսալի աղբյուրն արտաքին առևտրից ստացվող տուրքներն էին: Մինչև XX դարի սկիզբը Իրանի արտաքին առևտրային հարաբերություններում գործում էին 1828թ. Ֆարական Ռուսաստանի և Իրանի միջև կնքված Թուրքմենչայի պայմանագրով նախատեսված կապիտույացիոն համակարգի կետերը, որով երկիր ներմուծվող կամ արտահանվող ապրանքների համար սահմանվել էր ապրանքի 5%-ի չափով մաքսատուրք<sup>9</sup>: 1901թ. Ռուսաստանի, իսկ 1903թ.<sup>10</sup> Սեծ Բրիտանիայի հետ Իրանը կնքել էր մաքսային կոնվենցիաներ, որտեղ սահմանվել էին մաքսային նոր սակագներ<sup>10</sup>, որոնցում արտահայտված անհավասար պայմանների արդյունքում Իրանի արտաքին առևտուրը գործում էր կարծես առավելապես հզոր տերությունների շահերի օգտին: 1918թ. Խորհրդային կառավարությունը չնյալ համարեց մինչ այդ Իրանի հետ կնքված բռնոր անհավասար պայմանագրերը, որն ամրագրվեց 1921թ. Վենտրվարի 26-ին Իրանի և Խորհրդային Ռուսաստանի միջև կնքված Բարեկամության պայմանագրով<sup>11</sup>: 1920թ. Սեծ Բրիտանիայի և Իրանի միջև կնքվեց մաքսային նոր համաձայնագիր, որն առավելապես շահավետ պայմաններ էր սահմանում Սեծ Բրիտանիայից ներմուծվող ապրանքների համար<sup>12</sup>: 1927թ. հոկտեմբերի 1-ին երկկողմանի շահագրգուկածության արդյունքում Իրանի և ԽՍՀՄ-ի միջև կնքվեց մաքսային նոր համաձայնագիր: Համաձայնագիրը կնքելիս խորհրդային կառավարությունը հատուկ նոտայով հաստատում էր, որ այն դեպքում, եթե իրանական կառավարությունը կհայտարարի իր մաքսային անկախության մասին, ինքը կիրաժարվի 1927թ. համաձայնագրում ամրագրված սակագներից և կընդունի Իրանի պայմանները<sup>13</sup>:

1920-ական թթ. Իրանում ծավալվել էր կապիտույացիոն համակարգի դեմ պայքար, որի կարևորագույն կետերից էր անկախ մաքսային համակարգը, որի միջոցով հնարավոր կլիներ հավասարակշռ բերել առևտուրը, ավելացնել պետական գանձարանի եկամուտները:

Վերջապես՝ 1928թ. մայիսին Իրանի Սեզլիսն ընդունեց օրենք, որը շեղյալ էր համարում կապիտուլյացիոն համակարգը և հայտարարարում էր Իրանի մաքսային անկախության մասին<sup>14</sup>: Սակայն Իրանը ստիպված էր գնալու զիջումների մաքսային ոլորտում մեծ տերություններին, որպեսզի նրանք ընդունեն իր որոշումը: Մեծ տերություններն ել իրենց հերթին, օգտագործելով Իրանի շահագրգովածությունը կապիտուլյացիոն համակարգի վերացման և մաքսային անկախության հաստատման գործում, չիապաղեցին իրենց պայմաններն առաջարկել, որոնք էլ Իրանն ընդունեց:

1928թ. Մեծ Բրիտանիայի և Իրանի, իսկ 1929թ. ԽՍՀՄ և Իրանի միջև կնքվեցին վերջինիս մաքսային անկախության վերաբերյալ պայմանագրեր, որոնք թեև թղթի վրա երաշխավորում էին «Իրանի մաքսային լիարժեք անկախություն»-ը, սակայն դրանցում ամրագրված սակագները հիմնականում ձևափորվել էին նշված տերությունների ազդեցության ներքո, որոնց համդեալ կիրառվում էին նվազագույն մաքսային սակագներ<sup>15</sup>: Հետագայում նմանատիպ համաձայնագրեր կնքվեցին նաև իրանական շուկայում գործող այլ երկրների հետ:

Ներկայացնենք 1928թ. ընդունված մաքսային սակագները<sup>16</sup>:

Ապյունմքներ	մաքսատուրք	ճամապարհակարկ	մնաշնորհակարկ	Ընդհանուր տուրքեր
Արյունաքերական նպատակներով օգտ. պարագաներ (հոմք, գործիքներ...)	7,3%	4,0%	-	11,3%
Շամապարհակիմոր յան և շինարարական նյութեր և պարագաներ	0,7%	0,9%	-	1,6%
Լայն սպառման առարկաներ (մրերը, աննական օգտ. առարկաներ)	17,7%	.3,7%	14,9%	36,3%
Թժկական և հիգիենայի պարագաներ	10,0%	5,0%	-	15,0%
Մշակութային օգտ. պարագաներ	10,0%	3,0%	-	13,0%
Պերճանը առարկաներ	19,9%	4,4%	-	24,3%

Ներկայացված աղյուսակն արտահայտում է ոչ միայն մեծ տերությունների շահերը, այլև Ունգա շահ Փահլավիի տնտեսական

հիմնադրույթները: Առաջին՝ ամեն կերպ նպաստել արդյունաբերության և ճանապարհաշխնության զարգացմանը, թեկուզ ժողովրդի բարեկեցության հաշվին: ‘Նա երևում է աղյուսակի առաջին երկու տողերում ներկայացված ապրանքների մաքսագերծման ցածր սակագներից: Առավել բարձր էին հիմնականում ցածր և միջին եկամտի մարդկանց կողմից օգտագործվող՝ լայն սպառման ապրանքների մաքսագերծման սակագները, որը տալիս էր ներմուծվող ապրանքների մաքսագերծումից ստացվող եկամտի 80,3%:

Արտաքին շրջանառության տուրքերից ստացվող եկամուտներն Իրանի բյուջեի համար զգալի դեր էին խաղում: 1929-1934թ. մաքսային եկամուտների տոկոսը ճանապարհային և մենաշնորհային հարկերի հետ միասին առանձնապես մեծ տատանումների չեր ենթարկվել՝ կազմելով բյուջեի ընդհանուր եկամուտների 52-54% (հաշվարկը կատարվել է տարբեր հեղինակների տվյալների համադրությամբ-Լ.Ս.)<sup>17</sup>:

Ուզա շահի կառավարման շրջանում ներմուծվող ապրանքների մաքսագերծման սակագների բարձրացման և հատուկ արգելող ու սահմանափակող միջոցառումների արդյունքում խիստ աճեցին ներմուծվող ապրանքների գները, որը մի կողմից բացասարար էր անդրադառնում ժողովրդի գնողունակության վրա և խթանում էր աղքատության խորացումը: Սակայն մյուս կողմից հենց այդ միջոցառումները, կարելի է ասել, կոչված էին խթանելու ազգային արդյունաբերության զարգացումը:

Ֆինանսական բարեփոխումների հաջորդ ասպեկտը վերաբերում էր բանկային գործունեությանը: Մինչև 1920-ական թթ. երկրում գործող բրիտանական Չահնշահական և ռուսական Հաշվառու-Վարկասու բանկերը արտաքին կոնցենտրացիան հիման վրա էին ստեղծվել, որոնց միջոցով տվյալ կառավարությունները ներազդում էին Իրանի տնտեսական և քաղաքական կյանքի վրա: Առավել ամուր էին Չահնշահական բանկի դիրքերը, որն իրականացնում էր կենտրոնական բանկի բոլոր գործառույթները: 1927թ. հիմնադրվեց Իրանի Ազգային բանկը (Bank-e Melli-e Iran), որը կարևորագույն քայլ էր երկրի իրական անկախության ճանապարհին: Ծուտով, Ուզա շահի վերահսկողության ներքո բանկը դարձավ կապիտալի ծևավորման և զարգացման համար ներդրումների հիմնական գործոնը<sup>18</sup>: Ազգային բանկը, որը

միաժամանակ կատարում էր կենտրոնական պետական և առևտրային բանկի գործառույթները, 1932թ. ընդունված օրենքի համաձայն ստացավ դրամ բողարկելու և ֆինանսական քաղաքականությունը կարգավորելու լիազորություններ<sup>19</sup>: Ուզա շահի համար Իրանի Ազգային բանկի հիմնումը ազգի վարկի և պատվի հիմնաքարերից էր, ինչպես նաև երկրի ֆինանսական միասնության և կայունության խորհրդանիշ: Սակայն Ազգային բանկի հիմնադրման համար կային այլ դրդապատճառներ ևս: 1920թ. Բրյուսելում կայացած Միջազգային Տնտեսական խորհրդաժողովի ընթացքում բոլոր երկրներին խրախուսում էին ստեղծել պետական բանկ՝ միջազգային դրամական համագործակցության նպատակով<sup>20</sup>: Ուստի Իրանի Ազգային բանկի հիմնումը նաև դարի համաշխարհային միտումների արդյունք էր:

Բանկային քաղաքականությունը չսահմանափակվեց միայն Ազգային բանկի հիմնումով, կառավարության հետևողական քաղաքականության շնորհիկ բանկային գործունեության ծավալները մեծանում էին: Եթե 1936թ. Իրանի բանկային համակարգում պահպող ավանդները կազմում էին 560մլն ռիալ, ապա 1939թ. դրամը հասան 1մլր 320մլն ռիալի, իսկ 1940թ.<sup>21</sup> 2մլր ռիալի<sup>21</sup>, որը վկայում էր ինչպես պետության դերի աճի, այնպես էլ հասարակության վստահության մասին:

1920-ականներին Իրանում տեղի էր ումենում ռիալի փոխարժեքի անկում, որը հետևանք էր համաշխարհային շուկայում արծաթի շարունակական արժեզգկման ոսկու նկատմամբ, ինչպես նաև Իրանի արտաքին առևտուրի պակասությի: Ռիալի դիրքը թիւ թե շատ կարգավորելու նպատակով կառավարությունը Իրանի Ազգային բանկին շնորհվեց արտարժույթի վերահսկման իրավունք: Հաջորդ քայլը 1930թ. մարտի 19-ին նոր արժեքային միավորի՝ ոսկե ռիալի սահմանումն էր<sup>22</sup>: Սակայն բավարար քանակության ոսկի գնելու համար համապատասխան միջոցների պակասի պատճառով այդ օրենքի կիրառումը հետաձգվեց:

Ուզա շահի ֆինանսական քաղաքականության հիմքում պետության դերի աճն էր ֆինանսական հարաբերությունների կառավարման գործում, որի արդյունքում էլ՝ պետության ֆինանսական գործունեության ծավալի աճը: Բարեփոխումների շնորհիկ բյուջեի եկամուտները աճեցին՝ կազմելով. 1922թ.<sup>23</sup> 229մլն ռիալ, 1931թ.<sup>24</sup> 400մլն

ոհալ, 1938թ.՝ 1,376մլն ռիալ, 1941թ.՝ 3,200մլն ռիալ<sup>23</sup>: Ավելացել էին նաև բյուջեի ծախսերը, որը ևս վկայում է առաջընթացի մասին:

1920-40-ական թթ. ընթացքում իրականացվեցին միջոցառումներ Իրանում արդիական ֆինանսական համակարգ ստեղծելու ուղղությամբ, որը նախադրյալներ էր ապահովում ինչպես երկրի ներքին անվտանգության պահպանման և տնտեսության զարգացման, այնպես էլ՝ Իրանի միջազգային հետինակության բարձրացման համար, որը միշտ էլ եղել է Ռեզա շահի գերագույն նպատակներից: Անշուշտ նման քաղաքականությունն ուներ իր բացասական հետևանքները, որոնցից բերևս առավել կարևոր այն էր, որ ապրանքների գների բարձրացման հետևանքով ընկնում էր ժողովրդի գնողունակությունը: Սակայն պետք է հաշվի առնել ինչպես երկրի ներքին զարգացումները, այնպես էլ միջազգային դրությունն այդ շրջանում: Կարծում ենք՝ II Համաշխարհային պատերազմը և Իրանի շուրջ ծավալված իրադարձություններն իրենց բացասական հետքը բողեցին երկրի տնտեսության վրա: Թեև քննվող ժամանակաշրջանում ֆինանսական բարեփոխումները կրում էին բարչքածւ բնույթ և զերծ չէին բացըողումներից, այնուամենայնիվ պետք է նկատի ունենալ, որ բոլոր տնտեսական ծրագրերը իրականացվում էին ներքին ռեսուրսների հաշվին, որն էլ ավելի էր բարդացնում երկրի առջև ծառացած խնդիրները և պայմանավորում էր տնտեսության զարգացման ուղղություններն ու ներողները: Առաջին հերթին կարևոր ենք համարում այն փաստը, որ ճևավորվեց պետական բյուջե՝ համակարգված եկամուտներով և ծախսերով, իիմնվեց Իրանի Ազգային պետական բանկը, որը ցանկացած երկրի համար ֆինանսական անկախության կարևորագույն գործոն է, Իրանի ֆինանսական համակարգը դրվեց իրավական հարթության վրա: Խիստ կարևոր ենք համարում նաև այն, որ կապիտույսացիոն համակարգի վերացումից հետո Իրանը, թեև զիջումների գնով, սակայն ձեռք բերեց մաքսային անկախություն և միառժամանակ ազատվեց արտաքին ֆինանսական կախվածությունից, ուստի թերագնահատել իրականացված միջոցառումները չի կարելի:

LUSINE STEPANYAN  
(IOS)

FINANCIAL REFORMS IN IRAN IN 1920-1940's

The ambitious programs of internal security, modernization of the armed forces and economic growth carried out by Reza Shah Pahlavi required regular and expanding state revenue. In 1921 the main sources of the state revenue were three: state lands, internal taxes, and custom tariffs on foreign trade. Due to the efforts of Reza shah and his governments and also with the help of foreign advisers such as A.Millspaugh there were made some achievements in raising of the national income and centralization of the state revenue. One of the most spectacular and significant reforms for the economic growth and independence of Iran was the abolition of Capitulations in 1928, which included Iran's Tariff Autonomy. The Next important step was foundation of the National Bank of Iran (Bank-e Melli-e Iran), which since 1932 vested with the power to issue currency and regulate fiscal policy. In spite of some negative results we can say that financial reforms in Reza Pahlavi era were essential for the independence and stable development of Iran.

ԾԱԼՈՎԱԿՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Wilber D., Riza Shah Pahlavi: The Resurrection and Reconstruction of Iran (1878-1944), New York, 1975, p. 68, Millspaugh A., Americans in Persia, Washington, 1946, p. 21-22.
2. Ibid., p. 23-24, Zirinsky Michael P., Imperial Power and Dictatorship: Britain and the Rise of Reza Shah, 1921-1926, Int. Journal of Middle East Studies, 1992, vol. 24, N 4, Cambridge, p. 643, Wilber D., Riza Shah Pahlavi, p. 97.
3. Banani Amin, The Modernization of Iran, p. 113.
4. Դավիթ Մամեդով, էջ 114, Մամեդով Հ.Մ., Իրան և ՀՀ առաջնային հարցեր, Մ., 1997, ս. 10.
5. Millspaugh A., Americans in Persia, p. 23.
6. Banani Amin, The Modernization of Iran, p. 115.
7. Մամեդով Հ.Մ., Իրան և ՀՀ առաջնային հարցեր, մ. 1997, ս. 10.
8. Ibid., ս. 10-11, Դեմին Ա.Ի., Տրубецկой Վ.Վ., Внутренняя и Внешняя политика монархии Пехлеви в 1925-1928гг., Иран: очерки новейшей истории (Отв. Ред. А.З. Арабаджян), М., 1976, с. 63.
9. Article 10, Appendix NO. VII, Treaty of Turkmanchay between Persia and Russia, dated 21<sup>st</sup> February 1828, Collection of Treaties, Engagements and Sanads, Vol. XIII, p. XXX. Генин И.А., Таможенная политика Персии (сб. Таможенная политика стран Востока), М-Лен., 1933, с. 33.
10. Appendix № XXIV, Commercial Convention between Persia and Russia, dated 27<sup>th</sup> October 1901, p. lxxxii-lxxxv, Treaty № XX, Commercial Convention between Great Britain and Persia, dated 9<sup>th</sup> February 1903, pp. 89-119, Collection of Treaties, Engagements and Sanads.
11. Doc. № 17, Denunciation of Tsarist Russian Privileges in Persia by the Soviet and Persian Governments, 26 June, 1918, p. 34-35, Doc. № 33, Art. 1-3, Treaty of Friendship: Persia an Russia, 26 Feb., 1921, p. 90-91, Diplomacy in the Near and Middle East: A Documentary Record: 1914-1956, vol. II.- New York, 1972.
12. Treaty № XXV, Agreement between Gr. Britain and Persia modifying the Commercial Convention of 1903, March 21, 1920, Collection of Treaties, Engagements and Sanads, p. 143-160, Генин И.А., էջիւ, էջ 35:

13. Обмен нотами о торговых взаимоотношениях между СССР и Персией, произведенный в гор. М., 1 окт. 1927, с. 1-12, Генин И.А., նշանակ., էջ 36:
14. Նոյն սեղում, էջ 36-37:
15. Treaty No XXVI, Tariff Autonomy Treaty between Great Britain and Persia, dated 10<sup>th</sup> may 1928, Collection of Treaties, Engagements and Sanads, p. 131-168, Генин И.А., նշանակ., էջ 38:
16. Աղյուսակը ներկայացված է ըստ՝ Генин И.А., նշանակ., էջ 43:
17. St'u' Գенин И.А., նշանակ., էջ 44, Hopper Bruce, The Persian Regensis: Key to Politics in the Middle East, Foreign Affairs, January, 1935, Vol.-13, No-2, p. 300.
18. Мамедова Н.М., Иран в XX веке, с. 9, Wilber D., Riza Sh. Pahlavi, p. 266, Bourke-Burrowes, Changes and Development in Persia during the Pahlavi Re'gime, Jour. of the Centr. Asian Society, Vol. XVIII, Jan. 1931, P. I, p. 44.
19. Նոյն սեղում, էջ 45, Bostock F. and Jones G., Planning and Power in Iran, p. 22-23, Issawi Ch., The Iranian Economy 1925-1975: Fifty Years of Economic Development, Iran Under The Pahlavis, (ed. by Lenczowski G.), Stanford, 1978, p. 132.
20. Bostock F. and Jones G., Planning and Power in Iran, p. 32-33.
21. Issawi Ch., The Iranian Economy 1925-1975, p. 132.
22. Реза Годс М., Иран в XX веке, с. 137, Bourke-Burrowes D., Changes and Development in Persia, p. 44, Banani Amin, The Modernization of Iran, p. 118-119.
23. Issawi Ch., The Iranian Economy 1925-1975, p. 132.

## ՎԱՐԴԱՐԱՅԻ ԳՈՀԱՐ

(ԵՀԱՀ)

### ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿԱՆԵՐԸ ԲԱՔԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՀԱՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՄԻՆ

Բաքիականությունը, որը ծագեց Իրանում 19-րդ դարի 40-ական թվականներին, սոցիալ-տնտեսական սուր ճգնաժամի հետևանքով ստեղծված նպաստավոր պայմաններում լայնորեն տարածվեց և դարձավ 19-րդ դարի Իրանի ամենախոշոր կրոնական շարժումներից մեկը: Նրա առաջնորդը Սեյեդ Ալի Մոհամմադին (1819-1850) էր: Նա իրեն անվանում էր Բաք, ինչն արաբերեն նշանակում է դուռ, դարպաս: Բաքն իր վարդապետության պատճառով ենթարկվել է հալածանքների և գնդակահարվել 1850թ. Թավրիզում:

Բաքի մահվանից հետո նրա գործը շարունակել է աշակերտներից Միրզա Հուսեյն Ալին (1817-1892), որն իրեն անվանել է Բահաուլլահ (արաբերեն նշանակում է Աստծո փառք) և դարձել նոր կրոնի անվանադիրը:

Բնականարար, հարևան Իրանի հասարակական-քաղաքական-կրոնական կյանքը լայն արձագանք էր գտնում Հայաստանում և Անդրկովկասի հայության շրջանում: Հայ մեծանուն գրող Ռաֆֆին, լինելով իրանահայ, առաջնություն ունեցած մեկն է հետաքրքրվել Իրանում ծավալված կրոնական նոր ուղղությամբ: Նա դեռևս 1876թ. Թավրիզում գրած «Պարսկաստան»<sup>1</sup> հոդվածում է անդրադարձել բարիականությանը: Բաֆֆին Պարսկաստանի կրոնական կյանքի մասին գրում է, որ «Պարսկաստանի մնջ աղանդների ոչնշանալը անհնարին է, որովհետև նրանք ժողովրդի բուն պահանջների արտահայտությունն են: Գուցե նորանք կկերպարանափոխվեն, բայց իրանց իսկությունը կորցնելու չեն»<sup>2</sup>: Իսկ բարիականության մասին Բաֆֆին գրել է. «Բայց մի աղանդ, որ ավելի ուժ և գորություն է ստացել, չնայելով այն հալածանքներին, որ մինչև անգամ ինկվիզիցիան չի ունեցել իր գոհերի վերա - է բարիների աղանդը: Նորա հետևադիրն ամեն քաղաքներում բազմացել են և ժողովրդի ավելի մտածող և ընդունակ մասն են կազմում»<sup>4</sup>:

Իրանի պատմության, հատկապես բարիականության ուսումնասիրությամբ զբաղվել է նաև գրող, հրապարակախոս, հասարակական գործիչ, «Մշակ» թերթի խմբագիր Համբարձում Առաքելյանը, որը 1901թ. «Մուրճ» ամսագրում հրատարակած իր «Բարիականութիւնը Պարսկաստանում»<sup>5</sup> հոդվածում ներկայացրել է բարիականության ծագումը. Վարդապետությունը. Սուրբ գրքերը և այլն: Հոդվածը նույն թվականին տպագրվել է նաև ուստի ներկայացնելուց հետո, Առաքելյանը իր ուսումնասիրության վերջում հանգում է հետևյալ եզրակացությանը, որ «Բարիութիւնը, իիմնուելով ալտրուիստ, մարդասէր և խաղաղասիրական գաղափարների վրայ, ոչ մի ընդհանուր բան չունի խլամի հետ. Թում է թէ նա աւելի լաւ է համապատասխանում արիական պարսիկների խաղաղասէր, մեղմ բնաւրութեան և ճգուսմներին: Նա կոչուած է լինելու Իրանի ապագայ կրոնը, և դա կը լինի մի մեծ բարերախտութիւն այդ թշուառ երկրի համար»<sup>6</sup>:

Իրանում տեղի ունեցող ժողովրդական ապստամբություններն ու կրոնական նոր հոսանքի առաջացումն արձագանք են գտել նաև հայ գրականության մեջ: Գրող Մարգար Ավետիսյանը, որն ուսուցիչ է աշխատել Թեհրանի հայտնի Հայկազյան դպրոցում, 1904-1905թթ. հրատարակած իր «Կույր Բարին»<sup>8</sup> և «Հալածանքի ծնունդը»<sup>9</sup> ստեղծագործությունների հերոսներ է ընտրել բարիականների:

Մայր Արոռ Սր. Էջմիածնի միարան Երվանդ Վարդապետ Տեր-Մինասյանը նույնպես հարկ է համարել իր «Կրոնների պատմութիւն»<sup>10</sup> (1909թ.) գրքի «Դավանական ճյուղավորություն և հերձվածներ խլամի մեջ» գլխում համառոտ ներկայացնել բարիականությունը և եզրակացրել, որ «Խոլամի մէջ ևս սկսուած են վերանորոգութեան փորձերն ու ճգուսմները»<sup>11</sup>:

Հայ գրող, գիտնական և հասարակական գործիչ Ատրպետը բարիականության և բահայականության վերաբերյալ իր ուսումնասիրությունները կատարել է իրանում: Նա հայ իրանագիտության այն կարկառուն ներկայացուցիչներից է, որի՝ այս խնդրին վերաբերող աշխատությունները ժամանակին լայն ճանաչում են գտել ուս արևելագետների շրջանում: Ատրպետի «Բարի կամ Բեհայի»<sup>12</sup> գիրքը 1906թ. հրատարակվել է հայերեն, իսկ 1909թ. և 1910թ.՝ ուստի ներեն:

Հայ անվանի պատմաբան Լեռն, որի գիտական բազմահարուստ ժառանգությունն ընդգրկում է հայ ժողովրդի պատմությունը՝ վաղնջական ժամանակներից մինչև իր ապրած օրերը, նոյնպես անդրադարձել է բարիականությանն ու բահայականությանը, այդ թեմային նվիրել ծավալուն հողվածաշար: Այն «Իրանի կեանքից, Յեղափոխական Իրանը, Բարիականութիւն» վերնագրով տպագրվել է Թիֆլիսի «Հորիզոն» թերթի 1911թ. ինը համարներում<sup>13</sup>: Նշենք, որ հողվածաշարը չի վերահրատարակվել Լեռյի ցարդ տպագրված հատորներում և, միգուցե, դա է պատճառը, որ այն վրիշել է ուսումնասիրողների ուշադրությունից<sup>14</sup>: Լեռն բարիականության մասին իր ուսումնասիրությունը գրել է իր ժամանակի արևելագետների աշխատությունների հիման վրա: Տպագիր աղբյուրներից օգտվելով նա հիմնախնդրի վերաբերյալ ուշագրավ եղանակացությունների է հանգել: Նա բարիների շարժումը գնահատում է որպես համամարդկային նշանակության իրադարձություն. «Բարիների շարժումը... ունի և համամարդկային նշանակութիւն, իրու գաղափարի առաջացրած յեղափոխութիւն, պսակած է արինով, հերոսութիւններով, նահատակութիւններով»<sup>15</sup>: Լեռն գրում է նաև Բարի կրոնի եռթյան, նրա սահմանած օրենքների և խնդիրների մասին, ինչպես նաև ընդհանրացնում է իր կարծիքը Իրանի նորաստեղծ վարդապետության մասին. «Դա յամենայն դէպս, մի մեծ նորութիւն էր Իրանի խաւար, լճացած կեանքի մէջ: Դա մի ուժեղ նոր խօսք էր, գրավիչ իր թարմութեամբ, իր հայեացքներով, շեշտերով: ... Այնքան մեծ էր վերանորոգութեան կարօտը նժրախստ ժողովրդի մէջ»<sup>16</sup>:

Հայ նշանավոր լեզվաբան Հ. Աճառյանը տարիների իր դեգերումների ընթացքում հետազոտել է ոչ միայն լեզվաբանությանն առնչվող հարցեր, այլև՝ տեղական ժողովուրդների ազգագրությունն ու կրոնական հավատալիքները: Իր հավաքած խիստ արժեքավոր նյութերը նա ամփոփել է տարրեր հողվածներում, դրանց անդրադարձել իր աշխատություններում, ինչպես նաև «Կյանքիս հուշերից»<sup>17</sup> հուշագրության մեջ, որից պարզվում է, որ մեծանուն գիտնականը հայ իրականության մեջ առաջիններից մեկն է ուսումնասիրել բահայականությունը<sup>18</sup>, որի հետ սկզբնական ծանոթությունը եղել է Բարգում, այնուեւտև՝ 1919-ին, Թեհրանում: Աճառյանին հաջողվել է «մասնակցել նոյնիսկ նրանց գլխավորների մասնավոր, գաղտնի,

դոնփակ նիստերին»<sup>19</sup>: Աճառյանի գնահատմամբ այս կրոնը. «Մի կարևոր օգուտ ունի. թողնելով այն կետը, որ նա մի քիչ եվլոպականություն է մտցնում մահմեղական աշխարհի մեջ, նա քանդում է մահմեղականության ուժը»<sup>20</sup>:

Ինչպես վկայում են հայ ուսումնասիրողներից քերպած քաղվածքները, նախահեղափոխական շրջանում հայ գիտնականներն ու մտավորականները համակրանքով են հետևել հարևան Իրանի կրոնական զարգացումներին, հուսալով, որ մահմեղական ծովի մեջ գոյատևող հայության վիճակը զգալիորեն կրեթևանա կրոնների, ազգերի, մարդկանց և սեռերի հավասարություն, հումանիստական այլ զաղափարներ քարոզող նոր կրոնի հաղթանակով: Բոնի մահմեղականացման մշտական վտանգի մեջ ապրող հայության համար, հիրավի, հույսի շող էր ծագում Իրանում, քրիստոնեության և խլամի միջև զցվում էր դեռևս երերուն մի կամուրջ, բայց նոր զաղափարների ծիլերը տրորվեցին ոչ միայն հենց Իրանում, այլև խորհրդային դարձած Անդրկովկասում, Միջին Ասիայում և Ռուսաստանում, որոնցում նույնպես բահայական համայնքներ էին ստեղծվել:

Բնականաբար, կոմունիստական վարչակարգում ապրող հայ գիտնականներից շատերը ևս արեխտական քարոզարշով սկսեցին քոլոր կրոնների, այդ թվում՝ բահայականության դեմ: Այսպես, Սովորված 1930-31թթ. «Բնեայիզմ»<sup>21</sup> և «Բարիզմ»<sup>22</sup> վերնագրերով ուսւերեն գրքեր է հրատարակում հայազգի գիտնական, բանասեր Արշալույս Արշարունին, որոնցում շեշտում է հակարահայական մարքսիստական գրականության անհրաժեշտությունը: Նա նշում է, որ 1929թ. հակակրոնական քարոզությանը նվիրված համամիութենական առաջին կուսակցական ժողովում Աղքարեջանի և Թուրքմենիայի պատվիրակները քողոքում էին, որ այդ կրոնն իրենց մոտ տարածված է նույնիսկ պրոլետարիատի մի մասին մոտ: Ա. Արշարունին, փաստորեն, գրել է ոչ թե անաշար գիտական ուսումնասիրություններ, այլ հակակրոնական քարոզական գրքեր, բայց դրանով հանդերձ, եթե ծերբազատվեն 1930-ականներին հատուկ նրա տերմինաբանությունից ու մոտեցումներից, կարելի է նրա գրքերից գիտականորեն հավաստի զգալի նյութ բաղել:

Հետագա տասնամյակներում բարիականությանն ու քահայականությանն են անդրադարձել նաև մի շարք այլ հայ գիտնականներ և մտավորականներ:

Ժամանակակից հայ իրանագիտության, հատկապես բարիականության և քահայականության ուսումնասիրության գործում իր կարևոր ներդրումն ունի Հ. Փահլևանյանը, որն իր հողվածներով հայ ընթերցողին է ներկայացրել Իրանը 19-րդ դարի կեսերին փորորկած բարիների ապստամբությունը և քահայիզմը<sup>23</sup>:

Պատմական գիտությունների դրկտոր, պրոֆեսոր Վահան Բայրությանը թեև առանձին հողվածով չի անդրադարձել բարիականությանը, սակայն իր «Իրանի պատմություն»<sup>24</sup> (2005թ.) հիմնարար աշխատության մի գլուխը հատկացրել է Իրանում 19-րդ դարում մեծ քափ առած բարիական շարժմանը:

Այսպիսով, հայ գիտնականներն այսօր ել ուշադրությամբ են հետևում Իրանում տեղի ունեցող ոչ միայն քաղաքական, այլև կրոնական ոլորտի զարգացումներին ու փոփոխություններին, և մեր համոզմամբ, նրանցից ոմանց ուսումնասիրությունները տարբեր լեզուներով քարզմանվելու դեպքում կարող են մեծ հետաքրքրություն առաջացնել բարիականությամբ և քահայականությամբ զբաղվող օտար գիտնականների շրջանում:

### GOHAR VARDANYAN (YHAU)

#### THE ARMENIAN AUTHORS ON BABISM AND BAHĀ'ISM

The Babi faith had its origins in Iran in the forties of 19th century. It grew and expended as a result of strong socio-economic crisis which appeared in Iran, until it became one of the largest religious movements 19th century in Iran.

Socio-political-religious life in Iran of 19th century found its wide echoes in Armenians of Armenia and Transcaucasia. Armenian famous writer Raffi (1835-1888), writer, publisist, public figure, "Mshak" - editor of newspaper H. Arakelyan (1855-1918), writer, scientist and public figure Atrpet (1860-1937), historian Leo (1860-1932), remarkable linguist Hr. Acharyan (1876-1953), philologist A. Arsharuni (1896-1985) and another Armenian scientists touched upon the subject of Bab'i and Bahā'i faiths in their works. Thus, Armenian society was watchfully following developments and changes in political and religious life of neighboring Iran, and our all-rounder scientist found it essential to acquaint Armenian reader with dramatic Iranian history of Babism and Bahaism of last decades.

## ԾԱՍՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մաֆֆի. Երկերի ժողովածու. հատոր 10. Եր.. 1991. էջ 354:
2. Նոյն տեղում. էջ 42:
3. Նոյն տեղում. էջ 356:
4. Նոյն տեղում. էջ 355:
5. Առաքելյան Հ., Բարիականուրինը Պարսկաստանում. «Մուրճ». Թիֆլիս. 1901. N 2. էջ 93:
6. Առաքելյան Ա. Ա., Բաբիզ, ԻԿՕՆԻՐԳՕ, Տիֆլիս, 1901, ս. 222.
7. Առաքելյան Հ.. Բարիականուրինը Պարսկաստանում. «Մուրճ». Թիֆլիս. 1901. N 2. էջ 103:
8. Ավետիսյան Մ. Կույր Բարին. Բարու, 1904:
9. Մարգար. Հայածանքի ծնունդը. Ազերսանդրապոլ. 1905:
10. Տեր-Մինասյան Ե. Կրոնների պատմուրին. Էջմիածին. 1909. էջ 262-271:
11. Նոյն տեղում. էջ 271:
12. Ասորպետ. Իմամար. պատմական հետազոտուրին. Բարի կամ Բեհայի. Ազերսանդրապոլ. 1906; Արքետ, Իմամատ, Историческое исследование, Александраполь, 1909; Արքետ, Բաբիտե և Բեհայի, Տիֆլիս, 1910.
13. Լեռ, Իրանի կեանքից, Յեղափոխական Իրան, Բարիականուրին, «Հորիզոն», Թիֆլիս, 1911, NN 184, 185, 192, 193, 195, 196, 200, 201, 208:
14. Վարդանյան Գ.. Լեռն բարիականուրյան և բահայականուրյան մասին. Արևելագիտուրյան հարցեր. VI, Եր.. 2006. էջ 366:
15. Լեռ, Իրանի կեանքից, Յեղափոխական Իրան, Բարիականուրին, «Հորիզոն», Թիֆլիս, 1911, N 184:
16. Նոյն տեղում, N 185:
17. Աճայշյան Հ.. Կյանքիս հուշերից. Եր.. 1967. էջ 379-386:
18. Վարդանյան Գ.. Հր. Աճայշյանը՝ Պարսկաստանի կրթական նոր ուղղությունների ուսումնասիրող. Երիտասարդ արևելագետների համբավետական XX դիւնական նույնաշրջան. Զեկուությունների թեզեր. Եր.. 1999. էջ 35; Վարդանյան Գ.. Հր. Աճայշյանը՝ բահայականուրյան ուսումնասիրող (հուշագրության հետքերով). Երիտասարդ արևելագետների համբավետական XXIII դիւնական նույնաշրջան. Զեկուությունների թեզեր. Եր.. 2002. էջ 65:
19. Աճայշյան Հ.. Կյանքիս հուշերից. Եր.. 1967. էջ 380:
20. Նոյն տեղում. էջ 386:
21. Արարուն Ա. Մ., Բեհայի, M., 1930.
22. Արարուն Ա. Մ., Բաբիզ, M., 1931.
23. Փակլանյան Հ.. Բահայիզմը որպես իմաԵրիալզմի զաղափարախոսություն. Իրանագիտուրյան հարցեր. Եր.. 1978. էջ 41-47; Փակլանյան Հ.. Բարիների ապստամբությունը Իրանում XIX դարի կեսերին. Մերձավոր և Սիրին Արևելքի երկրներ և ժողովրդներ. XI. Եր.. 1982. էջ 90-119:
24. Բայրության Վ.. Իրանի պատմություն. Եր.. 2005. էջ 438-460:

## ՎԱՐԴԵՐԵՍՅԱՆ ԱՐԵՆ

(Ահ)

ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆ  
ԱԴՐԲԵԶՄԱՆ ԱՐՏԱԶՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ  
ԿՈՂՄՆԱՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄՔ

Իրան-Աղբյուրեցան փոխհարաբերությունների զարգացման տարբեր փուլերում ակնհայտ էր դարձել, որ վաղ թե ուշ Աղբյուրեցանի Հանրապետությունը դառնալու է արևմտյան կառույցների ռազմավարական կողմնակիցը՝ դրանով իսկ ինչ-ինչ խնդիրներ ստեղծելով Իրանի Խոլամական Հանրապետության համար: Դեռևս 1991թ. սկզբից Թեհրանը հատուկ ուշադրություն էր դարձնում այն հիմնախնդրի վրա, թե անկախացած անդրկովկասյան հանրապետություններն ինչպիսի ռազմավարություն կմշակեն Արևմուտքի նկատմամբ: Իրանի Խոլամական Հանրապետությունն իր անմիջական հարևան հյուսիսային նորանկախ հանրապետությունների նկատմամբ իր քաղաքականությունը կառուցում էր նշված հիմնարար սկզբունքին համպատասխան: Գաղտնիք չէ, որ արևմտյան պետությունների, մասնավորապես՝ ԱՄՆ-ի և տարածաշրջանում նրա դաշնակիցների խնդիրն է սահմանափակել իրանական ռազմական և տեխնոլոգիական առաջիւաղացումը, որը դիտվում է որպես Արևմուտքի ռազմավարական շահերին սպառնացող մեծագույն վտանգ: Կասկածից վեր է, որ հանճինս արևմտյան մի շարք կառույցների, մասնավորապես՝ ՆԱՏՕ-ի, ինչպես նաև Իսրայելի պետության, Իրանը տեսնում է իր ռազմավարական շահերը տարածաշրջանում սահմանափակող, ավելին՝ կասեցնող կարևոր գործոն: Ընդորում՝ Թեհրանը մտավախություն ունի, որ Թել-Ավիվին կհաջորդվի հակահրանական ճակատի մեջ ընդգրկել տարածաշրջանային այնպիսի երկրների, ինչպիսիք են՝ Թուրքիան, Աղբյուրեցանը և Վրաստանը<sup>1</sup>:

Այսպիսով, Իրան-Իսրայել առճակատումը, դուրս գալով գուտ խոլամական խնդիրների շրջանակներից (‘Ղողա՛’ մուսուլմանական սրբավայրերի ազատագրումը սիոնիստական բռնազավրումից, ինչպես նաև Իսրայելի կողմից գրավալ արաբական տարածքների վերադարձի հարցը) ձեռք է բերում աշխարհաքաղաքական սուր առճակատման

բնույթ, որը լուրջ սպառնալիք է մերձավորարևելյան խաղաղության ու կայունության համար: Ներկա փուլում կողմերի միջև այդ թշնամական դիմակայունությունն ընդունել է այնպիսի սուր քնույթ, որ ԻԻՀ նախագահ Սահմանադատության չխորչեց հայտարարելու. «Խորայելը պետք է վերանա աշխարհի քաղաքական քարտեզից»<sup>2</sup>:

ԻԻՀ նախագահի այդ հայտարարությունն արևմտյան պետությունների և, առհասարակ, համաշխարհային հանրության կողմից դիտվեց որպես ծայրահեղական ոգով կատարած հայտարարություն, ինչն անկանության քաշասական հետևանքներ ունեցավ ԻԻՀ պետական հեղինակության համար:

ՆԱՏՕ-ն և Արևմուտքի երկրներն իրենց կովկասյան ռազմավարության մեջ կարևոր գնահատական են տալիս Աղրբեջանի աշխարհաքաղաքական կարողություններին՝ մատնանշելով նրա առանցքային դերը՝ որպես Արևմուտքի տարածաշրջանային քաղաքականության «նեցուկ տարր» ոչ միայն Կովկասում, այլև Մերձավոր Արևելյում և Իրանում: Աղրբեջանի կարևոր դերը կասպիական էներգետիկ պաշարների յուրացման և տեղափոխման ծրագրերում, դաշնակցային հարաբերությունների հաստատման մեջ հստակ ուղղվածությունը դեպի ՆԱՏՕ և արևմտյան կառույցներ Բաքվին՝ Վաշինգտոնի համար վստահելի դաշնակցի դերում դարձնում են ավելի գրավչական և հեռանկարային հենակետ՝ ամերիկյան ներկայությունը տարածաշրջանում ամրապնդելու նպատակով:

Նկատի ունենալով, որ նորանկախ Աղրբեջանի Հանրապետությունը ԻԻՀ սահմանակից պետություն է, միաժամանակ հանդիսանալով իրանական կառավարող էլիտան ներկայացնող խլամական շրջանակների գնահատմամբ աշխարհի «Երկրորդ մահմեղական շիական պետությունը», Թեհրանը մշտապես սևեռուն հետաքրքրություն է դրսերում այդ նորանկախ պետության արտաքին քաղաքական կողմնորոշիչների նկատմամբ: Ընդորում՝ իրանական քաղաքական շրջանակներում արդեն կայուն կերպով ճևավորվել է այն տեսակետը, որ ԱՀ արտաքին քաղաքականության արևմտամետ կողմնորոշումն այլև անշրջելի է, մասնավանդ որ այն սերտորեն կապված է տարածաշրջանում նավթային շահերի հետ, ինչպես նաև այն իրողության, որ Արևմուտքն առհասարակ դրսերում է Կովկասում աշխարհաքաղաքական ներկայության բուժն և անկասելի ձգտումներ:

Հարկ է նշել, որ Աղբքեջանը՝ որպես Իրանի դեմ գործոն, օգտագործվել է 1990-ականների ողջ ընթացքում:

Փաստորեն, Աղբքեջանը դիտվում է որպես կարևոր բաղկացուցիչ՝ Իրանին որոշակի քաղաքական պայմաններ պարտադրելու ամերիկականացնելական ծրագրերում:

ՆԱՏՕ-ին անդամակցելու՝ Աղբքեջանի մտադրության մասին առաջին անգամ 1991թ. դեկտեմբերի 4-ին խոսել է արտաքին գործերի նախարար Հովսեյն Սահիխովը: Խսկ 1992թ. հունվարին նախագահ Այազ Մութալիբովը ուղարկած համագործակցության պայմանագիր կնքեց ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիայի հետ: Նույն թվականի հունիսի 6-ին Արուլֆազ Էլիքեյը հայտնեց, որ Աղբքեջանի Հանրապետության հիմնական գործընկերներ են ԱՄՆ-ը, Թուրքիան և ՆԱՏՕ-ը<sup>3</sup>: Ակնհայտ է, որ այս քայլերը չեն կարող չափանկատացնել ԻԻՀ-ին, և Թեհրանում ի վերջո ճնապորվեց այն տեսակետը, որ Աղբքեջանը ԱՄՆ-ի, ՆԱՏՕ-ի, Իսրայելի և Թուրքիայի համար ճանապարհ է բաց անում դեպի Կովկաս և, առհասարակ՝ դեպի տարածաշրջան, որոնք հիմնավորվելով անխուսափելիորեն աշխատելու են թուլացնել Իրանի ազդեցությունը:

Աղբքեջանի նկատմամբ Արևմուտքի հետաքրքրությունն է ավելի մեծացավ 1994թ. նավային պայմանագրեր կնքելուց հետո: Հատկանշական է, որ ԱՀ-ն մինչև 2000թ. խոշորագույն նավային ընկերությունների հետ կնքել է 45 մլրդ դոլար արժողությամբ մեկուկես տասնյակ միջազգային պայմանագրեր: Ի դեպ, շատ պայմանագրերում առաջատար դեր են խաղում ամերիկյան ընկերությունները կամ հիմնական քաժնետոմսերի մեծ մասը գտնվում է նրանց ձեռքում, օրինակ՝ Amoco, Pennzoil, Exxon, UNOCAL<sup>4</sup>, ինչը հնարավորություն է տալիս նրանց կանխորշել և վերահսկել ամրող կովկասյան նավային ուղարկարությունը:

Ուշագրավ է, որ Աղբքեջանի ընդդիմությանը որոշ ներկայացուցիչներ համարում են, որ Աղբքեջանը չափազանց զգուշակոր է, փոխանակ ամրող արագությամբ շարժվելու դեպի ՆԱՏՕ-ի հետ անդամակցելուն:

Այս կապակցությամբ «Աղբքեջանա-ատլանտյան» համագործակցության աստղիացիայի նախագահ, «Մուսավար» ընդդիմադիր կուսակցության անդամ Սուլիմադին Ազրերը ասել է. «Ճիշտ է, որ այսօր գոյություն ունեն ներքին և արտաքին խնդիրներ

Աղրբեջանի՝ ՆԱՏՕ-ին ինտեգրվելու համար, բայց եթե Աղրբեջանը գործեր ավելի արագ, այսօր Թիֆլիսի հետ միասին կկարողանար դիմագրավել Մոսկվայից և Թնհրանից ժամանակ առ ժամանակ սպառնացող ճնշումներին»<sup>5</sup>:

Աղրբեջանը միացել է ՆԱՏՕ-ի «Համագործակցություն հանուն խաղաղության» (ՀՀՆ) ծրագրին 1994թ. մայիսի 4-ին, երբ Հ.Ալիևը ստորագրեց նշված ծրագրին Աղրբեջանի միանալու փաստաթուրը, ինչը պաշտոնական Բաքվի համար շատ կարևոր նշանակություն ուներ ոչ միայն Աղրբեջան-ՆԱՏՕ փոխհարաբերությունների զարգացման, այլև հայ-աղրբեջանական կոնֆլիկտի տեսանկյունից<sup>6</sup>: Բարուն ՀՀՆ ծրագիրը դիտում էր որպես ազգային անվտանգության ռազմավարության ձևավորման նախարան՝ բացառապես Արևմտյան ռազմաքաղաքական երաշխիքների հենքի վրա, և լավ հնարավորություն՝ սերտորեն ինտեգրվելու ՆԱՏՕ-ի անվտանգության համակարգին՝ ընդուած մինչև անդամակցելը դաշինքին: Իսկ 2002թ. ի վեր համագործակցում է դաշինքի հետ գործընկերության անհատական շրջանակներում<sup>7</sup>:

1995թ. հունվարին Աղրբեջան էր ժամանել ՆԱՏՕ-ի եվրոպական ուժերի հրամանատարի տեղակալ գեներալ Զ. Մաքքենզին: Բաքվում նա հայտարարել էր, որ ՆԱՏՕ-ն կարող է էական դեր խաղալ աղրբեջանական ռազմական ուժերի կառուցման և կատարելագործման մեջ: Մի շարք ռազմական հեղինակավոր փորձագետների կարծիքով. «Աղրբեջանում ՆԱՏՕ-ին անդամակցելու ուղղությամբ մեծ աշխատանքներ են տարվել»<sup>8</sup>:

Ուշագրավ է, որ մինչև 2006թ. ԱՀ-ն մասնակցել է ՆԱՏՕ-ի ՀՀՆ ծրագրի շրջանակներում 403 զինավարժանքների և այլ միջոցառումների: ՆԱՏՕ-ի անդամ երկրները՝ առաջին հերթին ԱՄՆ-ը և Թուրքիան, աջակցել են Աղրբեջանին տարբեր ռազմական ծառայությունների արդիականացման հարցերում, անց են կացրել սպայական դասընթացներ: Աղրբեջանի խաղաղարարները մասնակցություն են ունեցել նախկին Հարավսլավիայում, Աֆղանստանում և Իրաքում: Մի խոսքով, աղրբեջանական բանակը, կարելի է ասել, որոշակիորեն փուլային անցում է կատարել դեպի ՆԱՏՕ-ի շափորոշիներին<sup>9</sup>:

Աղրբեջանի ծրագրերում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Թուրքիան, որն ուղեկցվում է «ավագ եղբոր» և երկարաժամկետ ուղմավարական դաշնակցի կարգավիճակով: Այս երկիրը ՆԱՏՕ-ի մյուս անդամների հետ միասին օգնություն է ցույց տալիս տեխնիկական սարքավորումների և սահմանապահ կայութի պատրաստման հարցերում: Աղրբեջանին հատկացվող ուղմատեխնիկական աջակցությունը կրում է պարբերական ու պայմանագրային քնույթ: Սանավորապես, Թուրքիայից հատկացվող օգնությունը՝ բաց ձևերով (4-5 մլն դոլար) և փակ ճանապարհներով, տարեկան ընդհանուր կազմում է 35-45մլն դոլար<sup>10</sup>:

Անկասկած, այդ բռնորդ Իրանի կողմից դիտվում է որպես իրական սպառնալիք՝ ուղղված իր արտաքին սահմանների անվտանգությանը<sup>11</sup>:

Արևոտքում հասկանում են, որ Աղրբեջանը փորձում է օգտագործել ՆԱՏՕ-ի հնարավորություններն իր հիմնախնդիրները լրիծելու համար: Ուստի, Աղրբեջանական կողմի հայտարարություններին՝ ՆԱՏՕ-ի կազմում շրուտավույր՝ կերպով ընդունվելու մասին, վերաբերվում են մեծ վերապահությամբ՝ հասկացնելով, որ մինչ այդ կազմակրպությանն անդամակցելը, Աղրբեջանը դեռևս պետք է անցնի ճանապարհ:

Ինչ պաշտոնապես հանդես եկավ նախագուշացումներով՝ ընդդեմ ԱՀ-ում ՆԱՏՕ-ի ուղմական քաղաքների տեղադրման ցանկացած փորձերին: Այսպես, ԱՀ արտգործնախարար Թ. Զուլֆուղարովի 1999թ. մարտի 12-ին Թեհրան նախատեսվող 4-օրյա այցի ժամանակ, ինչպես նշել էր «Խորասան» օրաբերքը. «Զուլֆուղարովը պետք է բացատրություններ տա, թե ինչպես է ստացվել, որ ԱՍՍ և Խորայելը տարածաշրջանում ակտիվ գործունեություն են ծավալել: Ինչքան ել որ նրանք ապացուցեն, որ այդ համագործակցությունն արվում է Ռուսաստան-Հայաստան համագործակցությանը հակառելու համար, սակայն պետք է ուշադրություն դարձնել, որ ԱՍՍ վերտարածաշրջանային երկիր է և իր հատուկ շահերն է հետապնդում, իսկ դրանց պաշտպանելը կարճաժամկետ է լինելու, այնինչ՝ տարածաշրջանի հարևանների համագործակցությունը երկարաժամկետ է, և հարևանների միջև գժություններ մտցնելը վտանգավոր է և անարդյունավետ»: Բացի այդ, թերթում նշված է նաև, որ Իրանի հանդեպ ազերիական որոշ լրատվամիջոցների

գործունեությունը, նախքան Կասպից ծովի իրավական կարգավիճակի ճշտումը և ափամերձ երկրների փոխհամաձայնության հասնելը՝ կասպիական էներգետիկ ռեսուրսներից օգտվելը, Խորայելի հետ համագործակցելը, ամերիկյան «Ինչրիլք» ռազմական բազայի տեղափոխումը Թուրքիայից Ապշերոնի թերակղզի, Աղրբեջանում հակաիրանական խմբավորումների գործունեության բույլտվությունը և այն՝ այն երևույթներից են, որոնք մտորելու տեղիք են տալիս<sup>12</sup>:

Հարկ է նշել, որ ԻԻՀ առանձին դեպքերում կարողացել է որոշակի առումով ստիպել Բաքվին Թեհրանի նկատմամբ հավասարակշռված քաղաքականություն որդեգրել: Այս կապակցությամբ «Զոմհուրի-է Էսլամի» թերթը նշել էր. «Բաքվի հետ պետք է խոսել ուժային դիվանագիտության լեզվով, այլ ոչ թե՝ խալամական կարեկցանքի: Աղրբեջանի նկատմամբ ուժային մերուներին դիմած երկրները դրական արդյունք են ստացել»<sup>13</sup>: 2001թ. հուլիսին իսկապես իրանական կառավարությունը կատարեց մկանների լուրջ ցուցադրում: Իրանի կործանիչներն ու ռազմանավերը ներխուժեցին աղրբեջանական տարածք և արգելեցին նավթային տեղանքի հետախուզական աշխատանքներ կատարել վիճելի գոտում<sup>14</sup>:

Թեև հետազում Բաքուն այդ քայլերը փորձում էր հիմնավորել նրանով, որ անհրաժեշտ է տարածաշրջանում ստեղծել ուժերի հավասարակշռություն, կասկածից վեր է սակայն, որ դա հետապնդում էր նաև զուտ քաղաքական նպատակներ, այն է՝ ճնշում գործադրել Թեհրանի և Մուսկվայի վրա: Այսպիսով, որպես ճնշման միջոց՝ նավթի գործունից բացի շրջանառության մեջ էր մտնել նաև ռազմական բազանների հարցը:

Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ պետք է նշել, որ ներկայումս Իրանի Խալամական Հանրապետությունը բնակ չի թաքցնում իր դժգոհությունն Աղրբեջանի Հանրապետության քաղաքականության նկատմամբ և առիթը բաց չի բռնում դիվանագիտական ճնշում գործադրելու Բաքվի վրա՝ նրան մեղադրելով այն բանում, որ հանդիս է զայս ԱՄՆ-ին, ՆԱՏՕ-ին, Խորաբյելին և արևմտյան նավթային ընկերություններին տարածաշրջան «քերելու» դերում:

Ներկայումս ԻԻՀ արտաքին քաղաքականության հիմնարար սկզբունքներից մեկն այն է, որ պետք է պահպանվի առկա երկրագաղաքական հավասարակշռությունը: Տարածաշրջանային

երկրները շպետք է բոյլ տան, որ արտաքին ուժերը միջամտեն ռեգիոնի երկրների ներքին գործերին կամ փորձեն այս կամ այն ձևով որոշել տարածաշրջանի երկրների ապագա ճակատագիրը: Իրանը բնակ չի ցանկանում նաև իր սահմանների մոտակայքում տեսնել արևմտյան ընկերություններին<sup>15</sup>: Ուստի կասկածից վեր է, որ իրանապերեցանական հարաբերությունների ապագան մեծապես կախված է լինելու այն կարևորագույն գործոնից, թե առաջիկայում ինչ զարգացումներ և քաղաքական կողմնորոշիչներ կնկատվեն Ադրբեյջանի արտաքին քաղաքական վեկտորների բնագավառում:

AREN VARDERESYAN  
(IOS)

### THE ATTITUDE OF ISLAMIC REPUBLIC OF IRAN TOWARDS THE FOREIGN POLITICAL ORIENTATIONS OF AZERBAIJAN

The Islamic Republic of Iran considers the access of the NATO, USA and other West European countries into the Caspian region "a big historical mistake" by Azerbaijan. An extremely negative response is generated for Tehran by the information of the American or NATO's military bases location possibility in the territory of the Republic of Azerbaijan especially after the events in Afghanistan and Irak. If we take into consideration the circumstance that one of the basic principles of the foreign policy of IRI is the maintenance of the existing geopolitical balance, then Tehran would never want to see the western companies near its borders. On the other hand Iran thinks that only near Caspian republics can use the treasures of the Caspian Sea, and not the out-of-region powers.

And the national view of Azerbaijan also depends on the use of ambitions of the geopolitical presence in the Caucasus of the Western States.

#### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Мурадян И., "Политика США и проблемы безопасности региона Южного Кавказа", Ер., 2000, с. 151-152.
2. Грунин В. Ф., "Азербайджан: этот нелегкий суверенитет", <http://www.e-journal.ru/bazarub-st2-3.html>
3. АЗЕРБАЙДЖАН-НАТО(обзор взаимоотношений с 1992-го по 2006г), <http://www.analitika.az/browse>.
4. Юнусов А., "Политическая ситуация в Азербайджане и проблема безопасности на Южном Кавказе"// Южный Кавказ: Региональная безопасность и стабильность, Ер., 2004, с. 20-21.
5. Мамедов Др., "Азербайджан: Осторожное движение к НАТО", "Зеркало", 27 ноября, 2006 [http://iwpz.net/?arc\\_stato=hcnicrs2006&l=u&s=f&o=325615](http://iwpz.net/?arc_stato=hcnicrs2006&l=u&s=f&o=325615)
6. АЗЕРБАЙДЖАН-НАТО(обзор взаимоотношений с 1992 по 2006), <http://www.analitika.az/browse>.
7. Նոյն տեղում:

8. Тимошенко В., "Сегодня Азербайджан больше, нежели какая-либо другая республика СНГ, отвечает стандартам НАТО", Day Az, 22 ноября, 2007, <http://www.day.az/news/politics/98881.html>.
9. АЗЕРБАЙДЖАН-НАТО (обзор взаимоотношений с 1992-го по 2006г), <http://www.analitika.az/browse>.
10. Мурадян И., Եշվ. աշխ, էջ 80:
11. Наапетян А., "Об углублении сотрудничества Азербайджан-Израиль", <http://www.noravank.am/pu/717>, 04 июня 2007.
- 12.ՀՀ ԱԳՆ Մերձավոր և Սիժին Արևելքի երկրների վարչություն, Իրամի բաժին, տեղեկատվություն (րաց) # 03-23, 14.03. 1999թ.:
13. «ԶՈՒՄԻԿԻ-Է ՀԱՅԱՄԻ», 13 հունվար, 1998:
14. Юнесов А., Եշվ.աշխ, էջ 18:
15. Բայրության Վ., Իրամ-Ալյոթքան. հարևաններ, թե՞ աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական ախտյաններ, Մերձավոր և Սիժին Արևելքի երկրներ և ժողովրդներ, հ. XXII, Եր., 2003, էջ 32:

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ  
ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱԴԱՍՅԱՆ ՍՈՒՄԱՆՆԱ  
(ՀԱԻ)

ՄԵՊԱԳԻՐ ԵՎ ԱՅԼԱԼԵԶՈՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՄԵՍՐՈՂ ՍՄՐԱՏՅԱՆԻ ԱԾԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ


Հայկական վիմական արձանագրությունների նկատմամբ հետաքրքրությունն առանձնապես մեծ թափ առավ XIX դարում, երբ մի շարք անվանի տեղագիր-ուսումնասիրողներ (Հ. Չահիսաքումյանց, Ս. Զալալյանց, Մ. Քարխուդարյանց, Քաջթրումի, Կ. Կոստանյան և այլն) սկսեցին հավաքել պատմա-ճարտարապետական հուշարձանների որմերին և հուշակորողների վրա փորագրած քարագիր վավերագրերը, որոնք հարուստ են պարունակում Հայաստանի քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքի մասին: Այդ ուսումնասիրողների թվում էր Մայր Արորի միարան Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցը (1833-1911թ.):

Մեսրոպ արք. Սմբատյանցը, լինելով քարեկիրը և ուսյալ հոգևորական, իր պարտքն է համարել հայությանը հաղորդել հոգևոր արժեքներ, կորստից փրկել, պահպանել, վերականգնել հայկական եկեղեցական, կրթական, մշակութային հաստատությունները, ձեռագիր մատյանները, ընդօրինակել դարերի ընթացքում եղծված, անտարբերության մատնված հայատոք, այլակեզր վիմագրերը՝ իր հրատարակած ու անտիպ աշխատություններում ստեղծելով վիմական արձանագրությունների մի ստվարածավալ ժողովածու, որի գիտական նշանակությունը արդիական է մինչ օրս: Նրա կատարած գործունեության մեջ առանձնակի տեղ ունի տարբեր դարաշրջաններին վերաբերող այն արձանագրությունները, որոնց քարենքն ապացույցները մեզ չեն հասել: Այդ առումով նրա ընդօրինակություններն ու վերծանությունները անգնահատելի են՝ համարվելով եզակի սկզբնադրյուր:


Մեսրոպ արք. Սմբատյանցի տպագիր և անտիպ աշխատություններում, բացի հայերեն վիմագրերից, պահպանվել են ավելի քան երեք

տասնյակ սեպագիր և այլալեզու արձանագրություններ, որոնք հայագիտության համար աղբյուրագիտական մեծ արժեք են ներկայացնում:

Մ. Սմբատյանցի ուսումնասիրությունների արդյունքում Սուլըմալուի գավառի Ցոլակերտ (Նախկինում՝ Դաշրուտուն) գյուղի տարածքից հայտնաբերվել են երկու քարի վրա պահպանված նշանագրեր<sup>1</sup> (Ակ. 1-2): Դրանք դասվում են գծային կամ «առեղծվածային» գրերի շարքը<sup>2</sup> և մինչ օրս լրատարանված չեն<sup>3</sup>: Մ. Սմբատյանցը, թեև չի հիմնավորում, բայց նմանագրում է, որ այդ նշանագրերը առնչվում են «հայրան» գրերի հետ<sup>4</sup>:



Ակ. 1



Ակ. 2

Վանի թագավորության շրջանում (Ք.Ա. IX-VI դդ.) Հայկական լեռնաշխարհի տարածքում հանդես են գալիս աքքաղերեն (ասսուրերեն) և ուրարտերեն սեպագիր արձանագրությունները, որոնք տեղեկություններ են հաղորդում լեռնաշխարհի վաղ հասարակությունների պետական, ուազմաքաղաքական, տնտեսական, մշակութային կյանքի վերաբերյալ:

Թեև Մ. Սմբատյանցը հանդես չի գալիս որպես սեպագիր արձանագրությունների վերծանող, սակայն, ինչպես նշում է Վ. Գալամդարյանը, «Հապիազանց մեծ է և շարժակալ Էջմիածնական մեծավաստակ գիտնականի անխոնց աշխատանքը համաշխարհային ընթաքանոյակ գիտության մեջ: Սմբատյանի վաստակը պատիվ է քերում Մայր Արոտի և Էջմիածնի և միարանությանը<sup>5</sup>: Պատահական չէ, որ Մ. Սմբատյանցի գործունեությունը բարձր են գնահատել Հ. Աճառյանը<sup>6</sup>, Ա. Արրահամյանը<sup>7</sup>, Լեոն: Վերջինս նշում է, «որ չունենալով փոքր ի շատե ընդարձակ կրթություն, այլ լինելով լոկ հնություններ սիրող, ուշադրության առարկա է դարձնում սեպագիր արձանագրությունները և հետզինտե, տասնյակ տարիների ընթաքանության մեջ գտնում է այդպիսի արձանագրություններ և հաղորդում գիտնականներին»<sup>8</sup>:

1860-90-ական թթ. Մ. Սմբատյանցն իր հետախուզական անխոնջ աշխատանքների արդյունքում Արևելյան Հայաստանի տարրեր վայրերից հայտնաբերել է երկու տասնյակ սեպագիր արձանագրություն, որոնք տեղափոխվել են Եջմիածնի Շեմարանի թանգարան: Հոգևոր գործունեությանը գուգահեռ ավելի քան երեք տասնամյակի ընթացքում «արքեպիսկոպոս Մեսրոպը շարունակում էր և մինչեւ այժմ ևս շարունակում է որոնել և աշխարհ հանել այս նիւթերը՝ լոյս ընծայելով այդ ամենը ս. Էջմիածնում երատարակուող «Արարատ» ամսագրում: Արեւմտեան ուսումնականները երախտագիտութեամբ օգուտ էին քաղում նորա բնագրերից, թէպէտ և շատ ամբաւարար էին համարում<sup>8</sup>: Ժամանակին սեպագիր արձանագրությունները երատարակվել են «Արարատ», «Քազմակեան», «Ծոռքադր» և «Համբաւարեր Ռուսիոյ» պարբերականներում, իսկ հետագայում ամփոփվել են «Քենուաճն արձանագրութիւնը Արարատեան նահանգի 1862-1910թթ.» ուսումնասիրության մեջ: 1892թ. Մոսկվայի Կայսերական հնագիտական ընկերությունը խնդրում է Սմբատյանցին իրենց տրամադրել այլալեզու արձանագրությունների իր հավաքածուն և արդյունքում «Հայաստանեայց եկեղեցու այս պատկառելի պաշտօնեայն, սիրով ու յօժարութեամբ Ընկերութեան տրամադրութեան տակ դրեց իր ունեցած բոլոր նիւթերը»<sup>9</sup>:

Մ. Սմբատյանցի ընդօրինակությունները գերծ չեն թերություններից, քանի որ նա ծանոթ չի եղել սեպագիր նշաններին, սակայն խոր սրտացավությամբ և հնարավորինս ճշգրտությամբ է ընդօրինակել որանք: Նրան հատկապես ցավ էր պատճառում բնակիչների անտարբերությունը քարե վկայարանների նկատմամբ: 1880-1881թթ. Ցոլակերտից հայտնաբերված սեպագիր արձանագրություններից մեկը դարձրել էին սանրի քար<sup>10</sup>: Սմբատյանցը պարսպանիր խոսքեր է ուղղում նրանց, ովքեր Արմավիրի բլրի հինավորց պարսպի քարերը օգտագործել են տարբեր նպատակներով. «Ամօր մերձակայ Հայ գիտեցոց, որ իրենց նախսեաց քանկագին յիշատակը խնամքով չեմ պահպանում»<sup>11</sup>: 1895թ. լինելով Լճաշեն (նախկինում Օրդակլո) գյուղում ցավով նշում է սեպագիր արձանագրության մասին, որ «շատ ափառացի, որ տառերը անձրևից մաշտում էին, պէտք է քարով ծածկել զոլիս»<sup>12</sup>:

Անշուշտ, սեպագրների հայտնաբերումը, ընդօրինակումը կապված են եղել դժվարությունների հետ: Ծովինար (նախկինում՝

Ալշալու) զյուղից հայտնաբերված սեպագիր արձանագրությունը գրառելիս «Սևանայ ծովի մակերևոյքը այնքան բարձր էր, որ ջուրը հաւասար էր արձանագրին և մենք նաւակով գնալով ջրի վրայ՝ մօտեցամբ արձանագրին և այնպէս օրինակեցինք»<sup>13</sup>: Ընդօրինակությունը ճշտելու համար արձանագրությունները համեմատել է բնագրի հետ քան տարի անց, որը վկայում է գիտության նկատմամբ նրա անսահման նվիրումի մասին:

Մեսրոպ արք. Սմբատյանցի կողմից հայաբնակ տարբեր վայրերում հայտնաբերվել են նաև հունարեն, վրացերեն, արաբերեն, պարսկերեն, ուստերեն արձանագրություններ: Վրացերեն արձանագրությունները կարևոր նշանակություն ունեն միջնադարյան Հայաստանի Զաքարյան իշխանական տոհմի գործունեության, հայ-վրացական կապերի, տցիալ-տնտեսական հարաբերությունների, ներքին կյանքի, պատմության, մշակույթի ուսումնասիրության համար: Պատահական չէ, որ Հայաստանի տարածքում պահպանված վրացերեն արձանագրությունների թիվն անցնում է հարյուրից: Դրանք հիմնականում պահպանվել են Զաքարյան իշխանների կողմից ազատագրված Հայաստանի հյուսիս-արևելյան տարածքներում:

Վրացերեն արձանագրություններով հարուստ է Թեժառույթի վանական համալիրը: Արձանագրությունները պահպանվել են եկեղեցու հարավային, արևելյան արտաքին պատերին<sup>14</sup>, տապանաքարերին, որոնք ունեն շինարարական և հիշատակագրային բովանդակություն<sup>15</sup>: Մ. Սմբատյանցի կողմից ընդօրինակված բոլոր ինը արձանագրությունները թերի են և առանց վերծանությունների:

Թեժառույթի արձանագրությունների ուսումնասիրությամբ հետագայում գրադարձել են ինչպես վրաց գիտմականները, այնպէս էլ հայագետ Պ. Սուրայյանը: Վերջինս նշում է, որ թեև արձանագրությունները վերծանված են, սակայն բովանդակային առումով մնում են շլուսաբանված<sup>16</sup>:

Մ. Սմբատյանցի կողմից մեկ այլ վրացերեն արձանագրություն ընդօրինակվել է Սևանա թերակղու ս. Աստվածածին եկեղեցու տարածքից: Տապանագիրը եռակեզու է (հայերեն, ուստերեն, վրացերեն), բվագրվում է 1855թ<sup>17</sup>:

Հայաստանի տարածքից հայտնաբերված արաբերեն արձանագրությունների (VIII-XVI դդ.) թիվն անցնում է 500-ից: Մ.

Սմբատյանցի ուսումնամիջություններում հիշատակվում է արաբատառ մի տապանագիր, որը գտնվում է Նորատուսից արևամուտք՝ Աբելու կոչվող Վայրում։ Օրորոցածն տապանաքարը չօրս կողմից եզերված է արձանագրությամբ<sup>18</sup>, սակայն հեղինակն ընդօրինակել է միայն հարավային կողի գրությունը՝ այն էլ թերություններով, «իսկ մնացածը դժուարութեամբ փորագրելոյ համար չարտագրեցա»<sup>19</sup>:

1887-94թթ. Մեսրոպ Սմբատյանցը, լինելով Ծամախու թեմի առաջնորդ, ուսումնասիրել է տեղի հնությունները, ընդօրինակել ինչպես հայերեն, այնպես էլ այլալեզու արձանագրությունները։ Դրանցից է Դերբենտ քաղաքի պարսպի հարավային դարպասի ճակատին փորագրված արձանագրությունը<sup>20</sup> (նկ. 3)։ Այն թարգմանվում է «ԱԼԼԱՀ, ԱԼԼԱՀ, ՓԱՌԵ ԱԼԼԱՀԻՆ»<sup>21</sup>։

### Ա Խ Ո Հ Ա Լ Ի Ա Լ Ե Ա Ս

նկ. 3

Ա. Սմբատյանցը Դերբենտի հյուսիսային ամրությունների արտաքին պարսպից ընդօրինակել է աղվաններեն արձանագրությունը<sup>22</sup> (նկ. 4)։ Այն Դերբենտ անվան աղվանական ձևն է, թարգմանվում է «Դուան սահման»<sup>23</sup> և թվագրվում է VI-VIIդդ։

### Ա Լ Ե Ա Լ Ի Ա Լ Ե Ա Ս

նկ. 4

Արձանագրության մեջ կան անշշտություններ և ընթերցելու համար պետք է այն շրջել (նկ. 5)։

### Զ Ա Ր Ա Շ Ա Ռ Ե Ա Ռ Ե Ա Ռ

նկ. 5

Ն. Մուրավյովի վերծանությամբ սա է արձանագրության վերջնական տարրերակը (նկ. 6)<sup>24</sup>.

### Զ Ո Ժ Ա Ռ Ե Գ Ե Ա Ռ

նկ. 6

Եվս մի արձանագրություն նա հայտնաբերել է Ծամախի երկրամասում գտնվող Ղաղալա քերդի ավերակներում<sup>25</sup>։ Այն փորագրված է զետնափոք կամարակապ մի շինության պատին (նկ.7), և մինչ օրս չի վերծանվել։

16 Մթ

Ակ. 7

Մ. Սմբատյանցը հրատարակել է նաև Բաքվի թերոյից ընդօրինակած պարսկերեն արձանագրությունը<sup>26</sup> (Ակ. 8)՝ նշելով դրա վերծանությունը՝ «ԴԵՐՎԱՉԵՒ ԾԱՀ ԱԲԱՍ», հայերեն թարգմանությամբ՝ «ԾԱՀ ԱԲԱՍԻ ԴԱՐՊԱՍՆԵՐ»<sup>27</sup>:

Հայութ Շահ Աբաս

Ակ. 8

Մ. Սմբատյանցի արխիվային նյութերում պահպանվել է Սելիմի քարավանատան մուտքի քարավորի արձանագրությունը: Գիտնականների մի մասը գտնում էն, որ այն արաբերեն<sup>28</sup> է, մյուս մասը՝ պարսկերեն<sup>29</sup>: Սմբատյանցն ընդօրինակել է հիշյալ արձանագրությունից միայն մի տող, այն էլ թերություններով և ենթադրել է, որ այն գրված է թուրքերեն<sup>30</sup>:

Արխիվային մեկ այլ փաստաթրում հիշատակվում է, որ Ագուլսի և Հովհաննես Եկեղեցու զանգակատան դռան քարավորի հարավային որմին ազգացված խաչքարի վրա առկա է հունարեն արձանագրություն (Ակ. 9)<sup>31</sup>, որին կից. «ԾԻՆՈՒԻ ԳԱԼԻԹԻ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ Ի ԺԱՍՏԱԱԿՍ ՌՅԴ (1304թ+ 551=1855թ)»<sup>32</sup>: Հունարեն տեքստի առաջին քառն անհասկանալի է, ենթադրվում է, որ այն ՀԻՍՈՒՍ անվան սխալ ընդօրինակված տարբերակն է, մյուս երկուսը թարգմանվում են «ՔՐԻՍՈՈՍ» և «ՀԱՎԻՍՅՅԱՆ»<sup>33</sup>:

Ի Խ Ծ Օ Տ + Խ Ρ Ի Ծ Տ Օ Ե + 1855 + Ա Վ Ի Վ Ե

Ակ. 9

Մ. Սմբատյանցի ընդօրինակած այլակնու արձանագրությունների շարքում կան նաև մեկ տասնյակի հասնող XIX դարի ոսւսերեն արձանագրություններ, որոնք ունեն հիշատակագրային բովանդակություն և մեծ արժեք չեն ներկայացնում:

SUSANNA ADAMYAN

(IAE)

## CUNEIFORM AND FOREIGN LANGUAGE INSCRIPTIONS IN THE WORKS OF MESROP SMBATIANTC

A number of monuments that are scattered in different regions of Eastern Armenia had eventually undergone to annihilation. In this sense, borrowing, preserving and research of these inscriptions written in various languages (Cuneiform Urartian, Armenian, Georgian, Albanian, Arabian, Persian, Greek, Russian, as well as monuments written in undeciphered script) is an important matter and needs for further investigation.

The Humanities begun to develop in Armenia from the beginning of XIX century onwards, and the members of the Armenian Apostolic Church also performed a considerable role. One of them was Mesrop archbishop Smbatyants (1830-1911).

Mesrop Smbatyants, being an educated and learned clergyman, along with his spiritual life, was also involved in public activities. He made journeys to a number of settlements in various regions of Armenia during 1860-1890. He investigated many monuments of historical interest and copied a number of inscriptions. Thanks to him, about twenty Urartian cuneiform texts and almost the same number inscriptions in foreign languages become available to the science.

### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սմբատյան Մ., Թոլակերտի թերոք, «Արարատ», 1910, հունիս, թիվ Զ, էջ 575: Այդ նշանագրերին հետազում անդապարձել է Հ. Սարտիրոսյանը՝ դրանց վերագրելով բրոնզեղարյան ժամանակաշրջանին (Ք..ա. մոտ II հազարամյակի վերջ և I հազարամյակի սկիզբ): Տե՛ս Սարտիրոսյան Հ., Հայաստանի նախնադարյան նշանագրերը և նրանց ուրարտա-հայկական կրկնակները, Եր., 1973, էջ 7:
2. Սովորյան Ա., Հայկական մնացածություն, Եր., 2003, էջ 11:
3. Նոյն տեղում, էջ 46:
4. Սմբատյան Մ., Թոլակերտի թերոք, «Արարատ», 1910, հունիս, թիվ Զ, էջ 576: Գիտնականների մի մասը ենթադրում են, որ Թոլակերտի քարածային վառ քամուկան նշանագրերը հայկական մնացածություն գործածվող մնացական գրեր են, որոնք նաև են Սյունիքի ժայռապատկերներին: Տե՛ս Արքահամյան Ա., Հայ գրի և գրչության պատմություն, Եր., 1959, էջ 19:
5. Գալամդարյան Վ., Ներոռու արքեալիսկոպոս Սմբատյան, «Էջմիածին» 1958, փետրվար-մարտ, էջ 38:
6. Աճառյան Հ., Հայոց գրերը, Վիեննա, 1928, էջ 11:
7. Արքահամյան Ա., Հայ գրի և գրչության պատմություն, Եր., 1959, էջ 31:
8. Հովհաննիսյան Խ., Թեսուազիր արձանագրութիւններ ուսուց Հայաստանում, «Բազմակիառ», 1897, ապրիլ, էջ 162:
9. Նոյն տեղում, էջ 162-163:
10. Սմբատյան Մ., Հայկական հնություններ, «Արարատ», 1894, դեկ., էջ 373-375:
11. Սմբատյան Մ., Տեղագիր Գեղարքունիքի ծովագարդ գաւառի որ այժմ Նոր-Բայազիտ գաւառ, Վաղարշապատ 1895, էջ 776:
12. Նոյն տեղում, էջ 769:

13. Սեպազիր 20 տողանոց արձանագրությունը հայտնաբերվել է 1862թ. Աևանա լճի հարավային ափից՝ Ալիշալուից: Տե՛ս Սմբատյանց Մ., Տեղագիր Գեղարքունի ծովագարդ գաւառի..., էջ 764:
14. Մ. Սմբատյանցն այդ արձանագրությունները վերագրում է վրացերեն խուցուրի գրատեսակին: 1892թ. արձանագրությունների ընթօրինակությունները Սմբատյանցը Մ., Ենթկայացրել է վլատ հոգիոր գրժիշմերին, որոնք չեն կարողացել վերծանել դրանք: Տես Սմբատյանց Մ., Տեղագիր Գեղարքունի ծովագարդ գաւառի..., էջ 368: Խուցուրի գիրը Վրաստանու շրջանառության մեջ է մտել V դարում իր մեջ ամփոփելով մրավորյի երկարացիր և մասինուրի բոլորացիր գրեթը: Տե՛ս Սուրաբյան Պ., Հայաստանի վլացերեն արձանագրությունները, Երև., 1977, էջ 33: Պահպանվել է շինարարական մեկ (1196-99թթ), տապանագրային իինգ (1223-XIVդ.), հիշատակագրային երեք (1196-XIVդդ.) արձանագրությունները: Տե՛ս Սուրաբյան Պ., Եզվ. աշխ., էջ 298-300:
15. Սուրաբյան Պ., Եզվ. աշխ., էջ 115:
16. Սմբատյանց Մ., Տեղագիր Գեղարքունի ծովագարդ գաւառի..., էջ 123: Հեղինակն ընդորինակած երեք արձանագրություններից ներկայացրել է վրացերեն արձանագրության հայերեն բարգմանությունը. «ՏԵՐ, ՀԱՄԿՈ ԶՀՈԳԻ ՀՐԱԺԱՐԵԱԾ ՅԱԾԽԱՀԿԵ, ՄՏԵԼՈՅ Ի ԿՈՒՄԱՎՐՈՆՈՒԹԻՒՆ Ի ՍԵՎԿՈ ՂԱԶԱՐՈՍԻ ԹԱՅԻՐԵԱԾ ԵՎ ՏՈՒՐ ԿԵՄԱՍ ՈՐԴԻՈՅ ՆՈՐԱ ԱՂԵՐԵՍԱՌՆԻ ԹԱՅԻՐԵԱԾ ՏՓԽԻՍԵՑԻՈՅ Ի 1855 ԱՄԻ»: Տե՛ս Սմբատյանց Մ., Եզվ. աշխ., էջ 124:
17. Խաչատրյան Ա., Կորпус արաբских надписей Армении VIII-XVІІвв., выпуск 1, Еր., 1987, с. 66.
18. Սմբատյանց Մ., Եզվ. աշխ., էջ 490:
19. Սմբատյանց Մ., Նկարագիր սուրբ Ստեփանոսի վանաց Սաղիանի եւ միւս վանօրէից եւ ովհատանեաց, եւս եւ քաղաքացն եւ գիտօրէից որը ի Ծամախոյ թեմի, Տփոխի, 1896, էջ 507:
20. Խորին շնորհակալություն ենք հայտնու ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտաշխատող, արևելագիտ Տիգրան Միքայելյանին արձանագրության վերծանության և բարգմանության համար:
21. Խորին շնորհակալություն ենք հայտնու ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտաշխատող, արևելագիտ Տիգրան Միքայելյանին արձանագրության վերծանության և բարգմանության համար:
22. Սմբատյանց Մ., Նկարագիր սուրբ Ստեփանոսի վանաց Սաղիանի եւ միւս վանօրէից եւ ովհատանեաց, եւս եւ քաղաքացն եւ գիտօրէից որը ի Ծամախոյ թեմի, Տփոխի, 1896, էջ 248: Սույն արձանագրության մասին Վերուժակունները տե՛ս Բարիսուղարյան Մ. «Աղուանից երկիր և դրացիր», Թիֆլիս, 1893թ, էջ 119: Շահնիզ Ա., Հովոօրեցի ալֆանտ կավազսկի ալբանցև և եղ նշանակություն գիտական առողջապահության համար, Թիֆլիս, 1938, կազմ. 71. Տրեվեր Կ.Վ., Օչերք կավազսկա ալբանաց պատմությունների մասին, Երևան, 1959թ, ս. 337-338. Աբդուրամիմ Գ., Կավազսկա ալբանաց պատմությունների մասին, Երևան, 1995թ, ս. 69.
23. Mouraviev Serge N., Lecture alouanienne, Revue des études Arméniennes, Tome 27, Paris, 1998-2000, p. 55.
24. Նոյն տեղում, էջ 54:
25. Սմբատյանց Մ., Նկարագիր սուրբ Ստեփանոսի վանաց Սաղիանի եւ միւս վանօրէից եւ ովհատանեաց, եւս եւ քաղաքացն եւ գիտօրէից որը ի Ծամախոյ թեմի, Տփոխի, 1896, էջ 299:
26. Նոյն տեղում, էջ 390:
27. Թարգմանությունը՝ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտաշխատող, արևելագիտ Տիգրան Միքայելյանի:
28. Հարությունյան Վ., Միջնադարյան Հայաստանի քարավանաւոներն ու կամուրջները, Եր., 1960, էջ 18-19: Զալայանց Մ., ճանապարհորդությունն ի Սեծն Հայաստան, հասոր երկորոյ, Թիֆլիս 1858, էջ 161: Ալիշան Ն., Սիսական, Վենետիկ, 1893, էջ 164-165: Բարիսուղարյան Մ., Խորիդային Հայաստանի նյութական կոլլացիոնայի հուշարձանները, Եր., 1935, էջ 90:

29. Խաչատրյան Ա., Կորպս արաբական հայության VIII-XVI դարերի, վայրէջք 1, Երևան, 1987, շ. 11, 29, 44.
30. ՀԱԱ, ֆոն 429, ցուցակ 1, գործ 5, Տեղեկություն Վայոց ձորի վանքերի մասին, 1853-1873 թ., էջ 5:
31. ՀԱԱ, ֆոն 429, ցուցակ 1, գործ 17, Գողրան գաւառ, էջ 7:
32. Նույն տեղում:
33. Խորին շնարուհակալություն ենք հայտնում ՀՀ ԳԱԱ հիմագիտության և ազգագրության խնաժիտության նախկին գիտաշխատող Նահիքա Կիլիչյանին արձանագրությունը Ժամանակակից հունարենից հայերեն թարգմանելու համար:

## ԱՍՏՐԵՄՆ ՀԱՍՏԻԿ

(ԵՊՀ)

### ՔԸՐԸԵՀԻՐԻ ԲԱՐՔԱԾՈՒ ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆԱԿԱՆ ՈՐՈՇ ԱԽԱՇՎԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քըրշեհիրի բարքառը մտնում է թուրքերենի արևմտյան խմբի 8-րդ ենթախմբի բարքառերի մեջ:

Քըրշեհիրը հիմնադրել են խեթերը հնագույն ժամանակներում: Խեթերից հետո (մ.թ.ա. 1650-1200) փոյուզիացիները (մ.թ.ա. 1200-675), պարսիկները (մ.թ.ա. 546-332), հույները (Կապաղովկիայի թագավորության շրջանը՝ մ.թ.ա. 332-մ.թ. 18), հռոմեացիները (մ.թ. 18-395), բյուզանդացիները (395-1070) հերթով տիրապետել են այստեղ<sup>1</sup>: 1071թ-ի Մանազկերտի ճակատամարտից հետո Քըրշեհիրի պատմության մեջ սկսվեց թուրք-իսլամական տիրապետության շրջանը: Հայտնի է, որ խեթերը Քըրշեհիրն անվանել են Akuna Saravena, այսինքն Suşehri (ջրի քաղաք), հույները և հռոմեացիները Chamanen, Mokissos, Parnossos, բյուզանդացիները Justinianopolis, սելջուկները մի շրջան՝ Gülşehir. Քըրշեհիրի / Քըրշեհիր և Գյուլշեհիր անունները թուրքերի կողմից են տրվել<sup>2</sup>:

### ՉԱՅՆԱՎՈՐՆԵՐ

Քըրշեհիրի և նրա շրջակայրի բարքառերում գրական թուրքենում եղած 8 հիմնական ձայնավորի կողքին գոյություն ունեն հետևյալ ձայնավոր հնչյունները . ա, ա, ա, է ի, օ, օ, ն:

Paraya gäydim, bärârah<sup>3</sup> (bağılarak), güvây inen (güvey ile), sınyâ (sarıyor), yémâni (yemeğini), devlet, yiğit, bitçe (büttçe), gösünde (gögsünde), diyollar (diyorlar), hemordâ hem burdâ, dûnûr (dünür):

Բարքառային շրջանում երկար ձայնավորները կազմավորվել են մի խումբ հնչյունական իրադարձությունների արդյունքում.

1. Վաճկի ժուլմամ հետևամբով. ա)-կ- (> - g -), - g -, - ğ - բաղաձայնների ձուլմամբ. d'ā'lîm < degilim, bayrânı < bayrağını, bō'n < bu + gün, aldi < eğildi, ötā < öteki...

- p)- y - բաղածայնի ծովամբ.  
 şetsin < şey etsin, isen < iyi isen, şelere < şeylere...
- q)- ï - / -n -, -h - բաղածայների ծովամբ.  
 ð'ñ'de < öñnde, dã < daha, ämed < Ahmet...
- Ծրջանում շատ տարածված է մեկից ավելի վանկի մի վանկի տեսրով երկար ձայնավորի փոխվելը (վանկի սահելը). şuncaz < şuncağız, din < dersin, u~äd < o vakit, gidecä'm < gideceğim, ne~bïm < ne bileyim...
2. Բաղածայնի ըմկնելով. բառամիջում ձայնավորից հետո եկող և վանկը փակող -g-, -ğ-, -h-, -k- / -k-, -l-, -n-, -r-, -v-, -y- բաղածայները կամ ըմկնելով կամ էլ ծովալով, իրենցից առաջ գտնվող ձայնավորներին երկարացնում են.
- ա)-g-, -ğ- բաղածայների ըմկնելով.  
 ik~üñ' < iki gün, dödum < doğdum, ölüm < oğlum, yämir < yağmur, bä < bağ, sã < sağı...
- پ)-k- / -k- բաղածայների ըմկնելով.  
 aşam < akşam, ä'simiz < eksigimiz, ösüz < öksüz...
- զ)-y- բաղածայնի ըմկնելով.  
 güvâ' < güvey, kõ'lu < köylü, şöle < şöyle, dëze < teyze, äşe Aşşe...
- ئ)-h-, -h բաղածայնի ըմկնելով.  
 bâşış < bahşış, sil'ä < silâh,..
- ب)-ñ- բաղածայնի ըմկնելով, nırı հազվադեպ է հանդիպում.  
 sõra < soñra.
- ق)-r- բաղածայնի ըմկնելով.  
 getidim < getirdim, yimi < yirmi...
- ت)-v- բաղածայնի ըմկնելով.  
 töbe < tövbe, sõ'müs < sövmüs, kõ'te < kövte < köfte...
- ը)Մեկ երկու օրինակում նկատվում է նաև բառավերջում -x- ի ըմկնելով առաջացած ձայնավորի երկարելը.
- deymë mi < deymez mi, ñi < kiz...
- թ)Արաքերենից գրական լեզվի միջոցով շրջանի բարբառները անցած և վանկերից մեկը կոկորդային չ բաղածայնով վերջացող բառերում, ձայնավորը երկարում է չ բաղածայնի ըմկնելով.
- bâzi < bazı, yâni < ya'ni ...
3. Չույզ ձայնավորների ծովամբ. ñ~ öldu < ne oldu, gar~ ölüm < kara oğlum.

4.Բառին ուժ տալու կամ էլ հասկացությունների իմաստները ավելի ազդեցիկ դարձնելու համար որոշ բառների վերջին վանկեր շեշտով երկար են արտասանվում.

*mışTavā < Mustafa, őlān < oğlan < oğulan, çıldıracı'ń < çaldıracaksın.*

Քըրշեհիրի և նրա շրջակայրի բարբառներում բայերի հարցական խոնարհումներում հարցական մասնիկը համարյա չի օգտագործվում, նրա իմաստը և պաշտոնը շեշտով երկար արտասանությամբ է ապահովվում<sup>4</sup>.

*a'lı < alır misin? gel < gelir misin?*

*bili'yōñ? < biliyor musun?*

### *Ոճային ժայնավորներ*

1. Ծրջանի բարբառներում "bozlağ"<sup>5</sup> անվանմք մեղեղների ուղեկցությամբ արտասանվող բանաստեղծություններում շատ հաճախ են հանդիպում ոնգայնացված ժայնավորների.

*bəci, əteşə, zalim ezirə~il seni burda mi buldū oy...*

2. Ինչպես հայտնի է, թուրքերենում լեզվի հետին կողմի փափոկ քիմքին հպվելով ուղագից արտաքրվող մի ոց հնչյուն, կա որին միջին և հետին քմային ո անունն ենք տալիս: Անատոլիական թուրք բարբառներում տարածված կերպով նկատվող ոնգայնացումը այս շրջանում նույնական տարածված է.

*e~er “eğer” < eñer, ba~ă baña, so~ă < soñra...*

Սի օրինակում նույնական նկատվում է՝ որպես ժայնարկության վերջին վանկի ժայնավոր. ահա "iste":

### *Երկրարրառներ*

Երկրարրառները կազմավորվում են երկու առանձին ժայնավորի մեջ մյուսի հետ միավորվելու, առանձին կամ ածանցների հետ բառերի միջին վանկերում և ժայնավորների միջև գոնվող ę, h, v, y բաղաձայնների ծովալելու արդյունքում: Քանի որ թուրքերենում գույզ ժայնավորի երևույթին սովորաբար բարբառներում ենք հանդիպում, գրական լեզվում նկատվող երկրարրառները օտար հատկապես արարական ծագման բառեր են.saat, şair, şiir, dua...

Վերջին տարիներին արևմտյան լեզուներից անցած բառերում նույնական նկատվում են.

*Fuar, şampuan, kooperatif...*

Եթե զույգ ծայնավորների երկրորդ անդամները առաջինների համեմատ ավելի նեղ և պայքական են սրանց «փջնող» (ցածրացող) երկրարրառներ են անվանում, իսկ հակառակ դեպքում՝ բարձրացող երկրարրառներ: Եթե երկու անդամի ճնշումն ու ուժերը նույնն են, սրանց էլ «հավասար երկրարրառներ» անունն է տրվել:

1. **Բարձրացող երկրարրառներ** = կես ծայնավոր + ծայնավոր.<sup>6</sup> ի՛, ն՛, օ՛, է՛, ի՛, յ՛:

sandīā (sandığa), pū~ār (pinar), bō~āzında (boğazında), cī~ērim (ciğerim), şē~āre (şehir)...

2. **Հավասար զույգ ծայնավորներ** = ծայնավոր + ծայնավոր. a~a, e~e, i~i, ı~ı, u~u, ü~ü:

Քըրշեհիրի և նրա շրջակայթի բարբառներում ամենաշատ հանդիպող երկրարրառների տեսակը սրանք են.

şı~i (şeyi), da~atmiş (dağıtımiş), gırşe~er (kırşehir), sı~ır (sığır), dúúń (düğün)...

3. **Իջնող երկրարրառներ** = ծայնավոր + կես ծայնավոր. ă~ı, ă~u, ă~ı, ă~ı.

Օրինակները թիչ են. çösunu (çögusu), dōu (doğu), gırşeir (Kırşehir), toprāı (toprağı)...<sup>7</sup>

## ԲԱԴԱՉԱՑՆՆԵՐ

Քըրշեհիրի բարբառներում թուրքերեն գրական լեզվի 21 բաղաձայնի կողքին օգտագործվում են նաև ǵ, ǵ̄, կ, ն, հ, կ̄ հնչյունները: Ծրջանի բարբառներում բաղաձայնների փոփոխություններ նկատվում են և՝ բառակզրում, և՝ բառամիջում, և՝ բառավերջում:

Բառասկզրում կատարվող փոփոխություններ.

ķ->g- կննե (günde), կόպեգler (köpekler), կօլge (gölge).

g->ǵ-, k->ķ- ǵō' (gök, yeşil), ǵóbā'ne (göbeğine), կómür (kömür), կóylu (köylü)...

k->ǵ- ǵaba (kaba), ǵadın (kadın), ǵapı (kapı)...

t->d-, d->t- dadlı (tatlı), duzā (tuzağı), tohdur (doktor)...

b->p- pahla (bakla), palta (balta), 'panğa (banka), riçā (bıçağı)...

Բառասկզրում բաղաձայնի առաջանալը. ինչպես որ թուրքական մյուս բարբառներում է, այս շրջանի բարբառներում նույնպես դեպքերը թիչ չեն: Ավելի հաճախ հ-, յ- և ւ- հնչյունների առաջանալն է նկատվում.

habayna (aba ile), hasansör (asansör), havlu (avlu), hayva (ayva)...  
yit- (it)-, yesir (esir), yirahı (ırak), vemanet (emanet)<sup>8</sup> ...

**Բառամիջում կատարվող փոփոխություններ.** բառամիջում կողք-կողքի գտնվող երկու բաղաձայններից մեկը արտաքրման իրեն մոտ որակ կրող մյուսի կողմից ամրողությամբ կամ մասամբ ասիմիլացվում է<sup>9</sup>:

1. *Պրոզրեսիվ առնմանությամբ.*

- ml->-mn- kóy isimneri, durumnarı...
- yl->-yn- babasınınan, arabayna, deveyne, türküne, hocayna...
- rl->-rn- altınnarna, ókúzlernen, onnarna...
- nl->-nn- yannış, bunnar, çimennik, ganni...
- mv->-mm- üzüm\_merin (üzüm verin), on sekiz dâne şíirim\_mar orda...
- sh->ss- messur (meşhur)
- fh->-ff- son saffada
- çy->-çç- üç\_çüz (üç yüz).

2. *Հետադարձ առնմանությամբ.*

- rl->-ll- talla (tarla), billikte (birlikte), hayılı (hayırlı)...
- nb->-mb- istambul, sümbül, om\_başları...
- ls->-ss- góüssüm (Gülsüm), gessin, gut'l~ossuñ...
- zc->-cc- accıh (azıcık).
- ss>-ss- gelmissím, işlemişmissin...
- çs->-ss- irfan kılışsiñ, aşsin...
- zs->-ss- ses gelmesse, góremessin, utanmassam...
- hm->-mm- memmed.
- md->-nd- şindi, şindicik.
- ğn->-nn- inne.

**Բառավերջում կատարվող փոփոխությունները.**

Քըշեհիրի բարբառներում նման փոփոխությունները շրջանի որոշ բարբառների համեմատ քիչ են.

- k>-h ǵırh, paşlıh (başlık), sandıh, çoh, ah (ak)...
- Նոյն փոփոխությունը նկատվում է նաև ապառնի ժամանակի -cih / -cih ածանցում.  
bulacih (bulacağız), yarvalacih (yalvaracağız), yapacih (yapacağı)...
- ç>-ş kerpiş, oruş, kılış, üş,aaS (ağaç), heş (hiç)...
- s>-ş միշտ herpes անորոշ դերանվան մեջ է նկատվում. herpes, herkiş<sup>10</sup>.

- z > -s sekis.
- s > -z yonuz (Yunus), herkez, domatiz (domates)...
- ç > -c aac (ağaç), satırac (satranç), oruc.
- t > -d armid, süd, id (it, köpek)...
- p > -b varib, dutub, çiḥarib...
- k > -g ceng, yemeg, isdemeg (istemek), gúlüşmedig...
- ğ > -ğ aşg, analığ, toplandıǵ, çoǵ...

### *Раңаңдашылғы ұйындар*

- Әліржіліктерің և әңгаш әңдемаларың բағыттағының таралықтардағы ғ, ғ, h, k, l, n, r, v, y, z рәңаңдашылғы ұйындарының тәсілдері:
- f-һ ұйындар. tēvīg (Tevfik), çit (çift), ökelen (öfkelen)...
  - ғ-һ ұйындар. ölan (oğlan), dōru (doğru), būday (buğday), yāmir (yağmur)...
  - h-һ ұйындар. her\_alda (her halde), gāvemizi (kahvemizi), āmed (Ahmed), cepе (cephe)...
  - l-һ ұйындар. 'nasi(nasıl), kahacah (kalkacak), boşattım (boşalttım), atmış beş (altnmış beş)...
  - r-һ ұйындар. bi (bir), saliyosa (saliyor ise), sona (sonra), oturuyoken (oturuyor iken)...
  - v-һ ұйындар. ғашт ғħiż է ғħawatψiim. töbe (tövbe), deşir- (devşir-), mħi ophimawakpsiim է ғħawnawakqarpsiim է ұйындар. ücüt (vücüt):
  - z-һ ұйындар. acciħ (azıcık), ġi! (kız!), getiremesem de (getiremez isem)...
  - k-ķ-һ ұйындар. yū'sek (yüksek), ösüz (öksüz), yōsa (yoksa), cazi\_arısı (cadı karısı)...
  - n-һ ұйындар. īsānnarı (insanları), sōra (sonra), piriç (pirinç), reçberlig (rençberlik)...
  - t-һ ұйындар мәд масаим ғашттарының է ғħawatψiim. çiflik (çiftlik), iras gel- (rast gel-), doslara (dostlara), serbes (serbest), üs (üst)...
  - y-һ ұйындар. dēzeleri (teyzeleri), ulaf (yulaf), buğda (buğday), hābeyi (heybeyi), sülēmen (Süleyman), úce (yüce), üç\_üz (üç yüz), ǵoduñ (koydun)<sup>11</sup>...

### **Հանկի սահելը**

Ինչպես շրջանի մյուս բարբառներում, Քըրշեհիրի բարբառում նույնանականի սահելը բնորոշ առանձնահատկություն է: Այդ պատճառով օրինակներն առատ են.

ne\_bim (ne bileyim), n\_apaz (ne yapacağınız), çekmēn (çekmeyin), nenecim (neneciğim), nā\_yet (nihayet), şēr (şehir), dāsdan (Dağıstan), uad (o vakit), ötō'ñ (öteki gün), nem\_men? (ne bileyim ben?), nō'fdū? (ne gördü?), nō'recā'm? (ne yapacağım? ne göreceğim?)...

### **Բաղաձայնի տեղափոխսպելը**

Բաղաձայնի տեղափոխսպելը երկու կերպ է տեղի ունենում և ըստ այդմ էլ անվանվում է.

ա/ մոտ տեղափոխում բարի մեջ հարևան երկու բաղաձայնի տեղափոխումը: Ծրջանում օրինակներն առատ են.

1.pr- ~ -rp-

toprağ~ torpah, köprü~ körpü, yaprak~ yarpağ, kirpik~ kiprik, kipri(kirpiği).

2.ml- ~ -lm-

memleket ~ melmeket, çömlek ~ çölmek.

3.br- ~ -rb-

kibrit ~ kirbit, ebrisim ~ erbişim, ibrahim ~ irbām.

4. mr- ~ -rm- imren- ~ irmen-

5.lv- ~ -vl- helva ~ havla

6. ks- ~ -sk- tıksın- ~ tıskin-

7.ır- ~ -rk-/ -rh- akraba ~ arhaba

8.vr- ~ -rv- avrat ~ arvat:avrad, evran ~ ervan: ahi ervan sultānı.

9. -cr- ~ -rc- teccribe ~ tercübe

10. -rv- ~ -vr- kervan ~ kevran, derviş ~ devriş

11. -kş- ~ -şk- ekşî ~ eşki

12. -mh- ~ -hm- zemheri ~ zahmarı

13. -pl- ~ -lp- çiplak ~ çılpaḥ

թ/ հեռու տեղափոխում երկրորդ բաղաձայնը ցատկում է առաջին բաղաձայնի տեղը և նրան իր տեղն է նետում: Այս շրջանի բարբառներում տեղափոխման նման օրինակները թիւ են<sup>12</sup>.

1. l-r ~ r-l ileri ~ ireli, bulğur ~ burğul

2. s-r ~ r-s göster- ~ góset- : gófsedince

3.-n ~ n-d ödünc~ öndüş

4. l-n ~ n-l lānet ~ nälet.

HASMİK ASATRYAN

(YSU)

SOME PHONETIC SPECIFICATIONS OF THE KIRSHEHIR DIALECT

The article applies to the changes that occur as a result of different phonetic phenomena of vowels and consonants, some specifications of their formation in the Kırşehir dialect.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Tanım H. C., Kırşehir Tarihi Üzerinde Araştırmalar 1, Kırşehir Vilâyet Matbaası, 1938, təq 17-20:
2. Tanım C.H., Tarihte Kırşehir-Gülşehri ve Babasılar-Ahiler-Bektaşlıclar, 3. baskı, İstanbul 1948, təq 6:
3. Korkmaz Z., Nevşehir ve Yöresi Ağızları, 1 c., Ses Bilgisi, 2. baskı, Ankara 1977, təq 29:
4. Kırşehir ve Yöresi Ağızları, A. Günşen, TDK Yayınları, Ankara, 2000, təq 26:
5. Ժողովույական երգի տեսակ:
6. Որոշ անառողջական բարբառներում այս օրինակներից բացի կան նաև ա, ա (T. Gülensoy, Kütahya ve Yöresi Ağızları, TDK yay. Ankara 1988, təq 29), ա, թ, օ, ն (Z. Korkmaz, Nevşehir ve Yöresi Ağızları, təq 42), չ, թ, թ, ն, թ, ն (Z. Korkmaz, Güney-Batı Anadolu Ağızları-Ses Bilgisi, DTCF Yay., Ankara 1956, təq 28) և նման բարձրացող երկարաբաների օրինակներ:
7. Günşen A., Եզկ. աշխ.-ը, təq 30-31:
8. Günşen A., Եզկ. աշխ., təq 65-66:
9. Korkmaz Z., Nevşehir ve Yöresi Ağızları..., təq 92-93:
10. Korkmaz Z., Եզկ. աշխ., təq 105:
11. Günşen A., Եզկ. աշխ., təq 75-77:
12. Caferoğlu A., Anadolu Ağızlarında Metathese Gelişmesi, TDAY 1955, təq 1-7:

## ԽԱՀԱՏՐՅԱՆ ԷՍՍԱ (ՈՀ(Ս)Հ)

### ԻԱՐԱԲԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՑՈՒՑԻՉՆԵՐԸ

Իարաբը քննում է այն, ինչ սահմանում է նահուն բառի համար նախադասության մեջ կամ սահմանում է ողջ նախադասության համար<sup>1</sup>: Շշգրիտ ըմբռնմամբ՝ նահուն գիտություն է խոսքի կազմության օրենքների մասին: Իարաբը խոսքի բաղկացուցիչ մասերի վերլուծումն է<sup>2</sup>: Այն մուարար քառերի<sup>3</sup> վերջավորությունների՝ արտասանական բացահայտ և ենթադրյալ փոփոխությունն է: Իարաբի տեսակները չորսն են՝ ուղղական հոլով / ինքնառական, հայցական հոլով / խնդրառական, սեռական հոլով / հարակցական, ջազմ<sup>4</sup>: Անունները մասամբ մարնի/ չբերքող են, իմնականում՝ մուարա: Անվան իարաբի տեսակները երեքն են՝ ուղղական, հայցական, սեռական<sup>5</sup>:

Ուղղական դիրքում գտնվում են մարֆու չբերքած ձևով հանդես եկող ինքնառական անվանաձևերը (մարֆուաթ)<sup>6</sup>, դրանք են՝ բայական նախադասության գործող ենթակա, կրավորական նախադասության ենթակայի պաշտոնակատար, անվանական նախադասության սկսող ենթակա, անվանական նախադասության հաղորդող ստորոգյալ, թերիմաստ բայաձևերին (քանան և նրա համասեռ ձևերը) կից անվանաձևեր, բայանման գործառությամբ մասնիկների (իննայի և նրա համասեռ ձևերի) ստորոգյալ, տեսակային ժխտման մասնիկի ստորոգյալ, գործողության/ վիճակի մոտալրութ լինելու իմաստով բայաձևերին (քաղան և նրան համասեռ ձևերը) կից անվանաձևեր:

Հայցական դիրքում գտնվում են մանսուր թերքած ձևով հանդես եկող խնդրառական անվանաձևերը (մանսուրաթ), դրանք են՝ ոսկի խնդիր, բացարձակ խնդիր, տեղի / ժամանակի պարագա, պատճառի/ նպատակի պարագա, ուղեկցող խնդիր, թերիմաստ բայաձևի ենթակային ստորոգված հաղորդող ստորոգյալ, բայանման գործառությամբ մասնիկների ենթակա, տեսակային ժխտման մասնիկի

անվանական միավոր, գործողության մոտալուս լինելու իմաստով քայածնի և ներակային ստորոգված հաղորդող ստորոգյալ, ձևի պարագա, որակական առանձնացման խնդիր, բացառման խնդիր, կոչական:

Սեռական դիրքում գտնվում են մաջորու թերված ձևով հանդես եկող հարակցական անվանածները (մաջորութաք), որանք են՝ նախորդ մասնիկով հարակցված անվանական միավոր, լծորդական կապակցության երկրորդ դիրքում հանդես եկող լծորդիլի (մուղափ իլեյիի):

Եվս հինգ անվանածներ կարող են փոխադրվել նախադասության տարրեր դիրքեր՝ հանդես գալով որպես չթերված ինքնառական և թերված խնդրառական ու հարակցական միավորներ: Դրանք են՝ նկարագրական կառույցի նկարագրվողին կամ որակվողին հաջորդող որոշիչ (սիֆա/նաք), ուաշաղկապի միջոցով շաղկապյալին հաջորդող շաղկապյած (ատֆ նասակ), սաստկական կառույցի երկրորդ դիրքում հանդես եկող միավոր (քառիդի), որը հետևում է առաջին դիրքում հանդես եկող միավորին (մուաքքի), փոխարինական կառույցի երկրորդ դիրքում հանդես եկող միավորներ (քաղաք և ատֆ քայան), որոնք փոխարինում են առաջին դիրքում հանդես եկող միավորին (մուրդալ մինհու):<sup>7</sup>

Բայերը մասամբ մուարաք են, հիմնականում՝ մարդի: Ալ-մուդարիմ քայական հիմքը պատկանում է թերվող լեզվական միավորների շարքին և կարող է հանդես գալ թե՛ ուղիղ (մարֆու), թե՛ թերական (մանսութ, մաջզում) տարրերակներով: Ներկա ժամանակի քայի հարաբը իրացվում է այն դիրքերում, երբ նրան չեն կցում իգականի նունը և քառիդիի երկու նուներից որևէ մեկը՝ թերկը կամ ծանրը: Քայի հարաբի տեսակները երեքն են՝ ուղղական (այս դիրքում գտնվում է ներկա ժամանակի չխնդրառված և չօգնմավորված քայը), հայցական (այս դիրքում գտնվում է խնդրառական գործոնով նախորդված քայաձևը), ջազմ (այս դիրքում գտնվում է ջազմավորող կամ պայմանական գործոնով նախորդված ներկա ժամանակի քայաձևը):

Այսպիսով, հարաբն ունի չորս տեսակ, որոնցից երկուսը՝ ուղղականը և հայցականը, հատուկ են անուններին և քայերին, սեռականը՝ միայն անուններին, ջազմը՝ միայն քայերին: Ինչ վերաբերում

է հարժերին/ մասնիկներին, ապա դրանք մաքնի են և պաշտոն չունեն հարաբում:

Իարարի տեսակներն իրացվում են հիմնական և, հավելյալ ցուցիչների միջոցով<sup>8</sup>: Հիմնական ցուցիչներն են՝ դամմա, ֆարիա, քասրա, սուբում: Դամման ուղղականի հիմնական ցուցիչն է չորս դիրքում՝ եզակի թվով անվանածներում, ներքին կազմության հոգնակի անվանածներում, արտաքին կազմության իզական հոգնակի անուններում և դրանց նմանվող անվանածներում, ներկա ժամանակի բայածներում, որոնց վերջավորությանը չի կցվում իզականի նունը կամ բառփիդի նունը: Ուղրականն ունի երեք հավելյալ ցուցիչ՝ ուառո, որը փոխարինում է դամմային արտաքին կազմավորման արական հոգնակի անուններում և դրանց նմանվող անվանածներում, իինզ անվանածներում, ալիք, որը փոխարինում է դամմային երկակի թվով անուններում և դրանց նմանվող անվանածներում, նուն, որը փոխարինում է դամմային ներկա ժամանակի բայածներում, որոնց կցվում է կամ երկակի, կամ հոգնակի, կամ իզական խոսակցի նունը:

Ֆարիա<sup>9</sup> հայցականի հիմնական ցուցիչն է երեք դիրքում՝ եզակի անուններում, ներքին կազմության հոգնակի անվանածներում, խնդրառական մասնիկով նախորդված ներկա ժամանակի բայածներում, որոնց կցված չէ իզականի նունը կամ բառփիդի նունը: Հայցականն ունի չորս հավելյալ ցուցիչ՝ ալիք, որը փոխարինում է ֆարիային իինզ անվանածներում, քասրա, որը փոխարինում է ֆարիային արտաքին կազմավորման իզական հոգնակի անուններում և դրանց նմանվող անվանածներում, յա, որը փոխարինում է ֆարիային երկակի թվով անուններում և դրանց նմանվող անվանածներում, արտաքին կազմավորման արական հոգնակի անուններում և դրանց նմանվող անվանածներում, նունի սղում, որը փոխարինում է ֆարիային խնդրառված և ջազմավորված իինզ բայածներում:

Քասրան սեռականի հիմնական ցուցիչն է երեք դիրքում՝ եռահոլով եզակի անուններում, ներքին կազմության հոգնակի եռահոլով անուններում, արտաքին կազմության իզական հոգնակի անուններում և դրանց նմանվող անվանածներում: Սեռականն ունի երկու հավելյալ ցուցիչ՝ յա, որը փոխարինում է քասրային երեք դիրքում՝ իինզ անվանածներում, երկակի թվով անուններում և դրանց նմանվող անվանածներում, արտաքին կազմության արական հոգնակի

անուններում և դրանց նմանվող անվանաձևերում, ֆաքիա, որը փոխարինում է քասրային ծևաբանորեն արգելափակված եզակի և ներքին կազմավորման հոգնակի անվանաձևերում:

*Սուրբումը* ջազմի հիմնական ցուցիչն է ներկա ժամանակի կանոնավոր բայաձևերում, որոնց կցված չէ իգականի նունը կամ քառիդի նունը: Զազմի հավելյալ ցուցիչը սղումն է (հազֆ), որը փոխարինում է սուրբումին երկու դիրքում ներկա ժամանակի՝ թույլ տառով վերջավորվող բայաձևերում, նունի սղմամբ ջազմավորվող հիմն բայաձևերում:

Այսպիսով, իարարն ունի տասնշորս ցուցիչ, որոնցից չորսը հիմնական են, տասը՝ հավելյալ: Հավելյալ ցուցիչներից երեքը փոխարինում են դամմային, չորսը՝ ֆաքիային, երկուսը քասրային, մեկը՝ սուրբումին: Հավելյալ ցուցիչների հիմնականներին փոխարինելը իրականացվում է յոթ դիրքում՝ քասրայի փոխարեն ֆաքիայով հարակցված անորոշ առման երկիրով անուններում, ֆաքիայի փոխարեն քասրայով խնդրառված արտաքին կազմության իգական հոգնակի անուններում և դրանց նմանվող անվանաձևերում, սուրբունի փոխարեն բայավերջի սղմամբ ջազմավորվող՝ թույլ տառով վերջավորվող ներկա ժամանակի բայաձևերում, դամմայի փոխարեն ալիֆ-ով ինքնառված, ֆաքիայի և քասրայի փոխարեն յա-ով խնդրառված ու հարակցված երկակի անուններում, դրանց նմանվող անվանաձևերում, դամմայի փոխարեն ուառո-ով ինքնառված, ֆաքիայի և քասրայի փոխարեն յա-ով խնդրառված ու հարակցված արտաքին կազմության արական հոգնակի անուններում, դրանց նմանվող անվանաձևերում, դամմայի փոխարեն ուառո-ով ինքնառված, ֆաքիայի փոխարեն ալիֆ-ով խնդրառված, քասրայի փոխարեն յա-ով հարակցված հինգ անվանաձևերում, դամմայի փոխարեն նունի առկայությամբ ինքնառված, նունի սղմամբ խնդրառված և ջազմավորված հինգ բայաձևերում:

Երեսմն իարարի ցուցիչը կարող է լինել ոչ թե բացահայտ, այլ ներառյալ<sup>10</sup>: Իարարի բոլոր ցուցիչները ենթադրյալ են ալիֆ մաքսուրայով վերջավորվող անվանաձևերում, լծորդական կառույցի նույաֆ դիրքում հանդիս եկող լծորդվածի մեջ, որին կցված է եզակի թվի առաջին դեմքի կցական դերանունը, քաղաքրյալ հատուկ անուններում<sup>11</sup>: Ուղղականի և սեռականի ցուցիչները ենթադրյալ են քանվին քասրայով

Վերջավորվող անորոշ և որոշյալ առմամբ անվանաձևերում: Ուղղականի ցուցիչը ենթադրյալ է ժխտական նախադասուրյան մեջ ենթակայի դիրքում գտնվող՝ մին առաջադաս մասնիկով հարակցված անորոշ անվանաձևում և ենթակայի դիրքում գտնվող՝ նախդիրի նմանվող ուրբա մասնիկով հարակցված անվանաձևում:

Ինչ վերաբերում է բայերին, ապա ուղղականի և հայցականի ցուցիչները ենթադրյալ են ներկա ժամանակի՝ ալիք մաքսուրայով վերջավորվող բայաձևերում, իսկ ուղղականինը՝ նաև ուառ-ով և յա-ով վերջավորվող բայաձևերում:

## EMMA KHACHATRYAN (RA(S)U)

### THE TYPES AND SIGNS OF IARAB

Iarab is the evident or supposed change of the pronunciation of the word that is declined. Iarab can be of four types: nominative, genitive, accusative and jazm. Two of them, nominative and accusative, are peculiar to the verbs and nouns, genitive is peculiar to the nouns and jazm to the verbs only. The prepositions are not declined. Iarab can be formed by four general (damma, fatha, kyasra, sukkun) and ten complementary signs, three of which can be changed by damma, four by fatha, two by kyasra and one sukkun. The general signs' replacing by the complementary is usually made in seven positions. Sometimes iarab's signs can be not only evident, but also in the end of the word, supposed to be declined.

### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Այս մասին մանրամասն տե՛ս Խաչատրյան Է., Խարարի շրջանակները դասական պարաբերնի լեզվաբանական ավանդույթում, «Մերձավոր Արևելք» հոդվածների ժողովածու, Եր., 2007, էջ 132-134:
2. Մուհամմադ Ալ-Ամտարի, Ալ-Ֆիհիաջ Ֆի ալ-Կառուախի ուա ալ-խարար, Թեյրութ 1978, էջ 3:
3. Մուարար է լեզվական թերքող (եռահոլով և երկիոլով) այն միավորը, որի բառավերջի ճայնանշանը փոխվոմ է ըստ նախադասուրյան մեջ բառի դիրքի: Այս մասին տե՛ս Մուհամմադ Նուր Ալ-Դին Ալ-Տաուաշի, Թալիմ ալ-լուղարի ալ-արարիյա, 2-րդ մաս, Դամասկոս 2001, էջ 5:
4. Բայի դիրքն է հատած վիճակում. Երա ելքային իրացումն ապահովվում է ջազմավորությունում որևէ նախդիր մասնիկով: Այս մասին տե՛ս Հիսամ Ալ-Խատիր, Ալ-լուղարու ալ-արարիյա, 1-ին մաս, Հալեբ 1986թ, էջ 148:
5. Ուղղական իրացվում է ս (ու), հայցականը՝ ա (ա), սեռականը՝ ի (ի) ձևույթներով: Դասական արաբերենում եղակը թվով դրված և ներքին կազմավորմամբ հոգմակի անվանաձևների համար օրինաչափ է թերման եռահոլով համակարգը: Որոշ անվանաձևներ անորոշ վիճակում ունեն միայն երկու հոգմական թերմություն ուղիղ հոլով (ս (ու)- ով կազմվող կամ ուղղական), անուղղակի հոլով (ա (ա)-ով կազմվող կամ

- սեռական ու հայցական): Այս մասին մանրամասն տե՛ս Գրանդե Բ.Մ., Արաբская филология, М., 1990.
6. Սաղիկ Սունդուկ, Ալ-արաքիյա, Թեհրան, հիջրայի 1372, էջ 89-91:
  7. Արու Բերր Ալա Արդ Ալ-Ալիմ, Դուրսու Ֆի ալ-արաքիյա, Կահիրե 2002, էջ 235-237:
  8. Ալ-Սայյի Սիմառ, Ալ-Հաշմի, Ալ-կառահի ալ-սասախ լիլուղարի ալ-արաքիյա, Բեյրութ, հիջրայի 1354, էջ 48-52:
  9. Երր արաքերենի բարբառներում հոլովական թեզումը և եռաստիճան համակարգն ընկան, և վերջավորությունը բարբառային շատ բաներում պահպանեց մակրական իմաստը: Հայտնի է, որ արևմտյան-արամեական խոսվածքներում, արամեական արձանագրություններում, եզիզուական պահպանեց մարատական արձանագրություններում անոններն ունեցել են և վերջավորությունը՝ որպես որոշյալության ցուցի: Ըկս րափարք բացատրություն, թե ինչու հատկապես հայցականը և ոչ թե ուղղականը կարող էր ստանալ որոշյալության իմաստ: Որոշյալության իմաստով, մակրայական և պարագայական նշանակուրյուններվ և վերջավորության ամրացումն օժանդակել է նրա պահպանանը և տարածմանը: Ինչ վերաբերում է և և վերջավորություններին, պապ դրանք որևէ իմաստ չեն ունեցել, և նոյնինչ կարելի է ենթադրել, որ դրանք իմմական և ավելի ամբացած ա-ի ձևափոխություններ են: Այս մասին մանրամասն տե՛ս Գրանդե Բ.Մ., Արաբская филология, М., 1990:
  10. Արդ Ալ-Թատառի, Ուղ իլա ասսիհա լիլուղարիյա, Կահիրե, 2002, էջ 65:
  11. Օրինակ՝ Բալարաքք, Հայուամատք և այլն: Այս մասին տե՛ս Հիսամ Ալ-Խատիր, Եղվ. աշխ. մեջ, էջ 32:

## ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԾՈՒԾԱՆ

(ԵՀԱՀ)

ԱԴՈՆԻՍ:

### ԱՐԱԲԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊՈԽԶԻԱՅԻ ԱՎԱՐԳԱՐԴԻԱՆ ՊՈԵՏ ԵՎ ՓԻԼԻՍՈՓԱ

Աղոնիսը թերևս արարական ժամանակակից գրականության ամենավառ ներկայացուցիչն է, ում ճանաշում և գնահատում են աշխարհի գրականագիտները։ Նրան կոչում են «Խսլամի Նիցշե», համարում են Արարական գրականության Թ.Ս էլիոր (1888-1965), համեմատում են մերսիկացի հայտնի պոետ Օկտավիո Պազի և ֆրանսիացի փիլիսոփա, Էսթետ, բարոյագետ ու գրող Ալբերտ Շամյույ (1913-1960) հետ։

Այս Ահմեդ Սահիոր ծնվել է 1930թ. սիրիական մի գյուղում, իմամի ընտանիքում։ Արդեն պատամի հասակում սկսեց բանաստեղծություններ գրել և ուղարկել տարրեր հրատարակություններ։ Դրանցից ոչ մեկն էլ չտպակեցին։ Հաջորդ անգամ իր բանաստեղծության տակ նա ստորագրեց Աղոնիս անունը և թերում կարդաց իր բանաստեղծությունը։ Ու քանի որ իր հասցեն չէր ուղարկել ստիպված ինքն անձամբ ներկայացավ խմբագրություն։ Ի զարմանս խմբագիրների իրենց առջև կանգնած էր ամանչկոտ, վտիտ, կովայտ հագուստով, իր ոտքի շափերից բավականին մեծ ճքքավոր կոշիկներով, տասնյոթամյա մի պատամի։ Հենց այստեղ էլ ամեն ինչ որոշվեց։ «Աղոնիս» դասական հունական անունը դարձավ նրա թալիսմանը։ Սակայն Ելենա Նեգոդան կարծում է, որ այս ամենը մի գեղեցիկ առասպել է հորինված Աղոնիսի ֆրանսիացի կենսագրի կողմից<sup>1</sup>։ Ինչիցից, ո՞վ է Աղոնիսը։

Նա դաստիարակվել է շիփրական ավանդույթի համաձայն, ավարտել է Դամասկոսի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետը, երբ 1948թ. կորցրեցին Պաղեստինը, ուժեղ էմոցիոնալ ապրումներից հետո նա նոր արարական պոեզիայի կատարը հանդիսացավ։ Համալսարանը ավարտելուց հետո պոետը սիրիական ազգային-տոցալիստական կուսակցության անդամը դարձավ։ Հետո կես

տարվա ազատազրկում՝ քաղաքական բուռն գործունեության արլունքում, վտարում դեպի Լիքանան: Այստեղ 1960-ականներին Արդիսը ստեղծում է Բեյրութում ավանգարդիստական բանաստեղծական ամսագրերի խմբագրություն: Հետո սկսում է դասավանդի Բեյրութի, Դամասկոսի և Սորոնի համալսարաններում: Արդիսին կարելի տալ մի շարք հանրագիտարանային բնութագրող բառեր՝ լիքերալ, կոսմոպոլիտ, մոդեռնիստ, սովորական սիմվոլիզմի, եվրոպական սյուտեալիզմի հետևորդ: Այս ամենի հետ մեկտեղ նա առաջին հերթին լեզվի բարենորդող է: Բառի բուն իմաստով: Նա ստեղծել է նոր կերպարներ, որոնք անսպասելի են, և ամենակարևորը՝ պարզ: «... Այնքան պարզ են, -իր հոդվածում գրում է Նեգոդան, -որ ես վստահ եմ, որ դրանք գոյություն ունեն իմ մեջ ավելի վաղ այն պահից, երբ Արդիսը իմ ուշադրությունը հրավիրեց դրանց վրա: Ես գիտեմ, որ այդ վստահությունը իսկական պոեզիաի միայն նախանշանն է»<sup>2</sup>: Սա ինչպես ասում է Ուրուգվայացի գրող Էդուարդ Գալեանոն (ծնվ. 1940) «զգացմունքամտայնություն» է<sup>3</sup>:

S.U. Ելոտը (1888-1965) ասում էր, որ պոեզիան հնարավոր է փոխանցել մինչև նրա հասկացված լինելը («poetry communicates before it is understood»)<sup>4</sup>: Արդիսը իր բանաստեղծություններում հիմնայի կերպով այս ամենը ապացուցում է: Նա ելույթներ է ունեցել Պրիստոնում, Կորնելլում, Դարտմուսում, բայց հիմնականում Փարիզում, որտեղ էլ այժմ բնակվում է:

Արդիսը բավականին հեռացել է արարական ավանդական բանաստեղծական ձևերից և դարձել է հաղաքի, մոդեռնիզմի հոմանիշը, բայց միևնույն ժամանակ մնացել է հավատարիմ այն պոեզիային, որին նա փառարանում է. պոեզիան պետք է լինի բարձրունքում և երբեք չիջնի ամենօրյա խոսակցության մակարդակին:

Արդիսի պոեզիան կրոնա-փիլիսոփայական է: Նրա բանաստեղծությունների սիմվոլիզմը խորն է ու երեմն անբացատրելի: Ինչպես բանյուական Սիզիֆը, Արդիսը նույնպես դառնում է «անհեթերության հերոս»<sup>5</sup>. «Զարդ պտտվում է դժողովում՝ դա ես եմ» - ասում է Արդիսը:

Լինել Սիզիֆ նշանակում է լինել Սիզիֆի հետ<sup>6</sup>: Այսինքն դառնալ քար.

Ես նրդվել եմ նրկնքին և ինձ  
 գրել ջրի վրա,  
 նրդվել եմ լուսումունջ տանել  
 քարը Միզիքի հնտ,  
 Արդ իմ ուղտն է լինել Միզիքի  
 հնտ:

Я клялся небу и себе  
 писать на воде,  
 клялся нести с Сизифом  
 камень молчаливо, ибо  
 мой обет - быть с Сизифом.

Աղօնիսը ժամանակակից արար անենահայտնի բանաստեղծն է, ով 2003թ. արժանացել է Նորելյան մրցանակի: Նրա յուրաքանչյուր բանաստեղծություն խորը փիլիսոփայական է: Նույնիսկ նրա սիրային քնարերգությունը սիմվոլիզմի և փիլիսոփայական մտքի վառ արտահայտում է:

Աղօնիսի սիրային պոեզիայի հավաքածուն կոչվում է «Երե ծովը կարողանար քնել», իսկ ամենահայտնի գիրքը «Դամասկոսի Միհյարի երգերը», որը գրեթե ամբողջությամբ սիմվոլիստական է:

Աղօնիսը իր խորը գիտելիքնով և ժամանակակից ստեղծագործական տեխնիկայով ստեղծում է արարական գրականության համար մի նոր, քաջ պոեզիա: Նա իր ողջ մանկության ընթացքում լսել ու ընթերցել է հին արար պոետներին և նրա պատկերավոր մտածողության վրա իրենց ազդեցությունն են բողել նաև միստիկ հեղինակները: 13-րդ դարի Իրաքցի միստիկ բանաստեղծ Արճ ալ-Զարար ալ-Նիֆքարի երկարաշունչ և դաժան բանաստեղծությունները՝ լի պարադրսներով և տարօրինակ փոխարերություններով հատկապես ազդել է Աղօնիսի ստեղծագործական մտքի վրա: Նրա «Օմտաղրված Երկրապագություն» պոեմը այդ ազդեցության դասական օրինակ է: Այս պոեմում սիրեցյալի մարմինը ներկայացված է, որպես «հաճույքի զավաք», սակայն հաճելիքից քացի նա հավատում է, որ մեր մարմինը նաև գիտելիքի աղբյուր է: Աղօնիսը անընդհատ գուգահեններ է փնտրում, որպեսզի կոտրի հոգու և մարմնի միջև գոյություն ունեցող խոչնորտները, և այս փիլիսոփայությունը անրադառնում է նրա շատ ստեղծագործությունների վրա<sup>7</sup>:

Մեկ այլ կարևոր պոետ, որից ազդվել է Աղօնիսը 6-րդ դարի ամենահայտնի բանաստեղծ Խմրուկայսն է, ինչպես նաև 9-րդ դարի գինու երգիչ Արու Նուվասը, որն էլ ծառայելով Արքասյան խալիֆաներին

իր ժամանակի նորարարն է համարվում: Հաջորդը Աղոնիսի «պանթեոնում» 11-րդ դարի փիլիսոփա ալ-Մահարին է: Աշխարհիկ թենան հատկապես շոշափելի է Աղոնիսի բանաստեղծություններում. սիրեցյալի մարմինը դիտարկում է որպես տիեզերք, որը դեռ պետք է հետազոտվի:Եվ ցույց տալու համար իր կիրքը նա բացականչում է. «Իմ քու միջն բառերը խմբվում են և այրվում...»

Աղոնիսի բանաստեղծական ոճին ընդհանրապես բնորոշ է խենթությունն ու էրոտիկան:Նրա նույնիսկ ամենաքարդ բանաստեղծությունները հիացնում են քնարերգական բարձր որակով և արարական պոեզիային բնորոշ բառային հարսությամբ:

Նրա պոեմներում ակնհայտ է մի բան, որը սահպում է նրան ստեղծագործել՝ սերը դեպի աստծո կողմից մարդկությանը շնորհած լյանքը Իր »Մահ« պոեմում նա ասում է.

<i>Մենք կմնանեինք, եթե՛ն չստեղծեինք</i>	<i>We will die if we do not create Gods</i>
<i>Աստվածներին,</i>	<i>We will die if we do not kill them".</i>
<i>Մենք կմնանեինք, եթե՛ն չսպանեինք</i>	
<i>նրանց:</i>	

Զարմանալի մի փաստ ևս առկա է Աղոնիսի պոեզիայի մեջ: Այն, որ գրականությունը կարող է կանխազգացող հզոր ուժ լինել, ակնհայտ է անցյալի մեծերի գրական ստեղծագործություններից: Այդպես ահա Աղոնիսի իր մարգարեական պոեմում՝ «Հիշատակագիր Նյու Յորքի համար», որը գրվել է դեռևս 1970թ. նա բավականին պատկերավոր կանխազգում է սեպտեմբերի 11-ի դեպքերը.

<i>Նյու-Յորքը մի կին է, ով ցատ պատության, մի ծնորում թռնջ է ազատության նշանը իսկ մյուսով խնդրում է նրկիրը.</i>	<i>New York is a woman holding, according to history, a rag called liberty with one hand and strangling the earth with the other</i>
--	--

<i>Թող ազատության արձանը բանդի... Արևնյան բամին արմատախիլ կանի վրանները, և նրա թևների տակի երկնաքերները Պիտսբուրգում և Մանհենտանում... Ես տնաս Արաբական Բարտնզը Նոյնիսկ այն ժամանակ, եղի նս առում</i>	<i>Let statues of liberty crumble . . . An eastern wind uproots tents and skyscrapers with its wings In Pittsburgh....Manhattan I saw the Arab Map Even while I say this I see a cloud necklaced with fire</i>
---	--

Ծմ սա

*I see people melting like tears.*

Ես տնանում եմ կրակով շրջապատված  
մի ամպ,  
Նս տնանում եմ մարդկանց, որոնք  
հայկում են արգունքի պժու:

Իր մի քանի այլ պոեմներում Աղոնիսը ցույց է տալիս գերբնական մի ջանք ամող կարգուկանոնը խառնաշփոթի վերածելու նպատակով և ստեղծելու մի նոր աշխարհ՝ հիմնված իր սեփական օրենքների վրա: «Երկխոսություն» բանաստեղծության մեջ նա ասում է.

«Ես ոչ Աստծուն եմ ընտրում, ոչ Ուստանային:  
Երկուսն էլ պատ են,  
Երկուսն էլ փակում են իմ աշքերը»:

*I choose neither God nor Satan  
Each is a wall  
Each closes my eyes*

Նրա ազատատենչ ոգու կանչը արծանզանքում է իր բանաստեղծություններում, նա ամենակարող է, երբ բղավում է.

Ես բարձրացնի եմ ավելին Աստծուց և *I transcend both God and Satan*  
Սաստանայից,  
*After me there's no Paradise, no Fall*  
Ինձանից հնատ ոչ Դրախտ կա, ոչ Դժողու:

Աղոնիսը սրտահայտվելու տեխնիկան օգտագործում է իր մտքերի և փիլիսոփայության մեջ, միաժամանակ ի նպաստ իրեն ծառայեցնելով մարդկային բնույթը, բնագործությունները («Կիմ և Տղամարդ», «Սիրո Կերպարանափոխումը»): Նրա խոսակացական մեթոդը ստեղծում է բանաստեղծական խոսուն պատկեր: Մենք միաժամանակ և՛ ընթերցում ենք և՛ լսում բանաստեղծին: Այս բանաստեղծական տակտիկան ավելի է շեշտադրում նրա գրվածքը: Զայնը խորություն է տալիս գրված բառին մեզ համար ստեղծելով ինչ-որ շոշափելի բանի տպագործություն: Խոսուն բառերը առավել հավանական են ու մարդկային:

Աղոնիսը, լինելով այլախոհ, սիրում է իր հայրենիքը և իր պրեմիներում մի ինչ-որ հուզիչ տխրություն և ցավ կա հայրենիքի համար («Հայրենիք»):

Բանաստեղծը անհանգստանում է իր հայրենակիցների համար, նա համարում է, որ իր ժողովուրդը կործանման եզրին է; ինչպես ինքն է ասում «Կրակի ծառը» բանաստեղծության մեջ՝ «Ժմ ժողովուրդը մեռնում է ինչպես կրակ՝ մոնում է առանց հետքի»:

Աղոնիսը ուժեղ, անհատապես անկախ ու ազդեցիկ ժամանակակից քանաստեղծ է: Նա բազմից ասել է, որ տարբեր մշակույթների անպաշտպան լինելը չի նշանակում դրանցից որևէ մեկի վերացում, այլ հակառակը, տարբեր մշակույթների շփումը կարող է շատ բարենպաստ ու արժեքավոր լինել: Նրա պարագայում սա միանգամայն ճշմարտացի է. լինելով Արար բանաստեղծ նա մի նոր ճոխությամբ է հայտնաբերում Եվրոպական բանաստեղծներին, ինչպիսիք են Բոդելերը, Ռիլեն, Ռիմբոնը այն բանից հետո, երբ նա գաղրեց Լիբանան, հետո Փարիզ, որ մինչև օրս ապրում է: Նա անվերապահորեն հավատում է, որ մշակութային գործունեությունները սահմաններ չեն ճանաչում. «Ստեղծագործելու կարողությունը ազատագրում է ոչ միայն հոգին, այլ նաև մարմինը»:

Աղոնիսը տիեզերական պոետ է: Նա հաճախակի է օգտագործում քնական տարբերը իր բազմանշանակ բանաստեղծություններում: Տիեզերը, ջուրը, կրակը, երկիրը, աստղը, քարը, ծովն ու քամին միշտ կապված են նրա պոեզիային: Նա սկսել է արարական բանաստեղծական լեզվի մեջ նոր փոփոխություններ մտցնել: Աղոնիսը ցանկանում է ոիթմային սահմանափակումները քացնել, օգտագործել համեմատությունների և փոխաբերությունների այլ խորություն: Մեր կարծիքով սակայն արարական յուրահատուկ բանաստեղծական ոիթմը անփոխարինելի է: Ինչևէ Արարական գրականության Ավանդարդ բանաստեղծը մի տեսակ բախծում է, երբ խոստովանում է. «Ես գրում եմ մի լեզվով, որը վտարեց ինձ», իսկ բանաստեղծություններից մեկում ասում է.

*Ես ապրում եմ ժանտախտի ու կրակի  
արարում  
հմլնգվով, Այս քայլոս բառերով*

*I live between the plague and the fire  
with my language,  
with these speechless worlds<sup>8</sup>*

Նա հավատում է, որ իր լեզուն չի կարող անրադառնալ իր անցյալին, կամ ապագային, կամ լինել հայելի, որն ընդունակ է վերադարձնել մանկությունը: Բանաստեղծին լեզուն միայն օգնում է շարժման մեջ դնել անիմանալիի և ամեն մի տարօրինակի առջև:

Այս ընթացքում Աղոնիսը շարունակում է կառուցել իր նորարարական գրական ձևերի կառափնարանը, որի շուրջ կարող է կառուցվել նոր արարական պոեզիան:

SHUSHAN KARAPETYAN  
(YHAU)

ADONIS: THE AVANT-GARDE POET AND PHILOSOPHER OF MODERN ARAB POETRY

Adonis (*Ali Ahmad-Said*) is considered as the greatest Syrian poet living today and has been a strong contender for the Nobel Prize for literature since 2003. Adonis is a vibrant modern poet, his famous collection of love poems titled "*If only the Sea could Sleep*" and some selections from his famous book "*Songs of Mihyar of Damascus*", considered to be his masterpiece. He can be hailed as the dividing line between Old and modern Arabic poetry. We notice in Adonis a powerful harmonization of modern themes such as existential quest, erotic fantasy, radical humanism, linguistic exploration and spiritual redemption which is seldom seen in Arab Poetry. His arresting style is both avant-garde and lyrical.

ԾԱՆՈԹԱՎՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Негода Е., 4444, # 480, 18 յուն 2006г.
2. Նոյն տեղում;
3. Երրորդ Գալիանոն Լատինամերիկան հայտնի գրող, իրավաբականու և զրականացն է: Ավելի քան տասը գրքերի հեղինակ է, որոնք քարգմանվել են աշխարհի բան լեզուներով: Նրա հոդվածների ուսերեն քարգմանությունը տես՝ <http://lib.ru/POLITOLOG/GALEANO/esse.txt> կայքում;
4. Элнот Т.С., Статьи. Общественное назначение поэзии, М., 1990.
5. Камю А., Творчество и свобода. Миф о Сизифе. М., 1990. с. 106.
6. Նոյն տեղում;
7. Арабская литература в Европе. Читальный зал. 09.03.2005., [http://www.dw-world.de/dw/article/0\\_2144\\_1514264.00.html](http://www.dw-world.de/dw/article/0_2144_1514264.00.html)
8. Selections from «Songs of Mihyar of Damascus» translated by Kamal Abu-Deeb. <http://www.jehat.com/NR/exeres/8E621DF4-9802-4C66-B27E-AD376B806274.htm>, քանատեղությունների հայերեն քարգմանությունը պատկանում է հոդվածի հեղինակին:

## ԿՈԲԵԼՅԱՆ ԱՐՄԻՆԵ

(ԵՊՀ)

### ՀՆԴԿԱՍՏԱՌՈՒՄ ՊԱՐՄԿԱԼԵԶՈՒ ԳՐԱԿԱՌՈՒԹՅԱՆ ՄԿՋՔՆԱՎՈՐՄԱՆ ԾՈՒՐՉ (ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ)

Հնդկաստանի պարսկալեզու գրականությունը շուրջ հազարամյա պատմություն ունի: Սկզբնական շրջանում այն սերտ կապեր է ունեցել Իրանի գրականության հետ, սակայն 16դ. սկսած արևելահրանական տարածքների անջատումից հետո, այդ կապերն հետզինետե թուլացել են: Անցնելով զարգացման բարդ ուղի, ի վերջո, պարսկալեզու գրականությունը դարձավ Հնդկաստանի գրական մշակույթի անբաժանելի մասը: Բավկական է ասել, որ սկսած 13դ. այդ գրականության մեջ կարևոր տեղ է գրադեցրել կրոնական հակամարտությունների թեման, արծարծվել է դավանական հանդրոժողականության զաղափարը՝ հիմնահարցեր, որոնք մինչև օրս ել պահպանում են իրենց հրատապությունը այս երկրի հասարակական-քաղաքական կյանքում:

Հնդկաստանի պարսկալեզու գրականությունն արևելագիտական գրականության մեջ ընդունված է անվանել հնդկա-պարսկական գրականություն: Հնդկա-պարսկական սինթեզի գործընթացը երկկողմանի բնույթ էր կրում: Հնդկերեն լեզու էին ներքափանցում պարսկական խոսկածքները, միևնույն ժամանակ պարսկալեզու գրականություն էին մտնում հնդկական սյուժեներ:

Հնդկաստանում պարսկերենով գրականության սկզբնավորումը կապված է քաղաքական այն փոփոխությունների հետ, որոնք տեղի էին ունեցել երկրի հյուսիսային շրջաններում Ղազնավյան սուլթան Սահմուլի (998-1030) ռազմական արշավանքների հետևանքով: Նախքան Հնդկաստան ներխուժելը՝ Մերձավոր և Միջին Ասիայի ընդարձակ տարածքներն արլեն նվաճվել էին Ղազնավյան կայսրության կողմից, որի տարածքը գգվում էր Խաֆահանից մինչև Քաշգարի: Սուլթան Սահմուլը առաջին արշավանքը Հնդկաստան

կատարեց 1000ր.՝ զավթելով երկրի հյուսիսային շրջանները: Առաջին արշավանքին հաջորդեցին և տասնվեցը, և արյունքում Հյուսիսային Հնդկաստանի բազմաթիվ տարածքներ մտան Ղազնավյան տերության կազմի մեջ: Այս նվաճումներով Հնդկաստանում սկսվեց այդ տարածքների բնակչության իսլամականացման գործընթացը, որը շարունակվեց մինչև 17դ.: Այս բազմազգ երկրի դարավոր ավանդույթներով հարուստ մշակույթը փոխառնչությունների մեջ մտավ Ղազնավյան կայսրության ժողովուրդների մշակույթի հետ:

Սակայն սա Հնդկաստանի առաջին շփումը չէր իսլամական մշակույթի հետ:

Դեռ 8դ. սկզբին Մոհամմադ իրն Քասիմի զիխավորությամբ արարական մի գորախումբ հասել է Սինդի շրջան, որտեղ 711թ. ձևավորվել է արարական փոխարքայություն՝ Մուլթան մայրաքաղաքով: Այստեղ ստեղծվել էր Արարական խալիֆաթի հարուստ մշակութային ավանդույթ, սակայն անկման հետևանքով այս փոխարքայությունը գրկվեց Բաղդադի հովանավորությունից: Բնականարար, այդ ժամանակ Հնդկաստանի ժողովուրդների մշակույթի վրա Սինդի իսլամական մշակույթի ազդեցության մասին խոսելը դեռ վաղ էր:

Ի տարբերություն վերը նշվածի՝ սուլթան Մահմուդի արշավանքները կարելի է համարել Հնդկաստանում իսլամի տարածման սկիզբը:

Սուլթան Մահմուդի բազմազգ կայսրության պաշտոնական լեզուն պարսկերենն էր: Ժամանակի ընթացքում պարսկերենը լայն տարածում ստացավ՝ աստիճանաբար դառնալով Հնդկական թերակղզու ժողովուրդների փոխհաղորդակցման հիմնական լեզուն, այսպես կոչված *lingua franca* և, որ ամենակարևորն է, Հնդկաստանում ինքնուրույն զարգացում ստացած գրականության լեզուն:

Հնդկաստանի Ղազնավյան նվաճման արդյունքում ստեղծվում էին Միջին Ասիայի, Իրանի և Հնդկաստանի մշակույթների փոխառնչության հնարավորություններ: Ըուտով պարսկական գրականության մեջ ի հայտ են գալիս հնդկական թեմաներ, որոնց ավելի հաճախ անդրադառնում էին դագնավյան, մասնավորապես, սուլթանի արքունիքի բանաստեղծները: Սուլթան Մահմուդը խրախուսում էր այն բանաստեղծներին, ովքեր գովերգում էին նրա նվաճողական քաղաքականությունը: Միաժամանակ Իրանի գրականության

Եշանավոր այնպիսի մի քանի վարպետների ստեղծագործություններում, ինչպիսին են Ունսուրին<sup>1</sup>, Ֆարրոխին<sup>2</sup>, Ասօնդին և ուրիշներ, հանդիպում էին նաև Հնդկաստանի բնության, նրա բնակիչների կենցաղի իրական պատկերներ: Մեզ են հասել այսպես կոչված “Հնդկական ցիկի” ստեղծագործություններ, ուր արտահայտված է դագմանյան բանաստեղծների բուռն ճգույնը՝ հասկանալ և ճանաչել իրենց համար անձանոր երկրի բարքերը, ժողովրդի կենցաղը և այլն: Դրա վառ օրինակը կարող է լինել Ֆարրոխի Սիսրանի “Սոմնաթյան դասիոը” (1025-1026): Այն նվիրված է սուլթան Մահմուտի արշավանքներից մեկին, որն ավարտվել էր Սոմնաթիա սրբավայրի ավերմամբ<sup>3</sup>: Հնդկական թեմատիկայի մշակումներ ունի նաև Մանուչերին, որը Հնդկաստանում եղել է Մասուդ 1-ին սուլթանի օրորք:

1030թ. սուլթան Մահմուտի մահից հետո Մերձավոր Արևելքում քաղաքական ասպարեզ էր դուրս գալիս մի նոր ուժ՝ սելջուկները, որոնք սպառնում էին Ղազնավյան պետության գոյությանը: Միաժամանակ հենց կայսրության ներսում գլուխ էին բարձրացրել Գուրիդները, որոնք ամրացել էին Ղազնայի և Հերաքի միջև ընկած տարածքում:

Ղազնանականի մոտ տեղի ունեցած ճակատամարտը վերջնականապես ջախջախեց Ղազնավյաններին, և նրանք իրենց իշխանությունը ստիպված էին տեղափոխել Հնդկաստան: Պետության մայրաքաղաք հոչակվեց Լահորը: Այս պետական կազմավորումը, որը պահպանել էր Ղազնավյան անվանումը, աստիճանաբար դառնում էր ավելի ու ավելի հնդկական: Լահորի բանաստեղծներն արդեն գովերգում էին ոչ թե նվաճող սուլթանին, այլ հնդիկ տիրակալին: Իսկ Մասուդ 3-րդի (1099-1115) որդին Բահրամ շահը, որին են նվիրված Սանայիի, Նիզամի Գյանջավիի հայտնի ստեղծագործությունները, արդեն իր հորեղբոր՝ սուլթան Սանջարի վասալն էր դարձել: Հնդկաստանում Ղազնավյան պետությունը գոյատևեց մինչև 12դ., երբ իշխանության եկան Գուրիդները: Վերջիններիս օրոք արդեն պարսկերենը դարձել էր պաշտոնական լեզու: Իրենց հերթին տեղի հնդկական բարբառներից պարսկալեզու պղեղիա են սկսում թափանցել բառեր, արտահայտություններ: Նկատվում է նաև հակառակ երևույթը: Պարսկերեն լեզվով գրական գործեր էին ստեղծվում ոչ միայն ղազնավյան սուլթանների մայրաքաղաքում, այլև գավառներում, ուր իշխում էին նրանց դրածու էմիրները: Իրանից ներգաղթած

բանաստեղծների կողքին արդեն պարսկերեն լեզվով ստեղծագործում էին նաև իրանական ծագում ունեցողները, որոնք ծնվել և մեծացել էին Հնդկաստանում, դաստիարակվել էին նրա մշակույթով, գիտեին տեղի լեզուները: Նրանցից հատկապես հոչակվեցին պարսից գրականության դասական Արու Ֆարաջ Ռունին և Դարրա Գաջնահշ Ալի Հաջվիրին: Ռունիի և նրա ժամանակակիցների ստեղծագործություններում կան այնպիսի նշանակալից իրադարձությունների նկարագրություններ, որոնք օգնում են դաշնավյան իշխանության ժամանակաշրջանի Հնդկաստանի պատմության առանձին իրողությունների վերականգնմանը:

Հնդկաստանում Գուրիդների իշխանության տարածմանը մեծապես նպաստեց Քուքք առ Դին Այրեկը՝ Մոհամմադ Գուրիի թյուրք-ստրուկը: Այս գոլամը աստիճանաբար տարածեց Գուրիդների իշխանությունը Հնդկաստանի մի շարք իշխանություններում, այդ թվում նաև Բնենգալում, Բիհարումում, Գուջարաթում և այլն: Մոհամմադ Գուրի մահից հետո նրա ստրուկը սկսեց կառավարել Հնդկաստանում որպես ինքնուրույն ղեկավար՝ դառնալով թյուրքական դինաստիայի հիմնադիրը ղելիական գահին: 1211թ. մահացավ Այրեկը, և իշխանությունն անցավ Խլրութմիշին (1211-1236): Նրա օրոք թյուրքական վերնախավի դիրքերն ել ավելի ամրապնդվեցին երկրում, իսկ կայսրության սահմաներն ընդարձակվեցին: Մահմեդական ղեկավար թաղրապյան խալիֆ արքասյան ալ-Մուսթանսիրը (1226-1242) ճանաչեց Խլրութմիշին որպես սուլթան: Այս իրադարձությանն է նվիրված ժամանակակից բանաստեղծ Թաջ առ-Դինի դասիցը, որը պահպանվել է Թաջի առ-Դին Քաջի “Խուլասաթ ալ-աշշար” թագբերեում<sup>4</sup>:

Այդ ժամանակ պարսկերեն լեզուն լայն տարածում էր ստացել: Լահորի երեխմնի միակ գրական կենտրոնին այժմ արդեն ավելացել էին պարսկալեզու գրականության և գիտության կենտրոններ հնդկական Մուլթանա, Փեշավարա, Ուչե, Սանամե, Սիալկոտե, Հանսի և Դելի քաղաքներում:

Դելիական արքունիքը, ինչպես նաև տեղի իշխանների պալատները, շրջապատված էին պատմաբան-գիտնականներով, սուֆի շեյխներով և, իհարկե, գրականագետներով՝ ինչպես տեղի, այնպես էլ եկվոր:

Հենց Այրեկ և Խլրութմիշ տիրակալների տարիներին են վերագրում հոչակավոր սուֆի-շեյխների քարոզական ակտիվ գործունեությունը: Նրանցից են Հաջե Մուին առ-Դին Ազմիրին (1142-1236), որը հիմնադրել է

դերվիշական շիշտե օրդենը, և Հաջե Քուբբ աղ-Դին Բախտիար Կակին, որի պատվին սուլթան Խլութմիշը կառուցել է մինարե:

Հայտնի է, որ բոլոր տոփի շեյխերը քավականին օժտված քանաստեղծներ էին և իրենց գաղափարները նրանք հասարակ մարդկանց հաճախ մատուցում էին քանաստեղծություններով: Թնականարար, սուֆիական քարոզչությունը ևս նպաստում էր պարսկերենի տարածմանը:

Պարսկերեն լեզվի տարածման գործընթացում ոչ պակաս նշանակալի էր նաև Նասիրին, Մուզիին և այլ մեղքեսների դերը, որտեղ ուսումնարում էին պատմություն, գրականություն, քանաստեղծական արվեստ:

13դ. սկզբին Իրանում և Միջին Ասիայում քաղաքական իրավիճակը քավականին անհանգիստ էր՝ կապված մոնղոլական ավերիչ արշավանքների հետ: Այդ իսկ պատճառով տեղի ունեցավ իրանցիների զանգվածային արտագաղթ Փոքր Ասիա և հատկապես՝ Հնդկաստան: Իրանից զանգվածային այս արտագաղթը մեծապես նպաստեց Հնդկաստանում իրանական համայնքի ստվարանալուն, որին և այս երկրում պարսկերենի ավելի մեծ չափերով տարածմանը ևոր առավել կարևոր է, պարսից լեզվով գրականության աննախադեպ զարգացմանը: Այդ է վկայում 13դ. այս երկրի մշակութային կյանքում մեծ թվով ակնառու տաղանդավոր քանաստեղծների հանդիս գալը:

13դ. առաջին կեսի հայտնի պարսկալեզու քանաստեղծներից է Թաջ աղ-Դին Սանգրիզեն<sup>5</sup>: Պալատական միջավայրում է ստեղծագործել Հաջ Ամիր աղ-Դին Սանամինը: Այդ դարաշրջանի գրական կյանքում նշանակալի դեր է ունեցել քանաստեղծ և գիտնական Ծիհար աղ-Դին Բաղաւումին:

13դ. Հնդկաստանի պարսկալեզու գրականության նկարագրությունը ամբողջացնում է Ամիր Հասան Դիհլավիի, կամ Սիթզեի գրական ժառանգությունը<sup>6</sup>:

13դ. ավարտի և 14դ. սկզբի Հնդկաստանի մեծագույն քանաստեղծն է Ամիր Խոսրով Դեհեվին, որին է պատկանում Նիզամի Գյանջևիի և նրա “Խամսե”-ի ավանդույթը շարունակելու պատիվը:

Հնդկաստանի պարսկալեզու գրականությունը ծավալուն է և ավելի ընդարձակ, քան կարելի է ներառել, սակայն երկար ժամանակ արևմտանվողական արևելագիտությունը հիմնականում զբաղվում էր միայն պարսից պոեզիայի կարկառուն ներկայացուցիչների ստեղծագործությունների ուսումնասիրությամբ՝ անտեսելով

Հնդկաստանի ստվարածավալ պարսկալեզու գրականությունը։ Սակայն այն, Հնդկաստանի պարսկալեզու գրականությունը, որպես հնդկական մշակույթի ուրույն երևույթ, դուրս էր մնում նաև արևելացետինդկարանների ուսումնասիրության շրջանակներից։ Այսպիսին էր Հնդկաստանի պարսկալեզու գրականության կարգավիճակը մինչև 20-րդ առաջին քառորդը։ Սակայն, դրությունն էապես սկսվեց փոխվել միայն անցյալ դարի կեսերին։

### ARMINE KOBELYAN (YSU)

#### ON THE ISSUE OF GENESIS OF THE PERSIAN LITERATURE IN INDIA

The persian literature of India has an ancient history. It has been ignored for a long time by orientalists, notwithstanding its huge quantity. The formation of the Persian literature in India is connected to the political changes created after the invasions of sultan Mahmud of Khaznevan. The official language spoken in the empire of Khaznevi founded by Mahmudi, was Persian. in due course Persian was wildly spread and became the main language of communication of people of the Indian peninsula and what is most important it became a self- developed literature language. Soon there appear Indian themes in the Persian literature, mainly thanks to khanzevji royal poets. Unsuri and Farroxi are famous royal poets, whose works made it possible to rebuild some historical facts. in 1030, after the death of Mahudi, a new political strength appeared in the middle east-seljuks, at the same time inside the empire the Gurids were becoming more powerful. after the defeat at dandanaka the Khaznevis had to move to India. Lahor was proclaimed the capital of the state. The Guridi's reign in India was largely favoured by Qutb ad-din Ajbek. By that time the Persian language was widely spread. This was also greatly favoured by active propagandas by the sheikhs of Sufi. The famous poets of that period worth mentioning are aiid Siraj Ad-din, Nur ad-Din Muhammad Atufi, Amir Xorov Dehlevi. The merit of each composing person is closely connected to the socio-political events of the given period, that find their eventual and inevitable place in their literary heritage.

#### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. *Sbu' 560-561* تهران جلد اول م 1371 تالیف دیمیث الله صفا چاپ 12 م در ایران و در قمر و زیان پارسی
2. *Նոյն տեղում,էջ 597:*
3. *Sbu' Алиев Г.Ю., Алиев Г.Ю., Персоязычная литература, Индии, М., 1975, с. 8.*
4. *Sbu' Алиев Г.Ю., Амир Хусрау Дихлави и его "Пятерица", М., 1972, с. 7.*
5. *Sbu' 371* اندیشت ایران از اغاز تا امروز تهران 1380 م
6. *Sbu' 376* اندیشت ایران از اغاز تا امروز تهران 1380 م

## ՈՍԿԱՆՑԱՆ ԱՆԻ

(ՀՅԹԻ)

ԱՇԽԱՇԽԱՌԱՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱՊԱԾԾՈՒԹՅՈՒՆՆ ՕՐՀԱՆ

ՓԱՍՏԻՔԻ

«ԶՅՈՒ» ՎԵՊՈԽՄ

Փամուքի ստեղծագործությունների լեզուն, յուրաքանչյուր վեպում տեղ գտած ոճական ընդհանրություններն ու տարբերությունները շատ ինքնատիպ ու ուշագրավ են: Նրա ոճի առավել վառ արտահայտություններից մեկը թերևս խորհրդանիշների կիրառումն է:

Խորհրդանիշներն ընդհանրապես գրքածության բավական լայն շրջանակ ունեն: Ոռու նշանավոր լեզվարան Վ. Վ. Վինօքրադրվը խորհրդանիշը բնորոշում է որպես որևէ առարկային վերաբերող նշան, որի նախն ցանկանում ենք գաղափար տալ<sup>1</sup>: Այսուհետու 1920-ական թթ. հրատարակած իր հոդվածներից մեկում ոճագիտության առաջին մասը համարում է սիմվոլիկա, իսկ մյուսը՝ կոմպոզիցիա (հորինվածք, կառուցվածք)<sup>2</sup>:

Հատկանշական է նաև հայ մեծանուն գրականագետ Էդ. Ջրբաշյանի խորհրդանիշների բնորոշումը. «Ամեն մի նկարագրության, նույնիսկ իրական փաստերի վերարտադրության մեջ սիմվոլիստն աշխատում է տեսնել ինչ-որ խորհրդավոր ակնարկ, ներքին բարուն, միատիկ իմաստ: Սիմվոլը ոչ այնքան այսի պատմի, որքան ակնարկի, ներշնչի ընթերցողին: Այս իր նշանակությամբ անսպառ է, բայց և մշուշոտ, անորսալի, բափանցիկ»<sup>3</sup>:

Այդ տեսակետից առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում «Զյուն»<sup>4</sup> վեպը, որտեղ առկա է խորհրդանիշների լայն համակարգ, ինչն ունի ոչ միայն լեզվա-ոճական, այլև խիստ արտահայտչական նպատակ և մեծ շափով նպաստում է վեպի գաղափարի առավել ամբողջական և ճշգրիտ ընկալմանը: Վեպում ներկայացվում են ամենատարբեր բնագավառների, սոցիալական շերտերի, ուրույն հոգեկան խառնվածք ու մտածելակերպ ունեցող հերոսներ՝ իրենց ապրումներով, խոհերով և զգացմունքներով: Փամուքը նկարագրում է մարդկային հարաբերությունների դրամատիկ, լարված, խորվահույզ վիճակներ, որտեղ միջավայրը, անձերը արտացոլվում են իրենց բնորոշ հատկություններով, վերջիններիս հատուկ հուզականությամբ:

Սակայն «Ջուն» վեպի հիմնական և տարրերակիչ առանձնահատկությունը վեպում տեղ գտած յուրահատուկ անձնանուների խորհրդապաշտությունն է: Հաճախ համաշխարհային հոչակ ունեցող շատ զբողենքի ստեղծագործություններն առավել հայտնի են հենց իրենց իսկ հերոսների անձնանուններով, քան երկի, ստեղծագործության վերնագրով: Անունների ընտրությունից երկը կարող է տուժել կամ շահել: Անունները սովորություն են և հերոսներն անվանակոչվում են ըստ ստեղծագործություններում ներկայացված ժամանակի, աշխարհագրական միջավայրի, հերոսների սոցիալական ծագման, դիրքի:

«Ջուն» վեպում անձնանուններն ընտրված են շատ դիպուկ և յուրովի: Փամուշին հաջողվել է ստեղծել անհատական ու առավելապես «Ջուն» վեպին հատուկ անունների ոչ սովորական, խորհրդապաշտական այնպիսի մի համակարգ, որտեղ անունը ոչ միայն բնորոշում է կերպարի բնափորությունը, էությունը, հոգեբանությունը, այլև շատ դեպքերում վեպում նրա կատարելիք դերը, գործողությունը: Երբեմն անձնանունը նույնիսկ նույնանում է հերոսի հետ: Վերը նշվածն առավել ընկալելի կրտանա, եթե փորձենք ավելի մանրամասն դիտարկել վեպի որոշ անձնանուններ.

Քերիմ Ակաքուշօլու (Քերիմ-մեծահոգի, ազնվահոգի)- վեպի գլխավոր հերոս՝ լրագրող և քանաստեղծ Քերիմը, Ստամբուլից եկել է Կարս՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների և ինքնասպանություն գործող կանանց ու աղջիկների մասին գրելու: Գլխավոր հերոս Քերիմն իրեն ողջ վեպի ընթացքում անվանում է ՔԱ՝ անվան և ազգանվան սկզբնատառերով: Ակնհայտ խորհրդապաշտական կապ կա գլխավոր հերոսի անվան՝ Քա, վեպի վերնագրի «ՔԱՐ» (Չույն), Կարս քաղաքի անվան միջն, որտեղ էլ ընթանում են վեպի ողջ գործողությունները: Անունների այս կապը՝ (Ka-Kar-Kars), անշուշտ, պատահական չէ. վեպի հերոսի, քաղաքի և վեպի վերնագրի անվանումների գրեթե նույնացումն ուղակի նպատակ ունի ներկայացնել հերոսի, վեպի հիմնական գաղափարի և Կարս քաղաքի անմիջական կապն ու միասնականությունը:

Ծեյխ Սաադեթին Զեվսահեր (սաադեթ- երջանկություն, երանություն)-մահերական շեյխ, որը մարդկանց հոգեկան հավասարակշռություն, հանգստություն ու անդորր էր պարզեւում: Մարդիկ նրա կողքին իրենց երջանիկ էին զգում:

Զ. Դեմիրքու (Երկար ճեռք) - Կարսում գիճված հեղաշրջում իրականացնող անձանցից մնկն էր, ով առանց վարանելու ահարեկում և

գնդակահարում էր մարդկանց: Հատկանշական է, որ հերոսի ամրողական անունը ողջ վեպի ընթացքում այդպես էլ չի տրվում: Հեղինակը բավարարվում է (հավանաբար, ոչ առանց դիտավորության) միայն նրա անվան սկզբնատառը (Զ) նշելով, դրանով իսկ հաստատելով նրա ոչ ավելին, քան ընդամենը երկար ծեռք (Դեմիքոյ) լինելը:

Օսման Նուրի Չոլար կամ միայն Չոլաք, ինչպես նրան անվանում էր զինված հեղաշրջման պարագլուխ Սուլմայ Զայխմը (քառացի չոլաք-չորացած ծեռքով) - գնդապետ, որը թերի, ոչ լիարժեք էր համարում և իր կյանքը, և իր զինվորական կարիերան:

Իփեր (մետաքս)-գլխավոր հերոսուհիներից մեկը, շափազանց գեղեցիկ կին, որին սիրում է Քան:

Քայիշի (քավիշ)-Իփերի քույրը, թավշյա գեղեցկությամբ մի աղջիկ, որը զիսաշորավոր աղջիկների առաջնորդն է: Այս երկու կանաց «մետաքս» և «քավիշ» անվանելով՝ Փամուրճ առանձնացնում և ընդգծում է նրանց մեղմությունը, քնքություն:

Հիջրան (քաժանում, ցավ, հոգեկան ցավ) - Վեպի հերոսներ Նեջիփի և Ֆազըլի կողմից հորինված, երևակայական հերոսուիի, (նոյն Քայիշին է), որին երիտասարդները սրբահարված էին: Մեր, որը նրանց միայն ցավ էր պատճառում:

Թեսլիմ (քեսլիմ-տալ, հանձնել, բուրքերենում՝ Teslimi can կամ տա etmek<sup>5</sup> նշանակում է հոգին տալ, մնոնել) -տարրեր պատճառներով ինքնասպանություն գործած քազմաքիչ աղջիկներից միակը, որի անունը նշվում է:

Լաջիվերք (քաց կապույտ, լազուր) - խլամիստների տեղական առաջնորդներից է, խիստ հակասական կերպար, որը երբեմն դիմում է անընդունելի միջոցների համուն իր կողմից ճշմարիտ և քարձր համարվող գաղափարների: Չնայած նա մեղադրվում է նոյնիսկ սպանության մեջ, սակայն նրա համախոհների համոզմամբ անմեղ է և մաքուր:

Վեպում մյուս անունները նոյնպես խորհրդանշական են և իրենց քացատրությամբ համապատասխանում են տվյալ հերոսի կերպարին՝ ինչպես՝ Հանդե (ծիծաղ, ժպիտ), Ֆազըլ (առաքինի), Նեջիփ (ազնվական, ազնվահոգի), Մետուք (երջանիկ) և այլն:

«Զյուն» վեպում Փամուրճ ստեղծում է խորհրդանշների մի ամբողջ համակարգ, որտեղ նրանց գերակշիռ մասն ունի իր տարատեսակ զարգացումները: Ուշագրավ է, որ հեղինակը հաճախ

գտնում է խորհրդանշիչի Ըերքին «մշուշոտ, անորսալի, քափանցիկ» իմաստ և այն տարածում այլ երևույթների վրա: Այդ տեսակետից առավել հետաքրքիր է *Ճյուճը*, որը տեղում է զրեք ողջ վեպի ընթացքում: Հատկանշական է, որ ստեղծագործությունը նույնպես անվանակոչվել է *Ճյուճ*: Եթե Փամուքը հերոսների անձնանուները ինչ-որ չափով առարկայացրել է նրանց ավելի կապելով իրենց կերպարների հետ, ապա զրդի առարկայական անվանումը կենդանանում է և ստանում բազմաթիվ իմաստներ: Այսպիսով, երբ ճյուճը վեպի սկզբում ուղղակի և անուղղակի ձևով, անտեսանելի պատճեշի նման փակել էր քաղաքի ճանապարհը՝ այն անջատելով աշխարհից և Կարսի բնակչության համար ստեղծել անելանելի վիճակ, ապա ստեղծագործության վերջում տեղում էր համդարտ, կարծես վերևից իշխող մաքրություն էր, մեղքերի ինչ-որ բողոքյուն, այդ մեղավոր քաղաքի և մարդկանց համար:

Փամուքի «Ճյուճ» վեպում անձնանունները ինքնանապատճեն չեն. Նրանք հեղինակին հնարավորություն են տալիս ոչ նիայն առավել հստակ և անմիջականորեն արտահայտել իր զաղափարը, մտահղացումը, այլև ընդգծել իր ոճն ու յուրօրինակությունը:

ANI VOSKANYAN  
(AGMI)

#### THE SYMBOLISM OF THE NAMES IN THE ORHAN PAMUK'S NOVEL “SNOW”

One of the more vivid stylistic expressions in the Pamuk's novels is the usage of symbols. The novel "Snow" presents a special interest from this point with the broad system of symbols, which has not only linguistic-stylistic but strictly expressive aim as well, contributing to the complete and precise perception of the idea of the novel. In this novel Pamuk creates a system of unusual and mystic-symbolic names characterizing not only the nature, essence and psychology of the hero but sometimes being identified with the hero as well.

#### ԾԱՆՈԹԱՎՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Виноградов В., Исследования по поэтике и стилистике, Ленинград, 1972, с. 75.
2. Նույն տեղում:
3. Զքրացյան Էր., Գրականության տեսություն, Եր., 1980, էջ 436:
4. Orhan Pamuk, Kar, Istanbul, 2004.
5. Баскаков А.Н., Большой Тюрецко-Русский Словарь, М., 1988, с. 854.

## ՊԵՏՐՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

(ԵՊՀ)

«SERVET-İ FÜNUN» ՀԱՆԴԵՍԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԵՎ  
ԼԵԶՎԱՄԱԿԱՆ ԱՌԱՋԱՀԱՀԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՐՉ

«Servet-i Fünun»-ի գաղափարական ուղղվածությունը

19-րդ դարի վերջում «Servet-i Fünun» (Գիտելիքների հարստություն) հանդեսը նոր էջ բացեց թուրքական գրական մտքի ասպարեզում:

Ծարաբարերի առաջին համարը լրիս է տեսնում 1891թ. մարտի 17-ին, հիմնադիրը Ահմեդ Իհսան Թորգոնը էր՝ արևմտյան մշակույթի վառ ջատագովներից մեկը: 1901թ. այն սուլթանական կառավարության հրամանով փակվում է:

Սկզբնական շրջանում հանդեսը ուներ գիտահանրամատչելի բնույթ: Տպագրվում էին տեղեկություններ՝ հանրահայտ մարդկանց կյանքից, հոդվածներ՝ Արևմուտքում գիտության ու տեխնիկայի բնագավառում ունեցած ձեռքբերումների մասին, ինչպես նաև տնտեսագիտությանն ու բժշկությանը վերաբերող նյութեր: Մեծ տեղ էին գրադենում եվրոպական, մասնավորապես ֆրանսիական գրականությունից արված թարգմանությունները: Երբեմն կարելի էր հանդիպել նաև ուազմական բնագավառին վերաբերող հոդվածներ: Այդ շրջանում թուրքական պարբերական մամուլի մեջ նորություն էին հանդիսանում «Servet-i Fünun»-ի էջնում տեղ գտած պատկերագրումները:

Թուրքական մյուս հանդեսների նման այստեղ ևս տպագրվում էին տարրեր ուղղությունների ու հայացքների տեր հեղինակների հոդվածներ: Միայն 1896թ. սկզբին, երբ հանդեսի ներկայացուցիչներից մեկը՝ Ռեջայզադի Էքրեմը, իր առավել տաղանդավոր աշակերտներին ու գաղափարակիցներին հրավիրեց համագործակցության, հանդեսում գերակշռող դարձան արևմտյան ուղղության երիտասարդ հեղինակների գործերի հրապարակումները<sup>1</sup>:

Նոյն 1896թ., նույն Էքրեմի հրավերով «Servet-i Fünun» եկալ բուրգական պոեզիայի ականավոր ներկայացուցիչ Թևիք Ֆիքրեթը, որի բանաստեղություններն արդեն մեծ ժողովրդականություն էին վայելում:

Ստանձնելով գլխավոր խմբագրի պաշտոնը՝ Ֆիքրեթն իր շուրջն է համախմբում բուրք գրականության լավագույն ուժերին, որոնց բփում էին արծակագիրներ Հայի Զիյան (Ուշարլզի), Հուսեին Զահիդը (Յալզըն), Միհմեդ Ռատոֆը, պլետներ Զենար Ծահարեղիմնը, Հուսեին Սուադը, Ալի Էքրեմը (Բողայըր), Ահմեդ Ռեշիդը, Սուլեյման Նազիֆը, Սուլեյման Նեսիբը, Ֆահր Ալի Օզանսոյը և այլոք:

Կարճ ժամանակաշրջանում այնքան է աճում Servet-i Fünun-ի հեղինակությունը, որ մի շարք պարբերականների («Mekteb», «Hazine-i Fünun», «Malumat») գրողներ սկսում են տպագրվել արդեն «Servet-i Fünun» -ում:

Ակսած 256-րդ համարից (1896թ. փետրվարի 7) «Servet-i Fünun» հանդեսը ծեռք բերեց գրական ուղղվածություն: Լինելով գլխավոր խմբագիրը՝ Ֆիքրեթը հետևում և խմբագրում էր բոլոր ստեղծագործություններն ու հոդվածները, վարում «գրական գրույցների» առանձին շարք, անգամ որոշ պատկերագրումներ ինքն էր անում:

Այսպիսով, բուրք գրականության զարգացման գործում մեծ դեր ունեցան «Servet-i Fünun»-ի շուրջ համախմբված պոետներն ու արծակագիրները, որոնց թողած ժառանգությունը բուրք գրականության մեջ հիշատակվում է Servet-i Fünun Edebiyatı անունով. Փյունունականները եկան հաջորդելու քանդիմաքաններին: Թուրքական մասնագիտական գրականության մեջ հանդիպում ենք նաև այլ անվանումների՝ Edebiyat-ı Cedide, Yeni Edebiyat-ı Cedide ձևերով: Վերջինն կիրառվում է գրաքննադատների կողմից «Servet-i Fünun»-ի գրական խմբակը Ծինասու, Նամըկ Զեմալի, Զիյա Փաշայի, Արդուշար Համիդի, Մահմուդ Էքրեմի և նման այլ հեղինակների ստեղծագործություններից առանձնացնելու համար<sup>2</sup>:

Պետք է նշել, որ Փյունունականները հրաժարվեցին քանդիմաքանների առաջ քաշած «դեպի ժողովուրդ» («halka doğru»), «զեզվի պարզեցման» («sadeleşme») սկզբունքների կիրառումից<sup>3</sup>:

«Servet-i Fünun»-ի գրողների հետաքրքրություններն ուղղված էին դեպի արևմտյան մշակույթ ու քաղաքակրթություն: Ուշադրությունը հիմնականում կենտրոնացված էր ֆրասնիական դպրոցի վրա: Այս ընթացքում թուրք հեղինակներն ուսումնասիրում էին արևմտաեվրոպական գրողների ստեղծագործությունները՝ յուրացնելով նոր ժամրեր, նոր ոճեր<sup>4</sup>:

Նրանք չէին խուսափում ինչպես սյուժեի, այնպես էլ բովանդակային առումով Արևմուտքին կրկնօրինակելուց, երբեմն էլ իրենց գրականության մեջ էին մտցնում օտարածին, արիեստական տարրեր<sup>5</sup>:

Չատ հեղինակներ իրենց վրա կրում էին սիմվոլիզմի և իմարեսիոնիզմի ազդեցությունը, որոնք այդ տարիներին Արևմուտքից մուտք էին գործել թուրք գրականության մեջ<sup>6</sup>:

«Servet-i Fünun»-ում տպագրվում էին արվեստի և գրականության տեսական հարցերը լուսարանող աշխատանքներ: Ֆիքրերն իր հոդվածներում հաճախ քննադատում էր «արվեստն արվեստի համար» սկզբունքը: Այս հարցում ևս Ֆիքրերին կողմնակից էին «Servet-i Fünun»-ի գրողների մեծամասնությունը և պաշտպանում էին այն տեսակետը, որ գրականությունն ու արվեստն ունեն հասարակական նշանակություն<sup>7</sup>:

Ինքնասպանության թեման լուրջ տեղ էր գրադեցնում «Servet-i Fünun»-ի գրականության մեջ: Գրողների մեծամասնությունն իրենց ստեղծագործություններում հերոսներին տարրեր եղանակներով ինքնասպանության էին ենթարկում: Հատկանշական է, որ ինքնասպանության փորձեր եղել են գրողների անձնական կյանքում ևս: Այսպես, Մեհմեդ Ռասուֆը սիրո պատճառով ինքնասպանության փորձից հետո հազիվ փրկվեց մահից: Ֆիքրերն էլ մի քանի անգամ խոստովանել է, որ, եթե չունենար կին և որդի, ինքն էլ ինքնասպան կլիներ<sup>8</sup>:

Լինելով գրական-գեղարվեստական հանդես՝ «Servet-i Fünun»-ը վերածվեց պայքարի միջոցի համուն թուրք գրականության արդիականացման:

Սեծաթիվ հոդվածներ նվիրված էին նոր պոեզիայի հիմնադրման հարցադրումներին: Նմանօրինակ հոդվածների մեծ մասը պատկանում էր հենց Ֆիքրերի գրչին: Նա կոչ էր անում շնմանակել իր պոեզիային, փոխարենը նորացնել թուրքական պոեզիան՝ նոր լեզվով, նոր

թեմաներով: Պոետը համոզված էր, որ քուրքական գրականությունը կարիք ունի միջնադարյան պոեզիայի կանոններից ազատագրման և նորացման<sup>9</sup>:

Ֆիքրերի ստեղծագործություններում և ընդհանրապես «Servet-i Fünun»-ի էջերում շարունակում էին տիրել հոռետեսական մտքեր՝ պայմանավորված «զուլումի» ուժիմով ու վերջինիս կողմից հաստատված խիստ գրաքննությամբ, որը բացասարար էր ազդում մտքերի ու հայացքների ազատ արտահայտման վրա ընդհանրապես<sup>10</sup>: Ֆյունունականները տուրք էին տալիս հաճախ պանթեիստական հայացքների:

### **«Servet-i Fünun» -ի լեզվատօնական առանձնահատկությունները**

Գրավոր և բանավոր լեզուները միմյանցից բավականին տարանջատված էին:

Օգտագործվում էին մեծարիկ արարերեն և պարսկերեն բառեր:

Տուրք տալով եվրոպական լեզուների, իմանականում ֆրանսերենի բառաստեղծական կառույցներին՝ կազմվում էին նոր քերականական կաղապարներ, հատկապես բաղադրյալ ածականներ:

Ինչպես նաև ֆրանսերենից բարգմանվում էին այնպիսի բառարտահայտություններ, ինչպիսիք են «Սեկի ձեռքը խնդրել» («Dest-i izdivaç talep etmek»), «ոտեսակետ» («nokta-i nazar») և այլն:

Նախադասության վերջում բայի խոնարհումների նույնատիպ կրկնություններից խուսափելու համար բայական նախադասությունների կողքին օգտագործում էին անվանական նախադասություններ:

Լայն գործածնան մեջ մտան նաև անբայ նախադասությունները:

Կիրառվում էր ուրիշի ուղղակի խոսքը: Մեծ տեղ էին գրակում ձայնարկությունները:

Չափածո ստեղծագործություններում նկատվում էր Դիվանի գրականության ավանդույթներից աստիճանական նահանջ:

Ֆրանսիական պոեզիայից ընդօրինակած ստեղուռ և այլ ժանրերով գրելու փորձեր էին արվում:

Դիվանի գրականությունից վերցրած **serbest müstezad**-ը նմանցվում էր ֆրանսիական պոեզիայի ազատ ձևերին.

Sâf u râkid...Hani akşamki tagayyür, heyecân?

Bir çocuk rûhu kadar pür- isyân,

Bir çocuk rûhu kadar şimdi münevver, lekesiz,

Uyuyor mâyî deniz.

Tevfik Fikret

Ωπιλալ πι հանդարտ... Οι՞ր են երեկոյան ալեկոծությունն ու  
հուզմունքը՝

Մի մանկան հոգու չափ լի մոռացությամբ

Մի մանկան հոգու չափ հիմա պայծառ ու անքիծ

Քնած է ծովը կապույտ:

Թևիր Ֆիքրեր

Ֆյունունականների պոեզիայում կիրառության մեջ մտան  
հանգավորման նոր ձևեր, որոնք մինչ այդ գոյություն չունեին Դիվանի  
պոեզիայում: Չափածո ստեղծագործություններում հիմնականում  
օգտագործվում էր արուզը:

Գրվում էին բանաստեղծություններ «ոչ թե աչքի, այլ ականջին  
հասկանալի» («Kafsiyeniñ göz için değil, kulak için») լինելու համար:  
Վերջ դրվեց մեկ թեյթում իմաստը լրացնելու տաղաչափական  
կիրառությանը: Իմաստի ամբողջականությունն ամփոփվում էր ողջ  
բանաստեղծության մեջ:

Ֆյունունականների ստեղծագործություններում նկատվում է  
իրականությունից կտրվելու, մեկուսանալու միտումը: Ի հայտ է գալիս  
երևակայության ու ճշմարտության բախումը: Արծարծվում էին այնախիս  
թեմաներ, որոնք առնչվում են կյանքի պարզ, հասարակ դեպքերին, նաև  
զգացմունքներին, երևակայությանը: Արդիական էին ընտանեկան  
կյանքին վերաբերող, բնության, սիրո թեմաները:

Birlikte açılmış iki zambak gibi hem-ser,

Birlikte geçirdik bütün eyyâm-i şebâbi;

Tevfik Fikret

Միասին բացված երկու շուշանի պես համախոհ,

Միասին անցանք երիտասարդության ամբողջ օրերը;

Թևիր Ֆիքրեր

Այսպիսով, «*Servet-i Fünun*» համեսր մեծ հետք բողեց թուրքական նոր գրականության մեջ, հատկապես նոր թեմաների, նոր ժանրերի և գրական լեզվի հղկման և զարգացման առումով:

TIGRAN PETROSYAN  
(YSU)

THE IDEOLOGICAL AND LINGUO-STYLISTIC PECULIARITIES  
OF THE JOURNAL SERVET-İ FÜNUN

The article is about the ideologies supported by the journal *Servet-i Fünun* and the linguo-stylistic peculiarities of the latter. The writers consolidated around *Servet-i Fünun* had a great part in the development of the Turkish literature. The *Servet-i Fünun* significantly enhanced the formation and development of new issues, topics, genres and the literary language in the New Turkish Literature.

ԾԱՆՈԹԱՎՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Гарбузова В.С., Поэты Турции XIX века, Лен., 1970, с. 71.
2. Edebiyat Ansiklopedisi, Milliyet, 1991, с. 299.
3. A. Kabaklı, Türk Edebiyatı, cilt 1, Türkçes yauppnevi, 1965, с. 248.
4. Алькасава Л.О., А.Бабасев, Турецкая Литература, Краткий очерк, М., 1967, с. 46-47.
5. Алькасава Л.О., Очерки по истории турецкой литературы 1908-1939 гг., М., 1959, с. 10.
6. Гарбузова В.С., Եշ. աշխ., էջ 72:
7. Фиш Р., Писатели Турции-книги и судьбы, Москва, 1963, с. 24.
8. Kaplan M., Tevfik Fikret: Devir-Şahsiyet-Eser, İstanbul , 2007, с. 45.
9. Фиш Р., Եշ. աշխ., էջ 23.
10. Զուլումի շրջանի մամուլի ու գրաբնության մասին առավել մանրամասն տես՝ Ժելտյակов А.Д., Печать в общественно-политической и культурной жизни Турции (1729- 1908 гг.), М., 1972, с. 175-238.

ՄԻՍՈՆՅԱՆ ՄԱՐԹԱ  
(ԵՊՀ)  
ԱՀՍԱԴ ՇԱՍՏՈՒԻ ԱՐՁԱԿԵ

Նիմա Յուշիջից հետո պարսից Նոր պոեզիայի ամենապայծառ լիսատուներից մեկն է Ա. Չամլուն (1925-2000), ով նշանակալից աղեղոցություն է ունեցել 20-րդ դարի իրանի քանաստեղծական մտածելակերպի վրա: Քննադատներն, իրավամբ, Չամլուի պոեզիան համարում են մի հայելի, որտեղ արտացոլված են իրանի հասարակության ճգնաժամերը, վերելքները, տրամադրությունները, ինչպես նաև հայրենասեր քանաստեղծի պայծառ ակնկալիքներն ու վեհ ձգություններն իր ժողովրդի և հայրենիքի ապագայի նկատմամբ: Եվ պատահական չեն, որ իրանցի գրականագետ Ռ. Բարահենին Չամլուի պոեզիան բնութագրում է որպես Իրանի «հասարակության կենսագրություն»<sup>1</sup>:

Չամլուն սիրում էր իր ժողովրդին ջերմ ու անկաշառ սիրով: Նրա քանաստեղծություններում կենտրոնական տեղը գրադարձնում են ժողովուրդն ու հասարակությունը, նրանց վշտերն ու տառապանքը, գոյություն ունեցող անարդարություններն ու բռնությունները: Նա շատ նրանկատորնեն ընկալել էր պոետի իր դերը՝ որպես ժողովրդական ակնկալիքների աղբարարի: Անծ պատասխանատվություն զգալով հասարակության և ժողովրդի առջև և իրեն համարելով այդ «հսկայական անտառի մի ճողովը», քանաստեղծ զտնում էր, որ պետք է «փր եռթյամբ պատվաստված լինի իր ժողովրդի ցավերին ու վշտերին»<sup>2</sup>: Ուստի իր քանաստեղծությունները գրում էր «քորախստավորների ու մերկերի, ... մոխրի վրա նստածների համար ... և նրանց համար, ... որոնք այլևս երկնքին հուսացած չեն»<sup>3</sup>:

«Երկրի վրա հաստատված երկնային արքայության, այսինքն՝ եղբայրության, հավասարության և արդարության վրա հիմնված անդասակարգ հասարակության տեսիքը»<sup>4</sup> նրան իրապորեց միանալու «Իրանի ժողովրդական կուսակցությանը»՝ «Թուրք»<sup>5</sup>-ին: Թեև հետագայում կուսակցության դեկավարների ստոր Փախուստից ու

դավաճանությունից ցնցված՝ ընդմիշտ լրեց «Թուդի»-ի շարքերը, սակայն չկորցրեց հավատը սոցիալիզմի գաղափարախոսության հանդիպ և շարունակեց պայքարը մենակ, քանի որ նույնիսկ «օդը ... պղծված է իմ (բանաստեղծի- Ս. Մ.) ուղեկիցների ստությամբ լի շնչից»<sup>6</sup>:

Ա. Չամլոն Ալեք. Սորի (Ա. Առավոտ) գրական անունը գործածում էր մինչև 1953թ., դրանից հետո նա ստորագրում էր Ալեք. Բամդադ (Ա. Արշալույս) անունով:

1940-ականների վերջին և 50-ական թթ. սկզբներին պարսից գեղարվեստական արձակում գերակշռող ժանրերը կարճ պատմվածքն ու նովելն էին, որոնք արտահայտում էին հակամաքերիալիստական, հայրենասիրական մոտիվներ, գյուղացիության թեման, երևան էին եկել քանվոր դասակարգի կյանքին ու պայքարին նվիրված առաջին ստեղծագործությունները<sup>7</sup>: Գրական ասպարեզ իշմելով հենց այդ տարիներին Ա. Չամլոն իր ստեղծագործական տաղանդը ոչ պակաս վարպետությամբ դրսուրեց նաև փոքր արձակի ժանրում, փորձելով դրա միջոցով նույնպես պատկերել իրանական ժողովրդի վշտերն ու թշվառությունը, ոգեշնչել և պայքարի կոչել նրան:

Երկրորդ աշխարհամարտից հետո գնալով մեծանում էին ԱՍՆ-ի և Սեծ Բրիտանիայի տնտեսական, ռազմական ու քաղաքական հետաքրքրություններն իրանի նկատմամբ: «Ղավամ Աս-Սալբանեի կառավարությունը փորձում էր ԱՍՆ-ի օգնությամբ հակազել Իրանում Խորհրդային Սրբությամն ու «կոմունիստական վտանգին»<sup>8</sup>: Սրաժմանակ կառավարող շրջանները համախմբում էին երկրի հետադիմական ուժերը՝ օրավոր հսկայական չափեր ընդունող դեմոկրատական, առաջադիմական շարժման դեմ, որը հայտնի է Պայքար նավթի համար անվամբ: 1953թ. Մոսահեղի կառավարությունը տապալումից հետո գնեներալ Ֆ. Զահենդի կառավարությունը դաժան հաշվահարդար տեսակ վարչակարգի հակառակորդների հետ: Այդպիսի դաժան քաղաքական հալածանքների ու խիստ գրաքննության պայմաններում, երբ իրանցի լեզվարան, գրականագետ պրոֆեսոր Ն. Խանլարիի բնորոշմամբ «նույնիսկ սիրահարն իրավունք չուներ որևէ քանից դժողով լինելու իր սիրեցյալից»<sup>9</sup>, պարսից նոր արձակում բանաստեղծները մեծապես օգտվում էին կյանքի երևույթներն այլարանորեն ներկայացնելու դասական ավանդույթից, որպեսզի

արտահայտեն և բողոք անարդարության ու բռնության դեմ, և բարդ փիլիսոփայական հայցընթեր:

Չամլուն իր պատմվածքներում կիրառում է այլաբանություններ և սիմվոլիկա, որպեսզի մարմնավորի ժամանակի արդիական խնդիրները ու պրոբլեմները: Այսպես, «Նարեկի կորսվածը»<sup>10</sup> (Գոմշողեն դրուն) (1950) պատմվածքում Չամլուն նկարագրում է հուսարեկ ու խարված անձի մենախոսությունն ու խոհերը, ով ոչ մի կերպ չի կարողանում հաշտվել «Երկար ճգվող գիշերվա» հետ և անհամբեր սպասում է այգարացին: Բռնությունը, անարդարությունը և կեղեցքուն արտահայտելու համար, Չամլուն հաճախ էր կիրառում իրանական գրականության համար վաղուց ի վեր ավանդույթ դարձած գիշերվա խորհրդանշներ, որին փոխարինելու է գալիս խավարը ցրող լուսարացը՝ որպես ազատության, երջանկության և փրկության ավետարեր:

Ընդհանրապես, ինչպես պոեզիայում, այնպես էլ արձակում Չամլուն օգտագործում է բնության պատկերներ (լեռ, եղեգ, ճահիճ, գիշեր, լուսին, արև, մայրամուտ, գարուն, ամառ, օդ, և այլն), որոնց ցուցադրումը հեղինակի ստեղծագործության մթնոլորտը լցրել է բնության խաղուն գույներով ու գեղեցկությամբ:

Չամլուն իր երկերում մարդկային որակներ է հաղորդել բնության երևույթներին և տարրերին (տարվա եղանակ, քամի, ջուր, հող, կրակ), անշունչ և շնչավոր առարկաներին, որոնք կարող են նաև երևակայական էակներ լինել: «Մարդիկ և խսիրները»<sup>11</sup> (Մարդիա վարությահա) պատմվածքում ճահիճի խորքն ընկած և փառող խսիրը բանաստեղծը ներկայացնում է որպես իրանական ժողովրդի խորհրդանշ, «որի մարմնի բոլոր մասերն ու անդամները գաղութարար ու զորեղ երկրների հասցրած անիրավության, ոճիրների, բռնության, զրկանքի ու դժբախտության հետևանքով ջլատված ու քայրայված էին»<sup>12</sup>: Այստեղ նա խսիրը ներկայացնում է մարդկային ունակություններով՝ գիտակցությամբ (գիտակցել իր վիճակն ու որոշում կայացնել՝ դուրս գալ ճահիճց թե՝ մնալ այնտեղ), ցանկությամբ (իր սիրտն է ցանկացել «ընկնել այնտեղ»), կամքով, զգացմունքներով և այլն:

Այն երկրում, որտեղ «գերեզմանափորի վարձը մարդու ազատությունից ավել արժե», և ոտնակրիս էին արված ժողովրդի հույսերն ու սպասումները, իսկ «դժբախտների համար պատրաստվող

մտրակը իրենց իսկ եղբայրների ուսկորմերից էր սարքվում»<sup>13</sup>, մարդիկ կարիք ունեին նաև հուսադրող և ոգեշնչող, սեփական ուժերի նկատմամբ վստահություն ներշնչող խոսքերի: Այդ առումով ամենաուշագրավը, թերևս, «Վերածնվածը»<sup>14</sup> (Բազ Գյաշը), (1948), պատմվածքն է, որը կարելի է վերլուծել երկակի ենթատեքստով: Պատմվածքն սկսվում է մի դիակի նկարագրությամբ, որը փորձում է իր վիճակն ըմբռնել: Պատմվածքը զարգանում է այնպես, կարծես հանգուցյալի դին իր մահանալու և դրանից հետո կատարվող իրադարձությունների ականատեսը լինի մի բյուրեղյա պատի ետևից: Նա ասես բյուրեղյա պատի ետևից տեսնում է իր կնոջը, որը շարունակ փորձում է գտնել ուսկեղենի տուփը, շիմանալով, որ իր ավագ որդին մեկ ժամ առաջ արդեն հափշտակել էր այն: Տեսնում է իր հավատարիմ ծառային, որն իր հարսանիքի համար արդեն հասցրել էր մի ծեռք լավ հագուստ «պրծացնել»:

Չամլուն շատ վառ ու կենդանի է նկարագրում անտեր թողված ու մոռացված դիակի զգացումները, որը տեսնելով, որ ինքը ոչ ոքի չի հետաքրքրում, ապարդյուն ջանքեր է գործադրում իրեն տեղից շարժելու և պողպատյա դագաղի մեջ տեղափորելու համար... Եվ հանկարծ նրա մեջ նոր զգացում է առաջանում: Հանգուցյալը, որն իր կենդանության օրոք կյանքից հոգնած ու ծանձրացած էր և ոչ մի կերպ չէր ցանկանում որ իր որևէ մասնիկը այս աշխարհ վերադառնա, սկսում է Աստծուն խնդրել, որ իր որրացած զավակների սրտի մեջ զցի, որ «իրենց հոր աննտուրյամբ արած կտակը չկատարեն»<sup>15</sup>: Սա խորհրդանշում է կյանքի հանդեպ նոր վերաբերմունքի արթնացում, նոր մարդու ծնունդ: Գրողը ցույց է տալիս, որ մարդու գիտակցության մեջ փոփոխություն է կատարվում, որին հենց կյանքն է դրդում ամեն ինչ վերահիմաստավորել: Այս պատմվածքում Չամլուն էքզիստենցիալիստ գրողի մոտեցում է ցուցաբերում, քանի որ իր հերոսին, որը տվյալ դեպքում հանգուցյալի դին է, ներկայացնում է որպես հասարակությանը, տվյալ դեպքում՝ իր ընտանիքին խորը, օտար, միայնակ անձ, ով շրջապատող աշխարհում տեսնում է անտարբերություն, ուխտադրժություն, շահամոլություն: Բայց հետաքրքիր է, որ եթե նախքան իր մահը այդ ծանձրացած, հիասքափկած մարդը, որը և՛ կենդանության օրոք, և՛ մահից հետո ականատես է լինում իր ընտանիքի անտարբերությանն ու անհավատարմությանը (նրա որդիները անհավատարիմ էին նույնիսկ

իրենց հոր կտակը կատարելու մեջ), փոխում է իր որոշումը և այդ անեղաննելի վիճակից (նա մահացած էր), եթզ գտնում է միայն նրանով, որ ոչ թե պետք է այդպիս հուսախար ու հիասքափված մնալ, այլ պետք է վերածնվել և էության մասնիկներով լցնել օդը և բնուրյունը: Չամլուն ռեալիստ գրող էր: Բայց այս պատմվածքը ստեղծված է արսուրի սկզբունքներով, որտեղ ամենաանհնարինը, ամենաանմիտը, անրացատրելին կատարվում է առօրյա կյանքում: Այս պատմվածքում հստակ երևում է ավստրիացի գրող Ֆրանց Կաֆկայի ազդեցությունը, որն արսուրի գրականության ներկայացուցիչն է: Այն հատկապես նման է Կաֆկայի «Փոխսակերպում» վիպակին, որտեղ գլխավոր հերոսը փոխսակերպվում է ուտիմի: Սակայն պետք նշել, որ ի տարրերություն Կաֆկայի վիպակի, որն ավարտվում է հոռետեսական նոտայով, Չամլուն իր պատմվածքն ավարտում է լավատեսական տրամադրությամբ: Այստեղ հեղինակը դիակի մտքերը և խոհերը ներկայացնում է այնքան սովորական, որ կարծես ոչ մի զարմանալի բան չկա, որ մարդն իր մահից հետո էլ չի դադարել մտածել, ցավել, գոհ լինել կամ աղոքել, ճգտել, ցանկանալ և այլն: Բնական է, որ դիակն ընդիմանրապես որևէ բան չի կարող անել, բայց Չամլուն նույնիսկ այդ մահացած մարդուն չի պատկերում որպես իր սեփական անկարողության և անկատարության ստրուկ, այլ վեհացնում, բարձրացնում է նրան: Նա սահմանափակ հնարավորություններով ու կարողություններով մարդուն ներկայացնում է որպես դեպի լույսը, վեհ նպատակները ճգտող և դրանց հասնելու համար իր բոլոր ժիգերը ներդնող մեկի, ով չնայած շրջապատող պարագաներին, իրավիճակին և խավարին, որը տիրում էր նաև դագաղում, մահին, իր ողջ էությամբ ճգտում է դեպի լույսը և հասնում դրան:

Պատմվածքն ունի նաև քաղաքական ենթատեսատ, ինչպես Չամլուի բոլոր ստեղծագործությունները, այդ թվում նույնիսկ սիրային բանաստեղծությունները<sup>16</sup>:

1940-ականների վերջերին «իրանական մամուխ կանխատեսումների համաձայն՝ երկիրը մոտեցել էր անդրւնի եզրին... Մայրաքաղաքում ու բազմաթիվ քաղաքներում գործող ուազմաղաշտային դատարանները մի քանի ամիս շարունակ կայացնում էին դատավճրութեր, «Իրանի ժողովրդական կուսակցությունը՝ «Թույեն», հայտարարվեց օրենքից դուրս, ջախջախսվեցին նաև իրանական

կոմունիստների հետ կապված կազմակերպությունները»<sup>17</sup>: Առաջադեմ գործիչներին սկսեցին ենթարկել հալածանքների: Ծամլուն հուսաբեկություն ապրեց: Ընդհանրապես, Ծամլուին բնորոշ զիծ է հուսահատության ու հուսաբեկության պահերին խորհել ու գրել մահվան մասին, որն առավել ցայտուն արտացոլվեց նրա հետագա՝ ավելի հասուն շրջանի ժողովածուներում: Սակայն հեղափոխական եռանդով, կոմունիստական զաղափարախոսության և ժողովրդի հանդեպ մեծ հավատով լցված Ծամլուն չէր կարող հաշտվել պայքարի խափանման ու պարտության հետ: Ուստի, պատմվածքի միջոցով նա ահազանգում է մարդ-հասարակական անհատին ոչ թե պարտությունից դառնալ անտարբեր, ինքնամփոփ, այլ թեև պարտված, բայց՝ ծնկի չեկած: Ուստի, նա հոչակում է կյանքի հարվածներից չպարտվող, արժանապատվությունը չկորցնող, հպարտ մարդու գեղազիտական իդեալը, որը պարտվելով չի բռնում պայքարը հանուն հայրենիքի ու ժողովրդի, այլ նորանոր ուղիներ է որոնում հաղթանակի ծեռք բերման համար և հասնում դրան:

**MARTA SIMONYAN  
(YSU)**

### THE PROSE OF AHMAD SHAMLOU

Shamlu's poetry is a mirror which reflects the crises, rises and moods of Iranian society. But he is invaluable not only for his poetry, but also for his mastery- through small prose to picture the sorrows and destitution of his people and also to try to encourage them through it.

Shamlu was gifted with a great power of imagination and mastery to make allegories, which was expressed brightly in many of his stories, one of which is "The loser of centuries" (Gomshode-e korun) (1950). In another story- "The regenerated" (Baz gashte), even the died man is not presented as a slave of his own imperfection or feebleness. But the writer presents the human being of limited abilities as aspiring to the light and putting all his efforts to reach it in spite of all circumstances surrounding him.

### ԾԱՌՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆԵՐ

1. Բարահենի Ռեզա, Թալա դար մես, Թեհրան, 1980, ս. 316:
2. Ծամլու Ա., Հավայի քազե, Ծերի թե զենիզիսր, Թեհրան, 2000, ս. 91:
3. Նոյյն տեղում, Ավազե շարանն արայի բուշիա, ս. 244:
4. Leonardo Alishan, Ahmad Shamlu: A rebel poet in search of an audience, ([internet-  
http://Shamlu.com/](http://Shamlu.com/)).

5. «Թուղթի» մասին մանրամասն տես՝ Խվանանայան Գոհար, Խրանում տեղի ունեցած «Այսր» զործողության հարցի շուրջ, Մերձավոր Արևելք, Հողվածների ժողովածու, Եր., 2002, էջ 120:
6. Չամլու Ա., Հավայի բազե, Մորույն մարդի բն բանիա բն ոտի մի ուավադ, Թեհրան, 2000, ս. 316:
7. Սիվոսյան Հ.Հ., Ծեխոյան Լ.Հ., Ժամանակակից պարսից գրականության պատմության ակնարկներ (1941-1978), Եր., 1989, էջ 57:
8. Բայրության Վ., Խրանի պատմություն, Եր., 2005, էջ 640: Այդ մասին մանրամասն տես՝ նշված աշխատության էջ 652-666:
9. Խառը Պարվիզ Խանլարի, Խարե ֆարս, ս. 141, Կոմիսսարով Դ. Ս., Օչերք ժամանակակից պատմության պատմության մասին, Մ., 1960, ս. 30.
10. Չամլու Ա., Դարիա վա դիվարիայի բողոքն շին, գոմշողնե դորուն, Թեհրան, 1973, ս. 37:
11. Նոյն տեղում, Մարդիա վա բուրիահա, ս. 31:
12. Դավուդի Մ., Դավան Աս-Սալյանն, Թեհրան, 1947, էջ 15:
13. Ա. Չամլու, Մաջմուեն ասար, դաֆրան երու, Ծերիա, Ափաս դար ահմեն, Թերրար, Թեհրան, 2003, ս. 464:
14. Չամլու Ա., Դարիա վա դիվարիայի բողոքն շին, Բազ զյաշըն, ս. 67:
15. Նոյն տեղում, ս. 69:
16. Այդ մասին տես՝ Սիմոնյան Մ., Ահմադ Չամլուի պոեզիան, Մերձավոր Արևելք, Հողվածների ժողովածու, Եր., 2007, էջ 144:
17. Բայրության Վ., Խրանի պատմություն, Եր., 2005, էջ 655-656:

ՓԱԾԱՅԱՆ ԱՆԻ  
(ՈՀՍՀ)  
ԶԱՐԵՆՑԸ ԵՎ ԱՐԵՎԵԼՔԸ

Արևելքն իր բազմերանգությամբ և հարուստ մշակույթով միշտ էլ հետաքրքրել է հայ գրողներին: Արևելյան բազմաթիվ իրողություններ խոր անդրադարձ են գտել Խ. Արովյանի, Հովհ. Թումանյանի, Ավ. Խաչակրյանի, Հովհ. Շիրազի և այլոց ստեղծագործություններում: Եղիշե Չարենցը /1897-1937/, լինելով անսպասելի և անսովոր բռիշների բանաստեղծ, ժամանակ առ ժամանակ իր հայացքն ուղղել է Արևելքին: Եվ ոչ միայն: «Արևելյան» ճևով մտածելը Չարենցի ինքնատիպության դրսորումներից է: Իր մեջ կրելով Արևմուտքը՝ նա զգացել է նաև Արևելքն իր ողջ խորությամբ և բովանդակությամբ: Այդ հարազատությունը զգացվում է և «Տաղարանում», և «Չարենց-Նամուս», և «Երկիր Նահրիում», և «Քեյքերում», նաև այլ գործերում: Ծնված լինելով Կարսում՝ «Գանգրահեր տղան» շափած նովելում հիշատակում է. «Եղիշե Չարենց, Բանաստեղծ ծնված Մակո քաղաքում»<sup>1</sup>:

Նույնը կա նաև «Չարենց-Նամե» ինքնակենսագրական պոեմում»: Արևելքը, անշուշտ, հարազատ է Չարենցին.

Ես եկել եմ հեռո՞ւ Իրանից:  
Հայրեմիքս է - Խանի Մակում:  
Իմ հոգում - արևն է Իրանի,  
Իրանի արևն է իմ հոգում<sup>2</sup>:  
Նոյն պոեմում խիստ արևելյան է մոր պատկերը.  
Ահա մայրս՝ գնում է ջրի,  
Գլխին՝ Թեհրանի լաշակ...<sup>3</sup>

Կամ.

Իսկ երբ մայրս մազերին իր ձյուն

\* Չարենցի ստեղծագործություններից կատարված հոդվածը բերվում են ըստ հետևյալ հրատարակության՝ Եղիշե Չարենց, Երկերի ժողովածու, «Առվետական գրող» հրատարակություն, Եր. 1986-1987:

Դնում է ոսկեմուգ հինա -  
Թվում է մազերի միջով  
Ես կարող եմ թեհրան գնալ...<sup>4</sup>

«Չարենց-Նամեռում» լիրիկական հերոսի տվյալտանքներն ու ոգորումներն աղերսվում են Արևելքի ամենամեծ խորհրդանշներից Արևի, վարդի, կրակի, ինչպես նաև բույրերի, տաքության ու ախորժահոտության հետ.

Թող իմ սիրտը - բուրմուճքը վարդի,  
Իսկ ուղեղս - կրակը խանձի<sup>5</sup>:  
Ինչպես նաև.  
Պարզում է ճեռքերմ առաջ  
Հոգիս, որպես որք տղա -  
Ուզում է արևկեզ հարավ,  
Ուզում է արևի ծննդան...<sup>6</sup>

Չնայած հերոսը մտովի «կարող է հասնել Հնդուչին, տիրանալ գանձերին Շահի», բայց, այնուամենայնիվ, «արյան մեջ երգում է Նահրյան տիսրությունն անձիր...»: Մեկ անգամ չէ, որ Չարենցի քերպածքներում իրար են բախվում բանաստեղծի տաք հոգին արևելյան և սառը իրականությունը.

Ես ուզում էի - շո՛գ,  
Իրան...  
Ծիրազի վարդեր կարմիր:-  
Բայց գտա...  
Անկողնի...  
Վրա...  
Տարածված ... մի պաղ մարմին...<sup>7</sup>

1921թ. գրված այս բանաստեղծության մեջ պոետի՝ արևի ոսկու և իրաշքի մասին երազանքը դարձյալ բախվում է «գումար» և «ուկար» իրականությանը.

Գիշերը ամբողջ հիվանդ, խելագար,  
Ես երազեցի արևի մասին:  
Ծուրջս ոչ մի ճայն ու շշուկ չկար -  
Գումար էր շաւրջս՝ գիշեր ու լուսիմ<sup>8</sup>:

Չարենցի ստեղծագործության մեջ Արևը կենդանի իրողություն է, որն առանձնակի ուժգնությամբ է պատկերված հատկապես «Ութնյակներ արևին» շարքում.

*Այն արևն է՝ կարմիր ու հասուն,  
Կախվել է որպես վառ մի միրզ<sup>9</sup>:*

Այս շարքում Չարենցի համեմատություններն անվերջ են: Արնանման արևը մեկ համեմատվում է ոսկի ծննդայի, մեկ աղջկա կոնքերի, մեկ ոսկի սվիմների հետ: Անձնավորված արևը երևում է անընդհատ և ամենուր.

*Աղջիկները չար խոսք են ասում –  
Ու խնդրում է արևը խելառ...<sup>10</sup>  
Կամ. Ինչպես շոգ, ճնշող ու ոսկի  
Քրոնզեմույլ, հոսուն, հոսուն –  
Արևի տապան է հոսուն,  
Ինչպես շոգ, ճնշող ոսկի<sup>11</sup>:*

Իսկ արևելյան համապատկեր հիշեցնող այս ութնյակում խտացված է շարժուն, գունային մեղեղին, որտեղ կրակվում են վարդերը, խաշխաշները, գարնան օրերն ու ծիածանը, և ծփում է սերը.

*Դաշտերը խաս ծաղիկներով ծփծփացին.-  
Աշխարհը - ալ, նարնջագույն, վառքը - կարմիր,  
Ողջը - երաշը ու խնդրություն արեգմածին...<sup>12</sup>*

Դարձյալ ամեն ինչ կապվում է արևի հետ և ավարտվում է արևով «Ամրոխները խելագարված» հայտնի պեհմում, որտեղ ողջակիզվող հոգիները՝ որպես Արևի ուստրեր և դրստրեր, գնում են դեպի Արևը:

1921-22թ. Չարենցը գրեց իր սքանչելի «Տաղարանը»: Սայաթ-Նովայի Խաղերի հանգով գրված այս շարքն արևելյան զգացողությունների համանվագ է՝ ուրույն պատկերային համակարգով, գեղագիտական տարածությամբ: Դիմելով Սայաթ-Նովային և արևելյան քնարերգությանը՝ Չարենցը դարձյալ նոր խոսք է ասում: Մի պահ հեռանալով քաղցրածոր քամանչայի, սազի հնչյուններից, քեֆերի և ուրախության սեղաններին քափկող զինուց և օղուց՝ դիտում է իրական

Այսնքը՝ ստեղծելով բանաստեղծի հոգու գումազեղ աշխարհը: Հմայված Սայաթ-Նովայի բանաստեղծական երևույթի հայտնաբերմամբ և երեմն մոռանալով իրեն՝ այնուամենայնիվ, ստեղծում է չարենցյանը.

Ինյօքան որ հուր կա իմ սրտում - բոլորը քեզ.

Ինյօքան կրակ ու վառ խնդում - բոլորը քեզ.-

Բոլորը տամ ու ճվիրեմ, իմմ ո՛չ մի հուր թող չմնա:

Դո՞ւ չմրսես ճմոան ցրտում - բոլորը քեզ...<sup>13</sup>

«Տաղարանում» միավորվում են երկու հզոր ուժերի՝ Չարենցի և Սայաթ-Նովայի ոգեղեն հարստությունները: Առհասարակ հետաքրքիր ճամանություններ կարելի է գտնել այս երկու մեծությունների միջև: Երկուսն էլ հմայված են Արևելքով, երկուսի պոեզիան էլ շաղախված է սիրո քնարերգությամբ: Նաև նման են ճակատագրով: Սայաթ-Նովան ապրեց և ստեղծագործեց հայրենիքից հեռու օտար երկրում, որը խոր հետք թողեց նրա բանաստեղծական աշխարհի վրա: Չարենցը թողեց ծննդավայր Կարսը, որն անդրադարձավ նրա ողջ հոգեկերտվածքին: Նման են ոչ միայն իրենց արևելյան խառնվածքով, այլ նաև չհասկացվածությամբ: XV տաղում Չարենցը գրում է.

Բայց խայլի անսիրտ քեֆերին ես տխուր, մենակ մնացի,  
Ուզեցի թողնեմ-հեռանամ՝ հպարտ է ու չար է, ասին!<sup>14</sup>:

Չարքում արևելյան խրախճանքն անընդհատ հակադրվում և բախվում է բանաստեղծի սրտի մորմորին ու թախծին: Ի դեպ, այս հոռետեսությունը ևս արևելյան է: Դա զգացվում է և պարսկական, և արաբական միջնադարյան պոեզիայում: Այսպիսի հոռետեսություն մենք տեսնում ենք նաև Ավ. Խսահակյանի «Արու-Լալա Սահարի» պոեմում: «Խսահակյանի ողջ ստեղծագործության, մասնավորապես «Արու-Լալա Սահարի» մեջ շատ կարևոր նշանակություն ունի արևելյան հոռետեսությունը՝ արևելյան մտածողության հիմքերից մեկը»<sup>15</sup>, գրում է Ա. Եղիազարյանը: Չարենցի XV տաղում անընդհատ հնչում է բանաստեղծի բողոքն ու չհասկացվածությունը. «Ու ձմոան բուքերի միջին ես բորիկ ու մերկ մնացի», «Ասի՛ թե՛ մա՛րդ եք ախար դուք, չե՞ք տեսնում մարմինս ծվար», «Խնդացին, քրջացին միայն, որ այդպես մնացել եմ մերկ»<sup>16</sup>: Այսպիսի թախիծ կա XI դարի պարսից քնարերգու Բարա Թահերի հետևյալ ուրայարում.

Սիրոս վերք է, սիրոս վերք է, սիրոս՝ վերք,  
Բժիշկ բերեք, հերիմ, ճար արեք,  
Բժիշկ եկավ, դարման արավ ստիպված,  
Երբ որ տեսավ, թե ինչպես եմ սրտարեկ<sup>17</sup>:

«Տաղարանում» Զարենցը փառաբանեց սերը, նորովի ներկայացրեց Սայաթ-Նովայի գոզալին, բայց և խնկարկեց Սայաթ-Նովայի երգածն ու զգացածը.

Ամեն տեսակ երգ երգեցի - ամենից լավ տաղն է էլի,  
Սայաթ-Նովի դրախտային, անմահական խան է էլի<sup>18</sup>:

Գյուրջստանի գոզալը, որ ատլաս ու խաս ունի հագին, հմայում, իրենով է անում բանաստեղծին: Մեկ ուրիշ տաղում չընաղ կինը գեղեցկագոյն է, շուրջերը՝ գինու թաս, մազերը՝ օսկի արրեշում, աշքերը՝ ալմաս: Բայց բանաստեղծը լավ գիտի.

Թեկուզ սիրի, գիրկդ ընկնի, դմես օսկե դափաղի մեջ,  
Կմկա էշիս եռցի հանող անհանգչելի ցավ է էլի<sup>19</sup>:

«Տաղարան» շարքը փակվում է պայծառ և անմահ «Ես իմ անուշ Հայաստանի» կերտվածքով: Զարենցի արևելյան մտածողության վերջնակետն իր երկիրն է: Բոլոր գույները, բույրերը և երգերը ծովվում են հայկական պատկերմերում: Բանաստեղծի սերը Հայաստան-յարն է՝ իր ողբածայնությամբ, գրքերով, հանճարներով, հազարամյա քարերով և արևահամ բառով:

Զարենցն օգտագործել է աշուղական պոեզիայի մի շարք չափեր ու ձևեր գազելներում, ոուրայիններում և բեյթերում: Հատկապես 1934թ. գրված «Քեյթերում» բանաստեղծին դարձյալ հետաքրքրել է Արևելը՝ Հաֆեզը, Ֆիրդուսին և դարձյալ Սայաթ-Նովան.

Ո՞ր շահն ունի այլքան ոսկի ու անգին քար,  
Սայաթ-Նովա,-  
Չի՝ ունեցել քեզ պես շոայլ խալիսը՝ նոքար,  
Սայաթ-Նովա<sup>20</sup>:

Իսկ ոուրայաքներն իրենց խոր փիլիտփայությամբ հիշեցնում են Թումանյանի քառյակները.

Ինչ թունել է քո գիճին, իմաստուն, նրանից իմ հոգին հայրում է.  
Դա գիճի՞ն է, թե խո՞սք է ազդու. նրանից իմ հոգին հայրում է.  
Խմելու ես, մահով իմ սերած, խմելու ես դու էլ այս գիճին,  
Եթե այս պարտեզը գաս դու, - նրանից իմ հոգին հայրում է<sup>21</sup>:

Բանաստեղծությունների մի առանձին շարք՝ գրված 1937-ին, Չարենցն անվանել է «ճապոնական թանկաներ»: Թանկան ճապոնական պոեզիայում ամենատարածված ժանրն է IX-XII դարերում: Այս շարքում զետեղվածները գողտրիկ մանրանկարներ են հիշեցնում՝ վիրավոր սրտի տխոր ելևջումներով.

Կյանքը բերել է փորձանք ու անկում,-  
Միշտ համբերել ես դու, սիրու իմ անքում.-  
Միշտ ընդունել ես ամեն թույն ու մահ,-  
Միշտ, դու դատարկ ես և քարկ ես հիմա,-  
Ո՞յր ես, քնքուշ իմ և քաղցր կարոտ,-  
Խեղճ ցանկություն իմ - քազե՛ անկարող...<sup>22</sup>

Սայաթ-Նովայի և Եղիշե Չարենցի մեկ նմանություն ևս: Երկու քանաստեղծներն էլ խորապես զգացել են իրենց մեծության աստիճանը: «Դուն էն զլխեն իմաստուն իս» հայերեն խաղում Սայաթ-Նովան գրում է.

Ամեն մարթ չի՛ կանա խմի՛ իմ ջուրմ ուրիշ ջրեն է.  
Ամեն մարթ չի՛ կանա կարթա՛ իմ գիրմ ուրիշ գրեն է<sup>23</sup>:  
Սայաթ-Նովայի արժանավոր հետնորդը՝ Եղիշե Չարենցը, «Փողոցային պշտուհուն» շարքի 3-րդ քանաստեղծության մեջ գրում է.

Ես եմ հիմա - մի պտես և իմ ամունը -  
Չարենց-  
Պիտի վատվի դարերում, պիտի լինի քա՛ րձր ու մնձ<sup>24</sup>:

ANI PASHAYAN  
(RA(S)U)

CHARENC AND THE EAST

The East had a deep influence on many Armenian writers. Among them is a famous Armenian poet Eghisheh Charenc /1897-1937/. The Oriental mentality is obvious in his "Tagharan", "Charenc-Nameh", "Yerkir Nayiri", "Beyter" and other works. The East was familiar to Charenc. He used many eastern symbols - like Sun, rose, flame, etc. The eastern pessimism, as well as hedonism, is typical to his works. Charenc even used traditional forms of Arabic and Persian literature - "ghazel", "rubayi", "beyt", named a range of poems "Japanese tankas".

The paper deals with comparatives between Charenc and Persian poets, Charenc and Armenian poet Sayat-Nova.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆԵՐ

1. Եղիշե Չարենց, Աշկ. ժող., հ. II, էջ 316:
2. Նոյն տեղում, հ. I, էջ 411:
3. Նոյն տեղում, հ. I, էջ 413:
4. Նոյն տեղում:
5. Նոյն տեղում, հ. I, էջ 411:
6. Նոյն տեղում, հ. I, էջ 413:
7. Նոյն տեղում, հ. I, էջ 417:
8. Նոյն տեղում, հ. I, էջ 7:
9. Նոյն տեղում, հ. I, էջ 192:
10. Նոյն տեղում, հ. I, էջ 193:
11. Նոյն տեղում, հ. I, էջ 196:
12. Նոյն տեղում, հ. I, էջ 12:
13. Նոյն տեղում, հ. I, էջ 207:
14. Նոյն տեղում, հ. I, էջ 223:
15. Եղիշազարյան Ա., XX դարի հայ գրականություն, Եր., 2002, էջ 69:
16. Եղիշե Չարենց, Աշկ. ժող., հ. I, էջ 223:
17. Պարսից պոեզիայի ընտրանի (Ա. Կոզմոյանի տողացի և Ա. Կապտախիլյանի քարգմանությամբ), Եր., 2004, էջ 82:
18. Եղիշե Չարենց, Աշկ. ժող., հ. I, էջ 220:
19. Նոյն տեղում, հ. I, էջ 221:
20. Նոյն տեղում, հ. III, էջ 183:
21. Նոյն տեղում, հ. II, էջ 96:
22. Նոյն տեղում, հ. III, էջ 493:
23. Սայաթ-Նովա, Հայերեն, Վրացերեն և ադրբեյջաներեն խաղերի ժողովածու, Եր., 1959, էջ 20:
24. Եղիշե Չարենց, Աշկ. ժող., հ. I, էջ 182:

Հայոց

ԳԱԱ Հնագույն գիտ. պետ.



FL0091168